11288

3(02)
Ч-91

1927

25 SEP 2006
09 DEC 2009
3(02)
Գ-91
539

Մ. Ի. ԳՐԻՇԻՆ

ԼԵՆԻՆՅԱՆ ՈՒՂԻՈՎ

ԴԱՍԱԳԻՐՔ ՔԱՂԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՆՈՐՄԱԼ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՅԵՎ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՀԱՏՈՐ Բ.

(ՊՐԱԿ Գ.)

3(02)
Գ-98

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ. ՅԵՐԵՎԱՆ — 1927

27 MAR 2013

11288

38

4786-88

Պետհրատի առաջին տպարան Վաղարշապատում

ՀԱՏՎԱԾ ՉՈՐՐՈՐԴ

ՆԵՊ-Ը* ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՊ-Ի ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ

ՆԵՊ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՄՈՄԵՆՏՆԵՐԸ

Կամ Խորհրդային իշխանության բոլոր քաղաքական նվաճումների կործանում, կամ տնտեսական պատվանդանի հիմնավորում նրանց տակ։ Դա այժմ չկա։ Հայտնապես դրան պիտի ձգտել։

ԼԵՆԻՆ

Ինչի մասին է գրույցը

Նախորդ գրույցում մենք խոսեցինք պրոլետարական դիկտատուրայի առաջին քայլերի մասին Ռուսաստանում և այն քաղաքացիական պատերազմի մասին, որ ստիպված յեղավ վարել պրոլետարիատը, վորպեսզի իր դիկտատուրան պաշտպանի։ Քաղաքացիական պատերազմը Խորհրդային Ռուսաստանի շնքին փաթաթեց «ռազմական կոմմունիզմի» քաղաքականությունը։

Ներկա գրույցից մենք կիմանանք, թե ինչու և ինչպես քաղաքացիական պատերազմի ավարտումից հետո պրոլետարիատը պիտի անցներ և սկսեց անցնել նոր տնտեսական քաղաքականության։ Մենք կիմանանք ապա, թե ինչումն է այն տնտեսական քաղաքականության էությունն ու իմաստը, վոր պրոլետարական պետությունն է վարում մինչև ներկա որը, և ինչ կերպ պրոլետարիատը ՆԵՊ-ի որով կառուցում է և կկառուցի սոցիալիստական հասարակությունը։

* ՆԵՊ—մի բառ, վոր գոյանում է новая экономическая политика (Նոր տնտեսական քաղաքականություն) խոսքերի սկզբնագրերից։

1. ՆԵՊ-ԻՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Տնտեսական ու քաղաքական կրիզիսը յերկրում 1921 թ. գարունքին:

Իմպերիալիստական յեվ քաղաքացիական պատերազմների հետեվանքով, վորոնց մասին մենք խոսել ենք նախորդ զրույցներում, ուժգնորեն կրճատվեց Խորհրդային Ռուսաստանում թե մանր յեվ թե խոշոր արդյունաբերության արտադրությունը։ Արտադրությունը մանր արդյունաբերության մեջ կրճատվեց $2^1/_2$—3 անգամ, իսկ խոշոր արդյունաբերության մեջ $5^1/_2$ անգամ։

Յեթե արդյունաբերության ծանր ու թեթև ճյուղերի արտադրանքը (նախապատերազմյան ռուբլիներով) 1913 թվականի համար նշանակենք 100% և դրա դիմաց դնենք 1920 թվականի արտադրանքը, ապա 1921 թ. համար կունենանք հետևյալ համեմատական թվանշանները. նավթի հանույթը—42,7% (1913 թ. 100%-ի դիմաց), ծխախոտի արտադրությունը—42,5%, կաշի պատրաստելը—38%, աղի հանույթը—30%, բրդե թելի արտ.—27,5%, քարածուխի հանույթը—27%, թյությունի արտադրությունը—20%, շոգեկառքերի արտ.—14,8%, լուցկու արտ.—14%, գութանների արտ.—13,3%, ելեկտրական լամպերի արտ.—10,1%, շաքարի արտ.—6,7%, բամբակի թելի արտ.—5,1%, վագոնների արտ.—4%, բուսական յուղի արտ.—3%, ցեմենտի արտ.—3%, չուգունի հալոցք—2,4%, աղյուսի արտ.—2,1%, հանքերի հանույթ—1,7%։

Թվերը հաստատում են, թե արդյունաբերության վիճակը կարելի յեր ծայրահեղորեն ծանր անվանել. արդյունաբերությունը իսկապես հանգչում եր։

Բայց դրանից ավելի լավ չեր գյուղատնտեսության վիճակը. բերքը 1920 թ. կրճատվել եր 37%, 1920 թ. ձի հաշվում եր 75% այն քանակի, ինչ կար 1916 թ., իսկ խոշոր յեղջերավոր անասուն—79% (1916 թ. դիմաց)։

Ել ավելի շոշափելի յեր կրճատումը այն բույսերի ցանքսի տարածության, ինչպիսիք հում նյութ են մատակարարում արդյունաբերության, վորի հետևանքով ել նա գյուղատնտեսությունից ստացվող հում նյութերի ծայրահեղ կարիքն եր զգում։

Վիճակագիրների հաշվով 1921 թ. գյուղը քաղաքին ու բանակին ընդհանուր առմամբ տալիս եր $2^1/_2$—3 անգամ պակաս նրանից, ինչ նա տալիս եր պատերազմից առաջ։

Այդ թվանշանները բավարար չափով են վկայում ժողովրդական տնտեսության այն քայքայման մասին, ինչ պատճառել եր քաղաքացիական պատերազմը։

Տնտեսական կրիզիսն առանձին սրության հասավ 1921 թ. գարունքին յեվ դա այն ժամանակ ել հանգեց ուժգին քաղաքական կրիզիսի։ *Խորհրդային իշխանության դրությունը խիստ լարված վիճակ ստացավ. մի շարք նահանգներում կուլակների և սպիտակ գվարդիական ոֆիցերների ղեկավարությամբ գյուղացիական ապստամբություններ սկսվեցին, իսկ Կրոնշտադտում տեղի ունեցավ նավաստիների ապստամբությունը, վորը անհապաղորեն ուժգին աջակցություն գտավ սպիտակ-գվարդիականների կողմից։ Մյուս կողմից պարենավորման ծանր վիճակի ազդեցության տակ արդյունաբերական կենտրոններում վորոշակի զգացվում եր բանվորների մի մասի (մանավանդ գյուղի հետ կապված բանվորների) դժգոհությունը։*

Տնտեսական կապի խզումը արդյունաբերության յեվ գյուղատնտեսության միջեվ յեվ բանվորների ու գյուղացիների դաշինքի ջլատումը վորպես պատճառ քաղաքական կրիզիսի։

Քաղաքական կրիզիսի (այսինքն Խորհրդային իշխանության կրիզիսի) պատճառը հանդիսացավ տնտեսական կապի խզումը արդյունաբերության յեվ գյուղատնտեսության միջեվ յեվ բանվորների ու գյուղացիների դաշինքի ջլատումը։ *Կարելի յե ասել, թե արդյունաբերության խիստ պակասած արտադրանքի կեսը Կարմիր բանակն եր կլանում, իսկ քանի զարգանում եր քաղաքացիական պատերազմը, քաղաքն ավելի ու ավելի քիչ եր բաժին հանում գյուղին. քանի գնում, այնքան քաղաքն ավելի շատ եր գյուղի հաշվին ապրում։ Տնտեսական կապի խզումի այդպիսի հողի վրա յել ստեղծվեց այն ճեղքը բանվորների ու գյուղացիների դաշինքում,* այն բացատրոնումն, *վորն արտահայտվեց 1921 թ. գյուղացիական ըմբոստացումների և Կրոնշտադտի ապստամբության մեջ։*

1921 թ. գարունքի տնտեսական ու քաղաքական կրիզիսը պիտի առաջնորդեր դեպի այն, վոր վերաքննվեր, վերաստուգվեր ռազմական կոմմունիզմի քաղաքականությունը, վորը հակահեղափոխության կողմից մեր դեմ հարուցած քաղաքացիական պատերազմն եր մեր շլինքին փաթաթել։

ՆԵՊ-ին անցնելու ընդհանուր պատճառները։

Դա նոր տնտեսական քաղաքականության անցնելու մոտավոր, անմիջական պատճառն եր։ Բայց կային և մինչև որս հրապարակի վրա յեն ընդհանուր բնույթի պատճառներ, վորոնց զորությամբ անհրաժեշտ ե անցկացնել հայտնապես այդ տնտեսական քաղաքականությունը վոչ միայն մեզ համար, այլ և յուրաքանչյուր յերկրի համար, ուր պրոլետարիատը կգրավի իշխանությունը և սոցիալիզմ կկառուցե։ Քաղաքացիական պատերազմի ավարտումով այդ պատճառներն ինքնին ել առանց տնտեսական ու քաղաքական կրիզիսի պիտի առաջնորդեյին դեպի նոր տնտեսական քաղաքականությունը։ Պարզենք այդ ընդհանուր պատճառները։

ՆԵՊ-ին անցնելու հարցը Վլադիմիր Իլյիչը մանրամասն քննել է «Պարենտուրքի մասին» բրոշյուրում, որ գրված է 1921 թվականի ապրիլին։

Այդ բրոշյուրում ընկ. Լենինը մատնանշում է հինգ «հասարակա-տնտեսական հանրակազմեր, որոնք գոյություն ունեն Ռուսաստանում։

«1. Նահապետական, այսինքն նշանավոր չափով բնավիճակ, գյուղացիական տնտեսություն.

2. Մանր ապրանքային արտադրություն (այս կարգին է վերաբերում մեծամասնությունը այն գյուղացիների, որ հաց է վաճառում).

3. Մասնատնտեսատիրական կապիտալիզմ.

4. Պետական կապիտալիզմ.

5. Սոցիալիզմ։

Ռուսաստանն այնքան է ընդարձակ ու խայտաբղետ, որ հասարակա-տնտեսական հանրակազմերի այս բոլոր տարբեր տիպերն իրար են հյուսվում նրա մեջ։ Վիճակի ինքնորինակությունը հայտնապես դրա մեջ է»։

Այդ հանրակազմերի վրա Վլադիմիր Իլյիչը մատնանշում եր դեռ 1918 թ.։ Դեռ այն ժամանակ, ինչպես և 1917 թ., յերբ նա Ռուսաստան վերադարձավ, նա միշտ ընդգծում եր, թե քանի հրապարակի վրա կան այդ բոլոր հանրակազմերը, անմիջականորեն սոցիալիզմին անցնել անկարելի յե. հարկավոր են մի շարք միջոցներ աստիճանական անցման համար։ Իսկապես «սոցիալիզմը տնտեսության այնպիսի կազմակերպություն է, որը արտադրության միջոցների ու գործիքների հանրայնացման սկզբունքների վրա միավորում է արդյունաբերությունն ու հողագործությունը։ Առանց տնտեսության այդ յերկու ճյուղերի միավորման սոցիալիզմն անհնարին է» (Ստալին)։ Բայց մի՞թե հնարավոր է անմիջականորեն, միանգամից միավորել, օրինակ, բնավիճակ և մանր ապրանքային տնտեսությունները պրոլետարական պետության ձեռքերում գտնվող խոշոր արդյունաբերության հետ, յեթե «տասնյակ վերստերի ճանապարհաչգոյությունը» անջատում է գյուղը յերկաթուղուց, խոշոր արդյունաբերությունից, մեծ քաղաքներից, յեթե մանր տնտեսությունները միլիոնով են հաշվում, յեթե Ռուսաստանի նշանավոր մասի վրա գերակշռում է «նահապետականությունը», «կիսավայրենությունը», յեթե բուն քաղաքում չկա «հոյակապ խոշոր մեքենայական ինդուստրիա ելեկտրական լարերի մի ցանցով», ինդուստրիա, որ ընդունակ լինի կազմակերպելու արդյունքների արտադրությունը և մատակարարել «մանր հողագործներին լավագույն արդյունքներ, ավելի՝ խոշոր քանակով, ավելի արագ ու էժան,

քան առաջ եր» (Լենին)։ Հնարավո՞ր է արդյոք նման պայմաններում ուղղակի, անմիջականորեն սոցիալիզմին անցնել։ Չե, անկարելի յե։ Նման անմիջական անցում իրագործելու փորձի հետևանքով, այն ել քաղաքացիական պատերազմի պայմաններում, դուրս յեկավ «շրջանառության բացակայություն հողագործության և արդյունաբերության միջև, կապի և փոխներգործության բացակայություն նրանց միջև», «մանր արտադրողի քայքայումն ավելի ուժեղացավ, խոշոր արդյունաբերության վերականգնումն ավելի ձգձգվեց ու հետաձգվեց», «պարզվեց արդյունաբերության «փակ» շրջանառության անտանելիությունը հողագործության հետ» (Լենին)։

Կարճ խոսելով՝ հրապարակի վրա մի անդունդ եր հինգ տնտեսական հանրակազմերից բարձրագույնի, այն է՝ սոցիալիզմի և մանր գյուղացիական տնտեսությունների ահագին մասսայի հանրակազմի միջև։ Հսկայական տարածություն եր ընկնում պրոլետարիատի ու նրա նոր եկոնոմիկայի, սոցիալիստական արդյունաբերության, և գյուղացիության ու նրա մանր տնտեսության միջև, գյուղացիության, որը կարող է դեպի սոցիալիզմ ընթանալ միայն անցողակի միջոցների ուղիով, «բացված» շրջանառության (ազատ առևտրի) ուղիով, ապրանքային տնտեսության ուղիով։ Իսկ իլրումն սրան պրոլետարիատի ստեղծած նոր եկոնոմիկան թույլ եր, չեր կարող ապահովել գյուղացիության պահանջները և չեր կարող գյուղացիությունից ստանալ հաց, հում նյութեր ու վառելիք։

Այս բոլոր պայմանների գոյությամբ անհրաժեշտ եր ըստ հնարավորության շուտ դնել հարցը՝ թե ինչ միջոցներով աստիճանաբար անցումն կատարել դեպի սոցիալիզմը ապրանքային տնտեսության միջոցով, շուտ դնել հարցը նոր տնտեսական քաղաքականության մասին։

Անմիջական անցումն սոցիալիզմին — սովորեցնում եր Վլադիմիր Իլյիչը — հնարավոր չի և ոչ մի յերկրում։ Բոլոր յերկրներում մի անցողակի ժամանակաշրջան պիտի լինի կապիտալիզմից դեպի սոցիալիզմ։ Բոլոր յերկրներում առանց բացառության բանվոր դասակարգն իշխանությունը գրավելուց և իր ձեռքերում տնտեսական հրամայող բարձունքները (խոշոր արդյունաբերությունը, բանկերը և այլն) ամրացնելուց հետո՝ ավելի կամ պակաս չափով դեմ-հանդիման պիտի գա մանր արտադրողների մի մասսայի, գլխավորապես գյուղատնտեսության մեջ։

Անգամ արդյունաբերականորեն զարգացած յերկրներում ուղղակի, անմիջական անցում կապիտալիզմից դեպի սոցիալիզմ անհնարին է, իսկ կապիտալիզմի ու սոցիալիզմի միջև պիտի լինի մի անցման ժամանակամիջոց, որն ամբողջությամբ արդեն կապիտալիզմ չի լինիլ և միաժամանակ ամբողջությամբ սոցիալիզմ ել չի լինիլ։ Դա յել կլինի ՆԵՊ-ի ժամանակաշրջանը։

Այդպես էր դնում հարցը ՆԷՊ-ի միջազգային նշանակության մասին Կոմինտերնի IV կոնգրեսում Վլադիմիր Իլյիչը։

ՆԷՊ-ի առաջին քայլերը։

ՆԷՊ-ին անցնելու ուղու վրա առաջին քայլը յեղավ պարենմասնատրման փոխարինումը պարենտուրքով։ «Մենք բոլորս այնպես ենք քայքայված, այնպես ենք ճնշված պատերազմի (վորը յերեկ եր և շնորհիվ կապիտալիստների ագահության ու քենի կարող ե բռնկվել վաղը) ծանրությունից, վոր չենք կարողանում արդյունաբերության արդյունքներ տալ գյուղացուն մեզ հարկավոր բոլոր հացի համար։ Այդ իմանալով, մենք պարենտուրք ենք մուծում, այսինքն նվազագույն չափով անհրաժեշտ (բանակի ու բանվորների համար) հացի քանակն իբրև տուրք ենք վերցնում, իսկ մնացածը պիտի փոխանակենք արդյունաբերության արդյունքներով»։

Պարենտուրքից բղխեցին և ուրիշ քայլեր. ազատ առևտրի թույլատրում, մանր ու միջակ ձեռնարկությունների կապալով տալը մասնավոր կապիտալիստներին և ոտարերկրյա կապիտալի գործի հրավիրելը կոնցեսսիաների միջոցով, պետական արդյունաբերության ձեռնարկությունների անցումը տնտեսավար ու առևտրական հաշվի։ Ընդամին Վլադիմիր Իլյիչն ընդգծում եր, թե մենք նրա համար ենք սկսում պարենտուրքից և ազատ առևտրից, քանի վոր դա ամենից ավելի յե հարկավոր գյուղատնտեսությանը։ Հենց «այժմ ավելի շատ անհետաձգելի յեն այն միջոցները, վորոնք ընդունակ են բարձրացնել գյուղացիական տնտեսության արտադրական ուժերն անհապաղորեն»։ Միայն այդ միջոցով մենք հաց կստանանք բանվորների համար, հում նյութեր ու վառելիք արդյունաբերության համար, և նշանակում ե կամրացնենք բանվոր դասակարգին, արդյունաբերությունը և պրոլետարիատի դիկտատուրան։ Միայն այդ միջոցով մենք կամրացնենք բանվոր դասակարգի և գյուղական չքավորության դաշինքը միջին գյուղացիության հետ։

Վորպեսզի ավ յուրացվի «ՆԷՊ-ին չանցնելու անմիջական պատճառները» բաժինը, պատասխաններ տվեք հետևյալ հարցերին.

1. Ինչպիսի՞ք են ՆԷՊ-ին անցնելու անմիջական պատճառները 1921 թ.։

2. Ինչպիսի՞ք են ՆԷՊ-ին անցնելու ընդհանուր պատճառները։

3. Ի՞նչ չափով ե ՆԷՊ-ը բղխում այն բոլորից, ինչ Վ. Ի. Լենինն ասել ե վաղօրեն, մինչև ՆԷՊ-ը, կապիտալիզմից դեպի սոցիալիզմ անցնելու մասին։

4. Ի՞նչ ձեռնարկումներից սկսվեց անցումը դեպի ՆԷՊ-ը և ինչու հատկապես այդ ձեռնարկումներից։

2. ՆԷՊ-Ի ԷՅՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՆԷՊ-ն իբրև քաղաքականություն, վորն նկատի ուներ սոցիալիստական տարրերի պայքարը կապիտալիստականի դեմ և սոցիալիստական տարրերի հաղթանակը կապիտալիստականի վրա։

Անմիջականորեն սոցիալիզմին անցնելու փորձից Խորհրդային իշխանությունը նահանջեց։ Ի՞նչ նպատակով։ Այդ հարցին Վլադիմիր Իլյիչը պարզ ու հստակ պատասխանում ե. «Մենք այս վայրկյանին յետ ենք նահանջում, բայց մենք այդ անում ենք, վորպեսզի նախ յետ գնանք, ապա վազենք և ուժգնորեն առաջ ցատկենք։ Նոր տնտեսական քաղաքականության կիրառման մեջ մեն-միայն այդ պայմանով մենք նահանջեցինք»։ Իսկ ու՞ր նահանջեց Խորհրդային իշխանությունը։ Այդ հարցին ել ե Վլադիմիր Իլյիչը տալիս պարզ ու հստակ պատասխան. Խորհրդային իշխանությունը նահանջեց դեպի ապրանքային տնտեսությունը, դեպի շրջանառության ազատությունը, վորպեսզի նրա միջոցով առաջնորդե գյուղը դեպի սոցիալիզմը, անհրաժեշտ ճանաչեց «չփշրել հին հասարակա-տնտեսական հանրակազմը, առևտուրը, մանր տնտեսությունը, մանր գործաձեռնարկությունը, կապիտալիզմը, այլ աշխուժացնել առևտուրը, մանր գործաձեռնարկությունը, կապիտալիզմը, զգուշորեն և աստիճանաբար տիրելով նրանց կամ հնարավորություն ստանալով համապատասխան նրանց աշխուժացման չափի յենթարկել նրանց պետական կարգավորման»։ Ապրանքային տնտեսության հողի վրա անխուսափելի յե կապիտալիզմի վերածնունդը։ Շրջանառության ազատությունը՝ դա առևտրի ազատություն ե, իսկ առևտրի ազատությունից անխուսափելիորեն կապիտալիստական տարրերն են ծագում։ Բայց Խորհրդային իշխանությունը կարող ե սահմանափակել կապիտալիզմի այդ աճումը, այն թույլատրել միայն հայտնի չափով։

«Սարսափելի՞ յե արդյոք մեզ համար այդ կապիտալիզմը.—հարցնում ե ընկ. Լենինը,—յերթե մեր ձեռքերում մենք ունենք ֆաբրիկները, գործարանները, տրանսպորտը և արտասահմանյան առևտուրը» և պատասխանում ե. «Այդ կապիտալիզմը մեզ համար սարսափելի չե»։ Այդ կապիտալիզմն անհրաժեշտ ու օգտակար ե այն պայմաններում, վորոնց մեջ ե գտնվում Խորհրդային իշխանությունը (1921 թվականին), «կապիտալիզմը բարիք ե միջնադարի նկատմամբ, մանր արտադրության նկատմամբ։ Վորքան վոր մենք ի վիճակի չենք դեռ իրագործելու անմիջական անցումը մանր արտադրությունից դեպի սոցիալիզմը, այդքան ել հայտնի չափով կապիտալիզմն անխուսափելի յե իբրև մանր արտադրության ու փոխանակության տարերային արդյունք, և այդքան ել մենք պիտի օգտագործենք կապիտալիզմը (մանավանդ ուղղելով նրան պետական կապիտալիզմի հունը) իբրև միջնորդական

ողակ մանր արտադրության ու սոցիալիզմի միջև, իբրև միջոց, ուղի, ձև, արտադրական ուժերի բարձրացման յեղանակ»։

Այս կերպ Վլադիմիր Իլյիչը ՆԵՊ-ին անցնելու պահուն կրկին, ինչպես և 1918 թվականին, պետկապիտալիզմն է առաջադրում իբրև միջնորդական ողակ մանր արտադրության ու սոցիալիզմի միջև։ Բայց 1921 թ. պրոլետարական պետության համար պետկապիտալիզմի օգտագործման պայմաններն ավելի եյին բարենպաստ, քան 1918 թ.— ռազմական կոմունիզմի ժամանակաշրջանի հետեվանքով նա իր ձեռքերում կենտրոնացրած ուներ խոշոր ու խոշորագույն ֆաբրիկներն ու գործարանները, տրանսպորտը յեվ արտաքին առեվտուրը, ինչ դեռ չկար 1918 թվականին։

«Պարենտուրքի մասին» հոդվածում Վլադիմիր Իլյիչը կոնկրետորեն մատնանշում է, թե 1921 թվականի պայմաններում նա ինչ է հասկանում պետկապիտալիզմի տակ։ Դա նախ և առաջ կոնցեսիաներն են, յերբ պրոլետարական պետությունը պայմանագրով, հայտնի պայմաններով օտարերկրյա կապիտալիստներին գործի յե հրավիրում մշակելու այն բնական հարստությունները, ինչ նա ինքն ի վիճակի չէ մշակելու։ Կոնցեսիաների միջոցով Խորհրդային իշխանությունն «ուժեղացնում է խոշոր արտադրությունն ընդդեմ մանրի, առաջավորն ընդդեմ հետամնացի, մեքենայականն ընդդեմ ձեռքի, ավելացնում է իր ձեռքերում խոշոր ինդուստրիայի արդյունքների քանակը (բաժնեհատկացում), ուժեղացնում է պետականորեն կարգավորված տնտեսական հարաբերությունները հանդեպ մանր-բուրժուականի, անարխիականի»։

Պետկապիտալիզմի մյուս տեսակը՝ դարձյալ 1921 թվականի պայմաններում՝ դա կոոպերացիան է։ «Մանր ապրանքարտադրողների կոոպերացիան... անխուսափելիորեն ծնունդ է տալիս մանր-բուրժուական-կապիտալիստական հարաբերությունների, նպաստում է նրանց զարգացման, առաջին տեղն է քաշում կապիտալիստիկներին, նրանց է տալիս առավելագույն օգուտը։ Դա այլ կերպ չի կարող լինել, քանի հրապարակի վրա յե մանր տնտեսությունների գերակշռությունը, այլև հավասարապես փոխանակության հնարավորությունն ու անհրաժեշտությունը։ Ռուսաստանի տվյալ պայմաններում կոոպերացիայի ազատությունն ու իրավունքները նշանակում են ազատություն և իրավունքներ կապիտալիզմին»։ Բայց կոոպերատիվ կապիտալիզմը մեզ ձեռնտու և օգտակար է, որովհետև նա «հեշտացնում է հաշվառումը, վերահսկողությունը, հսկողությունը, պայմանագրական հարաբերությունները պետության (ներկա դեպքում Խորհրդային) և կապիտալիզմի միջև»։ Իսկ գլխավորը—«կոոպերացիան հեշտացնում է միլիոնավոր բնակչության, ապա գլխովին ամբողջ բնակչության միավորումը, կազմակերպումը, իսկ այդ հանգամանքն իր հերթին հսկայական նվաճում է պետական կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու տեսակետից»։

Պետական կապիտալիզմի յերրորդ տեսակը—դա կապալն է (արենդը), յերբ կապիտալիստին կապալով է տրվում պետությանը պատկանող արդյունատեղին, ձեռնարկությունը, անտառամասը և այլն։

Յեվ այսպես, Խորհրդային իշխանությունը 1921 թ. յետ քաշվեց դեպի ապրանքային տնտեսությունը, թույլատրեց կապիտալիզմ ու պետկապիտալիզմ, որովհետև հարկավոր են «միջնորդական ուղիներ, ձևեր, միջոցներ, յեղանակներ» «մինչ-կապիտալիստական հարաբերություններից (մանր-ապրանքային, որոնք գերակշռում են գյուղացիական տնտեսությունների մեջ.—Մ. Գ.) դեպի սոցիալիզմն անցնելու համար» (Լենին)։ Բայց և նույն «Պարենտուրքի մասին» հոդվածում Վլադիմիր Իլյիչը չի մոռանում ընդգծելու, թե կապիտալիզմի և պետկապիտալիզմի կողքին «մենք, որ պրոլետարիատի առաջապահ, առաջավոր ջոկատն ենք կազմում, անմիջականորեն անցնում ենք դեպի սոցիալիզմը»։ Նա այստեղ նկատի ունի մեր տնտեսության սոցիալիստական տարրերը, այսինքն պետական արդյունաբերությունը և մյուս տնտեսական հրամայող բարձունքները, որոնք պրոլետարիատի ձեռքին են գտնվում։

Իսկ ՆԵՊ-ին անցնելու հետևանքով ժողովրդական տնտեսության մեջ վճռական փոխհարաբերություններ պիտի ստեղծվեն այդ սոցիալիստական և պրոլետարական պետության կողմից թույլատրված կապիտալիստական տարրերի միջև։ Այն բոլորից, ինչ Վլադիմիր Իլյիչը գրել ու խոսել է ՆԵՊ-ին անցնելու մասին, բղխում է մեկ պատասխան—պայքար։

Պայքար տեղի յե ունենում հենց այն ժամանակ, յերբ պետությունը մուծում է կապիտալիզմը պետկապիտալիզմի հունի մեջ։ Պայքարը միանգամայն անխուսափելի յե, որովհետև կապիտալիստները ձգտում են խուսափել պետական վերահսկողությունից, չեն ցանկանում, որ պետական իշխանությունը նրանց «սանձի տակ» պահի։

Մասնատիրական կապիտալիզմն իր իսկ բնույթով (մենք դրա մասին մանրամասն խոսել ենք յերկրորդ հատվածում) ձգտում է ընդարձակել իր ազդեցությունը։ Կապիտալիստները «զոդումն են ստեղծում գյուղացիության հետ, որպեսզի հարստանան», և ձգտում են ընդարձակել այդ զոդումը գերիվերս այն սահմանից, որը պրոլետարական պետությունն է գծում նրանց առաջ։ Նրանց հետ պիտի պայքարել և սահմանել իր «զոդումն գյուղացիական եկոնոմիկայի հետ, որպեսզի ուժեղացնենք մեր պրոլետարական պետության տնտեսական իշխանությունը»։

Այստեղից էլ բղխում է այն լոզունգը, վոր առաջադրեց Վլադիմիր Իլյիչը.—«սովորեցեք առևտուր անել»։ Պետք է այնպես սովորել առևտուր անելը, վորպեսզի առևտրի հողի վրա կարելի լինի հաղթահարել կապիտալիստներին։

Առևտրի միջոցով մեր սոցիալիստական էկոնոմիկայի կապը հաստատելով գյուղացիականի հետ՝ մենք ձգտում ենք վտարել կապիտալիստական էկոնոմիկան, մենք ձգտում ենք «շաղկապվել գյուղացիական մասսայի, աշխատավոր գյուղացիության հետ և սկսել շարժվել նրա հետ, վողջ մասսայի հետ»։ Այստեղ կրկին պայքար է բորբոքվում կապիտալիստական տարրերի հետ, կյանքի ու մահու պայքար։ «Կկազմակերպե՞նք արդյոք մենք մանր գյուղացիությունը նրա արտադրական ուժերի զարգացման հիմունքով, պաշտպանելով այդ զարգացումը պրոլետարական իշխանությամբ, թե նրան կհպատակեցնեն կապիտալիստները—սրանից է կախված պայքարի յելքը։ Տասնյակ հեղափոխություններում այս նույնն է յեղել, բայց նման պատերազմ աշխարհը դեռ չի տեսել»։

Այս միտքը ՆԷՊ-ի մասին, թե նա պայքար է, պատերազմ սոցիալիստական ու կապիտալիստական տարրերի միջև, Վլադիմիր Իլյիչը չէր դադարում ընդգծել։ «Խնդրի էությունն այն է,—ասում էր նա, որինակ, 1921 թ. վերջին,—թե պայքարը կա և պիտի լինի էլ ավելի կատաղի, էլ ավելի դաժան, քան պայքարը Կոլչակի ու Դենիկինի հետ»։ Այս պատճառով միանգամայն իրավացի յեր XIV համագումարում ընկ. Ստալինը, վորը կատարյալ համաձայնությամբ լենինիզմի հետ տվավ ՆԷՊ-ի այսպիսի բնորոշում. «ՆԷՊ-ը՝ դա պրոլետարական պետության մի առանձին քաղաքականություն է, վոր նկատի ունի թույլատրել կապիտալիզմը, յերբ պրոլետարական պետության ձեռքին են հրամայող բարձունքները, նկատի ունի կապիտալիստական ու սոցիալիստական տարրերի պայքարը, նկատի ունի, թե սոցիալիստական տարրերի դերը պիտի աճի ի վնաս կապիտալիստական տարրերի, նկատի ունի, թե սոցիալիստական տարրերը պիտի հաղթեն կապիտալիստական տարրերին, նկատի ունի դասակարգերի վոչնչացումը, սոցիալիստական էկոնոմիկայի պատվանդանի կառուցումը։ Ով չի ըմբռնում ՆԷՊ-ի այս անցողակի, յերկակի բնույթը, նա հեռանում է լենինիզմից»։

ՆԷՊ-ի այդ բնորոշումը լիովին համապատասխան է ընկ. Լենինի մեր հասարակակարգի մասին ունեցած ուսմունքի հետ, վորն այն նկատում է իբրև անցում կապիտալիզմից դեպի սոցիալիզմ։

ՆԷՊ-ն իբրև ուժերի յետ քաշվելու քաղաքականություն, ուժերի վերախմբավորում յեվ առաջխաղացություն գյուղացիության հիմնական մասսայի հետ միասին:

ՆԷՊ-ի նման ըմբռնումով հասկանալի յե, թե ՆԷՊ-ը չի կարելի մեկնաբանել իբրև միայն յետ քաշվելու քաղաքականություն։ Դրան հակասում է այն բոլորը, ինչ, ինչպես մենք վերը տեսանք, Վլադիմիր Իլյիչն է ասել ՆԷՊ-ի մասին։ ՆԷՊ-ը,—ասում է ընկ. Բուխարինը,—դա պրոլետարիատի այնպիսի ստրատեգիական* մանյովր է, վորն իր մեջ ներառում է՝ նահանջի տարրեր—մեկ, շարքերի վերակազմություն—յերկու և առաջխաղացություն վերակազմված ֆրոնտով—յերեք»։ Հանդես գալով կուսակցության XI համագումարում՝ Վլադիմիր Իլյիչն ուղղակի ասում էր. «Հիմա մենք վորոշեցինք ճանաչել նահանջն ավարտված։ Դա նշանակում է, թե մեր քաղաքականության ամբողջ խնդիրը նոր ձևով է դրվում»։ Իսկ ինչո՞ւմն է այդ նորը այն ժամանակի, 1922 թվականի համար։

ՆԷՊ-ի ուղիով նոր առաջխաղացության մեջ։

Արդարացա՞ն արդյոք Վլադիմիր Իլյիչի խոսքերը. ՆԷՊ-ի որով իսկապես մենք առաջ ենք խաղում։ Այդ հարցին պատասխանում են մեր իրականության թվանշաններն ու փաստերը։ Նախորդ զրույցներից մենք արդեն գիտենք, թե մեր պետական սոցիալիստական արդյունաբերությունը, վոր քաղաքացիական պատերազմի տարիներին իր արտադրականությամբ ընկել էր մինչև $^1/_6$-ը մինչպատերազմականի, $19^{25}/_{26}$ թ. բարձրանում է մինչև մինչպատերազմյան մակարդակի $^9/_{10}$-ը։ Բարձրացավ գյուղատնտեսությունը, մինչպատերազմյան չափի հետ համեմատած տրանսպորտը վերականգնվեց $^3/_4$-ով և ավելի, զարգացավ կոոպերացիան և այլն։ Մի՞թե սա հաջող առաջխաղացում չէ սոցիալիզմի ուղիով։ Բայց այդ առաջխաղացումը ՆԷՊ-ի ռելսերով դեպի սոցիալիզմ մենք վարում ենք վոչ այնպես, ինչպես վարել ենք ռազմական կոմմունիզմի տարիներին, այլ միանգամայն այլ կերպ կառուցելով շարքերը, վարում ենք գյուղացիության հիմնական մասսայի հետ միասին։ Մենք պետական սոցիալիստական արդյունաբերությունը դարձնում ենք ժողովրդական տնտեսության ավանգարդը, վորը կոոպերացիայի միջոցով զոդվում է գյուղացիության հիմնական մասսայի՝ չքավորների ու միջակների գյուղացիական տնտեսության հետ և այդ գյուղացիությունը դեպի սոցիալիզմ առաջնորդում։ Հետևաբար մենք ՆԷՊ-ի նկատմամբ պիտի խոսենք իբրև յետ քաշվելու քաղաքականության, ուժերի վերախմբավորման և նոր

* Ստրատեգիական մանյովր—թշնամուն խաբելու և հաղթահարելու նպատակով զորքերի վաղորոք մտածված ռազմական գործողություններ։

առաջխաղացության մասին գյուղացիության հիմնական մասսայի հետ միասին։ Ավելին. մենք պիտի հպարտանանք այն հաղթանակներով, որ մենք արդեն շահել ենք այդ առաջխաղացության ընթացքում, և աշխատենք մեր հաղթանակներն ընդարձակելու վրա։

Այդ հաղթանակի մեջ անչափ կարևոր է այն, որ սոցիալիստական տարրերն աճել և արդեն գերակշռող են հանդիսացել չե թե միայն կապիտալիստականի վտարման հաշվին, այլ և ի հաշիվ պետկապիտալիստական տարրերի վտարման։ Այն դիագրամմաները, որ բերված են 89 և 91 էջերում, ցույց են տալիս, թե ինչպես մեծ չէ և ինչպես աստիճանաբար ընկնում է պետկապիտալիստական տարրերի դերը մեր տնտեսության մեջ։ Ո՛չ կոնցեսիաները, ո՛չ կապալները որևէ նշանակալից ծավալում չստացան մեզ մոտ։ Շնորհիվ մեր տնտեսության սոցիալիստական տարրերի արագ զարգացման կոոպերացիան կապիտալիստիկներ չմղեց առաջին պլանը։ Պետկապիտալիստական և մասնավոր կապիտալիստական տարրերի թույլ զարգացման պարագաներում՝ կոոպերացիան ողակվեց սոցիալիստական հրամայող բարձունքների, առաջին հերթին պետական սոցիալիստական արդյունաբերության հետ։ Այդ պայմաններում, ինչպես մենք մանրամասն կտեսնենք վարը, նա դառնում է գյուղի լայն հիմնական ճանապարհը դեպի սոցիալիզմը։

Այս բոլորը XIV կուսհամագումարն իր բանաձևում արտահայտել է հետևյալ խոսքերով. «Ժողովրդական տնտեսության ներսում, որի բաղկացուցիչ մասերն այնքան զանազան կերպ են (բնավիճակ-գյուղացիական տնտեսություն, մանր ապրանքային արտադրություն, մասնատիրական կապիտալիզմ, պետական կապիտալիզմ և սոցիալիզմ), խիստ բարձրանում է սոցիալիստական արդյունաբերության, պետական ու կոոպերատիվ առևտրի, ազգայնական վարկի և պրոլետարական պետության մյուս հրամայող բարձունքների տեսակարար կշիռը։

Այս կերպ հրապարակի վրա յե պրոլետարիատի տնտեսական առաջխաղացումը նոր տնտեսական քաղաքականության պատվանդանի վրա և ԽՍՀՄ էկոնոմիկայի առաջշարժումը դեպի սոցիալիզմի կողմը։ Պետական սոցիալիստական արդյունաբերությունն ավելի ու ավելի յե դառնում ժողովրդական տնտեսության առաջապահը, իր յետևից տանելով ժողովրդական տնտեսությունն իր ամբողջությամբ։

XIV համագումարը յեվ օպոզիցիան Ն.Է.Պ.-ի էության մասին:

Սակայն ՆԷՊ-ի լենինյան ըմբռնումը խորթ և չյուրացված դուրս յեկավ այն օպոզիցիայի համար, որ հանդես յեկավ XIV կուսհամագումարում։ Լենինյան բնորոշմանը, թե մեր հասարակակարգը կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու մի հասարակակարգ է, XIV կուսհամագումարի օպոզիցիան փորձեց մեր

տնտեսական հասարակակարգի իր բնորոշումը հակադրել՝ այն պետկապիտալիստական հորջորջելով։

«Լենինիզմ» գրքում, որ լույս է ընծայված մինչև համագումարը, ընկ. Զինովյեն ասում է. «ՆԷՊ-ը—դա պետական կապիտալիզմ է պրոլետարական պետության մեջ»։

Ընկ. Կրուպսկայան XIV համագումարի իր ճառում հայտարարեց. «ՆԷՊ-ն ըստ էության կապիտալիզմ է հանդիսանում, որ թույլատըրվում է հայտնի պայմաններում, կապիտալիզմ, որը շղթայած է պահում պրոլետարական պետությունը»։

Այս բնորոշումների մեջ յերկու սխալ կա։ Առաջինը կայանում է նրանում, որ «ՆԷՊ» խոսքով այստեղ կոչված է տնտեսակարգը։ Այն ինչ «համենայն դեպս ներկա հասարակա-տնտեսական հանրակազմը չի կարելի ՆԷՊ անվանել, որովհետև ՆԷՊ-ի տակ մենք հասկանում ենք պրոլետարական պետության տնտեսական քաղաքականության սիստեմը, պետության, որը խնդիր ունի ստեղծելու տնտեսության սոցիալիստական կազմակերպության հիմքերը»։ (Ռիկով՝ զեկուցում Մոսկվայի նահանգական կուսակցական XIV կոնֆերենցիայում)։

Բայց օպոզիցիայի կարևորագույն սխալը կայանում է նրանում, որ նա վերցնում է Խորհ. իշխանության ժամանակ գոյություն ունեցող հինգ տնտեսական ձևերից մեկը՝ պետկապիտալիզմը և բոլոր մեր տնտեսությունն ամբողջությամբ, բոլոր մեր էկոնոմիկան պետկապիտալիստական անվանում։

Ի՞նչ պայմանով այդ կարող եր ճիշտ լինել։ Յեթե պետկապիտալիստական տարրերը մեր տնտեսության մեջ գերակշռող, վճռական լինեյին։ Բայց դա չկա որևէ չափով։

Ընդհակառակը, ՆԷՊ-ի տարիներին սոցիալիզմի տարրերն անչափ աճել ու գերակշռող են հանդիսանում մեր տնտեսության մեջ։ Հերիք է հիշատակել գեթ պետարդյունաբերության մասին։ Այս կերպ պետկապիտալիզմի տարրերը ոչ մի վճռական նշանակություն չունեն մեր էկոնոմիկայի մեջ, և նվազագույն իսկ հիմք չկա մեր տնտեսակարգը պետկապիտալիստական անվանել, վերաքննելով մեր հասարակակարգի լենինյան մեկնաբանումը իբրև անցողակի մի հասարակակարգ։

Ինչումն է օպոզիցիայի սխալի արմատն այդ խնդրում։ Նրանում, որ նա — 1) թերագնահատում է մեր տնտեսության աճող սոցիալիստական տարրերը, 2) վարագուրում է մեր պետարդյունաբերության սոցիալիստական բնույթը, փորձում է և այդ արդյունաբերությունը դիտել իբրև պետկապիտալիզմի մի առանձնատեսակ։

Այն, ինչ մենք ասել ենք մեր ժողովրդական տնտեսության և մասնավորապես պետարդյունաբերության սոցիալիստական տարրերի մասին, ցույց է տալիս, թե թերագնահատել նրանց՝ դա նշանակում

ե խեղաթյուրել իրերի իսկական վիճակը ԽՍՀՄ-ում։ Ցեվ նման վոչ-
լենինյան, վոչ-մարքսիստական խեղաթյուրում ե հանդիսանում այն
փորձը, վոր նպատակ ունի մեր պետարդյունաբերությունն իբրև պե-
տական-կապիտալիստական մեկնաբանել (մենք այդ մանրամասն պար-
զել ենք յերրորդ գլուխում)։

Իր կրկնակի սխալի հետևանքով ոպպոզիցիան հանգում ե նրան,
վոր ՆԵՊ-ը մեկնաբանում ե իբրև «գլխովին նահանջ»։ Այսպես, ընկ.
Զինովյևն իր «Լենինիզմ» գրքում գրում ե. «Նոր տնտեսական քաղա-
քականություն (ՆԵՊ)։ Դա—լենինիզմի ամենաընդարձակ մտածված
նահանջի շարժումն ե»։ «Դա նահանջ ե, վորի պատմական իմաստը
մինչև որս շատերի համար էլ այնքան պարզ չե»։ «ՆԵՊ-ը նահանջ ե
հանդիսանում դեպի պետական կապիտալիզմը»։ ՆԵՊ-ի նահանջողական
բնույթն ոպպոզիցիան խիստ եր ընդգծում իր բոլոր յելույթներում,
համարյա բերան չբանալով առաջխաղացման մասին կամ նրա նկատ-
մամբ խոսելով իբրև ապագայում հնարավոր մի յերևույթի մասին։

Այն մասին, թե մենք արդեն առաջ ենք խաղում ՆԵՊ-ի որով,
թե մենք ՆԵՊ-ի որով արդեն ճաղքանակներ ենք տանել առաջխաղաց-
ման հողի վրա,—այդ մասին ոպպոզիցիան վոչ մի խոսք չի ասել։

ՆԵՊ-ի եյության խեղաթյուրումներն ոպպոզիցիայի կողմից ըն-
ՆԵՊ-ի եյության խեղաթյուրումներն ոպպոզիցիոներներ մեկնաբա-
թացան և այլ գծերով։ Այսպես, միքանի ոպպոզիցիոներներ մեկնաբա-
նում եյին ՆԵՊ-ն իբրև շունչ քաշելու դադար, իբրև մանյովր, վոր
ծագում ե միայն միջազգային պրոլետարական հեղափոխության
ուշացումից, իսկ մյուսները—իբրև մի քաղաքականություն, վոր ան-
հրաժեշտ ե միայն մանր-բուրժուական (մեզ մոտ առավելապես գյու-
ղացիական) յերկրում։

Նոր տնտեսական քաղաքականության այդ բոլոր մեկնաբանում-
ներն ընդհանուր վոչինչ չունեն լենինիզմի հետ։

ՆԵՊ-ը չե թե միայն մանյովր ե, վոր ծագել ե միջազգային պրո
լետարական հեղափոխության հապաղումից, կամ քաղաքականություն
ե, վոր բացատրվում ե յերկրի մանր-գյուղացիական բնույթով, այլ
«պրոլետարիատի միակ ճիշտ քաղաքականությունն ե» (Լենին)։ Յերբ
մենք խոսում եյինք ՆԵՊ-ին անցնելու պատճառների մասին, մենք
մատնանշել ենք այդ անցման ընդհանուր պատճառների վրա։ Կապի-
տալիզմից դեպի սոցիալիզմը փոխանցվելու անցողական ժամանակա-
շրջանի մեջ բոլոր յերկրներում, այլ վոչ միայն Ռուսաստանում այդ
ընդհանուր պատճառները դարձնում են ՆԵՊ-ը պրոլետարիատի ան-
խուսափելի քաղաքականություն։ ՆԵՊ-ի բոլոր այլ մեկնաբանու-
թյունները ճիշտ չեն և հակասում են լենինիզմին։

3. Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՊԼԱՆԸ ՅԵՎ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԴԵՐԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Կոոպերացիան ԽՍՀՄ — դա գյուղի շարժման կազմակերպված ձևն ե դեպի սոցիալիզմը։ Վ. Ի. Լենինը կոոպերացիայի մասին։

Նախորդ գլուխներում մենք առիթներ շատ ենք ունեցել խոսելու այն մասին, թե կոոպերացիան պետական սոցիալիստական արդյունաբերության զոդման մի ձև ե գյուղատնտեսության հետ։ Հարակից ՆԵՊ-ի եյության շարադասման մեզ անհրաժեշտ ե ավելի մանրամասն կանգ առնել կոոպերացիայի դերի վրա։ Ի՞նչ դեր ե խաղում կոոպերացիան մեր ժողովրդական տնտեսության սոցիալիստական և կապիտալիստական տարրերի այն պայքարի մեջ, վորը ՆԵՊ-ի ժամանակաշրջանը տարբերում ե ամեն կարգի այլ ժամանակաշրջաններից։ Այդ հարցին մենք պատասխան ենք ստանում ընկ. Լենինից։ Վլադիմիր Իլյիչը հենց մատնանշում ե, թե սոցիալիզմի հիմնական ուղին մեր յերկրում՝ դա—պետական արդյունաբերության զոդումն ե գյուղատնտեսության հետ։ Այդ հիմնական ուղին ճանաչվում ե և մեր ամբողջ կուսակցության կողմից։ ՆԵՊ-ի որով կուսակցության և բանվոր դասակարգի առաջ խնդիր ե ծառացած ապահովել սոցիալիստական տարրերի հաղթանակը կապիտալիստականի վրա։ Իսկ ինչպես վարվել ավելի քան քսան միլիոն գյուղացիական տնտեսությունների հետ։ Մենք վերը տեսանք, թե Վլադիմիր Իլյիչը քննելով Խորհրդային Ռուսաստանի տնտեսական հանրակազմերը, այդ գյուղացիական տնտեսությունները դասում եր մանր-ապրանքայինների շարքում, առանձնացնելով նրանց մասնավոր կապիտալիստական տնտեսություններից։ Նա և միշտ մատնանշում եր, թե մանր-ապրանքային տնտեսությունը՝ դա մի տնտեսություն ե, վորն առևտուր ե անում, բայց վարձու աշխատանք չի շահագործում։ Հետևաբար, մանր-ապրանքային տնտեսությունն ամենևին չի կարելի դասել կապիտալիստականի շարքում, վորն անպայմանորեն շահագործում ե վարձու բանվորներին։

Մանր-ապրանքային գյուղացիական տնտեսությունը բռնում ե ճամպարաժանը կապիտալիզմի ու սոցիալիզմի միջև։ Նա կարող ե զարգանալ կամ այս կամ այն կողմը։ Արևմուտքում, ինչպես մենք արդեն գիտենք, նա զարգանում ե կապիտալիզմի կողմը բռնելով, մեզ մոտ կան բոլոր տվյալները, վորպեսզի նրա զարգացումն ուղղել կարելի լինի սոցիալիզմի կողմը։ Հայտնապես կոոպերացիայի միջոցով սոցիալիստական պետական արդյունաբերության ղեկավարությամբ մանր-ապրանքային գյուղացիական տնտեսությունը ԽՍՀՄ պիտի ուղղվի դեպի սոցիալիզմը։ Նվաճել այդ—մեկն ե այն առաջխաղացման խնդիրներից, վոր պրոլետարիատն ե կատարում ՆԵՊ-ի որով։

Гос. Публ. Биб.
ՀՍՍՀ

Վ. Ի. Լենինի կոոպերատիվ պլանի էությունը կայանում է հենց նրանում, որ հայտնապես այդ ուղղությունով կոոպերացիայի օգնությամբ առաջնորդել գյուղի զարգացումը դեպի սոցիալիզմ։ *Կոոպերացիայի հարցին ՆԵՊ-ի օրով Լենինն իր ուշադրությունն է նվիրել յերկու գործերում — «Պարենտուրքի մասին» բրոշյուրում, գրված 1921 թվականին, այսինքն ՆԵՊ-ին անցնելու հենց սկզբին, և «Կոոպերացիայի մասին» հոդվածում, գրված 1923 թվականին,* այսինքն յերկու տարի անց ՆԵՊ-ին անցնելուց հետո։

Վերը քննելով ՆԵՊ-ի էությունը՝ մենք արդեն մատնանշել ենք, թե ինչու այդ բրոշյուրում Վլադիմիր Իլյիչը կոոպերացիան դասում էր պետկապիտալիզմի շարքում, և ինչու պետկապիտալիստական կոոպերացիան նկատելի ծավալում չստացավ մեզ մոտ։ Մենք մատնանշեցինք, թե կոոպերացիան շաղկապվեց չի թե մասնավոր կապիտալի, չե թե պետկապիտալիզմի (կոնցեսսիա, կապալ) հետ, այլ ամրացող պետական սոցիալիստական արդյունաբերության և աճող պետական սոցիալիստական արդյունաբերության և աճող պետական առևտրի հետ, վորոնք ավելի ու ավելի յեն վտարում մասնավոր արդյունաբերությունը և մասնավոր առևտուրը։ Նման վիճակում չէր կարող չփոփոխվել և բուն կոոպերացիայի բնույթը։

Այդ էլ գերազանցորեն լուսաբանել է Վլադիմիր Իլյիչը 1923 թ. «Կոոպերացիայի մասին» հոդվածում. «Մեր գոյություն ունեցող հասարակակարգում կոոպերատիվ ձեռնարկությունները տարբերվում են մասնավոր կապիտալիստական ձեռնարկություններից, իբրև կոլեկտիվ ձեռնարկություններ, բայց չեն տարբերվում սոցիալիստական ձեռնարկություններից, յեթե նրանք հիմնված են մի տեղ, ուր արտադրության միջոցները պատկանում են պետությանը, այսինքն բանվոր դասակարգին։

Ահա այս հանգամանքը բավարար չափով չի հաշվառվում մեզ մոտ, յերբ դատում են կոոպերացիայի մասին։ Մոռանում են, թե մեզ մոտ կոոպերացիան, շնորհիվ մեր պետական կարգի առանձնահատկության, միանգամայն բացառիկ նշանակություն է ստանում։ Յեթե առանձնացնենք կոնցեսսիաները, վորոնք, ի դեպ ասած, մեզ մոտ շատ ու քիչ նկատելի զարգացում չստացան, ապա մեր պայմաններում կոոպերացիան գլխովին և միանգամայն զուգադիպում է սոցիալիզմին»։

Վլադիմիր Իլյիչն ընդգծում է, թե մեզ մոտ կոոպերացիան, վոր շաղկապվում է պրոլետարական պետության ձեռքերում գտնվող հրամայող բարձունքների հետ, վոչինչ ընդհանուր չունի կապիտալիստական յերկրներում բուրժուական տնտեսության և բուրժուական պետական իշխանության հետ շաղկապվող կոոպերացիայի հետ։ Այս պատճառով և կոոպերացիայի դերը միանգամայն այլ է. «բայց դիտեցեք, թե ինչպես է խնդիրը փոխվել այժմ, յերբ պետական իշխանությունը բանվոր դասակարգի ձեռքին է, յերբ շահագործողների քաղաքական իշխանությունը տապալված է, և յերբ արտադրության բոլոր միջոցները (բացի նրանցից, վոր բանվորական պետությունը հոժարակամ ժամանակավոր և պայմանով իբր կոնցեսսիա տալիս է շահագործողներին) գտնվում են բանվոր դասակարգի ձեռքերում։

Այժմ մենք իրավունք ունենք ասելու, թե կոոպերացիայի պարզ աճումը մեզ համար նույնական է (վերը մատնանշած «փոքրիկ» բացառությամբ) սոցիալիզմի աճման»...

ԽՍՀՄ-ում կոոպերացիայի ստանձնած դերի մթագնումը ոպպոզիցիայի կողմից XIV համագումարում։

XIV համագումարում հանդես յեկած ոպպոզիցիան չի կամենում ըմբռնել, թե հարակից մեր տնտեսության սոցիալիստական տարրերի աճման փոփվել է կոոպերացիայի դերը։ Վկայություն բերելով «Պարենտուրքի մասին» հոդվածը՝ նա շարունակում է կոոպերացիան լիովին դասել պետկապիտալիզմի շարքում։ Մեզ մոտ պետկապիտալիստական է հանդիսանում այն կոոպերացիան, վորը, ինչպես, օրինակ, «կուլակային կոոպերատիվ բույները» (ընկ. Բուխարինի արտահայտությամբ), չի շաղկապվում մեր ժողովրդական տնտեսության հրամայող բարձունքների հետ, կամ այն կոոպերացիան, վորին հաճախակի մասնավոր կապիտալն է օգտագործում։ Բայց մեզ մոտ գերակշռող է հանդիսանում վոչ թե այդ կոոպերացիան, այլ այն, վորը կապված է պետարդյունաբերության, պետական մեծաքանակ վաճառքի և պետական վարկի հետ, և այս պատճառով նրանց ղեկավարությամբ դառնում է գյուղի համար ճանապարհ դեպի սոցիալիզմը։ Ոպպոզիցիան հենց շեշտում էր կապիտալիստական տարրերը կոոպերացիայի մեջ, ուռցնում էր նրանց և այդ հիման վրա ամբողջ կոոպերացիան պետկապիտալիզմ հռչակում։

Կոոպերացիան ամբողջությամբ իբր պետկապիտալիզմ մեկնաբանելով՝ ոպպոզիցիան անպայմանորեն հեռանում է լենինիզմից և մասնավորապես այն բոլոր դրույթներից, վոր Վլադիմիր Իլյիչն է առաջադրել «Կոոպերացիայի մասին» հոդվածում։ Հակառակ ոպպոզիցիայի, կոոպերացիայի հարցում լենինիզմի տեսակետի վրա յե կանգնած XIV կուսհամագումարը, վորն իր բանաձևում հայտարարում է.

«Գյուղում սոցիալիզմի շինարարության հիմնական ուղին կայանում է նրանում, վորպեսզի պրոլետարիատի ձեռքերում գտնվող սոցիալիստական պետարդյունաբերության, պետական վարկային հիմնարկների յեվ այլ հրամայող բարձունքների կողմից ուղղվող աճող տնտեսական ղեկավարությամբ կոոպերատիվ կազմակերպության մեջ գրավել գյուղացիության հիմնական մասսան յեվ ապահովել այդ կազմակերպության սոցիալիստական զարգացում, օգտագործելով, հաղթահարելով յեվ վտարելով նրա կապիտալիստական տարրերը»։

«Կոոպերացիայի մասին» հոդվածից վերցրած Վլադիմիր Իլյիչի խոսքերի և XIV համագումարի կոոպերացիայի մասին ընդունած բանաձևի պարզ համադրումը լիովին հաստատում է համագումարի վորոշումների կատարյալ համապատասխանությունը լենինիզմին։

Վորպեսզի լավ յուրացվի «ՆԵՊ-ի էությունն ու նշանակությունը» և «Վ. Ի. Լենինի կոոպերատիվ պլանը և կոոպերացիայի դերը սոցիալիզմի շինարարության մեջ» բաժինները, պատասխաններ տվեք հետևյալ հարցերին.—

1. Ինչու չի կարելի մեկնաբանել ՆԵՊ-ն իբրև միայն նահանջ։
2. Ինչումն է ՆԵՊ-ի էությունն ու նշանակությունը։
3. Ինչումն է Վ. Ի. Լենինի կոոպերատիվ պլանի էությունը և ինչումն է նրա խեղաթյուրումն ոպպոզիցիայի կողմից։

4. ՆԵՊ-Ի ՎՏԱՆԳՆԵՐԸ

Լենինը ՆԵՊ-ի վտանգների յեվ նրանց հաղթահարելու միջոցների մասին։

Այն բոլորից հետո, ինչ մենք ենք ասել ՆԵՊ-ի էության մասին, դժվար չի հասկանալ, թե ինչ վտանգներ է թաքցնում իր մեջ։ Վտանգը նրանում է, թե չլինի՞ վոր կապիտալիստական տարրերն այն պայքարում, վոր նրանք մղում են սոցիալիստական տարրերի դեմ, հաղթանակող դուրս գան։ Այդ վտանգը, չնայած մեր բոլոր հաջողություններին, դեռ հրապարակի վրա յե և պիտի գոյություն ունենա մինչև այն ժամանակ, քանի մենք վերջնականորեն չվտարենք այդ կապիտալիստական տարրերը, քանի մենք չհաղթահարենք նրանց։ Վլադիմիր Իլյիչը հենց այդպես եր սովորեցնում դնել հարցը, ինչպես մենք ջանացինք ցույց տալ, յերբ ՆԵՊ-ի էությունն եյինք պատմում։ «Իսկ յերբ մենք փոխեցինք մեր տնտեսական քաղաքականությունը,—ասում եր նա 1921 թ. վերջին,—վտանգն ավելի սաստկացավ, վորովհետև բաղկացած լինելով անհագին քանակությամբ տնտեսական առտնին մանրունքներից, վորոնց սովորաբար ընտելանում են և վորոնց չեն նկատում, եկոնոմիկան մեզնից պահանջում է առանձին ուշադրություն և լարումն, և առանձին վորոշակիությամբ է անհրաժեշտություն առաջադրում այն հաղթահարելու համար ճիշտ միջոցներ սովորելու»։

Ոպպոզիցիան XIV համագումարում յեվ XIV համագումարը ՆԵՊ-ի վտանգի մասին։

ՆԵՊ-ի վտանգները կուսակցությունը տեսնում է և բոլոր միջոցներն է ձեռք առնում նրանց հաղթահարելու։ ՆԵՊ-ը ներմուծելու օրից սկսած կուսակցության և վոչ մի համագումար, և վոչ մի կոնֆերենցիա չեն անգիտացել այդ հարցը։ Նրանք բոլորը մի շարք ցուցմունքներ են տվել հաղթահարելու այս կամ այն վտանգը, վոր առանձնապես արտահայտվել է այս կամ այն ժամանակաշրջանում։ Այս պատճառով

միանգամայն անիրավացի յեր XIV համագումարի ոպպոզիցիան, վորը կուսակցության ԿԿ մեղադրում եր, թե նա գունազարդում է ՆԵՊ-ը, կոծկում է նրա վտանգները։ Մանավանդ ոպպոզիցիան շեշտում եր այն, թե կուսակցության ԿԿ կոծկում է կուլակության աճումը գյուղում և բավարար չափով միջոցներ չի ձեռնարկում պայքարելու գյուղական բուրժուազիայի ուժեղացման այդ վտանգի դեմ։ Ամեն կերպ ուռցընելով այդ վտանգները՝ ոպպոզիցիան ինքն ընկնում եր խուճապի մեջ և սպառնում եր խուճապ տարածել պակաս կայուն ընկերների շարքերում։ Այսպես, որինակ, ընկ. Կամենևը XIV համագումարից առաջ ջանում եր ապացուցել, թե գյուղացիության կողմից շուկայում ծախվող ամբողջ հացի $^2/_3$-ն իրանց ձեռքերում են պահում կուլակներն ու ունևոր գյուղացիները։ Այդ ոպպոզիցիան հայտարարում եր, թե կուսակցությունը XIV կուսակցական կոնֆերենցիայի վորոշումներով (այդ վորոշումների մասին խոսք կլինի տասնեվեցերորդ դրույցում) մի շարք զիջումներ է արել կուլակին և չի կամենում խոստովանել այդ... և այլն։

XIV համագումարի ոպպոզիցիայի հետ միասին անիրավացի յեն և այն ընկերները, վորոնք ՆԵՊ-ի տարիներին փորձել են իսկապես մթագնել կուլակության աճումը գյուղում և այդ աճման վտանգը։ Այդպիսի ընկերներ կուսակցության մեջ յեղել են, բայց նրանք ժամանակին դատապարտվել են կուսակցության ԿԿ յեվ XIV կուսկոնֆերենցիայի կողմից։ Այս պատճառով միանգամայն անիրավացի յեր XIV համագումարի ոպպոզիցիան, վոր մեղադրում եր ԿԿ, թե նա ծածկում է այդ ընկերներին։

XIV համագումարն իր բանաձևի մեջ դատապարտեց և այն ընկերներին, վորոնք չեն տեսնում գյուղում կուլակության աճման հետ կապված վտանգները, և ոպպոզիցիային, վորը չափից դուրս ուռցնում է այդ վտանգները և դրանով մթագնում «կոմմունիստական քաղաքականության հիմնական հարցը գյուղում—այն հարցը, վոր պայքար է նվաճելու միջակին՝ իբրև հողագործության կենտրոնական կերպարանքի, և կոոպերացիայի հարցը, վոր գյուղի դեպի սոցիալիզմը բռնած շարժման հիմնական կազմակերպչական ձևն է»։ Ընդսմին համագումարն ընդգծեց, թե ոպպոզիցիայի թեքումն ավելի յե վտանգավոր, քան այն թեքումը, վոր թերագնահատում է կուլակության աճումը և դրա հետ կապված վտանգները։ Ներկա պայմաններում ոպպոզիցիայի կողմից կուլակության վտանգի չափից դուրս ուռեցումն սպառնում է դարձ կատարել դեպի կուլակաթափման քաղաքականությունը (վոր իր ժամանակին չքավորության կոմիտեներն եյին անցկացնում), այսինքն դեպի ռազմական կոմմունիզմի քաղաքականությունը, իսկ դա կնշանակեր խզել պրոլետարիատի դաշինքը գյուղացիության հետ և տապալել կուսակցության շինարար աշխատանքը։

5. ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻ ՅԵՐԿՐՈՒՄ ՅԵՎ ՆԵՊ-Ը

Պրոլետարիատի տնտեսական առաջխաղացման հետեվանքները նոր տնտեսական քաղաքականության պատվանդանի վրա:

Յերբ օպպոզիցիան XIV կուսհամագումարում ջանում եր մեկնաբանել ՆԵՊ-ը միայն իբրև նահանջ, նա դրանով իսկ կոծկում եր և ծածկում ՆԵՊ-ի հետևանքները, վորոնք անհերքելիորեն ասում են, թե մենք ՆԵՊ-ի ռելսերով առաջ ենք խաղում, յեվ առաջ ենք խաղում հայտնապես դեպի սոցիալիզմը: *1921 թվականից մինչև 1925—26 թ. ներառյալ մեր առաջխաղացումը Գեոսպլանի տվյալներով կարելի յե պատկերացնել հետևյալ թվանշաններով (թվանշանները 1925—26 թվականի համար նշված են պլանի համեմատ և յենթադրական են հանդիսանում).—*

ԽՈՇՈՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՏԱԴՐԵԼ Է
(ՆԱԽԱՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԳՆԵՐՈՎ ՄԻԼ. ՌՈՒԲԼԻՆԵՐՈՎ)

1921/22 թ.—1493 (100%), 1923/24 թ. 2627 (176%), 1925/26 թ.—5280 (352%)

ՅԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԸ ԲԵՌ ԵՆ ՓՈԽԱԴՐԵԼ *(միլ. տոննով)*

1921/22 թ.—40 (100%), 1923/24 թ.—68 (169%), 1925/26 թ.—83 (208%)

ԲԱՆԿԵՐԸ ՄԻՋՈՑՆԵՐ ՈՒՆԵՅԻՆ *(միլ. չերվոն ռուբլիներով)*

1922/23 թ.—832 (100%), 1923/24 թ.—1749 (210%), 1924/25 թ.—3427 (415%)

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ ՆԵՐՄՈՒԾԱԾ ՅԵՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ ԱՐՏԱԾԱԾ Է ԱՊՐԱՆՔ *(նախապատերազմյան և միլ. ռուբլ.)*

1921/22 թ. *Ներմուծած—271 (100%)*, *Արտածած— 64 (100%)*; *Ընդ.* 335

1923/24 թ. *Ներմուծած—200 (74%)*, *Արտածած—340 (530%)*; *Ընդ.* 540

1925/26 թ. *Ներմուծած—385 (142%)*, *Արտածած—454 (710%)*; *Ընդ.* 839

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՂԵԼ Է

ՔԱՐԱԾՈՒԽ *(հազար տոննով)*

1913 թ.—29055, 1921/22 թ.—10185, 1922/23 թ.—11939, 1923/24 թ.—15778, 1924/25 թ.—16057,

ԲԱՄԲԱԿԵ ԳՈՐԾՎԱԾՔՆԵՐ *(միլիոն մետրով)*

1913 թ.—2238, 1921/22 թ.—315, 1922/23 թ.—581, 1923/24 թ.—836, 1924/25 թ.—1490.

ՇԱՔԱՐ *(հազար տոննով)*

1913 թ.—964, 1921/22 թ.—8, 1922/23 թ.—50,3, 1923/24 թ.—130,1, 1924/25 թ.—300

ՊՈՂՊԱՏ-ՄԱՐՏԵՆ *(հազար տոննով)*

1913 թ.—4727, 1921/22 թ.—318, 1922/23 թ.—615, 1923/24 թ.—993, 1924/25 թ.—1864

ՅԵՐԿԱԹ *(հազար տոննով)*

1913 թ.—3509, 1921/22 թ.—259, 1922/23 թ.—474, 1923/24 թ.—690, 1924/25 թ.—1334

Խ. Ս. Հ. Մ. Եկոնոմիկայի առաջխաղացումը սոցիալիզմի կողմը:

Տնտեսական վերելքի մասին վկայող թվանշանները կարևոր են վոչ միայն ինքնին, իբրև Խ. Ս. Հ. Մ. հաջողությունների ցուցանիշներ: Նրանք կարևոր և արժեքավոր են նրանով, վոր վկայում են շինարարության սոցիալիստական բնույթի մասին, շինարարության, վոր իրագործում է բանվոր դասակարգը:

Թվանշանները խոսում են այն մասին, վոր հրամայող բարձունքները պրոլետարական պետության ձեռքերում են, վոր սոցիալիստական տարրերը վտարում են կապիտալիստականին: Այդ էլ առաջնորդում է դեպի հետևյալ յեզրակացությունը, վորը ընկ. Ստալինն արավ XIV համագումարում. «Մեր հասարակակարգն իր ամբողջությամբ չի կարելի վոչ կապիտալիստական անվանել, վոչ սոցիալիստական: Մեր հասարակակարգն իր ամբողջությամբ անցողական է կապիտալիզմից դեպի սոցիալիզմը, ուր արտադրանքի քանակի իմաստով դեռ գերակշռում է մասնատիրական գյուղացիական արտադրությունը, բայց ուր սոցիալիստական արդյունաբերության բաժինն աճում է չէ թե օրերով, այլ ժամերով: Սոցիալիստական արդյունաբերության բաժինն աճում է այնպես, վոր այդ արդյունաբերությունը, օգտվելով իր կենտրոնացումով, օգտվելով իր կազմակերպվածությամբ, օգտվելով նրանից, վոր մեզ մոտ պրոլետարիատի դիկտատուրա յե տիրում, օգտվելով նրանից, վոր տրանսպորտը պետության ձեռքերում է գտնվում, օգտվելով նրանից, վոր վարկային սիստեմը—մերն է և բանկերը—մերն են, օգտվելով այդ բոլորից մեր սոցիալիստական արդյունաբերությունը, վորի բաժինը ժողովրդական արտադրության վողջ քանակի մեջ աճում է քայլ առ քայլ, ժամ առ ժամ,—այդ արդյունաբերությունը, առաջ ընթանալով, սկսում է իրան յենթարկել մասնավոր արդյունաբերությունը, իրան համակերպել և իր յետևից քաշել տնտեսության բոլոր մնացած հանրակազմերը: Այդպես է արդեն գյուղի ճակատագիրը—նա պիտի ընթանա քաղաքի յետևից, խոշոր արդյունաբերության յետևից:

Ահա հիմնական յեզրակացությունը, վոր ստացվում է, յեթե հարց դնենք մեր հասարակակարգի բնույթի մասին, սոցիալիստական արդյունաբերության բաժնի մասին այդ հասարակակարգում և մասնավոր կապիտալիստական արդյունաբերության բաժնի մասին, վերջապես, մանր ապրանքային արտադրության բաժնի մասին առհասարակ ընդհանուր ժողովրդական արտադրության մեջ»:

Քանի հրապարակի վրա կան այդ տվյալները, վորոնք վկայում են այն մասին, թե մենք արդեն *սոցիալիզմ ենք կառուցում, հետագա շինարարության համար սխալ ու վտանգավոր են հանդիսանում XIV համագումարի օպպոզիցիայի հայացքները, վորը բացասում է, թե մեր պրոլետարական դիկտատուրայի յերկիրը չունի ամեն անհրաժեշտ բան*

լիակատար սոցիալիստական հասարակություն կառուցելու համար։ Այդ կասկածը մեն-միայն մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորության հանդեպ, մեր յերկրում, վորին դեռ օգնության չի հասել միջազգային պրոլետարական հեղափոխությունը, օպպոզիցիայի ղեկավարները (ընկերներ Զինովյև և Կամենև) արտահայտել են դեռ մինչև XIV համագումարը։ Նրանք պաշտպանում եյին այն հայացքը, թե Խ. Ս. Հ. Մ. իբրև պրոլետարական դիկտատուրայի յերկիր, չի դիմանա, յեթե չհասնի միջազգային պրոլետարական հեղափոխության օգնությունը, թե մեր տեխնիկական հետամնացության շնորհիվ մենք ինքներս, մեր ուժերով սոցիալիզմ չենք կառուցի։ Այսկերպ օպպոզիցիան թերահավատություն է դրսևորում դեպի մեր սոցիալիստական շինարարության գործը, թերահավատություն այն գործի նկատմամբ, վոր Խ. Ս. Հ. Մ. պրոլետարիատն է անում, այն հաջողությունների նկատմամբ, վորոնք արդեն հրապարակի վրա յեն սոցիալիզմի շինարարության մեջ։

Օպպոզիցիայի հայացքները պիտի դեն շպրտվեն, իբրև իսպառ անճիշտ, իբրև իրականության փաստերում վոչ մի հաստատություն չգտնող իրանց համար։ Իրականության փաստերը հենց հակառակն են ասում. մենք արդեն կառուցում ենք և սոցիալիզմ կկառուցենք մեր յերկրում, վորովհետև Խ. Ս. Հ. Մ. ունենք պրոլետարիատի դիկտատուրա, և հրամայող բարձունքները պրոլետարական պետության ձեռքերում արդեն ամրացել են, աճում են, զարգանում են, և նրանց օգնությամբ պրոլետարիատը և նրա կուսակցությունն արդեն Խ. Ս. Հ. Մ. ամբողջ տնտեսությունը դեպի սոցիալիզմ են տանում։

Օպպոզիցիան շփոթում է յերկու հարց. ա) լիակատար սոցիալիստական հասարակության կառուցման հնարավորությունը մի յերկրում և բ) յերաշխիքը, վստահությունը, թե այդ հնարավորությունը չպիտի տապալվի, վոչնչացվի գիշատիչ կապիտալիստական պետությունների հարձակումով, վորոնք շրջապատում են սոցիալիստական յերկիրը։ Մի յերկրում սոցիալիստական հասարակություն կառուցելու հնարավորությունը կասկածի չի յենթարկվում։ Իսկ յերաշխիք տալ, թե սոցիալիստական յերկիրը չպիտի տապալվի, չպիտի փլվի, թե նրա մեջ միջազգային բուրժուազիայի ուժերով չպիտի վերականգնվի կապիտալիզմը—այդպիսի յերաշխիքներ վոչվոք տալ չի կարող։ Վերջիվերջո սոցիալիստական յերկիրը կբախվի կապիտալիստական յերկրների հետ։ Այդ մասին մի անգամ չէ, վոր նախազգուշացրել է Վլադիմիր Իլյիչը։ Բայց կրկին վոչ մի հիմք չկա մտածելու, թե այդ բախման մեջ Խ. Ս. Հ. Մ. անպայման պիտի պարտություն կրի, թե անպայման պիտի վոչնչանա իբրև Խ. Ս. Հ. Մ. և նախկին Ռուսաստանի տերրիտորիայի վրա փոխարինվի կապիտալիստական մի պետությամբ։ Ընդհակառակը, մենք իրավունք ունենք հուսալու, թե պատերազմը Խ. Ս. Հ. Մ. դեմ, քանի անտարակուսորեն աճում է միջազգային պրոլետարիատի համերաշխությունը, քանի ծայրահեղորեն սրվում են հակասությունները առանձին կապիտալիստական յերկրների միջև, քանի անտարակուսորեն աճում են Խ. Ս. Հ. Մ. ուժն ու հզորությունը և այլն,—մի փաստ կլինի, վորն ուժեղ չափով կմոտեցնի միջազգային պրոլետարական հեղափոխության հաղթանակը։ Կարճ խոսելով, և այդ կողմից չկան տվյալներ, վոր հարկադրեն մեզ ախ ու վաշ անել և անհուսալիորեն ձեռք թափ տալ մեր սոցիալիստական շինարարության վրա, իսպառ չհավատալ նրա վերջնական հաջողության ու հաղթանակին։

Լենինը յեվ XIV կուսհամագումարը սոցիալիզմի կառուցման մասին։

Օպպոզիցիայի այն հայացքները, վոր վերաբերում են մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու խնդրին, վոչինչ ընդհանուր չունեն լենինիզմի հետ։ Իր այդ հայացքներում օպպոզիցիան մոտենում է տրոցկիզմին։ Չէ՞ վոր հենց ընկ. Տրոցկին եր իր «պերմանենտ հեղափոխության» թեորիայի մեջ հավատացնում, թե մեր յերկրի պրոլետարիատը կարող է պահպանել իշխանությունը և սոցիալիզմ կառուցել միայն այն ժամանակ, յերբ կհաղթե մյուս յերկրների պրոլետարիատը, իր ձեռքը կվերցնի այնտեղ իշխանությունը և պետական օգնություն կհասցնի մեր յերկրին։ Իսկ լենինիզմն իսպառ այլ բան է ասում։ Վլադիմիր Իլյիչն ամենակատեգորիկ կերպով հայտարարում եր, ա) թե կարելի յե լիակատար սոցիալիստական հասարակություն կառուցել մի յերկրում և բ) թե մեր սոցիալիստական դիկտատուրայի յերկիրն անհրաժեշտ ու բավարար չափով ունի այն բոլորը, ինչ հարկավոր է այսպիսի կառուցման համար։

Առաջին հարցի առիթով ընկ. Լենինն արտահայտվել է դեռ 1915 թվականին, մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը։ Այն ժամանակ նա գրում եր.

«Տնտեսական ու քաղաքական զարգացման անհամաչափությունը կապիտալիզմի անպայման օրենքն է։ Այստեղից հետևում է, թե հնարավոր է սոցիալիզմի հաղթանակն սկզբում վոչ շատ կամ նույնիսկ մի՝ առանձին վերցրած՝ կապիտալիստական յերկրում։ Այդ յերկրի հաղթանակած պրոլետարիատը, եքսպրոպրիացիայի յենթարկելով կապիտալիստներին և սոցիալիստական արտադրություն կազմակերպելով իր մոտ, կծառանար մնացած կապիտալիստական աշխարհի դեմ, դեպի ինքը գրավելով մյուս յերկրների հարստահարված դասակարգերը, ապստամբություն բարձրացնելով այդտեղ ընդդեմ կապիտալիստների, անհրաժեշտության դեպքում նույնիսկ ռազմական ուժ հանելով ընդդեմ շահագործող դասակարգերի ու նրանց պետությունների»։

Իսկ յերկրորդ հարցի առիթով Վլադիմիր Իլյիչը գրել է «Կոոպերացիայի մասին» հոդվածում. «Իսկապես, պետության իշխանությունն արտադրության բոլոր խոշոր միջոցների նկատմամբ, պետության իշխանությունը պրոլետարիատի ձեռքերում, այդ պրոլետարիատի դաշինքը շատ միլիոնավոր մանր ու մանրագույն գյուղացիների հետ, այդ պրոլետարիատի համար ղեկավարության ապահովումը գյուղացիության նկատմամբ և այլն,—մի՞թե սա բոլորը չէ, ինչ հարկավոր է նրա համար, վորպեսզի կոոպերացիայից, մեն-միայն կոոպերացիայից, վորին մենք առաջ անգիտանում եյինք իբրև չարչիական և վորին, հայտնի կողմից, իրավունք ունենք անգիտանալու և այժմ, ՆԵՊ-ի որով նույնպես,—մի՞թե այս բոլորն այն անհրաժեշտը չէ լիակատար սոցիալիստական հասարակություն կառուցելու համար։ Դա դեռ սոցիալիստական հասարակության կառուցումը չէ, բայց անհրաժեշտ ու բավարար չափով դա բոլորն է այդ կառուցման համար»։

XIV համագումարը լիակատար համաձայնությամբ լենինիզմի հետ հայտարարեց իր բանաձևում. «Տնտեսական շինարարության բնագավառում համագումարը յելնում է նրանից, թե մեր յերկիրը, պրոլետարիատի դիկտատուրայի յերկիրը, ունի «բոլոր անհրաժեշտը լիակատար սոցիալիստական հասարակություն կառուցելու համար» (Լենին)։ Համագումարը գտնում է, թե պայքար մղել, վոր ԽՍՀՄ-ում սոցիալիստական շինարարությունը հաղթանակի՝ մեր կուսակցության հիմնական խնդիրն է հանդիսանում։ Հաշվետարին լիովին ապացուցեց այդ դրությունների ճշտությունը։ Մինչ այն, վոր մյուս յերկրներում պրոլետարիատն իր ձեռքը գրավե իշխանությունը, բայց նրա անտարակուսելի պաշտպանությամբ, առանց ոտարերկրյա կապիտալի այսպես կոչված «ոգնության» և անընդհատ պայքար մղելով մասնավոր կապիտալի դեմ մեր յերկրում՝ բանվոր դասակարգը դաշնակցած գյուղացիության հիմնական մասսայի հետ արդեն առաջին լուրջ հաջողություններին է հասել սոցիալիստական շինարարության մեջ։

Ընդսմին համագումարն ընդգծեց, թե անհրաժեշտ է պայքարել այն թերահավատության դեմ, վոր տածվում է դեպի սոցիալիստական շինարարության գործը մեր յերկրում, վորովհետև այդ թերահավատությունն արգելք է հանդիսանում հետագա շինարարության համար։

«Համագումարը գտնում է, թե այդ խնդիրների լուծման և սոցիալիզմի հետագա կառուցման համար անհրաժեշտ պայմաններից մեկն է հանդիսանում պայքարը այն թերահավատության դեմ, վոր տածվում է դեպի սոցիալիստական շինարարության գործը մեր յերկրում, պայքարը այն փորձերի դեմ, վոր նկատի ունի մեր ձեռնարկությունները, վորոնք հանդիսանում են «հաջորդաբար սոցիալիստական տիպի» (Լենին) ձեռնարկություններ, դիտել իբրև պետական-կապիտալիստական ձեռնարկություններ։ Նման գաղափարական հոսանքները, անհնարին դարձնելով մասսաների գիտակցական վերաբերմունքը դեպի սոցիալիզմի կառուցումն առհասարակ և դեպի սոցիալիստական արդյունաբերությունը մասնավորապես, ընդունակ են միայն կասեցնել տնտեսության սոցիալիստական տարրերի աճումը և հեշտացնել մասնավոր կապիտալի կողմից պայքարը նրանց դեմ։ Այս պատճառով համագումարն անհրաժեշտ է համարում ամենալայն դաստիարակչական աշխատանք վարել լենինիզմի այդ խեղաթյուրումները հաղթահարելու համար»։

Վորպեսզի լավ յուրացվի «ՆԵՊ-ի վտանգները» և «Սոցիալիզմի կառուցումը մի յերկրում և ՆԵՊ-ը» բաժինները, պատասխաններ տվեք հետևյալ հարցերին.

1. Ի՞նչ վտանգներ է պարունակում ՆԵՊ-ը և ի՞նչ միջոցներով պիտի մենք հաղթահարենք նրանց։

2. Ինչո՞վ է ապացուցվում, թե մենք արդեն սոցիալիզմ ենք կառուցում և կարող ենք լիակատար սոցիալիստական հասարակություն կառուցել։

3. Ի՞նչ եր ասում Վ. Ի. Լենինը մի յերկրում սոցիալիզմ կառուցելու խնդրի առիթով։

4. Ինչո՞ւմն է օպոզիցիայի կողմից կատարված խեղաթյուրման եյությունը, վոր վերաբերում է Լենինի մի յերկրում սոցիալիզմ կառուցելու հայացքին։

5. Ի՞նչ ասաց XIV համագումարն այդ հարցի առիթով։

ՆՅՈՒԹԵՐ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ ՆԵՊ Ի ՈՐՈՎ ՅԵՎ ԼԵՆԻՆԻ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՊԼԱՆԸ

Մենք ունենք պրոլետարական քաղաք, պրոլետարական հրամայող բարձունքներ։ Ի՞նչ է դա—իսպառ մանր մի բան, վոր վորևե կապ չունի գյուղի զարգացման հետ։ Պարզ է, վոր այդպես դատել՝ հիմարություն է։

Յես պնդում եմ, վոր այդ հրամայող բարձունքները ներգործում են գյուղի վրա, միջին գյուղացու վրա, վորը հասարակ ապրանքարտադրող է հանդիսանում և վորն այժմ կանգնած է յերկու ուղիների ճամպարաժանին, հրում են նրան սոցիալիստական ուղին։ Ի՞նչ յեղանակով։ Կոոպերացիայի միջոցով։ Յեվ ահա այստեղ տեղին է հիշել կոոպերատիվ շինարարության այն պլանը, վորն ընկ. Լենինն է ծավալել։ Մենք չենք ցանկանում յերկաթե ավելով միջակին քշել դեպի կոմունիզմ, հրելով նրան ռազմական կոմունիզմի աքացիներով։ Սոցիալիզմի տեսակետից դա դուրս յեկավ անճիշտ, անուղիղ, անպետք։ Մենք նրան գրավում ենք շեղ ուղիով—կոոպերացիայի միջոցով, վորը նրա ոգտին է։ Բայց այդ կոոպերացիան զարգանում է վոչ թե ար-

տագրության տիրապետող կապիտալիստական շրջանակի պայմաններում. նա շաղկապվում է ոչ թե կապիտալիստների վարկային բանկի, այլ պրոլետարիատի վարկային բանկի հետ, ոչ թե կապիտալիստական արդյունաբերության, այլ մեր պրոլետարական արդյունաբերության հետ, ոչ թե Մորգանի ու Ռոկֆելլերի տրեստների, այլ մեր պրոլետարական տրեստների հետ, ոչ թե կապիտալիստական յերկաթուղիների, այլ պրոլետարիատի ձեռքերում գտնվող յերկաթուղիների հետ։ Կոոպերացիան պիտի աճի աստիճանաբար, մենք նրա մեջ պիտի ավելի ու ավելի խոշոր դեր խաղանք, հիմնականում պիտի ավելի ու ավելի ուղղություն տանք նրա քաղաքականության, տնտեսապես ավելի ու ավելի ազդենք նրա վրա, պաշտպանելով ընդդեմ կուլակի չքավորությանն ու միջակին, բարձրացնելով գյուղացիության այն շերտերին, վորոնց սոցիալիզմի շինարարության տեսակետից բարձրացնել է հարկավոր։ Մեր ձեռքերում մենք ունենք լծակներ, վորոնք տարեցտարի ավելի ու ավելի պիտի վորոշեն յերկրի ընդհանուր զարգացումը, մենք մեր ձեռքերում ունենք այն կամրջակը, վորով պետարդյունաբերությունը միանում է գյուղացիական տնտեսության հետ,—կազմակերպչական կամրջակ, վորի անունը կոոպերացիա յե։ Յեվ այս կերպ, պաշտպանելով ընդդեմ կուլակի չքավորությանն ու միջակին, ոգնելով վոչ-կապիտալիստական ձևերին, նպաստելով մեքենաների հասարակական ոգտագործման տարբեր յեղանակների զարգացմանը, իսկ վերջին հաշվով—ելեկտրիֆիկացիայի անցնելուն, մենք սիստեմատիկաբար պիտի միջին գյուղացիության կապիտալիստական ուղիից յետ քաշենք դեպի սոցիալիզմը...

Ինքնին հասկանալի յե, վոր յեթե մենք չունենայինք պրոլետարական դիկտատուրա, յեթե մենք չունենայինք տնտեսական, քաղաքական ու կուլտուրական հրամայող բարձունքներ, ապա այս ամբողջ պլանը չեր կարող իրագործվել։ Յեթե այդ բարձունքները կան, ապա մենք պարտավոր ենք այժմ այստեղ վորոշ պայքար մղել։

Մեզ ասում են, թե մենք սովերավորում ենք դասակարգային պայքարը և այլն։ Բայց, ընկերներ, յերբ թերագնահատում են միջակին և Լենինի կոոպերատիվ պլանը, ապա հենց դրանում էլ արտահայտվում է հրաժարումը պրոլետարիատի հիմնական դասակարգային խնդրից։

(Ն. Ի. ԲՈՒԽԱՐԻՆ. Զեկուցում Լենինգրադի նահանգական արտակարգ XXIII կոնֆերենցիայում)

2. ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻ ՅԵՐԿՐՈՒՄ ՅԵՎ ՈՊՊՈԶԻՑԻԱՆ XIV ԿՈՒՍՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

Մենք պաշտպանում ենք իսկական լենինյան տեսակետ, յեթե պնդում ենք, թե, չնայելով մեր տեխնիկական հետամնացության, չնայելով նրան, վոր ունենք շատ գյուղացիություն, չնայելով նրան, վոր տեխնիկան և եկոնոմիկան դեռ անչափ հետամնաց են, մենք, այնուամենայնիվ, քայլ առ քայլ կարող ենք սոցիալիզմ կառուցել և կըկառուցենք մինչև բուն վախճանը, յեթե դրան չխանգարի զինված միջամտությունը կապիտալիստական պետությունների կողմից։ Հարցը այսպես է դրված. յեթե պահ մի պատկերացնենք մեզ, վոր մեր շրջապատին չլինի վորևէ կապիտալիստական պետություն, ապա՝ կըփլվենք մենք թե՞ չենք փլվի։ Մենք կպատասխանեյինք. մենք չեյինք փլվի, այլ կկառուցեյինք մինչև բուն վախճանը։ Բայց չէ՞ վոր մենք պարապ տարածության մեջ չենք ապրում, այլ ապրում ենք շրջապատված կապիտալիստական պետություններով։ Կարո՞ղ են նրանք արդյոք մեզ հաղթել զինված ուժով։ Մենք պատասխանում ենք. կարող են։ Այս պատճառով կարո՞ղ ենք մենք իսկապես հրաժարվել միջազգային հեղափոխության կուրսից։ Չե, չենք կարող։ Միջազգային հեղափոխությունն այն միակ յերաշխիքն է, թե կապիտալիստական պետությունները մեզ չեն ճզմի։ Բայց կարո՞ղ ենք մենք դրանից յեզրակացություն հանել, թե մեր տեխնիկական ու տնտեսական հետամնացությունը կործանում է մեզ։ Մենք ասում ենք. դա իսպառ այլ հարց է, և ով այդպես է խոսում, նա թերահավատություն է ներարկում մեր շինարար ուժերին, նա թերահավատություն է ներարկում մեր բանվոր դասակարգի ներքին զորությանը, այն հնարավորությանը, թե կարող է նա գյուղացիության ղեկավարը լինել, նա կատարյալ հակասության մեջ է ընկնում Լենինի հետ։

Յեթե մենք վստահություն չունենք, թե մեր ներքին ուժերը բավարար են սոցիալիզմի կառուցման համար, այն ժամանակ կարիք չկար հոկտեմբերյան բարրիկադները բարձրանալու. այն ժամանակ իրավացի եյին բոլոր մենշևիկները, վորոնք ասում եյին, թե այնպիսի հետամնաց յերկրում, ինչպիսին Ռուսաստանն է, իմաստ չկար սոցիալիստական հեղափոխություն սկսելու. այն ժամանակ իրավացի կլիներ ընկ. Տրոցկին, վորը պնդում եր, թե առանց հաղթական արևմտա-յեվրոպական պրոլետարիատի պետական ոգնության մենք անպայման կբախվենք գեղջուկի հետ, վորն անպայման կտապալի մեզ։

(Ն. Ի. ԲՈՒԽԱՐԻՆ. Զեկուցում Լենինգրադի նահանգական արտակարգ XXIII կոնֆերենցիայում)

ԹԵՄԱՆԵՐ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Ոգտվելով թվանշաններից ու փաստերից՝ համեմատեցեք ձեզ աշխատանք հայթայթող ձեռնարկության 1920 թ. և 1925/26 թ. վիճակը նրա մինչ պատերազմը (1913 թ.) ունեցած վիճակի հետ։ Պարզեցեք մանրամասնորեն, թե ինչով է բացատրվում ձեռնարկության վիճակի տարբերությունն այդ տարիներին։

Նկարագրեցեք համառոտակի ձեր ձեռնարկության և նրա զբաղեցրած բանվորների ընդհանուր վիճակը քաղաքացիական պատերազմի վերջին պահուն (1921 թ. գարունքին)։

Ի՞նչ չափով է ձեր ձեռնարկությունը մատակարարվել հում նյութ, վառելիք և օժանդակ նյութերեն։ Ի՞նչ չափով է մատակարարվել ձեր ձեռնարկության և ձեր շրջանի բանվորներին մթերք, վառելիք և լայն գործածության արդյունք։

2. Համառոտ զեկուցում արեք այս թեմայով. «Ի՞նչպես և ինչու պրոլետարիատը կարող է և ՆԵՊ-ի օգնությամբ կկառուցե սոցիալիստական հասարակություն»։ Զեկույցի մեջ պետք ապացուցվի, թե սոցիալիզմը կարելի յէ կառուցել և ավարտել մի յերկրում, և որ սոցիալիզմին կարելի յէ հասնել «ոչ այլ կերպ, քան ՆԵՊ-ի միջոցով» (Լենին)։

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Ինչու Լենինը ՆԵՊ-ն անվանել է «պրոլետարիատի միակ ճիշտ քաղաքականություն»։

2. ՆԵՊ-ի օրով ինչպես է տեղի ունենում տնտեսության կապիտալիստական ու սոցիալիստական տարրերի պայքարը քաղաքում և գյուղում և առայժմ ինչպիսի հաջողություններ է տվել մեզ այդ պայքարը։

3. Ինչի՞ վրա յէ խարսխված մեր անհողդողդ վստահությունը, թե հնարավոր է սոցիալիզմ կառուցել ԽՍՀՄ-ում։

ԶՐՈՒՅՑ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ինչի՞ մասին է զրույցը։

Նախորդ զրույցում մենք խոսել ենք մեր կուսակցության և Խորհրդային իշխանության տնտեսական քաղաքականության էության մասին։ Թե նրանում և թե վաղորեն, առաջին զրույցներում, մենք արդեն առիթ ենք ունեցել խոսելու մեր պետական արդյունաբերության դերի մասին, իբրև սոցիալիստական շինարարության հիմքի։ Ներկա զրույցում մենք կքննենք, թե Խորհրդային իշխանությունն ինչպես է սոցիալիստական արդյունաբերություն կառուցում, ինչ հիմնական խնդիրներ է առաջադրում իրան արդյունաբերության բնագավառում և ինչպես է նա լուծում այդ խնդիրները։

1. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ— ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԻՄՔՆ Է

ՆԵՊ-ի յերկու շրջանը։

ՆԵՊ-ի օրով, ինչպես մենք արդեն գիտենք, ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերն իրանց արտադրանքի աճակումով շատ ավելի առաջ են գնացել 1921 թ. հետ համեմատած։ Մեր ժողովրդական տնտեսության այդ արագ վերելքի մեջ անհրաժեշտ է տարբերել յերկու շրջան. առաջին շրջան, յերբ վերականգնման հիմնական ճիգերն ընթանում էին գյուղատնտեսական գծով. և յերկրորդ՝ յերբ վերականգնման ծանրության կենտրոնը փոխադրվում է ինդուստրիայի կողմը։ Վլադիմիր Իլյիչը հետևյալ կերպով է բնորոշել մեր տնտեսական քաղաքականության հիմքերը ՆԵՊ-ի առաջին շրջանում. «Ինչու յէ ավելի մեծ ուշադրություն նվիրվում գյուղացիական տնտեսության։ Նրա համար, որ միայն այնտեղից կարող ենք ստանալ մեզ անհրաժեշտ պարենն ու վառելիքը։ Բանվոր դասակարգը, յեթե նա՝ իբրև տիրապետող դա-

Դիագր. № 49. Ինչ գումարի յեն արտադրում գյուղատնտեսությունը, պետական յեվ մասնավոր արդյունաբերությունը (նախապատերազմյան ռուբլու միլիոններով հաշված).

ԾԱՆՈԹ.— 1. Գյուղատնտեսական արտադրանքի մեջ այստեղ մտցված է անտառատնտեսությունը, ձկնորսությունը և որսը: ԾԱՆՈԹ — 2. Խոշոր արդյունաբերությունն ավելի քան 95%-ով պետական է, մանրի համարյա 99%-ը մասնավոր:

սակարգ՝ կամենում է ուղիղ վարել տնտեսությունը, իբրև մի դասակարգ, որ իրագործում է իր դիկտատուրան, պիտի ասե. ահա ուր դրսևորվեց թույլ տեղը—գյուղացիական տնտեսության կրիզիսով»:

Մենք հարկադրվեցինք առաջին հերթին գյուղատնտեսությունը բարձրացնել, որպեսզի նրանից ստանալ կարողանանք հում նյութեր արդյունաբերության համար, պարեն և որպեսզի կարելի լինի բարձրացնել գյուղացիության գնողական ընդունակությունը:

ՆԵՊ-ի այդ շրջանը մենք արդեն մաշել ենք: 1925/26 թ. գյուղատնտեսությունը նախնական հաշվառումով բարձրանում է մինչև նախապատերազմյան մակարդակի $^9/_{10}$-ը: Գյուղատնտեսության այդ վերելքի հիման վրա նախնական հաշվառումով մեզ կհաջողվի 1925/26 թվականին արդյունաբերությունը բարձրացնել մինչև նախապատերազմյան մակարդակի 90-95%:

Առաջին շրջանի յելքին մենք դիտում ենք յերևույթներ՝ հակադիր նրանց, ինչ կային ՆԵՊ-ի սկզբին: Այն ժամանակ զգացվում եր վառելիքի ու պարենի սուր պակաս, այժմ յերկիրն զգում է ապրանքի սով, արդյունաբերական իրերի պակաս: ԽՍՀՄ մտել է մի այնպիսի շրջան, յերբ ամբողջ սոցիալիստական շինարարությունը բաղխում է նրան, որ ամբողջ ուշադրությունը կենտրոնացվի ինդուստրիայի վրա: Յեթե ներկայի հանդեպ արդյունաբերությունը հետագայում առավել մեծ չափով չմատակարարե գյուղատնտեսությանը մեքենաներ, տրակտորներ, արդյունաբերության իրեր և այլն, յեթե արդյունաբերությունն առավել մեծ չափով չմատակարարե տրանսպորտի պահանջները,—մեր ժողովրդական տնտեսությունը չպիտի կարողանա հետագա քայլերն անել սոցիալիզմի ուղիով: «Հերթական ու հիմնական խնդիրը,—ասում է ընկ. Ստալինը,—այժմ նրա մեջ է կայանում, որպեսզի արագացնենք մեր արդյունաբերության զարգացման թափը, առաջ շարժենք սաստկորեն մեր ինդուստրիան, օգտագործելով ունեցած ռեսուրսները, որով և արագացնենք տնտեսության զարգացումն իր ամբողջությամբ»: Դրանումն է յերկրի ինդուստրիալիզացիայի այն լոզունգի եյությունն ու հիմնական իմաստը, որը հռչակվել է XIV կուսհամագումարի կողմից և որը յերկար տարիներով դառնում է մեր շինարարության կարևորագույն լոզունգը:

Ընդսմին պիտի հիշել, թե արդյունաբերության ամեն մի զարգացում էլ ինդուստրիալիզացիա չի ներկայացնում իրանից: Յերկրի ինդուստրիալիզացիայի կուրսն արդյունաբերության զարգացումը հետամտող պարզ կուրս չէ, այլ պահանջ է ծանր արդյունաբերության զարգացման, սեփական մեքենաշինարարության զարգացման, կամ, ինչպես ասում են, արտադրության միջոցների արտադրության է:

Վարը, յերբ մենք մանրամասն կպատմենք, թե ինչպես է գրվել

ինդուստրիալիզացիայի հարցը XIV համագումարում, հասկանալի կդառնա, թե հայտնապես ինչու պիտի հենց այդպես հասկացվի յերկրի ինդուստրիալիզացիան։

Սոցիալիստական արդյունաբերության ծավալումը տեխնիկական բարձր մակարդակի հիման վրա։

Յերկրի ինդուստրիալիզացիան պահանջում է՝ սոցիալիստական պետական արդյունաբերության էլ ավելի վերելք ու ծավալում։ Մեզ անհրաժեշտ է վոչ միայն գործի գցել մեր ունեցած ֆաբրիկներն ու գործարանները, այլև վերասարքավորել։ Կապիտալիստներից մեզ ժառանգություն հասած սարքավորումն այնքան է հնացած, վոր մեր շատ ձեռնարկություններ՝ համեմատած Ամերիկայի, Անգլիայի և այլ յերկրների արդյունաբերության նույն ճյուղի մեքենավորած ձեռնարկությունների հետ հանդիսանում են տնայնագործական արհեստանոցներ։ Դրա վրա, որինակ, մատնանշում եր Համամիութենական Տեքստիլ Սինդիկատի հանգուցյալ նախագահ ընկ. Նոգինը։ Ամերիկյան տեքստիլ ֆաբրիկներում նրան զարմացնում եր բանվորների աննշան քանակը իլիկների քանակի հետ համեմատած։ Ամերիկայում 12 հազար իլիկ ունեցող ֆաբրիկում աշխատում են 60—70 մարդ, իսկ 40—50 հազար իլիկ ունեցող ֆաբրիկում վոչ ավելի 300—350 բանվորից։

Վերասարքավորման հետ միաժամանակ մենք պիտի կառուցենք նոր հսկայական ֆաբրիկներ ու գործարաններ՝ սարքավորած տեխնիկայի վերջին խոսքով։ Միայն այդպիսի ֆաբրիկներ ու գործարաններ կարող են մեզ տալ գնով առավել եժան և վորակով լավ ապրանք։

Պլանային սկզբունքն արդյունաբերության մեջ յեվ պլանային խնայողության «ռեժիմը»։

Սակայն ինչ պայմանով մենք կարող ենք բարձրացնել ու ծավալել մեր սոցիալիստական պետական արդյունաբերությունը։ Միայն այն պայմանով, յեթե մենք գործենք խիստ պլանով։ Կապիտալիստական տնտեսության մեջ տեղի յե ունենում տարերային շինարարություն, ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի տարերային վերելք։ Այնտեղ արդյունաբերության զարգացումն ընթանում է մղված կապիտալիստների ծարավից դեպի անծայրածիր մի շահ։ Ձեռնարկությունների, տրեստների և սինդիկատների մոլի մրցակցության մեջ կապիտալիստները չեն կարող արդյունաբերության վորոշ ճյուղերի վերելքը համաչափության մեջ պահել մյուսների հետ, իսկ ամբողջ արդյունաբերության վերելքը՝ գյուղատնտեսության և նրանց կողմից շահագործվող բնակչության մասսայի գնողական ընդունակության հետ։ Այս պատճառով նրանց մոտ արդյունաբերության յուրաքանչյուր վերելք հանգում է կրիզիսների, վորոնք ընդգրկում են տվյալ յերկրի ամբողջ տնտեսությունը և անցնում նրա հետ կապված մյուս յերկրները։ Մենք մեր պետական արդյունաբերությունը բարձրացնում ենք չե թե կապիտալիստների շահի համար, կապիտալիստների, վոր չկան նրա մեջ։ Մենք այն բարձրացնում ենք սոցիալիզմի շինարարության համար։ Բայց յեթե մենք էլ սկսենք առանց ընդհանուր պլանի աշխատել, յեթե մենք արդյունաբերության յուրաքանչյուր ճյուղի վերելք վատ համաչափությամբ զարգացնենք մյուսների հետ, իսկ նրանց բոլորին միասին գյուղատնտեսության հետ, ապա մենք էլ կունենանք մշտական կրիզիսներ կամ ապրանքների պակասությունից կամ նրանց առատությունից։ Մեզ մոտ էլ նման կրիզիսներից կվնասվեր վողջ տնտեսությունը, վորովհետև ժողովրդական տնտեսության հրամայող բարձունքները գտնվում են պրոլետարական պետության ձեռքին, և կրիզիսը մի ճյուղում խիստ կհարվածեր ամբողջ տնտեսությանը, ամբողջ պետությանը։ «Այս պատճառով, — ասում եր ընկ. Ստալինը XIV համագումարում, — շինարարության մեջ մեզնից պահանջվում է առանձին շրջանկատություն ու հեռատեսություն։ Այս պատճառով մենք այստեղ տնտեսությունը պիտի ղեկավարենք պլանային կարգով, այնպես, վոր թերահաշվումներ քիչ լինեն, վորպեսզի տնտեսության մեր ղեկավարությունը լինի ամենից հեռատեսը, ամենից նախատեսվածը, ամենից անսխալականը»։ Ինքնին հասկանալի յե, վոր պլանային սկզբունքն ամենից առաջ և ամենից ավելի պիտի մուծվեր սոցիալիստական արդյունաբերության շինարարության մեջ, վորն ավելի ու ավելի յե դառնում ԽՍՀՄ վողջ ժողովրդական տնտեսության ղեկավար ավանգարդը։

«Յերբեմն մեզ մոտ, — ասում է ընկ. Ստալինը, — սիրում են ֆանտաստիկ արդյունաբերական պլաններ կառուցել, հաշվի չնստելով մեր ռեսուրսների հետ։ Մարդիկ յերբեմն մոռանում են, վոր չի կարելի վոչ արդյունաբերական պլաններ կառուցել, վոչ այս կամ այն «ընդարձակ» և «համապարփակ» ձեռնարկությունները, յեթե միջոցների հայտնի մինիմում, պահեստի հայտնի մինիմում չկա։ Մոռանում են այդ մասին և առաջ վազում։ Իսկ ի՞նչ է նշանակում առաջ վազել արդյունաբերական պլանավորման գործում։ Դա նշանակում է կառուցել վոչ միջոցների համեմատ։ Այդ նշանակում է ճչալ ընդարձակ պլանների մասին, վարձել հազարավոր ու տասնյակ հազարավոր նոր բանվորներ, աղմուկ բարձրացնել, իսկ հետո, յերբ կպարզվի միջոցների պակասությունը, — արձակել բանվորներին, վերջնահաշիվ տալ նրանց, հսկայական վնասներ կրելով դրա մեջ, հիասթափություն մտցնելով շինարարության գործը և քաղաքական սկանդալ ստեղծելով։ Հարկավո՞ր է արդյոք դա մեզ, Չե, ընկերներ, դա մեզ հարկավոր չի։ Մենք չպետք է վոչ յետ մնանք ինդուստրիայի զարգացման ընթացքից, վոչ առաջ վազենք»։

Արդյունաբերության պլանային շինարարության հարցերն առանձին ուժով են ծառանում մեր տնտեսության առաջ հարակից յերկրի ինդուստրացման կուրսի հետ։ Չի կարելի կիրառել յերկրի ինդուստրիալիզացիա, յեթե այդ ինդուստրիալիզացիայի թափը չի համաձայնեցրած վողջ ժողովրդական տնտեսության, գյուղատնտեսության վիճակի, ինդուստրիալիզացիայի համար ունեցած միջոցների հաշվառման հետ։

Վորպեսզի մենք կարողանանք ամբողջ ժողովրդական տնտեսությունը պլանով տանել, անհրաժեշտ է, վոր պետության ձեռքերում կուտակվեն հայտնի պահեստներ (ոժանդակ միջոցներ, պաշարներ)։ Այդ պահեստները հարկավոր են, վորպեսզի յերկիրն ապահովել կարելի լինի տարերային աղետներից (անբերրիություն, հեղեղում), մեր տնտեսության հապաղումներից, վորոնք կարող են տեղի ունենալ, յեթե բախումներ լինեն կապիտալիստական յերկրների հետ, կարող են տեղի ունենալ սխալներից ու թերահաշվումներից, վորոնք դեռ անխուսափելի յեն մեզ մոտ, քանի վոր ահագին դժվարություն է պլանավորել մեր պետական տնտեսությունը, յերբ միլիոնավոր մանր գյուղացիական տնտեսություններ գոյություն ունեն և այլն։ Պահեստներ ունենալով, մենք միշտ կարող ենք ուղղել գործերը տնտեսական ֆրոնտի այն մասում, ուր վորևէ պատճառով պատռվածք է գոյացել։

Արդյունաբերության պլանային շինարարությունը պարտադրաբար յենթադրում է, թե պետությունը հայտնի պահեստներ պիտի յետ դցի մանյովրների համար։

Պլանային սկզբունքն արդյունաբերության մեջ ուժեղացնելու հարցը քննության առավ մեր կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի ապրիլյան (1926 թ.) պլենումը։ Հենց 1925/26 թ. արդյունաբերության վերելքի ու զարգացման համար նշանակված եյին այնպիսի պլաններ, վորոնք անիրագործելի հանդիսացան։ Իր բանաձևի մեջ պլենումը մատնանշեց.

«Նոր շինարարության ներկա ժամանակաշրջանում առանձին նշանակություն է ստանում պլանային սկզբունքի ուժեղացումը և պլանային կարգապահության ռեժիմի ներարկումը բոլոր պետական որգանների գործունեյության մեջ։ Մասնավորապես, վորևէ զգալի ծախք նոր շինարարության բնագավառում, թե պետական և թե տեղական նշանակություն ունեցող, պիտի համաձայնեցվի ընդհանուր տնտեսական պլանի հետ։ Շինարար աշխատանքների տարերային, անջատ ծավալումը, վոր առաջնորդում է դեպի միջոցների փոշիացում և անտնտեսավար ոգտագործում, վճռականորեն պիտի արգելվի։ Այս բնագավառում ավելի, քան վորևէ այլ տեղ, պիտի ընդարձակվի պլանավորող որգանների դերը»։

Արդյունաբերության տեխնիկական վերականգնման ու վերասարքավորման խնդիրը։

Այս կերպ յերկրի ինդուստրիալիզացիայի նպատակով արդյունաբերության պլանային վերասարքավորում յեվ ընդարձակում—ահա նոր տնտեսական քաղաքականության յերկրորդ ժամանակաշրջանի գըլխավորագույն խնդիրը, յերկրորդ ժամանակաշրջանի, վորի մասին մենք խոսել ենք զրույցի սկզբում։

Վերը մենք արդեն ասել ենք, թե մեր արդյունաբերության վերականգնումը, վերասարքավորումը և ընդարձակումը պետք է տարվի նրա տեխնիկական մակարդակի բարձրացման հիմքի վրա։

Մենք չպիտի կարողանանք եժան ապրանքներ տալ գյուղացիությանը, յեթե չփոխենք մեր ծայր աստիճան հետամնաց արդյունաբերության տեխնիկական սարքավորումը։ Թե ինչ նշանակություն ունի իրերի եժանացման համար ձեռնարկության տեխնիկան, այդ տեսնվում է հետևյալից. ամերիկացի Ֆորդը՝ բարելավելով արտադրության տեխնիկան իր ավտոմոբիլի գործարանում՝ ավտոմոբիլի վաճառքի գինը հասցրեց 1700 ռուբլուց մինչև 460 ռուբլի։ Մեր արդյունաբերության տեխնիկայի հետամնացության շնորհիվ մենք բոլոր ապրանքներն արտադրում ենք ավելի թանգ, քան արտասահմանում*։

Այս պատճառով էլ մեր առաջ առանձին ուժով է ծառանում ամբողջ արդյունաբերության վերասարքավորման, արտասահմանյան լավագույն որինակներով նոր գործարանների կառուցման հարցը։

Ելեկտրիֆիկացիայի դերը։ Լենինը ելեկտրիֆիկացիայի նշանակության մասին սոցիալիզմի կառուցման համար։

Մեր արդյունաբերության ընդարձակման ու տեխնիկական վերանորոգման, ամբողջ ժողովրդական տնտեսության վերելքի ու նրա զարգացումը սոցիալիստական ուղիով մղելու անհրաժեշտությունից բղխում է արդյունաբերության, այլև նրա հետ միաժամանակ ամբողջ ժողովրդական տնտեսության ելեկտրիֆիկացիայի անհրաժեշտությունը։ Տնտեսության ելեկտրիֆիկացիան նրա մի այնպիսի վերակազմավորումն է, յերբ առավելագույն չափով է ոգտագործվում ելեկտրականությունը։ Ելեկտրականության ոգտագործումը հսկայական ոգուտներ է տալիս ժողովրդական տնտեսության, իսկ ԽՍՀՄ-ում, ուր անսպառելի

* Թե վորքան է յետ մնացել մեր ամբողջ ժողովրդական տնտեսությունը, տեսնվում է, որինակ, հետևյալ փաստերից։ Բոլոր հիմնական միջոցները, վոր մուծված են մեր գյուղատնտեսության, արդյունաբերության ու տրանսպորտի մեջ, հավասար են 40 միլիարդ ռուբլու, այն ժամանակ, յերբ մեն-միայն Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների յերկաթուղիները մուծած կապիտալները հավասար են 36 միլիարդ ռուբլու։ Ելեկտրական եներգիայի մեր արտադրությունը 3 անգամ նվազ է, քան ելեկտրական եներգիայի արտադրությունը Գերմանիայում և 20 անգամ նվազ, քան Միացյալ Նահանգներում։

ընական հարստությունները գոյություն ունեն, այն ուղի յե բռնում յերկրի անհագին զարգացման և միլիոնավոր աշխատողների կյանքի բարելավման համար:

Ելեկտրիֆիկացիայի պլանի հանճարեղ խրախուսողը Վլադիմիր Իլյիչ Լենինն եր:

«Յեթե,—ասում եր ընկ. Լենինը 1920 թ.,—Ռուսաստանը շուռ չտանք այլ տեխնիկայի, ավելի բարձր, քան առաջ, խոսք չի կարող լինել ժողովրդական տնտեսության վերականգնման ու կոմունիզմի մասին: Կոմունիզմը—դա Խորհրդային իշխանությունն ե պլյուս ամբողջ յերկրի ելեկտրիֆիկացիան, վորովհետև առանց ելեկտրիֆիկացիայի անկարելի յե բարձրացնել արդյունաբերությունը...

Մենք ավելի յենք թույլ, քան կապիտալիզմը չե թե միայն համաշխարհային մակարդակով, այլ և յերկրի ներսում: Դա հայտնի յե բոլորին: Մենք այդ գիտակցել ենք և մենք գործը կհասցնենք նրան, վորպեսզի տնտեսական պատվանդանը մանր գյուղացիականից անցնի խոշոր արդյունաբերականի: Միայն այն ժամանակ, յերբ յերկիրն ելեկտրիֆիկացիայի կենթարկվի, յերբ արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը և տրանսպորտը կստանան ժամանակակից խոշոր արդյունաբերության տեխնիկական պատվանդանը, միայն այն ժամանակ մենք կհաղթենք վերջնականապես»:

Ռուսաստանի ելեկտրիֆիկացիայի ծրագիրը մշակության յենթարկվեց հատուկ «Ռուսաստանի ելեկտրիֆիկացիայի պետական հանձնաժողովի» կողմից (կրճատ անունը—Գոելրո) և զեկուցվեց Խորհուրդների VIII համագումարին, վորը այն հիմք ընդունեց: Ավելի կոնկրետ ծրագիր զեկուցվեց Խորհուրդների IX համագումարին, վորը հաստատեց 31 ռայոնական կայանների կառուցումը: Այդ կայաններից 1927 թ. ընթացքում պիտի աշխատեն բոլոր 7-ը:

Վորպեսզի լավ յուրացվի «Սոցիալիստական արդյունաբերության շինարարությունը՝ սոցիալիզմի հիմքն ե» բաժինը, պատասխաններ տվեք հետևյալ հարցերին.

1. Ինչումն ե տարբերությունը ՆԵՊ-ի առաջին յեվ յերկրորդ ժամանակաշրջանների միջև:

2. Ինչու և ինչպես ե անհրաժեշտ մեզ ծավալելու պետական սոցիալիստական արդյունաբերությունը:

3. Ինչումն ե յերկրի ելեկտրիֆիկացիայի եյությունն ու իմաստը, վոր մեզ կտակել ե Վ. Ի. Լենինը:

2. ՅԵՐԿՐԻ ԻՆԴՈՒՍՏՐԻԱԼԻԶԱՑԻԱՆ ԻԲՐԵՎ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆ ԽՍՀՄ-ՈՒՄ

XIV համագումարը յերկրի ինդուստրիալիզացիայի մասին:

Յերկրի ինդուստրիալիզացիայի խնդիրը կուսակցությունն իբրև գլխավոր հերթական խնդիր դրեց XIV համագումարում: Համագումարը յելնում եր նրանից, թե մենք հարկադրված ենք տնտեսություն կառուցել կապիտալիստական շրջապատի մեջ և վոր, մյուս կողմից, անհրաժեշտ ե այնպես կառուցել տնտեսությունը, վորպեսզի սոցիալիստական տարրերն առաջնություն նվաճեն կապիտալիստականի հանդեպ և աստիճանաբար վտարեն վերջիններին:

ԽՍՀՄ շրջապատող կապիտալիստական պետությունները խնդիր ունեն տնտեսապես իրանց յենթարկելու Խորհրդային Միությունը: Այդ յենթարկումը նրանք պատկերացնում են այսպես. ԽՍՀՄ մնում ե ագրար (հողագործական) յերկիր, վոր հում նյութեր ե մատակարարում կապիտալիստորեն զարգացած յերկրներին և փոխարենն արդյունաբերական իրեր պետք ե ստանա: Այսպես, օրինակ, Դաուեսի պլանը, վոր վորոշում ե հաղթողներին պատերազմում պարտված Գերմանիայի կողմից դրամական գումարների վճարելու կարգը, կառուցված ե հայտնապես ԽՍՀՄ նման ձևով օգտագործելու հաշվի վրա: Այդ պլանով Գերմանիան պիտի արդյունաբերական ապրանքներ ներմուծեր ԽՍՀՄ և վաստակած գումարները հաղթող պետություններին վճարեր: Ի՞նչ ե նշանակում կապիտալիստական պետությունների պլանի իրագործումը ԽՍՀՄ վերաբերմամբ: Դա նշանակում ե Խորհրդային Միության բանվորների ու գյուղացիների ստրկացում: Դա նշանակում ե բանվորների ու գյուղացիների ոտարերկրյա կապիտալիստների ձեռքով այն ստրկացման շարունակությունը, ինչ գոյություն ուներ նախահեղափոխական ժամանակ: Վարը բերած աղյուսակը ցույց ե տալիս, թե ցարական Ռուսաստանն ինչ աստիճանի յեր կախված մյուս յերկրների կապիտալիստական արտադրությունից:

Արտասահմանից մեքենաների ներմուծումը Ռուսաստան 1912 թվականին

	%% տարվա ընթացքում արդյունաբերությունը կամ նրա առանձին ճյուղերը մտած ընդհանուր թվի նկատմամբ.
Ներմուծված են մեքենաներ	41,5
Այս թվում	
Դազգյահներ մետաղի և փայտի մշակության համար	88
Ներքին այրեցման շարժիչներ	59
Շոգու տուրբիններ ու մոքենաներ	32,4
Շոգեկաթսաներ ուկրակարաններ	18,5
Տեքստիլ մեքենաներ	27,2
Կարի մեքենաներ	31,5
Տպարանական ու լիտոգրաֆիական մեքենաներ	98
Գյուղատնտեսական մեքենաներ	53

(«Պրավդա», 1926 թ. մարտի 20)

ԽՍՀՄ բանվորներն ու գյուղացիները պիտի ձգտեն ազատագրվելու ոտարերկրյա կապիտալիստական արտադրության ստրկացու-

մից։ Նրանք ամեն կերպ պետք է ձգտեին դիմադրելու նրան, որ ԽՍՀՄ արդյունաբերական կապիտալիստական յերկրների ագրար (հողագործական) կցանը չդառնա, հում նյութերի նրանց պարզ մատակարարը և արդյունաբերական իրերի գնորդը։

«Մենք,—զեկուցում եր Կենտրոնական Կոմիտեի անունից XIV կուսհամագումարին ընկ. Ստալինը,—պետք կառուցենք մեր տնտեսությունը այնպես, վորպեսզի մեր յերկիրը համաշխարհային կապիտալիստական սիստեմի կցանը չդառնա, վորպեսզի նա չներառվի կապիտալիստական զարգացման ընդհանուր սիստեմի մեջ, իբրև նրա ոժանդակ ձեռնարկությունը, վորպեսզի մեր տնտեսությունը զարգանա վոչ իբրև համաշխարհային կապիտալիզմի ոժանդակ ձեռնարկություն, այլ իբրև ինքնուրույն տնտեսական միավոր, վոր կռթնում է գլխավորապես ներքին շուկայի վրա, կռթնում է մեր ինդուստրիայի զոդման վրա մեր յերկրի գյուղացիական տնտեսության հետ»։

Համագումարն ընդունեց, թե հաստնապես այդպիսին պետք լինի մեր ժողովրդական տնտեսության զարգացման գլխավոր գիծը և վոր այդ գիծը պահանջում է ծայրագույն չափերով ծավալել մեր արդյունաբերությունը, սակայն այն չափով ու համապատասխան այն ռեսուրսների, ինչ մենք ունենք։ Համագումարը վճռականորեն մերժեց մեր յերկիրը կապիտալիզմի համաշխարհային սիստեմի կցան դարձնելու քաղաքականությունը։

Յերկու թեքում ինդուստրիալիզացիայի հարցի մեջ։

Սակայն ինդուստրիալիզացիայի հարցը բոլորը չեն այնպես ըմբռնում, ինչպես այն ըմբռնում է XIV համագումարը։ Յերկու թեքում գոյություն ունի այդ հարցում։ Նրանցից առաջնի կողմնակիցները՝ խոսքով ընդունելով յերկրի ինդուստրիալիզացիայի անհրաժեշտությունը՝ իրականում կառուցում են մեր տնտեսական զարգացման այնպիսի պլան, վորի գոյությամբ յերկիրն առաջվա նման պետք մնա առավելապես ագրար, հողագործական յերկիր։ Նրանք ասում են, թե այժմ եվ առաջին հերթին անհրաժեշտ է ուժգին թափով բարձրացնել չե թե արդյունաբերությունը, այլ գյուղատնտեսությունը։ Նրանք յենթադրում են արտասահման հանել ուժգնորեն զարգացող գյուղատնտեսության արդյունքները և այդտեղից ներմուծել մեր յերկրի ինդուստրիալիզացիայի համար հարկավոր բոլոր պարագաները և ներքին սպառումն ապահովող արդյունաբերական ապրանքները։ Այդ թեքման կողմնակիցները «դեպի ինդուստրիալիզացիան ուղին յեն համարում յերկրի հետագա ագրարացման* միջոցով»։ Այդ թեքման վնասակարության վրա XIV համագումարում կուսակցության Կենտրոնական Կոմիտեի հաշվետվության մեջ մատնանշեց ընկ. Ստալինը։

«Այդ գիծը,—ասում եր նա,—ըստ եության պահանջում է, վոր մեր ինդուստրիան կծկվի... Այդ գիծը տանում է դեպի այն, վոր մեր յերկիրը յերբեք կամ համարյա յերբեք չկարողանա ըստ հարկին ինդուստրիալիզացիայի յենթարկվել. մեր յերկիրը տնտեսականորեն ինքնուրույն միավորից, վոր կռթնում է ներքին շուկայի վրա, պետք է վոր օբյեկտիվորեն դառնա ընդհանուր կապիտալիստական սիստեմի կցան։ Այդ գիծը նահանջ է նշանակում մեր շինարարությունից։ Դա մեր գիծը չե»։

Այդ թեքման կողմնակիցների նահանջը սոցիալիստական շինարարությունից նրա մեջ է կայանում, վոր նրանց պլանի հետևանքով մեր գյուղատնտեսության զոդում կարող է ստեղծվել չե թե մեր պետական սոցիալիստական արդյունաբերության հետ, այլ Արևմտյան Յեվրոպայի կապիտալիստական արդյունաբերության հետ։ Իսկ դա նշանակում է, թե մենք չենք կարող գյուղացիությանը շուռ տալ դեպի սոցիալիստական զարգացման ուղին։

Մեր յերկրի ինդուստրիալիզացիայի հարցում մյուս թեքումը ներկայացնում է մի հայեցակետ, վոր արտահայտում են այսպես կոչված «ծայրահեղ ինդուստրիալիստները» կամ «գեր-ինդուստրիալիստները»։ Այդ տեսակետի ներկայացուցիչները մատնանշում են, թե Հոկտեմբերյան հեղափոխությունն ազատել է գյուղին յուրաքանչյուր տարի մոտ 2 միլիարդ չերվոն ռուբլի վճարից, վոր նա տալիս եր կալվածատերերին (հողի համար) և պետության (հարկեր)։ Գյուղում կան ազատ դրամական միջոցներ, վորոնց մի մասը գյուղացիները չեն կարողանում գործադրել արդյունաբերական իրեր գնելու համար, վորովհետև այդպիսիք բացակայում են շուկայում։ Գյուղի վրա գործադրած հարկային ճնշումով և արդյունաբերական իրերի մեծաքանակ գների հավելումով պետք է այդ դրամական միջոցները դուրս կորզել գյուղից և այդ ուղիով ստացված միջոցները գործադրել ԽՍՀՄ ըստ հնարավորության արագ ինդուստրիալիզացիայի վրա։ Այդ տեսակետի կողմնակիցները գյուղը դիտում են իբրև գաղութ ինդուստրիայի համար, իբրև մի տեղ, ուր պետությունը կարող է առանց առանձին մեծ աշխատանքի խոշոր լրացուցիչ միջոցներ ստանալ յերկրի ինդուստրիալիզացիայի համար։ Բնորոշելով այդ տեսակետի կողմնակիցներին՝ ընկ. Ստալինն ասում է. «Մեր կուսակցության մեջ մարդիկ կան, վորոնք գյուղացիության աշխատող մասսան դիտում են իբրև օտարացեղ մարմին, իբրև արդյունաբերության համար շահագործման օբյեկտ, իբրև գաղութի պես մի բան մեր ինդուստրիայի համար։ Այդ մարդիկ—վտանգավոր մարդիկ

* Յերկրի ագրարացում—յերկրի հողագործական բնույթի պահպանումը և հետագայում ու գյուղատնտեսության զարգացումն առավելապես։



Դիագր. № 20. Ուր է գնում պետարդյունաբերության շահույթը։
(«Труд в СССР» ժողովածուի նյութերից)

են, ընկերներ»։ Այդ թեքման վնասն ու վտանգավորությունը կայանում է նրանում, որ նա սպառնում է բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքին։ *Ճնշում գործադրել գյուղի վրա՝ նրանից լրացուցիչ միջոցներ կորզելու համար՝ կնշանակեր նրան, որ նախ և առաջ կթուլանար գյուղացիությունը, կընկներ նա, իսկ յերկրորդ՝ կխախտվեր բանվոր դասակարգի դաշինքը գյուղացիության հետ։ Գյուղացիության անկումն սպառնալիք կներկայացներ և արդյունաբերության զարգացման համար, իսկ բանվորա-գյուղացիական դաշինքի խախտումը կըսպառնար պրոլետարիատի դիկտատուրային և Խորհրդային իշխանության գոյությանը։ Հասկանալի յե, որ յերկրի ինդուստրիալիզացիայի հարցում կուսակցությունը մերժում է և այդ տեսակետը։ Այնինչ հենց մեր յերկրի համար նման վնասակար, վտանգավոր տեսակետի վրա կանգնեց XIV համագումարից հետո նրանում հանդես յեկած նոր օպպոզիցիան, միանալով այստեղ 1923/24 թվականի օպպոզիցիայի ղեկավարներին—ընկ. ընկ. Տրոցկուն և Պրեոբրաժենսկուն։*

Սոցիալիստական կուտակումը իբրև յերկրի ինդուստրիալիզացիայի պայման։

Յերկրի ինդուստրիալիզացիան, ինչպես հասկանալի յե ինքնին, միանգամայն անհնարավոր կլիներ, յեթե միջոցներ չկուտակվեն խորհրդային պետության ձեռքերում։ *Յեվ իսկապես մեզ հարկավոր է տեխնիկորեն բարելավել հին ֆաբրիկներն ու գործարանները, շինել նորը, վարձել նոր բանվորներ և այլն։ Իսկ այդ բոլորի համար պահանջվում են խոշոր միջոցներ։ Իսկ վորտեղից վերցնել այդ միջոցները։ Սեփական խնայողություններից, սոցիալիստական կուտակումից։ Իսկ ինչը պիտի ներկայանա մեզ մոտ սոցիալիստական կուտակման աղբյուր։ Սոցիալիստական կուտակման աղբյուրներ մենք ունենք, և մեր խնդիրը նրանց ճիշտ օգտագործելու մեջ է կայանում։ Այդպիսի աղբյուրներ են հանդիսանում. 1) Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո պետության սեփականությունը դարձած հողը, ֆաբրիկները, գործարանները և այլն, 2) ցարական պարտքերի ջնջումը, վորը ԽՍՀՄ բանվորներին ու գյուղացիներին ազատագրեց միքանի հարյուր միլիոն ռուբլի մեն-միայն տոկոսների վճարումից և թողնում է այդ միլիոններն արդյունաբերության շինարարության համար, ամբողջ ժողովրդական տնտեսության շինարարության համար, 3) պետական սոցիալիստական արդյունաբերության շահույթը, 4) պետության ձեռքերում գտնվող արտաքին առևտրի շահույթը, 5) ներքին առևտրի շահույթը, 6) պետության ձեռքերում գտնվող բանկերի շահույթը, 7) բյուջեյի յեկամուտները, մասնավորապես քաղաքի և գյուղի բուրժուազիայից (կուլակություն) գանձած հարկերը, վորոնց մի մասը պետությունը գործադրում է ամբողջ ժողովրդական տնտեսության և մասնավորապես արդյունաբերության զարգացման վրա։*

1924/25 ԹՎԱԿԱՆԻՆ ԳԱՆՁԱՐԱՆԻ ԱՄԲՈՂՋ ՅԵԿԱՄՈՒՏՆԵ



315 ՄԻԼԼ. ՌՈՒԲ. ՊԵՏԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Դիագր. *№ 21.* Վորտեղից են առնվում յերկրի ինդուստրիալիզացիայի միջոցները

(Ընկ. ՍՏԱԼԻՆԻ՝ XIV *կուսհամագումարին տված զեկուցումից)*

Նախընթաց էջում բերած № 21 դիագրամման ցույց է տալիս, թե 1924/25 թ. ինչ միջոցներ են տվել խորհրդային գանձարանին սոցիալիստական կուտակման այդ աղբյուրները։ Նրանից տեսնվում է, թե այդ տարին ինչ շահ են տվել արդյունաբերությունը, բանկերը և այլն և ինչքան են նրանք հատկացրել գանձարանին, վորը միջոցների գլխավոր մասսան կգործադրե ԽՍՀՄ ինդուստրիալիզացիայի վրա։

Այդպիսին են մեր յերկրի սոցիալիստական կուտակման գլխավորագույն աղբյուրները։ Գործն ուղիղ տանելու դեպքում նրանք կարող են մեծ միջոցներ տալ յերկրի ինդուստրիալիզացիայի համար։ Իսկ թե գործն անհմուտ տարվեցավ, կարող է պատահել, վոր նրանց միջոցով դրամը հոսե մասնավոր կապիտալի ձեռքերը, վորն այս կերպ կշահվի պետության հաշվին։

Հետևաբար կուսակցության յեվ ամբողջ յերկրի առաջ խնդիր է ծառացած—սոցիալիստական կուտակման այդ բոլոր աղբյուրները օգտագործել այնպես հմուտ ու խնայողաբար, վորպեսզի նրանք արդարացնեն իրանց կոչումը, վորպեսզի նրանք պրոլետարական պետության ձեռքերը տան յերկրի ինդուստրիալիզացիայի համար նրան հարկավոր միջոցները։

Սոցիալիստական կուտակման ճիշտ օգտագործման անհրաժեշտությունը յեվ խնայողության ռեժիմը։

Միջոցների մեն-միայն ուղիղ և հմուտ կուտակումը դեռ չի ապահովում յերկրի ինդուստրիալիզացիան։ «Պետք է դեռ,—ասում է ընկ. Ստալինը,—հմուտ լինել կուտակվող պահեստները ծախսելու խելացիորեն, հաշվարար, այնպես, վորպեսզի ժողովրդի գույքի վոչ մի կոպեկ չկորչի իզուր, վորպեսզի կուտակման օգտագործումն ընթանա այն հիմնական գծով, վոր նպատակ ունի բավարարել մեր յերկրի ինդուստրիալիզացիայի կարևորագույն պահանջները։ Առանց այդ պայմանների մենք յերկյուղ ունենք, թե կարելի յե հանգել կուտակված միջոցների հափշտակման, նրանց փոշիացման մանր ու խոշոր ծախքերի զանազան տեսակի հոսներով, վոր վոչինչ ընդհանուր չունեն վոչ ինդուստրիայի զարգացման հետ, վոչ ամբողջ ժողովրդական տնտեսության առաջխաղացման հետ»։ Այդ հմտությունը դեռ մենք չունենք։ Այնինչ յերկյուղ կա, վոր առանց նրան յերկրի ինդուստրիալիզացիան կարող է մնալ միայն իբրև կյանքում չկիրառված լոզունգ։ Մեր պետական ու կոոպերատիվ հիմնարկները դեռ բավարար չափով խնայող չեն, նրանք դեռ դրամական միջոցներ են ծախսում անհրաժեշտ չափից ավելի, հենց այն միջոցները, ինչն օգուտով կարելի յեր գործադրել յերկրի ինդուստրիալիզացիայի վրա։ Այդ միջոցները գործադրվում են և փքուն շտատների վրա, և ռեկլամի վրա, և ծախքերի վրա, վոր վոչինչ ընդհանուր չունեն այդ հիմնարկների նպատակների հետ և այլն,

տալ և պարզապես հափշտակվում են այդ հիմնարկներին կպած անբարեխիղճ մարդկանց կողմից։ Մյուս կողմից մեր հիմնարկները դեռ այնքան էլ չգիտեն գործերը վարել տնտեսաբար, խնայողաբար։ Դրա հետևանքով մեր հիմնարկների արածից շատ բան յեռապատիկ թանկ է նստում և հաճախ պետությանը վնասից զատ այլ բան չի տալիս։

Հարակից սրան ի՞նչ խնդիր է ծառացած ուրեմն կուսակցության և վողջ յերկրի առաջ։

Ամբողջ ԽՍՀՄ պետք է կիրառել խիստ խնայողության ռեժիմ։ «Պետք է, վերջապես,—ասում է ընկ. Ստալինը,—այդ գործին անցնել ըստ հարկին, բոլշևիկորեն և կիրառել խստագույն, խնայողության գազանային ռեժիմ։ Պետք է, վերջապես, անցնել այդ գործին, յեթե մենք չենք կամենում այլևս թույլ տալ, վոր մեր կուտակումը փոշիանա ի վնաս արդյունաբերության»։

ԿԿ ապրիլյան (1926 թ.) պլենումը յերկրի ինդուստրիալիզացիայի պայմանների մասին (հարակից 1926 թ. տնտեսական դժվարությունների)։

Յերկրի ինդուստրիալիզացիայի հարցը—այդ ինդուստրիալիզացիայի համար կուտակման աղբյուրների և կուտակած միջոցների ուղիղ ոգտագործման հարցը—XIV համագումարից հետո քննության առնվեց մեր կուսակցության ԿԿ 1926 թ. ապրիլյան պլենումում։ Այդ հարցերը քննության առնվեցին հարակից այն տնտեսական դժվարություններին, վոր սկսած 1925 թվականի աշնանից ԽՍՀՄիությունն է կրում։

Նախորդ գլուխներում մենք խոսել ենք մեր տնտեսական շինարարության այն դժվարությունների մասին, վորոնք բղխում են յերկրում գոյություն ունեցող 22 միլիոն փոշիացած, մանր, հետամնաց գյուղացիական տնտեսությունների պայմանից, յերկիր կապիտալիստական շրջապատից և անցյալի ծանր ժառանգությունից (ինքնակալություն, իմպերիալիստական ու քաղաքացիական պատերազմներ)։ 1925—26 թ. այդ դժվարությունները սրություն ստացան շնորհիվ նրան, վոր անաջողություններ յեղան տնտեսության պլանային ղեկավարության մեջ։ 1925 թ. աշնանը կազմվում է հացամթերման, արտածման, ներմուծման, դրամ բաց թողնելու և հացամթերման գործողությունների ու արդյունաբերության վարկավորման չափազանցված մի պլան։ Այդ պլանների հիման վրա արդյունաբերությունը ևս կազմում է իր ծավալման ու հիմնական շինարարության չափազանցված պլանը։ Կյանքը գլորեց այդ պլանները։ Մենք չկարողացանք շուկա հանել գյուղացիությանն անհրաժեշտ արդյունաբերական ապրանքների քանակը, և գյուղացիությունը մղում չստացավ իր հացը վաճառելու։ Մյուս կողմից աշնան անձրևները վորոշ չափով նվազեցրին բերքը։ Դրա հետևանքով մենք չմթերեցինք և արտասահման չհանեցինք հացի հար-

կավոր քանակը և, հետևաբար, չկարողացանք ներմուծել արդյունաբերական սարքավորման այն քանակը, ինչ հարկավոր էր իրագործելու մեր արդյունաբերության ծավալման նշանակված պլանը։ Դրա կողքին փողի անչափ շրջանառության հանելը, յերբ պակասում էին արդյունաբերական ապրանքները, այն հետևանքը տվեց, վոր վորոշ չափով նվազեց մեր չերվոնեցի գնողական ունակությունը։ Սպառնալիք ստեղծվեց մեր ամուր դրամի կայունության դեմ, դրամի, վոր մեր տնտեսական շինարարության հիմքերից մեկն է։

Մեր արդյունաբերության թույլ զարգացումն ապագայում ևս մեզ համար տնտեսական դժվարությունների սպառնալիք է ստեղծում և դա այն պատճառով, վոր մենք ի վիճակի չենք բավարարելու ապրանքների հանդեպ աճող պահանջը։ Ապրանքային սովը մենք կարող ենք միայն աստիճանաբար մաշել, այն չափով, ինչ չափով մենք պիտի ինդուստրիալիզացիայի յենթարկենք մեր յերկիրը։ Հետևաբար, մեր տնտեսական դժվարությունները մեզ անընդհատ հիշեցնում են այն անհրաժեշտության մասին, թե պետք է գործադրել բոլոր ճիգերը, վորպեսզի լուծվի XIV համագումարի կողմից դրված յերկրի ինդուստրիալիզացիայի խնդիրը։ Կենտրոնական Կոմիտեյի ապրիլյան պլենումը մանրամասն ցուցմունքներ տվավ ինդուստրիալիզացիայի հարցի մասին, վոր որակարգի մեջ է դրել XIV համագումարը։ Իր բանաձևի մեջ պլենումը հենց մատնանշեց սոցիալիստական կուտակման աղբյուրների և նրանց ուղիղ ոգտագործման և խնայողության ռեժիմի դաժան իրագործման անհրաժեշտության վրա։ ԿԿ պլենումն ասում է. «Արդյունաբերության զարգացման նվաճած մակարդակի պայմաններում յերկրի ինդուստրիալիզացիան և արդյունաբերական իրերի ապրանքային մասսայի բազմացումը ներկա ժամանակաշրջանում բախվում է սպեցիֆիկ (ինքնահատուկ) դժվարությունների։ Արդյունաբերությունը համարյա լրությամբ ոգտագործել է բուրժուական ժամանակաշրջանից ժառանգած հիմնական կապիտալը և իր հետագա զարգացման մեջ առաջադրում է ձեռնարկությունների վերասարքավորման և նոր ֆաբրիկ-գործարանային շինարարության պահանջ, վորն իր հերթին ամբողջապես կախում ունի այն կուտակումների չափից, ինչ կարելի կլինի մուծել արդյունաբերության ընդարձակման գործի մեջ։

Անարտադրող դասակարգերի (բուրժուազիա և ազնվականություն) եքսպրոպրիացիան, պարտքերի ջնջումը, արդյունաբերության, պետական առևտրի (ներքին և արտաքին) և ամբողջ վարկային սիստեմի յեկամուտների կենտրոնացումը պետության ձեռքերում և այլն—ինքնին նման կուտակման հնարավորություն են ընձեռում յերկրի ներսում, վորն ապահովում է սոցիալիստական շինարարության համար անհրաժեշտ ինդուստրիայի զարգացման թափը։

Սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, թե այդ խնդիրը կարող է հաջողությամբ լուծվել միայն այն դեպքում, յերբ մի կողմից՝ կուսակցությանը հաջողվի ամբողջ յերկրում իրագործել խնայողության, տնտեսելու և ամեն մի ավելորդ, անարտադրական ծախսերի դեմ մղած անողոք պայքարի դաժան ռեժիմը, իսկ մյուս կողմից՝ ավելացնել բնակչության ազատ միջոցների հոսանքը դեպի ամեն կարգի վարկային, կոոպերատիվ հիմնարկներ ու պետական փոխառություններ, նպատակ ունենալով այդ կուտակումներն օգտագործել յերկրի արտադրական ուժերի, նախ և առաջ ինդուստրիայի հետագա զարգացման համար»։

Յերկրի ինդուստրիալիզացիայի խնդիրները չեն կարող իրագործվել, յերբ չլինի բանվոր դասակարգի ամենաակտիվ մասնակցությունը։ Այդ մասնակցությունը պիտի անցկացվի կուսակցության ղեկավարությամբ։ Մոտիկ տարիներում կուսակցությունն իր ամբողջ ուշադրությունը պիտի նվիրե յերկրի ինդուստրիալիզացիայի հարցին։ Անհրաժեշտ է հիշել, թե միայն յերկրի ինդուստրիալիզացիան կիրառելով է, վոր մենք կկառուցենք Վ. Ի. Լենինի մեզ թողած պատգամները։ Հենց նա յե մեզ պատգամ թողել, վոր ըստ հնարավորության շատ զարգացնենք խոշոր ելեկտրիֆիկացիայի յենթարկած սոցիալիստական արդյունաբերությունը։ Հենց նա յե մեզ կտակել խնայողության դաժան ռեժիմ կիրառել, վորպեսզի մենք կարողանանք ԽՍՀՄ դարձնել սոցիալիստական յերկիր։

3. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՏԱԿՈՒՄԸ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի արտադրողականության բարձրացումն իբրև սոցիալիստական կուտակման ու յերկրի ինդուստրիալիզացիայի անհրաժեշտ պայման։

Մենք վերը տեսանք, վոր սոցիալիստական կուտակման աղբյուրներից մեկն է հանդիսանում պետական արդյունաբերության շահույթը։ Իսկ պետական արդյունաբերությունից շահույթ ստանալ խպառ անհնարին է, յեթե նրա մեջ ապահովված չլինի աշխատանքի բարձր արտադրողականությունը։ Այս կերպ աշխատանքի բարձր արտադրողականությունն անհրաժեշտ պայման է հանդիսանում յերկրի ինդուստրիալիզացիայի համար։ Մյուս կողմից աշխատանքի բարձր արտադրողականությունը պետական արդյունաբերության կողմից գյուղատնտեսության հետ զոդվելու անհրաժեշտ պայմանն է։ Ավելի լավ, քան մասնավոր ձեռնարկողը բավարարել գյուղացիության անհրաժեշտ տնտեսական պահանջներն ու կարիքները,— դա պետական արդյունաբերության համար նշանակում է ավելացնել մանուֆակտուրայի, նավթի, աղի, մեխերի, լուցկու, գյուղատնտեսական մեքենաների և այլն բանակը, ինչ գնում է գյուղացին, նվազեցնել նրանց գինը, և բարելավել նրանց վորակը։ Բայց անկարելի յե ընդարձակել արտադրությունը և եժանացնել այն ու միաժամանակ բարելավել ապրանքների վորակը, յեթե չավելանա աշխատանքի արտադրողականությունը։

Մեզ մոտ նախապատերազմյան ժամանակ էլ աշխատանքի արտադրողականությունը խիստ յետ եր մնում մյուս յերկրների աշխատանքի արտադրողականությունից։ Կարելի յե հաշվել, թե այն $2^1/_2$, 3 անգամ ցածր եր, քան, ասենք, Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Անգլիայում, Գերմանիայում և մյուս յերկրներում։ Ահա, օրինակ, արդյունաբերության միքանի ճյուղերում մեր արտադրողականության համեմատությունը արտասահմանի հետ. տարին մի բանվոր պատերազմից առաջ քարածուխ եր հանում Միացյալ Նահանգներում—35 հազար փութ, Ռուսաստանում՝ 9 հազար փութ, թղթի արդյունաբերության մեջ որական արտադրում եր Միացյալ Նահանգներում—12,5 փութ, Ռուսաստանում՝ 1,5 փութ, սղոցարանում որական իր ձեռքի տակով անց եր կացնում Շվեդիայում—73 քառ. ֆուտ անտառանյութ, Ռուսաստանում՝ 15 քառ. ֆուտ, տարին մի մետաղագործ բանվորի արտադրանք եր ընկնում Միացյալ Նահանգներում—5400 ռուբլու, Ռուսաստանում՝ 1500 ռ.։

Պատերազմից ու հեղափոխությունից հետո մեր բանվորների արտադրողականությունը էլ ավելի իջավ. 1923/24 տնտեսական տարում աշխատանքի արտադրողականությունը քարածուխի արդյունաբերության մեջ կազմում եր նախապատերազմականի 56%, նավթարդյունաբերության մեջ 50%, մետալարդյունաբերության մեջ 48%, տեքստիլի մեջ 58%։ Կարելի յե ասել, թե 1923/24 թ. մեր արդյունաբերության մեջ աշխատանքի արտադրողականությունն ընդհանրապես կազմում եր նախապատերազմականի կեսը (50%)։ Հասկանալի յե, թե այդ արդյունաբերության իրերի գներն անչափորեն թանկ քե գործեցին և խպառ անմատչելի դարձան գյուղացիության համար, վորը և դադարեց արդյունաբերական ապրանքներ գնելուց։

1924/25 թվականին կացությունն զգալի չափով լավացավ, և աշխատանքի արտադրողականությունը բարձրացավ (ինչպես ցույց եր տալիս ընկ. Ստալինը XIV համագումարում) մինչև նախապատերազմականի 85%։ Հասկանալի յե, վոր դա դեռ խիստ ցածր աշխատանքի արտադրողականություն է, վոր մենք պիտի ձգտենք հասնելու այն արտադրողականության, ինչ գոյություն ունի կապիտալիստական յերկրներում, և յետ թողնենք այն։ Այլ կերպ մենք չենք կարող ցույց տալ սոցիալիստական արտադրության առավելությունը կապիտալիստականի հանդեպ, չենք կարող մաշել միջին գյուղացիության շարքերի

տատանումները, չենք կարող նրա վողջ մասսան ամբողջությամբ բանվոր դասակարգի հաստատ ու անբաժան դաշնակիցը և պրոլետարիատի դիկտատուրայի կողմնակիցը դարձնել: Այդ շատ անգամ է ընդգծել Վ. Ի. Լենինը:

Աշխատանքի արտադրողականությունը և աշխատավարձը խնայողության ռեժիմի պայմաններում:

Աշխատանքի ցածր արտադրողականությունը մեր ձեռնարկություններում բացատրվում է ձեռնարկությունների տեխնիկական հետամնացությամբ, արտադրության անկանոն կազմակերպումով և անբավարար աշխատանքային դիսցիպլինով: Տեխնիկական վերասարքավորման խնդրի մասին մենք արդեն խոսել ենք: Արտադրության անկանոն կազմակերպումը, որ հանգում է աշխատանքի ցածր արտադրողականության, նշանակում է ավելորդ գործադրումն դրամական միջոցների, որոնք այնքան անհրաժեշտ են յերկրի ինդուստրիալիզացիայի համար: Խնայողության ռեժիմի պայմաններում անթույլատրելի յե նման յերևույթը: Հետևաբար, խնայողության ռեժիմը պահանջում է կանոնավոր կազմակերպել արտադրությունը, ռացիոնալիզացիայի յենթարկել այն (վարել այն գիտական հիմքերով) և այդ միջոցով բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը:

Մյուս կողմից խնայողության ռեժիմը կտրականորեն պահանջում է մեր ֆաբրիկներում ու գործարաններում բարձրացնել աշխատանքային դիսցիպլինը: Յեթե մեր ձեռնարկություններում աշխատանքի արտադրողականությունն ընկնում է բանվորների մեղքով (օրինակ՝ գործադուլի հետևանքով), ապա դա խնայողության ռեժիմի պայմաններում նշանակում է ժողովրդական հարստության ապարդյուն վատնումն: Դա նշանակում է, թե նվազում է արդյունաբերական ապրանքների արտադրանքը, թանգանում է նրանց գինը, նվազում է պետական արդյունաբերության շահույթը, և, հետևաբար, նվազում է սոցիալիստական կուտակման հնարավորությունը յերկրի ինդուստրիալիզացիայի համար: Աշխատանքային դիսցիպլինի անկման հետևանքով աշխատանքի արտադրողականության նման անկման դեմ անհրաժեշտ է, որ կազմակերպված պայքար մղեն և՛ կուսակցությունը, և՛ արհեստակցական միությունները, և՛ Խորհրդային իշխանությունը: Աշխատանքային դիսցիպլինի և աշխատանքի արտադրողականության նման անկում հենց դրսևորվեց 1925 թվականի աշունքին և 1926 թվականի գարունքին: Վարը բերվող № 22 դիագրամման ցույց է տալիս, թե ինչպես է աճել աշխատանքի արտադրողականությունը և աշխատավարձը 1925 թվականին:

Լենինգրադի նահանգական XXIII կուսակցական արտակարգ կոնֆերենցիայում զեկուցում անելով աշխատանքի արտադրողականու-



Նկար. № 22. Ինչպես էին աճում 1925 թ աշխատավարձը և արտադրողականությունը

թյան ու աշխատավարձի մասին 1924/25 թ.՝ ընկ. Ձերժինսկին բերում էր այսպիսի թվանշաններ. սկսած 1924 թ. հոկտեմբերից մինչև 1925 թ. մայիսը մի բանվորի ամսական արտադրանքն ավելացել է մինչև 31,5%, այնինչ նույն ժամանակում աշխատավարձը չերվոն ռուբլիներով ավելացել է 14%: Իսկ 1925 թվականի մայիսից սկսվում է արտադրանքի անկումը, յերբ շարունակում է ավելանալ աշխատավարձը: Հետևանքը յեղել է այն, որ 1925 թվականի դեկտեմբերին աշխատավարձը մայիսի հանդեպ բարձրացել է 16%, իսկ արտադրանքը կրճատվել 5,2%: Աշխատանքի արտադրողականության այդ անկումը, ինչպես մատնանշում էր ընկ. Ձերժինսկին, բացատրվում է նրանով, որ մենք լրությամբ օգտագործել ենք լավ սարքավորումը և օգտագործելու յենք անցել վատին, ավելի մաշվածին, իսկ այն, ինչ մենք օգտագործում ենք, քիչ ենք նորոգում և չենք վերասարքավորում: Մյուս պատճառը, որին ուշադրություն էր նվիրում ընկ. Ձերժինսկին, աշխատանքային դիսցիպլինի անկումն էր: Այդ անկումը մասամբ բացատրվում է նրանով, որ արդյունաբերության մեջ նոր բանվորներ են թափվում գյուղից, որոնք, ինչպես մատնանշում էր ընկ. Ձերժինսկին, «ֆաբրիկի վրա իբրև օտար գույքի վրա յեն նայում, ձգտելով միայն մի բան պոկել և օգտագործել իրանց համար: Այդ նոր բանվորները չեն անցել նահատակության այն քաղաքային դպրոցը, որը մեր ֆաբրիկ-գործարանային պրոլետարիատն է անցել ինքնակալության, կապիտալիզմի դեմ մղած իր պայքարում և Հոկտեմբերյան հեղափոխության համար: Նրանք ձեռնարկությանը մոտենում են իբրև մի օտար հաստատության»:

Սակայն 1926 թ. գարունը ցույց տվեց, թե աշխատանքային դիսցիպլինի անկումը դիտվում է և հին բանվորների մեջ: Ահա, օրինակ, Արտեմովսկից ինչ են հաղորդում «Պրավդային» (1926 թ. հունիսի 8) աշխատանքի արտադրողականության մասին Դոնեցի քարածուխի ավազանում.

«Ապրիլին հանույթի ծրագիրը Դոնավազանի 18 հանքավարչությունների հիմնական շախտերում իրագործվեց 111,1% չափով: Մայիսին ծրագրի իրագործումը կազմեց միայն 87,9%: Միջին օրական հանույթն ապրիլին կազմում էր 31943 տոնն, մայիսին 29064 տոնն:

Սովորաբար ապրիլին-մայիսին հանույթի անկումը կապված է բանվորների սեզոնային տեղատվության հետ: Սակայն այդ տարին առ 1-ն մայիսի Դոնածուխի հիմնական շախտերում կար 79308 բանվոր, այնինչ առ 1-ն հունիսի բանվորների թիվը բարձրացավ մինչև 84783:

Հանույթի և աշխատանքի արտադրողականության այդքան զգալի անկման պատճառները կայանում են գործփախի ավելացման ու աշխատանքային դիսցիպլինի թուլացման մեջ: Մասնավորապես հաճախացել են հիվանդությունները կեղծելու դեպքերը բանվորների մեջ»:

Աշխատանքային դիսցիպլինի նման նվազումն անթույլատրելի յե և այն պատճառով, որ աշխատանքի արտադրողականության անկումը հարվածում է հենց բանվորներին: Ապրանքային սովի պայմաններում իսպառ անհնարին է բարձրացնել աշխատավարձը, յեթե չբարձրանա աշխատանքի արտադրականությունը: Նման բարձրացումը կհանգեր նրան, որ կսաստկանար ապրանքների պահանջը, կբարձրանար այդ ապրանքների գինը և հետևաբար աշխատավարձի բարձրացումը ոչընչի կվերածվեր: Մեր կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի ապրիլյան պլենումը մատնանշեց, թե աշխատավարձի հետագա բարձրացումը կախված է աշխատանքի արտադրողականության բարձրացումից:

«Անհրաժեշտ է վճռական միջոցներ ձեռք առնել աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու համար, թե արտադրության ռացիոնալիզացիայով, մասնավորապես ավելի լրիվ օգտագործելով սարքավորումը, բարձրացնելով բանվորների որակը, բարելավելով ֆաբրիկ-գործարանային կազմակերպությունները, ինչպես և խտացնելով բանվորական օրը, սաստկացնելով աշխատանքային դիսցիպլինը, պայքարը գործփախի հետ և այլն:

Կուսակցության կողմից գործադրվող ձեռնարկումներն ուղղված են դեպի այն, որպեսզի նվաճված աշխատավարձի մակարդակն իրապես ապահովված լինի: Այդ ձեռնարկումների իրագործումից հետո համապատասխան արտադրական ուժերի ընդհանուր աճման, արդյունաբերության զարգացման և աշխատանքի արտադրողականության աճման անհրաժեշտ է ապահովել աշխատավարձի վերելքը»:

1926 թ. մարտին ընկ. Ռիկովը զեկուցում կարդալով կուսակցության Մոսկվայի կոմիտեյի պլենումում՝ հետևյալ տվյալներն էր բերում աշխատավարձի մասին մեր արդյունաբերության մեջ.

Աշխատավարձի մակարդակը մեր արդյունաբերության մեջ

(%%-ով հանդեպ նախապատերազմյան աշխատավարձի)

	Աշխատավարձն առանց լրացումների	Աշխատավարձը լրացումներով (սոց. ապահով., կուլտուր-լուսավորական նպատակներով հատուցումներ և այլն)
Հանքարդյունաբերության մեջ	72	—
Մետալարդյունաբերության »	83	96
Տեքստիլ արդյունաբերության »	123	154
Քիմիական » »	122	153
Կաշեգործության »	131	156
Սննդի արդյունաբերության »	157	188
Թղթի » »	135	171
Պոլիգրաֆ » »	111	—
Փայտագործության »	126	—

Այս թվանշանները հաստատում են, թե աշխատավարձի հետագա վերելքը բացառաբար հնարավոր է աշխատանքի արտադրողակա-

նության բարձրացման հիմքի վրա։ Այդ էլ վկայված է կկ 1926 թ. ապրիլյան պլենումի բանաձևի մեջ։

Բոլոր ասածից հետո այժմ մենք կարող ենք պարունակը տալ այն խնդիրներին, ինչ արդյունաբերության բնագավառում ծառացած են կուսակցության և Խորհրդային իշխանության առաջ։ Ասածի հիման վրա այդ խնդիրները կարող են այսպես ձևակերպվել։ Ինչ էլ վոր լինի, մեզ հարկավոր է մեր սոցիալիստական արդյունաբերությունը բարձրացնել ու զարգացնել ավելի բարձր տեխնիկական մակարդակի վրա։ Այդ պահանջում է յերկրի ինդուստրիալիզացիան։ Իսկ ինդուստրիալիզացիան իրագործելու համար պետք է ուժեղացնել սոցիալիստական կուտակումը ընդարձակ պլանով, խնայողաբար ծախսել կուտակվածը, հարկավոր է խնայողության դաժան ռեժիմ։ Այդ նպատակով էլ անհրաժեշտ է բոլոր միջոցներով պայքարել այն ամենի դեմ, ինչ նվազեցնում է աշխատանքի արտադրողականությունը, կասեցնում նրա աճումը, հարկավոր է համառ պայքար այն բարձրացնելու համար։ Աշխատանքի արտադրողականության բարձրացումը— դա մեր առաջ ծառացած տնտեսական խնդիրների իսկական լուծման անհրաժեշտ պայմանն է, և միայն այն կարող է տալ բանվոր դասակարգի նյութական վիճակի հետագա բարելավումը։

Վորպեսզի լավ յուրացվի «Յերկրի ինդուստրիալիզացիան իբրև սոցիալիզմի կառուցման պայման ԽՍՀՄ-ում» և «Սոցիալիստական կուտակումն ու աշխատանքի արտադրականությունը» բաժինները, պատասխան տվեք հետևյալ հարցերին.

1. Ի՞նչ պետք է հասկանալ ԽՍՀՄ ինդուստրիալիզացիայի տակ, և ինչու մենք պետի իրագործենք ինդուստրիալիզացիան։

2. Ի՞նչ աղբյուրներից պետի մենք միջոցներ ստանանք յերկրի ինդուստրիալիզացիայի համար։

3. Ինչումն է խնայողության ռեժիմի եյությունն ու իմաստը, և ինչպես պետի մենք այն կիրառենք։

4. Ինչումն է կապը աշխատանքի արտադրողականության և աշխատավարձի միջև, և աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու ինչպիսի խնդիր է դնում մեր առաջ յերկրի ինդուստրիալիզացիան։

ՆՅՈՒԹԵՐ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. ԻՆԴՈՒՍՏՐԻԱԼԻԶԱՑԻԱՅԻ ԿՈՒՐՍԸ

Ինչումն է եյությունը և հիմնական իմաստը այն լոզունգի, յերկրի ինդուստրիալիզացիայի այն կուրսի, վորը հռչակվեց XIV կուսհամագումարի կողմից և վորն այժմ կիրառվում է կյանքի մեջ։ Այդ հիմնական լոզունգն ուներ յելակետ իր աշխատանքի մեջ Կենտրոնական Կոմիտեյի

այս տարվա ապրիլի պլենումը։ Հետևաբար, հերթական ու հիմնական խնդիրը նրանումն է կայանում, վորպեսզի արագացնենք մեր արդյունաբերության զարգացման թափը, ամբողջ ուժով առաջ մղենք մեր ինդուստրիան, օգտագործելով ունեցած ռեսուրսները, և դրանով իսկ արագացնենք տնտեսության զարգացումն իր ամբողջության մեջ։

Այդ խնդիրն առանձնապես սուր բնույթ է ստանում հայտնապես այժմ, ներկա մոմենտին, իմիջիայլոց այն պատճառով, վոր մեզ մոտ, տնտեսության վորոշ զարգացման շնորհիվ, մի տեսակ աններդաշնակություն է ստեղծվել քաղաքի ու գյուղի կողմից արդյունաբերության իրերի նկատմամբ առաջադրած պահանջի և այդ իրերի առաջարկի միջև արդյունաբերության կողմից, վոր արդյունաբերության արդյունքների պահանջն աճում է ավելի արագ, քան ինքն արդյունաբերությունը, վոր մեր ունեցած ապրանքային սովը այստեղից բխող իր բոլոր հետևանքներով այդ աններդաշնակության արդյունքն է հանդիսանում։ Հազիվ թե կարիք կա ապացուցելու, թե մեր ինդուստրիայի արագ զարգացումն առավել ճիշտ միջոցն է հանդիսանում լիկվիդացիայի յենթարկելու այդ աններդաշնակությունը և վերացնելու ապրանքային սովը։

Միքանի ընկերներ մտածում են, թե ինդուստրիալիզացիան ընդհանրապես ներկայացնում է ամեն-մի արդյունաբերության զարգացում... Դա, իհարկե, ճիշտ չէ։ Արդյունաբերության ամեն մի զարգացում իրանից ինդուստրիալիզացիա չի ներկայացնում։ Ինդուստրիալիզացիայի կենտրոնը, նրա հիմքը կայանում է ծանր արդյունաբերության (վառելիք, մետաղ և այլն) զարգացման մեջ, վերջիվերջո արտադրության միջոցների արտադրության մեջ, սեփական մեքենայագործության զարգացման մեջ։ Ինդուստրիալիզացիան նպատակ ունի վոչ միայն այն, վորպեսզի առաջնորդե մեր ժողովրդական տնտեսությունը դեպի մի գոյավիճակ, ուր ամբողջի մեջ ավելացած լինի արդյունաբերության բաժինը, այլ նա ունի նաև այն նպատակը, վոր այդ զարգացման մեջ մեր կապիտալիստներով շրջապատված յերկրի համար ապահովե տնտեսական ինքնուրույնություն, պահպանե նրան համաշխարհային կապիտալիզմի կցանք դառնալու վտանգից։ Կապիտալիստական շրջապատի մեջ գտնվող պրոլետարիատի դիկտատուրայի յերկիրը չի կարող տնտեսապես ինքնուրույն մնալ, յեթե նա ինքն իր տանը չարտադրի գործիքներ ու արտադրության միջոցներ, յեթե նա ընդարմանում է զարգացման այն աստիճանի վրա, ուր ստիպված է ժողովրդական տնտեսությունը կապած պահել կապիտալիստորեն զարգացած յերկրների թոկից, վորոնք գործիքներ ու արտադրության միջոցներ են արտադրում և արտածում։ Ընդարմանալ այդ աստիճանի վրա—նշանակում է իրան հպատակության տալ համաշխարհային կապիտալին։

(Ի. ՍՏԱԼԻՆ, Խորհրդային Միության տնտեսության կացության մասին)

2. ՄԱՔՍԻՄԱԼ ԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՉԱՓ

(Վ. Ի. ԼԵՆԻՆԻ 1923 թվականի «Լավ է քիչ, բայց լավ» հոդվածից)

...Մենք պիտի ջանանք կառուցել մի պետություն, որի մեջ բանվորները պահպանել կարողանան իրանց ղեկավարությունը գյուղացիների նկատմամբ, գյուղացիների վստահությունը դեպի նրանց և մեծագույն խնայողությամբ իրանց հասարակական հարաբերություններից վտարել կարողանան որևէ շռայլության ամեն մի հետք:

Մենք մաքսիմալ խնայողությամբ պիտի ոժտենք մեր պետական ապարատը: Մենք նրանից պետք է վտարենք շռայլությունների բոլոր հետքերը, որոնք այնքան շատ են մնացել նրանում ցարական Ռուսաստանից, նրա բյուրոկրատական-կապիտալիստական ապարատից:

Չի՞ լինի դա արդյոք գյուղացիական սահմանափակության մի թագավորություն:

Ոչ: Յեթե մենք պահպանենք բանվոր դասակարգի ղեկավարությունը գյուղացիության նկատմամբ, ապա մենք հնարավորություն կստանանք տնտեսության մեծագույն ու մեծագույն խնայողության գնով մեր պետության մեջ հասնել նրան, որպեսզի ամենանվազ խնայողությունն իսկ պահպանենք մեր խոշոր մեքենայական ինդուստրիայի զարգացման համար, ելեկտրիֆիկացիայի, հիդրոտորֆի զարգացման համար, Վոլխովաշենն ավարտելու համար և այլն:

Դրա մեջ ու միայն դրա մեջ է մեր հույսը: Միայն այն ժամանակ մենք կարող ենք, պատկերավոր խոսելով, մի ձիուց մյուսը նստել. հայտնապես գյուղացիական, գեղջկական, ուժասպառ ձիուց, քայքայված գյուղացիական յերկրին պատշաճ խնայողությունների ձիուց այն ձին, որը փնտրում է և չի կարող իր համար չփնտրել պրոլետարիատը, խոշոր մեքենայական ինդուստրիայի, ելեկտրիֆիկացիայի, Վոլխովաշենի ձին և այլն:

(Վ. Ի. ԼԵՆԻՆ՝ Յերկերի ժողովածու, հ. XVIII, մ. 2, եջ 138, ռուսերեն)

3. ՅԵՐԿՐԻ ԻՆԴՈՒՍՏՐԻԱԼԻԶԱՑԻԱՅԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԻՆՉ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՆ ԾԱՌԱՑԱԾ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՋ

Թույլ տվեք այժմ յեզրակացություններին անցնելու:

Առաջին՝ մենք պետք է առաջ մղենք մեր յերկրի ինդուստրիան իբրև սոցիալիզմի հիմք և իբրև ղեկավարող ուժ, որ առաջ է տանում ժողովրդական տնտեսությունն իր ամբողջության մեջ:

Յերկրորդ՝ մենք պիտի ստեղծենք ինդուստրիայի շինարարների նոր կադրեր, որ ինդուստրիալիզացիայի ուղղակի ու անմիջական կրողները դառնան:

Յերրորդ՝ մենք պիտի արագացնենք մեր սոցիալիստական կուտակման թափը և պահեստներ կուտակենք մեր արդյունաբերության կարիքների համար:

Չորրորդ՝ պիտի սահմանել կուտակվող պահեստների ճիշտ օգտագործում և հաստատել խնայողության խստագույն ռեժիմ:

Հինգերորդ՝ պետք է բարձրացնել բանվոր դասակարգի ակտիվությունը և բանվորների միլիոնավոր մասսաները լծակցել սոցիալիզմի շինարարության գործին:

Վեցերորդ՝ պետք է ամրացնել բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը և բանվոր դասակարգի ղեկավարությունն այդ դաշինքի ներսում:

Յոթերորդ՝ պետք է բարձրացնել կուսակցական մասսաների ակտիվությունը և կիրառել ներկուսակցական դեմոկրատիա:

Ութերորդ՝ մենք պետք է պահպանենք և ամրացնենք մեր կուսակցության միասնականությունը, մեր շարքերի միաձուլությունը:

Կարո՞ղ ենք մենք իրագործել այդ խնդիրները: Այո, կարող ենք, յեթե մենք կամենանք այդ: Իսկ մենք այդ կամենում ենք,—այդ բոլորն են տեսնում: Այո, կարող ենք, որովհետև մենք բոլշևիկներ ենք, որովհետև մենք չենք վախենում դժվարություններից, որովհետև դժվարությունները նրա համար գոյություն ունեն, որպեսզի պայքարենք նրանց հետ և հաղթահարենք նրանց: Այո, կարող ենք, որովհետև մեր քաղաքականությունը ճիշտ է, և մենք գիտենք, թե ուր ենք գնում: Յեվ մենք առաջ կընթանանք հաստատ ու վստահ դեպի նպատակը, դեպի սոցիալիստական շինարարության հաղթանակը:

(Ի. ՍՏԱԼԻՆ՝ Խորհրդային Միության տնտեսական կացության մասին, ռուսերեն)

ԹԵՄԱՆԵՐ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Պատմեցեք, վերասարքավորման և հետագա զարգացման ինչ խնդիրներ են ծառացած արդյունաբերության այն ճյուղի առաջ, որի մեջ դուք եք աշխատում, և մասնավորապես ձեր ձեռնարկության առաջ: Ինչումն է կայանում արդյունաբերության այդ ճյուղի տեխնիկական հետամնացությունը, և ինչ է արվում նրա վերասարքավորման համար:

2. Պատմեցեք, ինչ վիճակ ունի աշխատավարձի և աշխատանքի արտադրողականության հարցը ձեր արդյունաբերության ճյուղի և ձեր ձեռնարկության մեջ: Համեմատեցեք արդի վիճակը նախապատերազմականի հետ և բացատրեցեք տարբերության պատճառները: Ինչ միջոցներ են ձեռք առնվում ձեր ձեռնարկության մեջ աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու համար, և ինչպիսին է արտադրական խորհրդակցության դերն այդ ձեռնարկումների մեջ:

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Ինչու չենք կարող մենք սոցիալիզմ կառուցել առանց յերկրի ինդուստրիալիզացիայի:
2. Ինչ պիտի անեն կուսակցությունը, արհմիությունները և Խորհրդային իշխանությունը ԽՍՀՄ ինդուստրիալիզացիան իրագործելու համար:
3. Կուսակցության ուղիղ գծից ինչպիսի թեքումներ գոյություն ունեն այժմ կուսակցության առանձին անդամների մեջ և ինչու այդ թեքումները վնասակար ու վտանգավոր են:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՋՈԴՄԱՆ ՁԵՎԵՐԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՒ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Ինչի՞ մասին է գլուխը։

Նախորդ գլուխներում մենք մատնանշում էինք, թե մեր յերկրում լիակատար սոցիալիստական հասարակության կառուցումը կիրագործվի, յեթե սոցիալիստական կերպով վերակառուցվի վոչ միայն քաղաքը, այլ և գյուղը։ Ներկա գլխում մենք պիտի ցույց տանք, թե ինչ քաղաքականություն և ինչու յե վարում գյուղում Խորհրդային իշխանությունը, հետամտելով գյուղատնտեսության վերակառուցման շահը սոցիալիստական կերպով։ Ընդսմին մենք կառանձնացնենք այն հարցը, թե ՆԷՊ-ի օրով ինչպես են զարգանում գյուղի տարբեր խմբավորումները (կուլակներ, միջակներ ու չքավորներ), և այդ խմբավորումներից յուրաքանչյուրի նկատմամբ ինչպես և ինչպիսի քաղաքականություն են վարում կուսակցությունն ու Խորհրդային իշխանությունը, գյուղի դեպի սոցիալիզմ առաջմղվելու շահի տեսակետից։

1. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷՅՈՒԹՅՈՒՆԸ

Յերկրի ինդուստրիալիզացիայի նշանակությունը, վորով սոցիալիստական պետական արդյունաբերությունը պիտի կատարե իր առանցքային դերը, այն է՝ իր յետեվից դեպի սոցիալիզմ տանե գյուղատնտեսությունը։

Նախորդ գլուխներում մենք պարզում էինք, թե գյուղատնտեսությունը կարող է դեպի սոցիալիզմ ընթանալ պրոլետարական պետության ձեռքերում գտնվող ժողովրդական տնտեսության հրամայող բարձունքների ղեկավարությամբ։ Մենք ասում էինք, թե գյուղատնտեսության զարգացումը դեպի սոցիալիզմ ուղղելու համար այդ բարձունքներից առաջնակարգ նշանակություն ունի սոցիալիստական պետական արդյունաբերությունը։ Բայց ինչ պայմաններում կարող է պետական արդյունաբերությունը մինչ վախճան իրագործել գյուղատնտեսությունը դեպի սոցիալիզմը տանող իր առաջապահի դերը։ Միայն յերկրի ինդուստրիալիզացիայի պայմանում, վորի մասին մենք խոսել ենք անցյալ գլխում։

Միքանի թվանշաններ ու փաստեր կհաստատեն այդ։ 1925-26 թվականին գյուղատնտեսությունն ստանում է 16000 տրակտոր, վորից սեփական արտադրությամբ միայն 1715 հատ։ Գյուղացիությունը տրակտորների և այլ գյուղատնտեսական մեքենաների անհագին պահանջ է առաջադրում, բայց մենք լրությամբ չենք կարողանում բավարարել այդ պահանջը, վորովհետև մենք այստեղ սաստիկ կախում ունենք արտասահմանից։ Այնինչ գյուղատնտեսության վերելքի ու զարգացման համար մեզ հարկավոր է մեքենաների հսկայական քանակ։ Թե վորքան ենք մենք յետ մնացել գյուղատնտեսության մեքենայացման գործում, դա յերևում է նրանից, վոր Ամերիկայում դեռ 1923 թ. աշխատանքի մեջ եր գտնվում 866.000 տրակտոր, այնինչ անհնարին է, վոր առանց մեքենայի մեր գյուղը դեպի սոցիալիզմ շարժվի։

Բացի մեքենաներից գյուղն ավելի ու ավելի պիտի անհագին պահանջ առաջադրե և զանազան տեսակի արդյունաբերական իրերի նկատմամբ։

Միայն գյուղին այդ իրերը մատակարարելով է հնարավոր նրա համար ճանապարհ բանալ դեպի սոցիալիզմը։ Հետևաբար, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման խնդիրը պահանջում է ինդուստրավորել յերկիրը, պահանջում է, վոր տասնապատիկ աճած մեքենաներ արտադրող արդյունաբերությունը դեպի սոցիալիզմ առաջնորդե գյուղատնտեսությանը և նրան ազատագրե արտասահմանի կապիտալիստական արդյունաբերության կախումից։

Սոցիալիստական արդյունաբերության յեվ պրոլետարական պետության այլ հրամայող բարձունքների տնտեսական ղեկավարության ներքո ձեռնարկած միջոցները գյուղի արտադրական ուժերը բարձրացնելու համար։

Առանց յերկրի ինդուստրիալիզացիայի իսպառ անհնարին է, վոր ընդարձակ մակարդակով միջոցներ կիրառվեն գյուղի արտադրական ուժերը բարձրացնելու համար։ Մեզ մոտ հացի բերրիությունը յեղանակի ու քառակի ցածր է կապիտալիզմի զարգացած յերկրների բերրիությունից, իսկ գյուղացիական տնտեսության միջին յեկամուտը հավասար է չնչին գումարի՝ ասենք, 300 ռուբլու։ Հասկանալի յե, վոր յեթե չբարձրացնենք այդքան հետամնաց գյուղատնտեսության արտադրական ուժերը, մենք չենք կարող շարժվել դեպի սոցիալիզմը։ Անհրաժեշտ է ինդուստրավորել բուն գյուղատնտեսությունը, այսինքն տեղնուտեղը գյուղում զարգացնել նրա արդյունքների մշակումը։ Դա բարձրացնում է գյուղատնտեսության արտադրանքի արժեքը, հեշտացնում է մի շարք գյուղատնտեսական արդյունքների համար վաճառքի հնարավորությունը, նրանց համար արտասահմանյան շուկաներ է բացում։ Հարկավոր է, հետևաբար, կառուցել սառցարաններ, ելեվատորներ, սառցարանով սպանդանոցներ,

ապուխտի, ոսլայի-մաթի (крахмало-паточный), յուղի գործարաններ
և այլն նրա համար, վորպեսզի բարձրացնենք գյուղի արտադրական
ուժերը, վորպեսզի ավելացնենք գյուղացիական տնտեսության յեկամու-
տը։ Իսկ գյուղատնտեսության նման ինդուստրավորումը կրկին գալիս
բղխվում է ամբողջ յերկրի ինդուստրավորման, պահանջ դնում սաստ-
կացնելու պետական սոցիալիստական արդյունաբերության զորու-
թյունը։

Արդյունաբերությունը զարգանալով ավելի ու ավելի մեծ պա-
հանջ է առաջադրում գյուղատնտեսական արդյունքների, տրանսպոր-
տը փոխադրում է այդ արդյունքները, պետությունը՝ ոգտվելով ար-
տաքին առևտրի մոնոպոլիայից՝ կազմակերպում է հացի ու գյուղա-
տնտեսական հում նյութերի վաճառքն արտասահմանում, իսկ պրոլե-
տարական պետության ձեռքերում գտնվող բանկերը վարկավորում
են գյուղատնտեսությունը, դրանով հզոր աջակցություն ցույց տա-
լով նրա զարգացման։ Միայն պրոլետարական պետության այդ բոլոր
հրամայող բարձունքների ղեկավարությամբ է, վոր գյուղատնտեսու-
թյունը կարող է բարձրացնել իր արտադրական ուժերը։

Այժմ տեսնենք, թե այդ հրամայող բարձունքների ղեկավարու-
թյունն ինչ չափով է արդեն արտահայտվել գյուղատնտեսության վերել-
քի վրա։

Հիշենք նախ և առաջ տեխնիկական կուլտուրաների զարգացման
մասին, այսինքն այն բույսերի, վորոնք իբրև հում նյութ են հար-
կավորվում արդյունաբերությանը։ Այդ տվյալները մենք բերում ենք
յերրորդ գլուխում, 84-րդ եջի վրա գետեղած դիագրամմայում։

Ինչի՞ մասին են խոսում այդ տվյալները։ Այն մասին, թե աճող
ու զարգացող պետական արդյունաբերությունն ստիպում է գյուղա-
կան տնտեսություններին վերակառուցվել, ստիպում է ավելի ու ավե-
լի անցնել տեխնիկական կուլտուրաների արտադրության, վորն ավե-
լի յե հասութաբեր, քան հացահատիկների արտադրությունը։

Հողագործական կուլտուրայի բարձրացումը վոչ միայն տեխնի-
կական կուլտուրաների ցանքսի աճման ուղղությամբ է ընթանում։
«Հոկտեմբերյան հեղափոխությունը,—ասում է Ռուսաստանի հողա-
գործության ժողովրդական կոմիսար ընկ. Սմիրնովը,—այնպես է թա-
փահարել ու զարթեցրել գյուղացիությանը, վոր նա բավարար չափով
արդեն նախապատրաստված է մի շարք նոր գաղափարներ ըմբռնելու
համար»։ Գյուղատնտեսության բոլոր ճյուղերում գյուղացիությունն
արդեն անցել է իր տնտեսությունը նոր ձևով, ավելի կատարելագործ-
ված տիպով կազմակերպելու գործին։ Մենք միայն միքանի օրինակ-
ներ կբերենք, վորոնք ցույց են տալիս հողագործական կուլտուրայի
բարձրացումը և միաժամանակ կընդգծենք, թե պետությունն ինչով է
ոգնում այդ բարձրացմանը։

Գյուղացիությունը մեծագույն ձգտումն է ցույց տալիս դեպի բազ-
մադաշտ հողագործությունը։ 1925 թ. խոտացանի տարածությունը
44,6% գերազանցել է նախապատերազմականը։ Կաթնատնտեսական
շրջաններում սկսում է ծավալվել արմատապտուղների ցանքսը։ Անչափ
սաստկանում է գյուղացիության ձգտումը կանոնավոր պահել ու կերա-
կրել անասունները։ Նրբաբուրդ վոչխարաբուծությունը, վոր ընկել եր
մինչև 100.000 գլխի, բարձրացավ մինչև 500.000 գլխի։ Պետության
տված փողով ներմուծվում է մինչև 2.500 գլուխ զանազան տեսակի
ազնվացեղ վոչխար։ Բանակորեն աճում է սելեկցիոն (ընտիր, հատ-
կապես աճեցրած) և տեսակավոր սերմերի արտադրությունը։ Նա 1925 թ.
հասավ 5.000.000 փթի։ 1924 թվականին արտասահմանից ներմուծված
է ավելի քան 200 հազար փութ վարսակի ու գարու սերմ, վորը ցա-
նելու համար բաժանվել է գյուղացիական ու խորհրդային տնտեսու-
թյուններին։

Պետությունը ձեռք է առնում բոլոր միջոցները սերմը զտելու
համար։ 1924 թվականին հաստատվեց 2600 սերմազտիչ կետ կազմա-
կերպելու մի պլան, վորոնցից 1925 թ. կազմակերպվել է 1200, իսկ
մնացածները պետք է կազմակերպվեյին 1926 թվականին։

Վերը մենք խոսել ենք տրակտորների այն քանակի մասին, վոր
մեր գյուղատնտեսությունը պիտի ստանար անցած տարում։ Պրոլետա-
րական պետությունը բոլոր ճիգերն է թափում պաշտպանելու գյու-
ղատնտեսության մեքենայացումը։ Այդ հաստատելու համար բավ է
ասել, վոր 1922 թ. ծախսվել է գյուղատնտեսական մեքենա 11 միլիոն
ռուբլու, իսկ 1926 թ. գյուղատնտեսությանը մեքենաներ մատակարա-
րելու պլանը կազմված եր 120 միլիոն ռուբլու։ Գութանների այն քա-
նակը, վոր 1926 թ. պիտի ստանար գյուղատնտեսությունը, վոչ միայն
կփոխարինի մաշվածներն ու աշխատանքի համար այլևս անպետքները,
այլ և կգերազանցե վերջինները 279 հազար հատով։ Այլ խոսքերով՝ 279
հազար գութան են գալիս փոխարինելու արորը։ Այս տարին գյուղա-
տնտեսությանն են տրվում 45 հազար ցանող մեքենաներ և այլն։

Այս օրինակները (մենք նրանց վերցնում ենք ընկ. Սմիրնովի
«Վերելքի արդյունքները» հոդվածից, «Պրավդա», 1925 թ. նոյեմբերի
12) կարելի յե շատ ավելացնել։ Նրանք բոլորն էլ կհաստատեյին, թե
պրոլետարական պետությունը բոլոր միջոցներով ձգտում է բարձրա-
ցնելու գյուղի արտադրական ուժերը և այդ բարձրացման մեջ է տես-
նում իր գյուղատնտեսական քաղաքականության գլխավորագույն
խնդիրներից մեկը։

Վոր պրոլետարական պետությունն արդեն մի շարք հաջողու-
թյուններ է նվաճել այդ խնդրի լուծման մեջ, դրա մասին ասում են
այն դիագրամմաները, վոր մենք բերում ենք յերկրորդ գլուխում (դիտե-
ցեք նրանց մի անգամ ես)։

Հողաշինարարության միջոցները:

Գյուղացիությանն իսկական օգնություն ցույց տալու միջոցներից մեկը, որը միաժամանակ այն միջոցն է, առանց որի կիրառման անհնարին է անցումը կոլեկտիվ տնտեսության, դա հողաշինարարությունն է: Նախահեղափոխության ժամանակ էլ գյուղացիներին պատկանող հողաբաժինը բաղկացած էր առանձին կտորներից, որ տարբեր վայրեր էյին ընկնում, իրարից խիստ հեռու տարածության վրա: Հեղափոխությունը գյուղացիների ձեռքը տվավ ահագին հողային հարստություններ, բայց այդ հարստությունները մինչև օրս ուղիղ չեն բաշխված: Մինչև օրս պահպանվել է գյուղացիական հողի առանձին կտորների ցրվածությունը, ինչ գոյություն ուներ մինչև հեղափոխությունը: Ռուսաստանի հողագործական ժողովրդական կոմիսար ընկ. Սմիրնովը «Պրավդայում» իբրև օրինակ էր բերում գյուղեր, որոնցից գյուղացիներին պատկանող հողերը հեռու յեն 10, 15 և ավելի վերստ: Կենտրոնական սևահող շրջանում (Տամբովի, Վորոնեժի, Օրյոլի, Կուրսկի և այլ նահանգներ) 4-5 դեսյատին հողաբաժին ունեցող գյուղացիական տնտեսությունների կեսից ավելին այդ հողը ցրված ունի 20-ից մինչև 100 կտորների մեջ, վորոնք ընկնում են տարբեր վայրեր: «Այնինչ,—ասում է ընկ. Սմիրնովը,—տնտեսավարումը բարելավելու համար իբրև անհրաժեշտ նախադրյալ է պահանջվում այն, վոր գյուղացին գերագույն չափով մոտ լինի հողին»: Ըստ հնարավորության գյուղացուն մոտեցնել նրա կողմից մշակվող հողին—դա յե հիմնական խնդիրը, վոր առաջադրում է հողաշինարարությունը: Ընդամին հողաշինարարությունը պիտի նպաստե, վոր գյուղացիներն անցնեն բազմադաշտ հողագործության և միավորվեն հերկելու հողը, ցանելու և բերքը ժողովելու գյուղատնտեսական մեքենաների միջոցով կամ, այլ խոսքերով, պիտի նպաստե, վոր գյուղացիները բռնեն այն ուղին, վորը դեպի կոլեկտիվ տնտեսությունն է տանում:

Հողաշինարարության հարցում Խորհրդային իշխանությունն ամբողջությամբ ընդառաջ է գնում գյուղացիությանը և հողաշինարարական բոլոր ձեռնարկումների համար հանդեպ 1924/25 թ. տարվա 10 միլիոն ռուբլու 1925/26 թվականին բաց է թողել 40 միլիոն ռուբլի:

Միջոցներ, վոր ձեռնարկված են գյուղատնտեսության նոր ձևեր զարգացնելու համար:

Ճիշտ համարելով, թե գյուղատնտեսության վերելքը և գյուղացիության համար չքավորության թոթափումը հնարավոր է միայն, յեթե անցում կատարվի կոլեկտիվ տնտեսության՝ Խորհրդային իշխանությունը կիրառում է մի շարք միջոցներ, վորոնք նպաստում են գյուղատնտեսության նոր ձևերի զարգացման: Խորհրդային իշխանությունն ընդառաջում է կոլեկտիվ տնտեսություններին, վորոնք իբրև հողամշակության ըն-

կերություններ, արտելներ ու կոմմունաներ ստեղծվում են գյուղատնտեսության մեջ: Նրանց մի ամբողջ շարք արտոնություններ են տրվում գյուղատնտեսական հարկի խնդրում, ուրիշների հանդեպ նախապատվություն է տրվում նրանց դրամական վարկի ապարիզում, ուրիշներից առաջ և արտոնյալ պայմաններով են բաց թողնվում նրանց գյուղատնտեսական մեքենաներ, լավորակ սերմեր և այլն:

XIV կուսհամագումարը պարտադրել է ԿԿ հետագայում էլ վարել մի քաղաքականություն, վոր հետամտում է գյուղի արտադրական ուժերի զարգացումը և պաշտպանություն է ցույց տալիս գյուղատնտեսության կոլեկտիվացման: Նա պարտադրել է ԿԿ «պաշտպանել և առաջ մղել գյուղատնտեսության զարգացումը, բռնելով հողագործական կուլտուրայի բարձրացման, տեխնիկական կուլտուրաների զարգացման, հողագործության տեխնիկայի բարձրացման (տրակտորավորում, գյուղատնտեսության ինդուստրիալիզացիա, հողաշինարարության կարգավորում) գիծը և ամեն կերպ աջակցելով գյուղատնտեսության զանազան ձևերի կոլեկտիվացման»:

Գյուղի դեպի սոցիալիզմ տանող ուղիի վրա կոոպերացիան իբրև հիմնական ձևը այդ միավորման:

Գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացման հիմնական ձևը, այսինքն նրանց միավորումը դեպի սոցիալիզմը տանող ուղիի վրա՝ հանդիսանում է կոոպերացիան: Գյուղացիությունը փորձով է համոզվում, «վոր կոոպերացումը վաճառահանության գծով, կոոպերացումը մատակարարման գծով և, վերջապես, կոոպերացումը վարկի ու արտադրության (գյուղատնտեսական ընկերություններ) գծով միակ ուղին է հանդիսանում գյուղի բարորությունը բարձրացնելու համար, միակ միջոցը փրկելու գյուղացիության լայն մասսաները չքավորությունից ու քայքայումից» (Ստալին):

Ի՞նչ հաջողություններ ենք նվաճել մենք գյուղի կոոպերացման ճանապարհի վրա: Մասնակիորեն այդ հարցին մենք պատասխանել ենք յերկրորդ գրույցում (եջ 96—98): Այնտեղ ասածին մենք այժմ կավելացնենք տվյալներ, վոր բերում է ՌԽՖՍՀ հողագործության ժողովրդական կոմիսար ընկ. Սմիրնովը «Պրավդայի» 1925 թ. նոյեմբերի 12-ի №-ում: «Միքանի թվանշաններ, իբրև խորհրդային կոոպերացիայի աշխատանքի արդյունք, կարելի յե հրապարակել իբրև յեզրափակիչ թվեր:

Նորից ընդգծում եմ, թե այստեղ 1922 թվականից մենք սկսել ենք վոչնչից:

Այսպես, օրինակ, 1924/25 թվականին 2600 հազար փութ ապրանքային յուղից գյուղատնտեսական կոոպերացիայի սիստեմով արդեն պատրաստված է 2,350 հազար փութ: Կաթնարտելները միջին

հաշվով կաթի մինչև 50 տոկոսն ընդունել են իրանց անդամներից։
կոոպերատիվների անդամները համարյա իրանց բոլոր մշակելու կաթը
տալիս են իրանց կոոպերատիվին։ Այդ կաթի 75 տոկոսն ընկնում է
միջակների տնտեսության վրա։ Կարտոֆիլ-միության մեջ 1924 թ.
բերքի կարտոֆիլի քանակի մինչև 40 տոկոսն անցել է կարտոֆիլաքե-
րիչ կոոպերատիվ գործարաններով և ամբողջ վերջնական արդյունքի
մինչև 35 տոկոսը մշակված է կոոպերատիվ գործարաններում։ Սկզբ-
նական կոոպերատիվները կարտոֆիլի 70 տոկոսն ընդունում են իրանց
անդամներից։ Կարտոֆիլի կոոպերացիայի անդամների թիվը հասել է
185 հազարի։ Կարտոֆիլի կոոպերացիան բաժանել է իր անդամներին
մինչև 400 հազար փութ սերմանյութ։ Բնորոշ է, որ կարտոֆիլի
կոոպերացիայի անդամների 33,5 տոկոսը լծկան ձի չունի և 60 տոկո-
սը մի լծկան ձի ունի։ Վուշ-կենտրոնի աշխատանքի մեջ 2 միլիոն
փութ ծիլ-վուշ անցել է կոոպերացիայի միջոցով։ Վուշի այդ քանակի
65 տոկոսն սկզբնական կոոպերատիվներն ընդունել են իրանց անդամ-
ներից և միայն 35 տոկոսը չկոոպերացված գյուղացիությունից։ Ան-
ցյալ տարի Վուշ-կենտրոնն իր անդամներին հանձնված կոոպերատիվ
վուշի դիմաց փթին 1 ր. 5 կոպ. լրացուցիչ վճար տվավ։ Սա ար-
դեն արժանի յե կոոպերատիվ վաճառահանության անունը կրելու։
Վուշագործ կոոպերացիայի սոցիալական կազմը — մինչև 95 տոկոսը
սակավազոր միջակներ ու չքավորություն։ 1922 թ. սկսած կազմա-
կերպվել է մինչև 315 սերմի հատուկ ընկերություն, վորոնցից 20 տո-
կոսը կոլլեկտիվ տնտեսություններ։ Կոոպերատիվների սելեկցիոն ու
տեսակավոր սերմերով ցանած տարածությունը հասել է տասնյակ հա-
զար դեսյատինների։ Նրանց բերքը հաշվում է 1120 հազար փութ։
Մեն-միայն Գյուղմիությունն ընկերություններին սերմանյութ է բա-
ժանել ցանելու համար մինչև 151 հազար փութ։ Կան հատուկ ճակըն-
դեղացան 151 ընկերություն։ Նրանց մեջ աշխատում են 27 գյուղա-
տնտես։ Ջիարուծական ընկերություններն արդեն 391 են, և նրանց
մեջ կենտրոնացված է 15868 գլուխ ազնվացեղ անասուն։ Նույնպես
նորից սկսել են բազմանալ այն կոմմունաները, վորոնք անչափ արա-
գությամբ ծնվում էյին 1918—1920 թ. թ. և խիստ կրճատվեցին
1922թ.։ Տակավ առ տակավ նրանք դառնում են օրինակելի տնտե-
սություններ, կոոպերատիվ շաղկապման միջոցով նշանավորում է
նրանց կապը շրջակա բնակչության հետ վերամշակության գծով և
այլն։ Մանավանդ աճում են կոլլեկտիվների պարզ ձևերը—հողի միա-
տեղի մշակության ընկերությունները և արտելները։
Կոլլեկտիվացման խոշորագույն գործոններից մեկը տրակտորն է
հանդիսանում։ Հանրապետության մեջ գտնվող բոլոր տրակտորների
մինչև 80 տոկոսն օգտագործվում է հասարակական կազմակերպու-

թյան կարգով կամ մեքենաօգտագործող ընկերությունների ձեռքով կամ գյուղատնտեսական կոոպերատիվ ընկերությունների կողմից։

Կոոպերատիվ սերմապտիչ կետերի քանակը Ռուսաստանի Հողժողկոմի աջակցությամբ (վորը նրանց վերականգնման պլանն անցկացրեց Տնտեսական Խորհրդակցության միջոցով) միայն 1925 թ. բարձրացավ 1200 կետով։ Կոոպերատիվ վարձակայանների քանակը, վորոնց նպատակն է առաջին հերթին չքավորությանը բարդ մեքենաներ ու գործիքներ հայթայթել, բարձրացավ մինչև 3000 համարյա 35000 մեքենայով։

Այսպիսին է մեր գյուղի արտադրական աճման ցուցադրելի արդյունքը կոոպերացման պատվանդանի վրա»։

Ինչի՞ մասին են խոսում ընկ. Սմիրնովի բերած թվանշանները։

Այդ թվանշանները ցույց են տալիս, վոր արդարանում են Վլադիմիր Իլյիչի խոսքերը, թե կոոպերացիայի մեջ մենք գտել ենք տնտեսական կապի մի այնպիսի ձև գյուղացիության հետ, յերբ գյուղացու մասնավոր շահը միանում է սոցիալիստական շինարարության շահերի հետ։ Միայն հետագա շարժումն այդ ուղիով կնշանակե, թե մենք իսկապես սովորում ենք սոցիալիզմ կառուցել այնպես, վորպեսզի «յուրաքանչյուր մանր գյուղացի կարողանա մասնակցել այդ կառուցմանը» (Լենին)։ Հայտնապես յելակետ ունենալով կոոպերացիայի այդ դերը՝ կուսակցությունը բացառիկ նշանակություն է տալիս բոլոր տեսակների կոոպերացիայի զարգացման խնդրին։

Այսպես, օրինակ, XIV կուսակցական կոնֆերենցիան ամենամանրամասն կերպով կանգ է առել կոոպերացիայի դերի ու նշանակության վրա և իր բանաձևում մատնանշել.

«Ապրանքաշրջանառության ազատության և մանր ապրանքային արտադրության տիրապետության պայմաններում՝ գյուղում կոոպերացիան հանդիսանում է կապի հիմնական հասարակական-տնտեսական ձևը պետական տնտեսության ու գյուղի մանր ապրանքարտադրողի միջև։ Միայն նա կարող է պետության համար ապահովել թե մանր գյուղատնտեսական արտադրության և թե յերկրի ապրանքաշրջանառության վերհսկողությունը և կարգավորումը։

Դրա զորությամբ կոոպերատիվ շինարարությունը ներկայիս ստանում է բացառիկ կարևոր նշանակություն»։

Գնահատելով գյուղատնտեսական ու վարկային կոոպերացիայի դերն ու նշանակությունը՝ կոնֆերենցիան մատնանշեց.

«Գյուղացիական տնտեսությունը զարգացնելու և ռացիոնալիզացիայի յենթարկելու և գյուղացիության մասնակցությունը տնտեսական շինարարության մեջ ուժեղացնելու համար ձեռնարկված միջոցների շարքում գլխավոր տեղը պիտի պատկանի գյուղատնտեսական և վար-

կային կոոպերացիայի կազմակերպչական-տնտեսական ամրացման ու զարգացման:

Գյուղատնտեսական ու վարկային կոոպերացիայի առաջահերթ խնդիրներն են հանդիսանում. ա) կոոպերատիվ վարկի կազմակերպումը, բ) գյուղի զարգացող ապրանքառատության հիման վրա գյուղատնտեսական արդյունքների վերամշակման ու վաճառահանության կազմակերպումը, գ) կոլեկտիվ հողագործության բոլոր հնարավոր ձևերի զարգացումը—ամեն տեսակի կոլեկտիվ տնտեսությունների, կոմմունաների և այլն, դ) արտադրության միջոցների մատակարարումը լայն գյուղացիական մասսաներին:

Գյուղատնտեսական վարկի, մատակարարման, վերամշակման ու վաճառահանության կազմակերպման միջոցով կարող են ստեղծվել պայմաններ, որպեսզի Խորհրդային պետության կողմից մասսայական ներգործություն լինի առանձին փոշիացած գյուղացիական տնտեսությունների արտադրական պրոցեսների վրա»:

Սպառողական կոոպերացիայի նկատմամբ XIV կոնֆերենցիան տվավ այսպիսի դիրեկտիվ.

«Սպառողական կոոպերացիան,—ասում է XIV կուսկոնֆերենցիայի բանաձևը,—այսուհետև ևս դիտելով իբրև հիմնական, գլխավոր օղակը ապրանքաշարժաբեր շղթայի՝ պետական արդյունաբերությունն առաջին հերթին պիտի իր ապրանքներն անցկացնե սպառողական կոոպերացիայի միջոցով, օգտագործելով մասնավոր կապիտալն այն չափով, ինչ չափով կոոպերացիան չի կարող սպասավորել ողջ ապրանքաշրջանառությունը: Կոոպերացիային անհրաժեշտ է ապահովել վարկի ու վերջնահաշվի ավելի նպաստավոր պայմաններ, քան մասնավոր կապիտալի վերաբերմամբ»:

Տնայնա-արհեստագործական կոոպերացիայի դերն ու նշանակությունը XIV կոնֆերենցիան գնահատել է հետևյալ կերպով.

«Տնայնագործական արդյունաբերությունը, զբաղմունքներն ու արհեստներն ունեն և դեռ երկար ժամանակ անչափ կարևոր նշանակություն պիտի ունենան ԽՍՀՄ ընդհանուր եկոնոմիկայի մեջ: Տնայնագործական արդյունաբերության ու զբաղմունքների զարգացումը, որոնք սպասավորում են ներքին (գյուղացիական ու քաղաքի) շուկան, մի կողմից նպաստում են պետական խոշոր արդյունաբերության, կիսահում նյութեր արտադրելով ու մշակելով նրա համար, իսկ մյուս կողմից հանդիսանում են մի միջոց, որ հնարավորություն է ընձեռում օգտագործելու գյուղի ավելցուկ բանվորական ուժը և միքանի շրջաններում գյուղացիության եկամուտների գլխավոր աղբյուրն է կազմում:

Սրա զորությամբ ավելի մեծ չափով, քան մինչև օրս է եղել,

կուսակցության ու պետության ուշադրությունը պիտի նվիրվի տնայնագործական արդյունաբերության հարցերին և տնայնագործներին ու արհեստագործներին կոոպերացնելու գործին:

Կոոպերացման խնդիրը կարող է հաջողությամբ լուծվել միայն այն պայմաններում, եթե տնայնա-արհեստագործական կոոպերացիան աշխատանք հայթայթե տնայնագործին, բարձրացնե նրա վաստակը և բարելավե նրա աշխատանքի արտադրական պայմանները»:

Կոոպերացիայի գնահատականի մասին, որ XIV համագումարն է տվել, մենք արդեն խոսել ենք նախորդ զրույցներից մեկում: Համագումարն ընդգծեց, «որ գյուղում սոցիալիզմի շինարարության հիմնական ուղին կայանում է նրանում, որպեսզի սոցիալիստական արդյունաբերության, պետական վարկային հիմնարկների և պրոլետարիատի ձեռքերում գտնվող այլ հրամայող բարձունքների օրավուր աճող տնտեսական ղեկավարությամբ կոոպերատիվ կազմակերպության մեջ գրավի գյուղացիության հիմնական մասսան և ապահովի այդ կազմակերպության համար սոցիալիստական զարգացում, օգտագործելով, հաղթահարելով և վտարելով նրա կապիտալիստական տարրերը»:

Այս կերպ XIV համագումարն ամբողջապես հաստատեց, թե կուսակցությունը մի րոպե իսկ չի հրաժարվում լենինյան կոոպերատիվ պլանից, որի մասին մենք խոսել ենք նախորդ զրույցում: Այդ պլանը լիովին իրագործելու նպատակով համագումարն առանձնապես կանգնեց գյուղատնտեսական կոոպերացիայի վրա:

«Համագումարը հաստատում է, թե գյուղատնտեսական կոոպերացիան և՛ իր տնտեսավար աշխատանքով, և՛ մասսաները գրավելու տեսակետից, և՛ ուղիղ սոցիալիստական ղեկավարության տեսակետից դեռ ևս հեռու է իր մեծ դերը կատարելուց: Համագումարը կուսակցության բոլոր անդամներին պարտադրում է խիստ ուշադրությամբ հետևել գյուղատնտեսության կոոպերացիայի զարգացմանը և ձեռնարկել բոլոր միջոցները, որոնք ապահովում են նրա ուղիղ աճումը»:

Հիշել լենինյան պլանի մասին և բոլոր ուժերով օգնել այն կիրառելու կյանքի մեջ—դա կուսակցականի առաջնագույն պարտականությունն է: Կուսակցականը պիտի հիշե, որ այդ պլանի իրագործումից դուրս անհնարին է մեր երթը դեպի սոցիալիզմը:

Որպեսզի լավ յուրացվի «Կուսակցության և Խորհրդային իշխանության գյուղատնտեսական քաղաքականության էությունը» բաժինը, պատասխաններ տվեք հետևյալ հարցերին.

1. Ինչո՞ւ չի կարելի դեպի սոցիալիզմ առաջնորդել գյուղատնտեսությունը, եթե չկիրառվի երկրի ինդուստրիալիզացիան:

2. Ի՞նչպես է օգտագործում պրոլետարական պետությունն իր ձեռքում գտնվող հրամայող բարձունքները գյուղի արտադրական ուժերը բարձրացնելու համար:

3. Ի՞նչպես է կոոպերացիան կատարում գյուղի միավորման հիմնական ձևի իր դերը դեպի սոցիալիզմը տանող ճանապարհի վրա:

2. ԳՅՈՒՂԻ ՇԵՐՏԱՎՈՐՈՒՄԸ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԵՊԻ ՍՈՑԻԱԼԻԶՄԸ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎՐԱ

Գյուղի յեվ կուլակային տնտեսությունների շերտավորման աճումն իբրեվ արգելք գյուղացիական տնտեսության յերթին դեպի սոցիալիզմ:

Նախորդ գլուխում մենք ասել ենք, թե ՆԷՊ-ը հանդիսանում է մի քաղաքականություն, վորը նկատի ունի սոցիալիստական տարրերի պայքարը կապիտալիստականի հետ և առաջինների վերջնական հաղթանակը վերջինների վրա։ Յերբ ՆԷՊ-ն եր մուծվում, Վ. Ի. Լենինը նախատեսեց, թե սկզբում կապիտալիստական տարրերը պիտի աճեն գյուղում։ ՆԷՊ-ի որով կապիտալիստական հարաբերությունների աճումը գյուղում արտահայտվում է նրա մեջ, վոր մի կողմից զատվում են կուլակային տարրերը, իսկ մյուս կողմից՝ գյուղական պրոլետարները։ Այդ տեսակետից ՆԷՊ-ն զգալիորեն դունազանվում է ռազմական կոմմունիզմի ժամանակաշրջանից։ Մինչև ՆԷՊ-ը սաստիկ աճում եր միջակների խմբակը ինչպես թե չքավորների և թե կուլակների նվազման։

Ահա, օրինակ, տվյալներ ՌՍՖՍՀ 25 նահանգներին վերաբերյալ (տոկոսներով).

ՏԱՐԻ	Ցանքազուրկ	10 դեսիատինից ավելի ցանքով
1918	11,5	5,1
1919	6,6	1,5

Այդ թվանշանները խոսում են այն մասին, թե ռազմական կոմմունիզմի տարիներին ահագին չափով նվազել է կուլակների քանակը և չքավորների քանակը։ Ահա ինչու Վ. Ի. Լենինը և ընդգծում եր, թե ՆԷՊ-ի անցման պահուն գյուղում գերակշռող տարրը հանդիսանում եյին միջակները, թե միջակը դարձել է «հողագործության կենտրոնական դեմքը», և վոր մեր կուսակցության համար անհրաժեշտ է կառուցել «պետական եկոնոմիկան համապատասխան միջակի եկոնոմիկային, վորը 3 տարվա ընթացքում մենք չկարողացանք վերափոխել և դեռ 10 տարվա ընթացքում էլ չենք վերափոխի»։

Այժմ տեսնենք, թե ՆԷՊ-ի որով ինչպես է կատարվում շերտավորումը։ Այդ շերտավորումն ամենևին չի կարող ընթանալ և չի ընթանում այնպես, ինչպես բուրժուական յերկրներում, շնորհիվ 1) հողի ազգայնացման և 2) Խորհրդային իշխանության ընդհանուր տնտեսական քաղաքականության։

Այնտեղ, ուր իշխանությունը բուրժուազիայի ձեռքին է, ամբողջ կապիտալիստական մեքենան, ամբողջ պետական ապարատը գործում

է հօգուտ շերտավորման, հօգուտ գյուղի կապիտալիստական տարրերի աճման։ Խորհրդային իշխանությունը, վոր իր նպատակն է դնում սոցիալիզմի կառուցումը, իր ամբողջ քաղաքականությունը գյուղի նկատմամբ ուղղում է դեպի այն, վորպեսզի կասեցնե, իսկ վերջիվերջո և խսպառ դադարեցնե գյուղի շերտավորումը։

Հողի ազգայնացումը, այսինքն նրա պետական սեփականություն դառնալը և մասնավոր անձանց սեփականությունից հանելը, հենց Խորհրդային իշխանության այն միջոցն է հանդիսանում, վոր կասեցնում է գյուղի շերտավորումը։ Նախահեղափոխության ժամանակ գյուղի շերտավորումն ընթանում եր առավելապես հողի առուծախսի գծով։ Հողի ազգայնացումը վերջ է դրել գյուղի շերտավորման այդ գծով։ Ապա գյուղի շերտավորումը դանդաղում է պետական վարկի քաղաքականությամբ, հարկային քաղաքականությամբ, կոոպերատիվ քաղաքականությամբ և Խորհրդային իշխանության մի ամբողջ շարք տնտեսական միջոցներով։ Առաջին հերթին վարկ տալով չքավորագույն գյուղացիությանը, կոոպերացիայի մեջ կազմակերպելով չքավոր ու միջակ գյուղացիությունը, գյուղում հարկերի ծանրությունը կուլակ տարրերի վրա բարդելով, զարգացնելով պետական ու կոոպերատիվ առևտուրը և այլն, Խորհրդային իշխանությունը ձգտում է չե թե միայն թույլ չտալ, վոր չքավորը վերջնականապես կորցնի ամեն բան, այլ ընդհակառակը, ամեն կերպ աջակցել նրան և նպաստել նրա տնտեսության վերելքին։ Հետևանքն այն է, վոր համեմատած նախահեղափոխական ժամանակի հետ՝ մենք անպայման ունենք շերտավորման դանդաղումը գյուղում։ Այդ մասին վկայում են թվանշանները։ Ահա, օրինակ, տվյալներ, վոր ընկ. Ռիկովը հաղորդեց Մոսկվայի նահանգական XIV կուսկոնֆերենցիային (ԿՎՎ նյութերի հիման վրա).

ՏԱՐԻ	Հետազոտված տնտեսությունների թիվը	Ցանքազուրկ	Մինչև 1 դես.	1—2 դես.	2—4 դես.	4—6 դես.	6—10 դես.	10—16 դես.	16—25 դես.	25 դես. ավելի	Ընդամենը
1922	228 989	4,1	20,0	30,5	30,6	9,9	4,3	0,5	0,1	—	100
1923	233 318	3,3	17,8	27,6	31,7	12,3	6,2	0,9	0,1	0,1	100
1924	237 407	3,1	14,3	25,8	34,6	13,9	7,0	1,0	0,2	0,1	100
1925	263 480	1,8	12,3	24,0	36,9	15,7	8,0	1,2	0,1	—	100

Այդ թվանշանները ցույց են տալիս շերտավորման դանդաղ թափը գյուղում և միջակների խմբակի անշեղ աճումը։ Ուրիշ թվանշան-

ներ էլ են պատկերացնում մեր գյուղի կուլակների, միջակների և չքավորների ուժը.

	Տնտեսությունների %-ը	Ցանքսի տարածության %-ը	Լծկան անասունների %-ը
Չքավորությունը	41	14	23
Միջակները	55	70	67
Ունևորները	3	10	7
Կուլակները	1	6	3
Ընդամենը	100	100	100

Սակայն անտարակուսելի յե, վոր շերտավորումը գյուղում առաջ
և ընթանում։ Այդ ընդունեց իր բանաձևում և XIV համագումարը,
վորը նշեց «կուլակային տնտեսությունների աճումը գյուղում այդ
վերջինի շերտավորման աճման հետ միասին»։ Այդ շերտավորումը էլ
ավելի առաջ պիտի ընթանա և ուժեղանա մինչև այն ժամանակ, մին-
չև վոր մեզ չհաջողվի կոոպերացնել գյուղացիական տնտեսությունների
մեծամասնությունը։ Կուսակցությունը մշտապես հիշում է այդ մասին
և ուսումնասիրում գյուղի շերտավորման իսկական փաստերը։ Բայց մի-
աժամանակ էլ կուսակցությունը նախազգուշացնում է նրանց, վորոնք
ձգտում են չափազանցացնել շերտավորման ընթացքը, վորոնք մնացած
են կամ անճիշտ մեկնաբանված փաստերով փորձում են խուճապ տա-
րածել, տեղծելով տպավորություն, թե շերտավորումն ընթանում և
նույն թափով, ինչ վոր և մինչհեղափոխական ժամանակ։

Իսկ ինչ քաղաքականություն և ինչու յե պարտադիր կուսա-
կցության համար, յերբ հրապարակի վրա յե գյուղի շերտավորման
փաստը և գոյություն ունի այդ շերտավորման դանդաղ ընթացքը,
վորի հետևանքով միջակը մնում է հողագործության կենտրոնական դեմ-
քը։ Այդ հարցին լիակատար ու պարզ պատասխան է տալիս XIV հա-
մագումարի բանաձևը.

«Յեթե չքավորությունը և ամենից առաջ մշակները (բատրակ-
ները) պրոլետարիատի հենուկն են հանդիսանում գյուղում, ապա մի-
ջակը հանդիսանում է և պիտի հանդիսանա նրա հաստատ դաշնակիցը։
Չի կարելի մի րոպե իսկ մոռանալ, թե կալվածատիրական հողատի-
րության վերացման և կալվածատիրական հողերի գյուղացիության
ձեռքերն անցնելու հետևանքով, չքավորների կոմիտեների ու կուլա-
կաթափման քաղաքականության հետևանքով գյուղում, վերջապես, հո-
ղը ապրանքաշրջանառությունից հանելու (հողի ազգայնացումը) պատ-
ճառով՝ գյուղացիության միջակ շերտերն անչափ ուժեղացել են և վոր
այդ շերտերն այժմ, չնայած շերտավորման պրոցեսին, կազմում են
գյուղացիության հիմնական մասսան։ Զուհենալով այդ մասսաները
հաստատ դաշնակիցների դերում կամ սահմանափակվելով մեն-միայն

այդ շերտերի չեզոքացումով, այժմ, պրոլետարական դիկտատուրայի
ամրապնդումից հետո, չի կարելի սոցիալիզմ կառուցել»։

«Այս պատճառով,—ասում է ապա համագումարը,—միջակի ամեն
մի թերագնահատում, նրա բացառիկորեն կարևոր դերի անըմբռնումը,
փորձը շրջելու կուսակցությունը նրա հետ հաստատ դաշինք ունենալու
լոզունգից դեպի նրան չեզոքացնելու հնացած լոզունգը, «վախը մի-
ջակից»,—օբյեկտիվորեն առաջնորդում է դեպի պրոլետարիատի դիկ-
տատուրայի ջլատումը, վորովհետև դրանով իսկ քակվում է բանվորա-
գյուղացիական բլոկը։

Պայքարը կուլակության դեմ պիտի ընթանա թե կազմակերպե-
լով չքավորությունն ընդդեմ կուլակի, թե ամրացնելով պրոլետարիա-
տի և չքավորության դաշինքը միջակի հետ, հեռացնելով միջակին
պոկել կուլակությունից և դրանով կղզիացնել կուլակին»։

Միայն այդպիսի քաղաքականություն, ինչպիսին մատնանշեց
XIV համագումարը, ՆԵՊ-ի պայմաններում միայն դա յե հանդիսանում
միակ ուղիղ քաղաքականությունը գյուղում. առանց նրան, վոր կի-
րառվի այն, չի կարող գործադրվել մեր շինարարական աշխատանքը
և իրագործվել լենինյան կոոպերատիվ պլանը, վորը պահանջում է սո-
ցիալիզմի շինարարության մեջ գրավել գյուղացիության հիմնական
մասսան։

Նման պայմաններում վտանգավոր են հանդիսանում այն թե-
քումները, վորոնց կողմնակիցները փորձում են շեղել կուսակցությու-
նը այդ միակ ուղիղ քաղաքականության շավղից։ Այդ թեքումների
վրա մանրամասն կուսակցության ուշադրությունն է բևեռել XIV հա-
մագումարը։ Թեքումները յերկուսն են. 1) կուլակի թերագնահատում
և 2) կուլակի գերագնահատում։

Կուսակցական համագումարին արած իր զեկուցման մեջ ընկ.
Ստալինն այսպես բացատրեց այդ թեքումներից առաջինի եյությունը.

«Առաջին թեքումը կայանում է նրանում, վոր նվազեցնում է
կուլակի և առհասարակ կապիտալիստական տարրերի դերը գյուղում,
մթագնում է կուլակի վտանգը։ Նա յելակետ ունի, թե ՆԵՊ-ի զար-
գացումը չի առաջնորդում դեպի կապիտալիստական տարրերի աշխու-
ժացումը գյուղում, թե կուլակը և առհասարակ կապիտալիստական
տարրերը մեզ մոտ անցնում են կամ, ավելի ճիշտ, անցել են պատմու-
թյան գիրկը, թե գյուղում շերտավորում չի կատարվում, թե կուլա-
կը—դա անցյալի արձագանքն է, խրտվիլակը և միայն դա։

Ինչի՞ յե առաջնորդում այդ թեքումը։

Իրականի մեջ այդ թեքումն առաջնորդում է դեպի դասակարգա-
յին պայքարի բացասումը գյուղում»։

Այդ թեքումի վտանգը նրա մեջ է, վոր նա մթագնում է պրոլե-

տարիատի ու գյուղացիության դասակարգային թշնամու, կապիտալիզմի գործակալի գոյության փաստը գյուղում: Իսկ կուսակցության խնդիրը, ընդհակառակը, պիտի կայանա նրանում, վորպեսզի հիշե այդ թշնամու մասին և նրա հետ պայքարե մի ամբողջ շարք մտածված ու տնտեսականորեն նպատակահարմար միջոցներով:

Առաջին թեքումին կատարյալ հակադրություն է հանդիսանում յերկրորդը: Նրա եյությունը ընկ. Ստալինն այսպես եր բացատրում XIV համագումարում.

«Յերկրորդ թեքումը կայանում է նրանում, վոր ուռցնում է կուլակի և առհասարակ կապիտալիստական տարրերի դերը գյուղում, խուճապի յե մատնվում այդ տարրերի առաջ, բացասում է այն, թե պրոլետարիատի ու չքավորության դաշինքը միջակի հետ հնարավոր ու նպատակահարմար է:

Այդ թեքումը յելակետ ունի այն, թե մեզ մոտ գյուղում կապիտալիզմի պարզ վերականգնումն է տեղի ունենում, թե կապիտալիզմի վերականգնման այդ պրոցեսը հանդիսանում է ամենակուլ պրոցես, վորն ամբողջությամբ կամ ճնշող մասով ընդգրկում է և մեր կոոպերացիան, թե նման զարգացման հետևանքով անընդհատ ավելի խոշոր չափով պիտի աճի շերտավորումը, թե ծայրի խմբակները, այսինքն կուլակներն ու չքավորները տարեցտարի պիտի ուժեղանան ու աճեն, թե միջին խմբակները, այսինքն միջակները նույնպես տարեցտարի պիտի թուլանան ու ջնջվեն:

Իրականի մեջ այդ թեքումն առաջնորդում է դեպի դասակարգային պայքարի բորբոքումն գյուղում, դարձ դեպի չքավորների կոմիտեների կուլակաթափման քաղաքականությունը, հետևաբար, քաղաքացիական պատերազմի հռչակումն մեր յերկրում, և այս կերպ մեր ամբողջ շինարար աշխատանքի ձլատումն, վորով և Լենինի կոոպերատիվ պլանի բացասումն այն իմաստով, վոր նկատի ունի միլիոնավոր գյուղացիական տնտեսությունները մտցնելու սոցիալիստական շինարարության սիստեմի մեջ:

Այդ յերկրորդ թեքումը կուսակցության մեջ դրսևորեց նոր օպպոզիցիան, վորը հանդես յեկավ XIV համագումարի նախօրեյին և բուն համագումարում: Օպպոզիցիայի կողմնակիցներն իրանց ազատությունն ավլին մինչև այն, վոր ասացին, թե կուլակն արդեն տնտեսորեն գյուղի տերն է դարձել:

Այդ թեքման վտանգը նրա մեջ է, վոր նա սպառնալիքի տակ է դնում գլխավոր և վճռական խնդրի լուծումը կուսակցության կողմից— այն է՝ պայքարը միջակի համար:

«Վորն է այն նոր խնդիրը, վոր ի տարբերություն նախորդ ժամանակաշրջանի առանձնապես սուր է ծառացած այժմ,—հարցնում եր

ընկ. Ռիկովը համագումարի իր ճառում: Այդ խնդիրը կայանում է նրանում, վոր մենք ինչ էլ վոր լինի պարտադրաբար պիտի նվաճենք բանվոր դասակարգի դաշինքը միջակի հետ և նրա հետ միասին կոոպերացիայի, գյուղատնտեսության ինդուստրիալիզացիայի միջոցով և այլն սոցիալիզմ կառուցենք»:

Կուլակային վտանգի գերագնահատությամբ, խուճապային ճչոցներով կուլակների ճնշող ազդեցության մասին՝ օպպոզիցիան շեղեց կուսակցության ուշադրությունը ներկա ժամանակին պատշաճ գյուղացիական ֆրոնտի գլխավոր գծից—միջակի համար մղվելիք պայքարից:

Միևնույն ժամանակ օպպոզիցիայի հայացքը, յեթե կուսակցության կողմից այն ընդունվեր XIV համագումարում, իր անխուսափելի հետևանքը կունենար հենց կուլակային վտանգի ուժեղացումը. ՆԷՊ-ի պայմաններում միջակի ամեն մի թերագնահատություն, անբավարար յեռանդոտ պայքարը միջակի համար՝ հավասարազոր է կուլակային ազդեցության ուժեղացմանը գյուղում:

Կուլակը վտանգավոր է հայտնապես նրանով, վոր նա կարող է տանել և հաճախ իր յետևից տանում է միջակին: Այս պատճառով նա, ով կուլակային վտանգի իր ճչոցներով շեղում է կուսակցությունը միջակի համար մղվելիք պայքարից, դրանով իսկ անխուսափելիորեն ուժեղացնում է կուլակին:

XIV համագումարն իր բանաձևում վճռականորեն դատապարտեց յերկու թեքումները—կուլակի և՛ թերագնահատումը և՛ գերագնահատումը:

«Համագումարը,—ասում է նրա բանաձևը,—վճռականորեն դատապարտում է այն թեքումը, վորի իմաստը գյուղի շերտավորման թերագնահատումն է, վորը չի տեսնում այն վտանգները, վորոնք կապված են կուլակության և կապիտալիստական շահագործման զանազան ձևերի աճման հետ, չի ցանկանում ըմբռնել կուլակությանը դիմադրություն ցույց տալու և նրա շահագործական ձգտումները սահմանափակելու վողջ անհրաժեշտությունը, չի տեսնում, թե պրոլետարիատի կուսակցության համար պարտադիր է ընդդեմ կուլակի և նրա հետ մղվելիք պայքարում կազմակերպել ու համախմբել չքավորությանն ու մշակներին:

Բայց միևնույն ժամանակ համագումարը նույնպիսի վճռականությամբ դատապարտում է այն փորձերը, վոր նպատակ ունեն ստվերավորելու գյուղում վարելիք կոմունիստական քաղաքականության հիմնական հարցը—պայքարի հարցը միջակի՝ իբրև հողագործության կենտրոնական դեմքի համար և կոոպերացիայի մասին, վոր գյուղի դեպի սոցիալիզմը շարժվելու հիմնական կազմակերպչական ձևն է»:

Ընդսմին համագումարն առանձնապես ընդգծեց պայքարի անհրաժեշտությունը այս վերջին թեքումի դեմ.

«Հարաբերականորեն կուսակցությունն ավելի նախապատրաստված լինելով անմիջական պայքար մղելու կուլակի դեմ և հաղթահարելու առաջին թեքումը՝ առավել դժվար խնդիր է ներկայացնում յերկրորդ թեքումի հաղթահարումը, վորովհետև նրա հաղթահարումը պահանջում է պայքարի ավելի բարդ ձևեր—զուգակցելով կուլակության քաղաքական կղզիացման մեթոդները գյուղացիության հիմնական մասսան սոցիալիստական շինարարության հունը գրավելու մեթոդների հետ,—առավել ևս, վոր ներկա պայմաններում այդ յերկրորդ թեքումն սպառնում է դարձ կատարել դեպի կուլակաթափման քաղաքականությունը, ջլատել կուսակցության արդի գիծը գյուղում, մի գիծ, վոր արդեն ապահովել է լուրջ քաղաքական հաջողություններ, ջլատել պրոլետարիատի ու գյուղացիության զոդումը և, հետևաբար, ջլատել ամբողջ մեր շինարարական աշխատանքը»։

XIV համագումարին արած իր զեկուցման մեջ ընկ. Ստալինը բացատրում էր, թե ինչու յե անհրաժեշտ, վոր կուսակցությունն ավելի ուշադրություն կենտրոնացնի պայքար մղելու յերկրորդ թեքումի դեմ,—այն թեքումի, վոր իրանից նոր օպպոզիցիան է ներկայացնում կուսակցության մեջ։

Նա մատնանշում եր, թե յերկու թեքումներն էլ վտանգավոր են, բայց վոր կուսակցությունն ավելի յե նախապատրաստված պայքարելու կուլակի դեմ, քան թե դաշնակցելով միջակի հետ մի բարդ քաղաքականությամբ կղզիացնել կարողանա կուլակին։ Յեթե «կուլակին հարվածիր» լոզունգը տանի,—մատնանշում եր ընկ. Ստալինը,—ապա այն արագությամբ կկիրառեն կյանքի մեջ, բայց, ընդհակառակը, կուսակցության ուղիղ քաղաքականությունն այնքան էլ հեշտ չի յուրացվում։ Ահա և ինչու պետք է կրակը կենտրոնացնել կուլակին գերազանցահատելու թեքման վրա, մի թեքում, վորն սպառնում է շեղել կուսակցությունը գյուղի համար ընդունված ուղիղ քաղաքականությունից դեպի ռազմական կոմունիզմի ժամանակաշրջանի կուլակաքամման քաղաքականությունը։

Այդ պայքարն էլ կուսակցությունը վարում եր XIV համագումարում, պայքարելով նոր օպպոզիցիայի հետ։ Այդ պայքարն ամբողջ ուժով նա վարել է և հետագայում, վորովհետև օպպոզիցիան՝ խախտելով XIV համագումարի վորոշումը՝ նրանից հետո յել կուլակային վտանգի չափազանցումով փորձել է խուճապ տարածել և դրանով իսկ կուսակցությունը շեղել միջակի համար պայքար մղելու խնդրից։ Միջակի և նրա հետ դաշինք ունենալու նշանակության մթագնումն առաջնորդեց նոր օպպոզիցիային և դեպի այն վնասակար ու վտանգավոր հայացքը յերկրի ինդուստրիալիզացիայի առթիվ, վորի մասին մենք խոսել ենք նախորդ գրույցում, և վորի դեմ կուսակցությունը պայքարում է նույն յեռանդով և ուժով, ինչպես այդ օպպոզիցիայի բոլոր հայացքների դեմ։

Միջակի համար կուսակցությունը պայքար է սկսել XIV համագումարից շատ առաջ։ Մեր կուսակցության հետ-հոկտեմբերյան պատմությունից մենք գիտենք, թե սոցիալիզմի շինարարության մեջ միջակի հետ դաշինք կնքելու վճռական կուրսը մեր կուսակցությունը վերցրել է Վ. Ի. Լենինի առաջարկությամբ դեռ կուսակցության VIII համագումարում 1919 թվականին։ Այդ կուրսը դրոշմված է և միջին գյուղացիության նկատմամբ ունենալիք վերաբերմունքի մասին բանաձևում, վոր VIII համագումարն է ընդունել, նաև այդ նույն համագումարի ընդունած կուսակցության ծրագրի մեջ։ Այդ կուրսն է կազմում նոր տնտեսական քաղաքականության հիմքը, վոր ամբողջապես նկատի ունի սոցիալիզմի շինարարությունը միջակի հետ դաշնակցած
կատարել։ ՆԷՊ-ի որով այդ դաշինքի ամրացումն է կազմում կուսա-
կցության բոլոր համագումարների և բոլոր կոնֆերենցիաների բոլոր
վորոշումների հիմքը և Խորհրդային իշխանության բոլոր տնտեսական
ձեռնարկումների հիմքը։ Ամրացնել բանվոր դասակարգի և չքավորու-
թյան դաշինքը միջին գյուղացիության հետ—դրան էին ուղղված և
գյուղի տնտեսական շինարարական բոլոր միջոցները, վորոնք կիրառ-
վում եյին XIV համագումարից առաջ, 1925 թվականի ապրիլին տե-
ղի ունեցած XIV կուսկոնֆերենցիայի վորոշումների հիման վրա։

XIV կուսկոնֆերենցիայի պահուն գյուղում սրվեցին այն հակա-
սությունները, ինչ ստեղծվել եյին նրանում ռազմական կոմմունիզմի
պահպանված մնացորդներով։ Այդ մնացորդները կաշկանդում եյին
գյուղական տնտեսության զարգացումը յերկու ուղղությամբ. քաղա-
քական-վարչական գործնականի գծով և տնտեսականի գծով։

XIV կուսկոնֆերենցիայի պահուն գյուղում ավելի սուր է զգացվում «գյուղական գործազրկությունը», բանվորական ձեռքերի ավելցուկը, վորոնք իրանց համար աշխատանք չեյին գտնում վոչ գյուղի հետամնաց տնտեսության մեջ, վոչ քաղաքի արդյունաբերության մեջ, վորը դեռ չեր հասել նախապատերազմյան մակարդակին։ Գյուղական գործազրկությունը, վոր այն ժամանակ ավելի յեր սրվում տնայնագործների վրա բարդած համեմատաբար ծանր հարկով, կասեցնում եր գյուղական տնտեսության զարգացումն իր ամբողջությամբ և ստեղծում եր թե կուլակային վերնաշերտի և թե գյուղական չքավորության դժգոհությունը։

Քաղաքական-վարչական գծով գյուղացիական տնտեսության զարգացումը և նրա վերելքն ավելի բարձր տեխնիկական աստիճանի կասեցվում եր հրամայելու և հարկադրելու մնացորդներով և հեղափոխական օրինականության պակասությամբ։

Մեկնելով գյուղի այդ վիճակից, XIV կուսկոնֆերենցիան ընդունեց, թե բանվոր դասակարգի դաշինքը գյուղացիության հետ և պրոլետարիատի դիկտատուրան պետք է նոր պայմաններում նոր ձևով ամրացնել։ Կուսկոնֆերենցիան անհրաժեշտ գտավ ազատ արձակել տնտեսական շրջանառությունը տնտեսության բոլոր ճյուղերում, այդ թվում և գյուղում, և մատնանշեց, թե կապիտալիզմի տարրերը, վորոնք անխուսափելիորեն պիտի ուռճանան այդ դեպքում, պիտի հաղթահարվեն տնտեսական պայքարի միջոցով և գյուղացիական տնտեսության աճող կոոպերացումով։ Պետությունը կարող կլինի տնտեսական պայքարը հաջողությամբ վարել նրա համար, վոր ավելի ու ավելի բարձրացող և ամրացող հրամայող բարձունքները նրա ձեռքերում են գտնվում։ Կոնֆերենցիան ընդգծեց, թե ապրանքաշրջանառության զարգացումն անհրաժեշտ է ամբողջ ժողովրդական տնտեսության օգտի համար։ Յեվ իսկապես. XIV կուսկոնֆերենցիայի պահուն մենք արդեն մերձենում էյինք նրան, վոր լիակատարորեն սպառենք ու օգտագործենք արդյունաբերության հիմնական կապիտալը, և մեր առաջ ամբողջ ուժով եր ծառանում այդ հիմնական կապիտալի վերանորոգման ու ընդարձակման խնդիրը,—այլ խոսքերով՝ հին ֆաբրիկների ու գործարանների վերասարքավորման և նորերը կառուցելու խնդիրը։ Բայց այդ վերասարքավորման ու ընդարձակման համար միջոցներ են հարկավոր, վորը, ինչպես մենք արդեն ասել ենք, մենք կարող ենք ստանալ միայն մեր ժողովրդական տնտեսության կուտակումից։ Իսկ գյուղատնտեսության մեջ այդ կուտակումն աննշան է, յեթե չզարգանա և չընդարձակվի ապրանքաշրջանառությունը, և չվերացվեն բոլոր արգելքները, վոր խանգարում են այդ զարգացման ու ընդարձակման։

Մյուս կողմից ապրանքաշրջանառության զարգացումը ծայր աստիճան անհրաժեշտ է հենց գյուղի համար. իր տնտեսությունը էլ ավելի զարգացնելու նպատակով՝ գյուղը ՆԷՊ-ի պայմաններում պետք է ըստ հնարավորության ավելի վաճառե ու գնե։

Այստեղից էլ բղխեցին XIV կոնֆերենցիայի նշանառած բոլոր տնտեսական ձեռնարկումները։ Գլխավորագույնները նրանցից հետևյալն էյին. հողի կապալով տալու և կապալով վերցնելու իրավունքի ընդարձակումը, բանվորական ուժ վարձելու իրավունքի ընդարձակումը, օգնություն տնայնագործ արդյունաբերության, մի ամբողջ շարք միջոցներ՝ ամրացնելու բոլոր տեսակի կոոպերացիաները և նվազեցնելու գյուղատնտեսական հարկը։

Քաղաքական բնագավառում կոնֆերենցիան անհրաժեշտ գտավ ձեռք առնել բոլոր միջոցները՝ աշխուժացնելու խորհուրդները և բարելավելու պրոլետարական ղեկավարությունը գյուղացիության նկատ-

մամբ իշխանության խորհրդային օրգանների միջոցով և վճռականորեն անցնելու հեղափոխական օրինականության գծին, արմատախիլ անելով ռազմական կոմմունիզմի մնացորդները (հրամանավորություն, հարկադրում) վարչական-քաղաքական աշխատանքի մեջ։ Կոնֆերենցիան մատնանշեց կուսակցությանը, թե նոր պայմաններում միայն այդ միջոցների կիրառումով կարելի յե ամրացնել պրոլետարիատի դիկտատուրան, և վոր կուսակցության այդպիսի գիծը հանդիսանում է «պրոլետարական քաղաքականության միակ ուղիղ գիծը»։

XIV համագումարում և մինչև համագումար կուսակցության մեջ հրապարակ յեկած նոր օպպոզիցիան փորձեց ապացուցել, թե XIV կոնֆերենցիայի վորոշումները հողի կապալի և վարձու աշխատանքի մասին գյուղում հանդիսանում են զիջում «հայտնապես գյուղի կապիտալիստական տարրերին» (ընկ. Զինովևի արտահայտությունը), այսինքն կուլակներին։ Այդ հայտարարությունը հակասում է իրականության։ Իհարկե, XIV կոնֆերենցիայի վորոշումներն օգտագործվում են և պիտի օգտագործվեն կուլակների կողմից, վորոնք շնորհիվ նրանց կարող են ընդարձակել բանվորական ուժի վարձումը, հողի կապալը և այլն։ Բայց դա ամենևին իրավունք չի տալիս ասելու, թե այդ վորոշումները զիջում են կուլակին։ Իսկապես, ՆԷՊ-ն էլ են զգալի չափով օգտագործում կապիտալիստներն ու կուլակները։ Բայց միթե կարելի յե այդ հիման վրա ասել, թե ՆԷՊ-ը զիջում է կապիտալիստներին ու կուլակներին։ Իհարկե, վոչ։ ՆԷՊ-ը մուծված է պրոլետարական պետության կողմից սոցիալիզմի շինարարության համար, հիմք ընտրելով պրոլետարիատի և գյուղական չքավորության զոդումը միջին գյուղացիության հետ։

Նույնպես և XIV կուսկոնֆերենցիայի վորոշումներն ամենից առաջ և ամենից ավելի հարկավոր են սոցիալիզմի շինարարության համար, պրոլետարիատի զոդումը չքավոր ու միջակ գյուղացիության հիմնական մասսայի հետ ամրացնելու համար։ Այդ վորոշումները նախ և առաջ չքավորության ու միջակների օգտին էր, վորոնք թույլ ապրանքաշրջանառության, ռազմական կոմմունիզմի մնացորդների պայմանում և այլն չեն կարող բարձրացնել իրանց տնտեսությունը։ Նոր օպպոզիցիան մանավանդ ընդգծում էր, թե կուլակին զիջում է հանդիսանում վարձու աշխատանքի գործադրման և հողի կապալի իրավունքի ընդարձակումը գյուղում։ Նա չէր կամենում տեսնել, թե մինչև XIV կուսկոնֆերենցիան գոյություն ունեցող բատրակների վարձման ու հողի կապալի սեղմումներն ամենևին չէյին խանգարում, վոր կուլակը վարձու աշխատանք գործադրե և հող վերցնե կապալով, այլ միայն հանգում էյին թաքցրած վարձվորության և թաքցրած կապալի։ Դրանով օգտվում էր կուլակը, վորպեսզի ազգակցության անվան տակ, կեղծ

ամուսնությունների, վորդեգրումների միջոցով և այլն ավելի խիստ սորկացնե բատրակներին։ Դրանից կուլակն օգտվում եր և նրա համար, վորպեսզի աղքատի հողերը կապալով վերցնի աղքատի համար ամենաաննպաստ պայմաններով։ Գոյություն ունեցող սեղմումների վերացումը միայն բարելավում ե չքավորի վիճակը, քանի վոր նա հարկադրված ե դեռ վարձվելու և կապալով տալու իր հողը։ Բարելավում ե նրա համար, վոր բացահայտ վարձվորությունն ու կապալը հնարավորություն են տալիս Խորհրդային իշխանությանը և արհմիություններին հսկողության տակ դնելու կուլակին և իրան չքավորին էլ հնարավորություն տալիս պաշտպանվելու կուլակային սորկացումից, կռթնելով Խորհրդային իշխանության ու արհմիությունների վրա։ Մեկնաբանել այդ միջոցներն իբրև զիջում կուլակին—դա նշանակում ե խեղաթյուրել կուսակցության քաղաքականությունը, վոր իրականում ուղղված ե պաշտպանելու բատրակի ու չքավորի շահերը։

XIV համագումարն ամբողջությամբ ու լրությամբ հավանություն տվեց XIV կուսկոնֆերենցիայի վորոշումներին և ընդունեց, «թե դասակարգերի միջև փոփոխված հարաբերանքից բղխող կուսակցական քաղաքականության այդ շրջադարձը միայն արմատականորեն բարելավեց կացությունը գյուղում, բարձրացրեց պրոլետարիատի և նրա կուսակցության հեղինակությունը գյուղացիության միջև և գյուղացիությունը սոցիալիստական շինարարության մեջ գրավելու համար լայն կազմակերպչական աշխատանքի հաստատ պատվանդան ստեղծեց»։

Հարակից XIV կուսկոնֆերենցիայի վորոշումներին էլ տեղ ե գրավում ԿԿ հոկտեմբերյան (1925 թ.) պլենումի հատուկ բանաձևը—«Կուսակցության աշխատանքի մասին գյուղական չքավորության մեջ»։ Այդ բանաձևը հավատարիմ ե կուսակցության մշտական հայացքներին դեպի գյուղական չքավորությունը, նկատելով նրան բանվոր դասակարգի ու նրա կուսակցության հենուկը գյուղում և միաժամանակ էլ ընդգծում ե կուսակցության քաղաքականության գիծը չքավորության նկատմամբ նոր պայմաններում։

Պլենումն անհրաժեշտ դատեց կիրառել այնպիսի միջոցներ, վորոնք Խորհրդային իշխանության շուրջը խմբացնել կարողանային չքավորությունը։

«XIV կուսկոնֆերենցիայի վորոշումների կիրառումը,—ընդունեց պլենումն իր բանաձևի մեջ,—մանավանդ գյուղացիների մասսայական կոոպերացման ծավալումը և խորհուրդների աշխուժացումը և դրա հետ կապված չքավորության կազմակերպումը և պայքարը միջին գյուղացիության համար՝ տվյալ մոմենտին ներկայացնում են առանձնապես կարևոր նշանակություն, նկատի ունենալով լավ բերքի հետևանքով ապրանքային հարաբերությունների արագացող զարգացումը և մոտիկ

ժամանակի համար գյուղացիության շերտավորման պրոցեսների անխուսափելի ուժեղացումը։

Հարակից սրան առանձնապես առաջադրվում են հարցեր այն մասին, թե ինչպես կուսակցության ու Խորհրդային իշխանության շուրջը խմբացնել չքավորությունն ու բատրակներին, ինչ մեթոդներով ղեկավարվել և ինչ ձևերով կազմակերպել գյուղի այդ շերտերին, նաև կուսակցության ու պետական իշխանության կողմից ինչ տարբեր տեսակի նյութական, կուլտուրական ու քաղաքական օգնություն հասցնել նրանց»։

Այդ միջոցների եյության մասին մենք բավականաչափ մանրամասն խոսել ենք առաջին գրույցում (եջ 31–33) և այս պատճառով յերկրորդ անգամ չպիտի կանգ առնենք նրանց վրա։

XIV համագումարն ամբողջությամբ ու լրությամբ հավանություն տվեց ԿԿ հոկտեմբերյան (1925 թ.) պլենումի վորոշումներին, բայց, ինչպես մենք արդեն ասել ենք, անհրաժեշտ դատեց ընդգծելու, թե չքավորությանը օգնություն ցույց տալու և նրան կազմակերպելու քաղաքականությունը վոչինչ ընդհանուր չունի 1918 թ. քաղաքականության հետ, յերբ Խորհրդային իշխանությունը չքավորների կոմիտեների օգնությամբ կուլակաթափ եր անում գյուղը, այսինքն կուլակից խլում եր հողը, անասունները, անշունչ ինվենտարը և այլն և չքավորին տալիս։

XIV կուսկոնֆերենցիայի, ԿԿ հոկտեմբերյան պլենումի և XIV կուսհամագումարի մատնանշած միջոցների շարքում չքավորությունը կազմակերպելու, նրան նյութական աջակցություն ցույց տալու միջոցներն առանձին կարևոր նշանակություն ունեն։

Այդ նշանակությունը հասկանալի յե այն բոլորից հետո, ինչ մենք ենք ասել մինչև այժմ կուսակցության ու Խորհրդային իշխանության քաղաքականության մասին գյուղում։ Խորհրդային իշխանությունը նյութական աջակցություն ե ցույց տալիս գյուղական չքավորությանը, ամրացնում ե չքավորների տնտեսությունը։ Կուսակցությունը գյուղում ունեցած իր առաջնակարգ հենուկ՝ բատրակների հետ միասին կազմակերպում ե չքավորությունը առանձին ժողովների մեջ, յերբ տեղի յեն ունենում համագյուղացիական կամպանիաներ (խորհուրդների, կոոպերացիայի, փոխօգկոմների վերընտրություն և այլն) և յերբ գյուղում լուծվում են չքավորությունը գործնականորեն շոշափող խոշոր հարցեր (հողաշինարարություն, վարկ և այլն)։ Դարձյալ բատրակների հետ միասին նա չքավորներին կազմակերպում ե խորհուրդներին, կոոպերացիայի վարչություններին, փոխօգկոմներին կից չքավորության առանձին խմբակների մեջ՝ պաշտպանելու գյուղի սակավազոր շերտերն այդ կազմակերպությունների աշխա-

տանքում։ Իր կողմից այդպես կազմակերպած չքավորությանը կուսակցությունը կոչ է անում պայքարելու միջակի համար ընդդեմ կուլակի, պայքարելու նրա համար, որպեսզի խլե այդ միջակին կուլակի ամեն մի ազդեցությունից և վերջինիս մենակ թողնե, կղզիացնե կուլակին գյուղում։ Չքավորությունը կազմակերպելու միջոցով նա ուժեղացնում է միջակների խտացումը խորհուրդների շուրջը, ուժեղացնում է գյուղացիության հիմնական չքավոր ու միջակ մասսայի միավորումը կոոպերացիայում և դրանով նորից միջակին խլում է կուլակի ազդեցությունից, ավելացնում է պրոլետարական ազդեցությունը գյուղում, պրոլետարական քաղաքի և պրոլետարիատի ձեռքերում գտնվող հրամայող բարձունքների ազդեցությունը, և առավել ճիշտ իրագործում լենինյան կոոպերատիվ պլանը։

Յուրաքանչյուր կուսակցական պարտավոր է իմանալ և հասկանալ XIV կուսկոնֆերենցիայի, Համ. Կկ Կկ հոկտեմբերյան (1925 թ.) պլենումի և կուսակցության XIV համագումարի որոշումները գյուղում վարելիք քաղաքականության հարցերի մասին։ Այդ որոշումների կիրառումը պարտադրական է յուրաքանչյուր կուսակցականի համար։ Դրա հետ միասին յուրաքանչյուր կուսակցական պիտի գիտակցե, թե դա միակ ուղիղ քաղաքականությունն է, որից նահանջելը մեծ աղետներ է սպառնում պրոլետարական դիկտատուրային։

Որպեսզի լավ յուրացվի «Գյուղի շերտավորումը և կուսակցության քաղաքականությունը գյուղի սոցիալական խմբավորումների նկատմամբ դեպի սոցիալիզմը տանող ճանապարհի վրա» բաժինը, պատասխաններ տվեք հետևյալ հարցերին.—

1. Ինչումն է տարբերությունը գյուղի մինչ-հեղափոխական և արդի շերտավորման միջև և ինչով է բացատրվում այդ տարբերությունը։

2. Ինչ քաղաքականություն և ինչու պիտի վարի ու վարում է կուսակցությունը գյուղի տարբեր շերտերի նկատմամբ։

3. Ինչումն է կուսակցության կողմից գյուղում վարելիք ուղիղ քաղաքականության խեղաթյուրումների էությունը և ինչումն է այդ խեղաթյուրումների վտանգը։

3. ԴԵՊԻ ՍՈՑԻԱԼԻԶՄԸ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎՐԱ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՊԻ ՁԵՎԵՐԸ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Կուլակի յեվ մասնավոր առևտրի միջոցով գյուղի զոդվելու վտանգը մասնավոր կապիտալի հետ։

Իր քաղաքականությունը կիրառելով գյուղում կուսակցությունը և Խորհրդային իշխանությունը չեն մոռանում և չեն կարող մոռանալ, որ այդ ամբողջ քաղաքականության հիմքը, արմատը հանդիսանում է պայքարը միջակի համար։ Գյուղում կուլակը վտանգավոր է ոչ թե ինքնին, այլ նրանով, որ ուժեղանալով նա կարող է իր կողմը գրավել միջակ շերտերը, նվաճել միջակին։ Միջակի համար պայքար մղելու գծով էլ այժմ ծավալվում է դասակարգային պայքարը Խորհրդային Միության մեջ։ «Ներկայիս դասակարգային պայքարի հիմնական ձևերից մեկն է հանդիսանում,—ասում էր XIV համագումարի բանաձևը,—պայքարը տնտեսության կապիտալիստական ու սոցիալիստական տարրերի միջև, պայքարը բուրժուազիայի ու պրոլետարիատի միջև գյուղացիության հիմնական մասսան տիրելու համար։ Այդ պայքարն էլ իր քաղաքական արտահայտությունն է գտնում գլխավորապես կուլակային տարրերի գյուղում կատարած այն փորձերի մեջ, որ նպատակ ունի տիրելու միջակ շերտերին և այդ կերպ իր ազդեցությանը յենթարկելու խորհուրդները»։

Պայքար մղելով տիրելու գյուղի միջակ շերտերին՝ մասնավոր կապիտալը ձգտում է զոդումն հաստատել գյուղի հետ հայտնապես կուլակի ու մասնավոր առևտրի միջոցով։ Այդպիսի զոդում, յեթե այն իրագործվի, սպառնալիք կներկայացներ բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքին ու պրոլետարական դիկտատուրային։ Այդ վտանգն էլ ընդգծեց XIV կուսակցական համագումարը, որն իր բանաձևի մեջ կուսակցության ուշադրությունը դարձրեց մասնավոր առևտրական կապիտալի աճման վրա, «որն իր ոպերացիաները փոխադրում է գյուղը, նրան սպասավորման համար», «քաղաքներում նոր բուրժուազիայի աճման վրա, որը ձգտում է տնտեսորեն շաղկապվել առևտրա-կապիտալիստական ու կուլակային տնտեսությունների հետ նրանց այն պայքարում, որ հետամտում է հպատակեցնել միջակների տնտեսությունների հիմնական մասսան»։

Կուսակցությունը պիտի տեսնե ու հաղթահարե այն վտանգը, որ մեր քաղաքականությանն է սպառնում գյուղում, վտանգ, որ կուլակի ու մասնավոր առևտրի միջոցով մասնավոր կապիտալի կողմից գյուղի հետ զոդվելու գծով է ծառանում։

Պատկերացնենք մեզ, թե գյուղում կողք-կողքի գոյություն ունեն մեր կոոպերատիվը և մասնավոր առևտրական-կուլակը։ Պատկերացնենք մեզ, թե մեր կոոպերատիվը վատ է առևտուր անում, թե նրա մեջ չկա գյուղին հարկավոր ապրանքը, թե նրա մեջ վատնումներ են կատարվում, թե կոոպերատիվի վարչությունը վատ է լուծում մասսաներին կոոպերացիայի մեջ գրավելու խնդիրը։ Պատկերացնենք մեզ, թե ի լրացումն դրան պետական որգանները վատ են տարել հացամթերումը և ընդսմին գյուղացիությանը վատ են բավարարել, քան մասնավոր գնորդը։ Այժմ միաժամանակ պատկերացնենք մեզ, թե այդ գյուղում առևտուր է անում մասնավոր առևտրական կուլակը և լավ է առևտուր անում. նա օգտվում է, որ ապրանքը պակասում է կոոպերատիվում և թեև թանգ է վերցնում, բայց ժամանակին է տալիս գյուղին նրան հարկավոր ապրանքները։ Այդպիսի յերևույթներ մեր առևտուր անելու անվարժության մեջ, մեր կոոպերացիայի թուլու-

թյան մեջ հազվադեպ բան չէ։ Իսկ ինչ է ստացվում այդ յերևույթի հետևանքով։ Ստացվում է այնպիսի դրություն, որ գյուղը հանձինս կուլակի բարերար է տեսնում, որը թեև կողոպտում է, բայց, այնուամենայնիվ, տալիս է այն, ինչ հարկավոր է։ Դրա հետևանքով տնտեսական զոդումն է հաստատվում կուլակի ու միջակի միջև, փոխարեն նրան, որ տնտեսական զոդումն լինի մեր ու միջակի միջև։ Իսկ նման զոդումն հաստատելով տնտեսական գծով՝ կուլակը կհպատակեցնե գյուղը և քաղաքական գծով. գյուղը ձեռքբերումը պահելով՝ նա կարող կլինի հարկադրելու նրան, որ խորհուրդների ընտրություններին իրան ձայն տա։

Մասնավոր կապիտալին առևտրից աստիճանաբար վտարելու քաղաքականությունը յեվ նրա փոխարինումը պետական ու կոոպերատիվ առևտրով։

Իսկ այդ վտանգի հանդեպ, որ մասնավոր կապիտալի զոդումն է գյուղի հետ կուլակի ու մասնավոր առևտրի միջոցով, ինչ՛ անելիք պիտի առաջադրե իրան կուսակցությունն ու Խորհրդային իշխանությունը։ Ի՞նչ քաղաքականություն են նրանք պարտավոր վարելու մասնավոր առևտրի նկատմամբ, որպեսզի վերացնեն արգելքները այն ուղիի վրա, որ տանում է դեպի մեր գլխավոր խնդրի լուծումը գյուղում— տիրել միջակների մասսային և այդ կերպ կզզիացնել կուլակին։ Այդ հարցերին կուսակցությունը տալիս է հետևյալ պատասխանը. անհրաժեշտ է առևտրից աստիճանաբար վտարել մասնավոր կապիտալը յեվ այն փոխարինել պետական ու կոոպերատիվ առևտրով։

Դեռ XIII համագումարն է իր բանաձևում մատնանշել, թե ստեղծվում է հակասություն,—յերբ արդյունաբերությունը գտնվում է պետության ձեռքերում, իսկ նրա ու պետության միջև միջնորդն է հանդիսանում մասնավոր առևտուրը։ Ահա ինչու կոոպերացիայի զարգացման խնդիրը նախ և առաջ մասնավոր կապիտալի առևտրից վտարելու խնդիր է և դրանով իսկ համատարած կապի ստեղծում գյուղացիական տնտեսության և սոցիալիստական արդյունաբերության միջև»։

Անհրաժեշտ է, սակայն, հիշել, թե պայքարելով մասնավոր առևտրի հետ, մենք վոչ մի դեպքում չենք կարող վարչական հարկադրանքի միջոցով պարզապես վոչնչացնել այդ մասնավոր առևտուրը։ Հարկավ, մենք բավարար ուժ ունենք այդ անելու համար։ Բայց այդպիսի մի քաղաքականություն իր հիմքում անճիշտ քաղաքականություն կլիներ։ Մենք կարող ենք մասնավոր առևտուրը վտարել միայն այն չափով, ինչ չափով այն կարող ենք մենք փոխարինել պետական ու կոոպերատիվ առևտրով։ Իսկ յեթե մենք այլ կերպ վարվենք, ապա դրանով իսկ կնվազեցնենք ընդհանուր ապրանքաշրջանառությունը յերկրում, և կարող է պատահել, որ շատ դեպքերում գյուղն իսպառ առանց ապրանքի թողնենք։ Միայն մասնավոր առևտրի դեմ տնտեսական պայքարի նման քաղաքականությունը ճիշտ ճանաչեցին XIII կուսակցական համագումարը և XIV կոնֆերենցիան։ Կոոպերատիվ և պետական առևտուրը չի կարող լրությամբ սպասավորել ամբող ապրանքաշրջանառությունը յերկրում, որի զորությամբ առևտրի բնագավառում զգալի տեղ է մնում մասնավոր կապիտալի մասնակցության համար»,—ասում է XIV կուսկոնֆերենցիայի բանաձևը։ XIV կուսկոնֆերենցիան, իսկ դրանից առաջ XIII կոնֆերենցիան մատնանշեցին, թե առևտրի մեջ մասնավոր կապիտալի աճմանը սահման պիտի դրվի միայն կոոպերացիայի ու պետական առևտրի տնտեսական դերի ուժեղացումով և նրանց հարմարեցումով գյուղի պահանջներին և առևտրական շրջանառության պայմաններին։

Առևտուրը յեվ կոոպերացիան իբրև մեր ժողովրդական տնտեսության շարժաբեր փոկերը՝ պետարդյունաբերությունից՝ սոցիալիստական ավանգարդից դեպի միլիոնավոր գյուղացիական տնտեսությունները։

Մասնավոր առևտրից նվաճել կապը գյուղացիական տնտեսության հետ—դրան կուսակցությունը միանգամայն բացառիկ նշանակություն է տալիս։ Պետական առևտուրը և կոոպերացիան շարժաբեր փոկեր են հանդիսանում մեր տնտեսության սոցիալիստական ավանգարդից, պետական արդյունաբերությունից դեպի միլիոնավոր մանր ու մանրագույն գյուղացիական տնտեսությունները։ Նրանք անմիջականորեն, առանց մեջ թշնամի մասնավոր կապիտալի, կապում են պետարդյունաբերությունը գյուղատնտեսության հետ, թույլատրում են նրան իր յետևից առաջ տանել հետամնաց գյուղացիական տնտեսությունը։ Պետական ու կոոպերատիվ առևտրի ամեն մի ընդարձակում նշանակում է մեր տնտեսության սոցիալիստական տարրերի ընդարձակում և ամրացում։ Ընդհակառակը, մասնավոր առևտրի ամեն մի ուժեղացում և ընդարձակում նշանակում է ընդարձակում և ուժեղացում մեր տնտեսության կապիտալիստական տարրերի։

Իսկ ինչ պիտի անեն կուսակցությունը և պետությունը, որպեսզի ուժեղացնեն սոցիալիստական պետարդյունաբերությունից դեպի միլիոնավոր գյուղացիական տնտեսությունները տանող շարժաբեր փոկերը, որպեսզի ուժեղացնեն ու ամրացնեն պետական ու կոոպերատիվ առևտրի դիրքերը մասնավոր կապիտալի դեմ մղած պայքարում։ Այդ ուժեղացման համար հիմնական միջոց պիտի հանդիսանա գների քաղաքականությունը։ «Իր ձեռքերում կենտրոնացնելով գյուղին հարկավոր արդյունքների հիմնական մասսան,—ասում է XIII կուսակցական կոնֆերենցիայի բանաձևը,—Խորհրդային իշխանությունը պիտի նվաճե այնպիսի դրություն, որպեսզի պետական կազմակերպությունները ու կոոպերացիան մասնավոր առևտրականից եժան վաճառեն»։

«Մենք պիտի հասնենք նրան, որպեսզի մասսայական սպառողը—բանվորն ու գյուղացին—պարզ գիտակցեն կոոպերատիվ և պետական առևտրի առավելությունը մասնավոր կապիտալի սկզբունքներով կազմակերպված նրա ձևի հանդեպ»: Կարճ խոսելով, պետական ու կոոպերատիվ առևտուրը պիտի խնդիր առաջադրեն ապրանքները վաճառելու էժան ու լավ, քան մասնավոր առևտրականը:

Այդ խնդիրն իրագործելու ճանապարհին պետական առևտուրն ու կոոպերացիան հարկադրված էին և հարկադրված են հաղթահարել շատ դժվարություններ: Դեռ 1923 թ. հոկտեմբերին պետական արդյունաբերության կողմից գյուղատնտեսության հետ զոդվելու ճանապարհին ծառացած էր մի ուժեղ արգելք հայտնի «մկրատի» տեսքով, որ բարձր արդյունաբերական գների գոյությունն էր հանդեպ գյուղատնտեսական արդյունքների ցածր գների*: 1923 թ. հոկտեմբերին արդյունաբերական իրերի գները գերազանցում էին նախապատերազմյանին 2,75 անգամ, այնինչ գյուղատնտեսական արդյունքների գները նախապատերազմականի մակարդակին չէին հասնում 12%-ով: Այլ բառերով՝ նախապատերազմական ժամանակի հետ համեմատած գյուղացին 1923 թ. աշնանն ստիպված էր արդյունաբերական ապրանքների համար յեռապատիկ թանգ վճարել:

Արդյունաբերական ապրանքների ու գյուղատնտեսական արդյունքների գների նման տարբերությունն անմիջական սպառնալիք էր հանդիսանում քաղաքի ու գյուղի, պրոլետարիատի ու գյուղացիության զոդման համար: Այս պատճառով կուսակցությունը 1923 թ. աշունքից սկսած իր հիմնական խնդիրն էր համարում պայքարել իջեցնելու արդյունաբերական ապրանքների գները և բարձրացնելու գյուղատնտեսական արդյունքների գները: Այդ պայքարի հաջողության մասին վկայում է հետևյալ աղյուսակը, որի մեջ ցույց է տրված, թե կուսակցության ցուցմունքների համեմատ վորքանով է պետական արդյունաբերությունն իջեցրել իր իրերի բացթողման գները.

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԲԱՑԹՈՂՄԱՆ ԳՆԵՐԸ (ՌՈՒԲԼԻՆԵՐՈՎ)

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	1 հոկտեմբերի 1924 թ.	1 ապրիլի 1925 թ.
Թիթեղ (փութը)	4,51	3,91
Մեխեր 4—5 դյույմանոց	4,50	4,10
Ներքան ծանր (փութը)	44,34	39,86
Կոշիկներ տղամարդու (զույգը)	29,75	23,00
Սարք գյուղացիական	37,00	30,00
Յուղ արևածաղկի (փութը)	6,[illegible]0	5,60
Թութուն (փութը)	25,50	20,00**

* Ցեթե նկարելու լինենք արդյունաբերական ապրանքների գների գիծը և գյուղատնտեսական արդյունքների գների գիծը, ապա նախշը կունենա բաց մկրատի տեսք: Այստեղից էլ այդ տարբերության «մկրատ» անունը:

** «Наши хозяйственные достижения за год» (1924/25 г.) под редакцией М. А. Савельева, изд. ЦУП. 1926, էջ 104—105:

Գներն իջեցնելու համար մղված պայքարի հետևանքով 1924—25 թ. արդյունաբերական ապրանքների և գյուղատնտեսական արդյունքների գների հարաբերանքն ավելի ձեռնտու դարձավ գյուղացիության համար. միջին հաշվով 1924-25 թ. արդյունաբերական գները գերազանցում էին գյուղատնտեսականը ընդամենը 15%-ով: Թե ինչպես էր աստիճանաբար ընթանում գների իջեցումը,—այդ տեսնվում է հետևյալ աղյուսակից.

Քանի գրվանքա հաճարի ալյուր էր վճարվում այս ապրանքների դիմաց	1913 թ.	1922 թ. հոկտեմբեր	1923 թ. ապրիլ	1924 թ. հոկտեմբեր	1925 թ. ապրիլ	1925 թ. հուլիս
Շաքար ռաֆինադ (գրվանքա)	6,3	31,5	11,3	14,3	5,8	5,9
Շաքար ավազ (գրվանքա)	5,3	20,0	9,1	10,2	4,8	4,9
Չիթ (արշին)	5,5	30,4	12,4	12,8	6,5	6,4
Կերոսին (գրվանքա)	1,9	4,2	1,6	1,8	1,9	1,0
Կրկնակոշիկ (զույգը)	97,9	201,8	133,2	118,7	62,5	62,3*

Աղյուսակը ցույց է տալիս, թե 1924—25 թ. մեկ փութ հաճարի ալյուրով գյուղացին կարող էր զգալիորեն ավելի շատ արդյունաբերական ապրանքներ գնել, քան 1922 թ. հոկտեմբերին, իսկ միքանի դեպքերում էլ ավելի, քան պատերազմից առաջ: Սակայն 1925 թ. ամառվա վերջին և աշնանը դրությունը կրկին դեպի վատը փոխվեց. կրկին հանդես յեկավ «մկրատը»—տարբերությունը արդյունաբերական ու գյուղատնտեսական գների միջև: Նոր «մկրատը» ծագեց ապրանքային սովի հիման վրա: Չնայած արդյունաբերության ուժեղ աճման՝ նա ի վիճակի չէր գոհացնելու գյուղի էլ ավելի աճող պահանջը ապրանքների նկատմամբ: Ապրանքների այդ պակասության հետևանքով մասնավոր առևտրականների կողմից յերկրում սկսվեց արդյունաբերական ապրանքների մի ուժեղ սպեկուլյացիա, վորը հանգեց խիստ տարբերության մեծածախս ու հատավաճառ գների միջև: Հատավաճառի հավելումներն առանձնապես խոշոր յեղան գյուղում, ուր առևտուրն անհամաչափ ավելի թույլ է զարգացած, քան քաղաքում, և ուր ապրանքի կարիքն ավելի մեծ է: Հետևանքը յեղավ այն, վոր գյուղացին, վորը 1925 թ. ապրիլ-հուլիսին մեկ գրվանքա շաքարռաֆինադի համար վճարում էր 6 գրվանքայից պակաս հաճարի ալյուր, օգոստոսին-հոկտեմբերին արդեն վճարում էր 8·9 գրվանքա հաճարի ալյուր, իսկ չթի համար 6,2—6,5 գրվանքա հաճարի ալյուրի փոխարեն սեպտեմբերին արդեն վճարում էր 10,1 գրվանքա: Արդյու-

* Անդ:

նաբերական ապրանքների գների աճումը ձգումն ավեց, վոր բարձրանան և գյուղատնտեսական արդյունքների գները, բայց, այնուամենայնիվ, հանդեպ արդյունաբերական գների այստեղ աճումը նվազ եր:

Խիստ տարբերությունը մեծածախս և հատավաճառ գների միջև գոյություն ունի և ներկայիս, և ինչպես մատնանշեց Կենտրոնական Կոմիտեյի ապրիլյան (1926 թ.) պլենումը, սպառնում և մեզ և հետագայում, քանի մենք մի շարք տարիների ընթացքում վիճակի չպիտի լինենք մաշելու ապրանքային սովը: Ապրանքային սովի սպառնալիքը կդադարի կախվել մեզ վրա միայն այն ժամանակ, յերբ մենք ինդուստրիալիզացիայի կենթարկենք մեր յերկիրը, յերբ մենք կբազմապատկենք ապրանքների արտադրությունը, ապրանքների, վորոնց նկատմամբ ավելի ու ավելի մեծ պահանջ է առաջադրում իր տնտեսությունը բարձրացնող գյուղը: Նման դրությունը մի շարք յերկար տարիներ մեզ առաջադրում է պայքար մղել իջեցնելու այն գները, վորոնցով գյուղացին արդյունաբերական իրեր է գնում: Մեծածախսի գների իջեցումն զգալի չափով հոգուտ մասնավոր կապիտալի կերթա, յեթե մենք չսովորենք այդ իջեցրած գները գյուղացուն հասցնելու, վորը ապրանքներ է գնում իր կոոպերատիվում: Գների իջեցման խնդիրնել ձգտում է կատարելու Խորհրդային իշխանությունը, վորը մի շարք միջոցներ է ձեռք առնում կռվելու սպեկուլյացիայի դեմ և հատավաճառի ցածր գներ սահմանելու համար:

Բարձր արդյունաբերական գներ պաշտպանող թեքման վտանգը:

Միայն ցածր գների համար պայքար մղող քաղաքականությունն է միակ ուղիղ քաղաքականությունը հանդիսանում արդյունաբերության բնագավառում և առևտրի բնագավառում, վորովհետև միայն այդպիսի քաղաքականությունն է ապահովում բանվոր դասակարգի դաշինքը գյուղացիական չքավորության և միջակի հետ: Այս պատճառով անճիշտ և իր հիմքում պրոլետարիատի գյուղում ունեցած խնդրին հակասող կլիներ հակադիր քաղաքականությունը— արդյունաբերական ապրանքների բարձր գների քաղաքականությունը: Այնինչ կուսակցության մեջ, նրա անդամների մի խմբակի շարքերում, մասնավորապես նոր ոպպոզիցիայի և այն ընկերների շարքերում, վորոնք հավատարիմ են մնացել 1923-24 թվականի ոպպոզիցիայի հայացքներին, գոյություն ունի թեքում, վորը ջանում է այդպիսի անճիշտ քաղաքականություն փաթաթել կուսակցության շլնքին: Առաջվա պես առավել վառ այդ թեքումն արտահայտում են ընկ. Տրոցկին և ընկ. Յե. Պրեոբրաժենսկին:

Տասնհինգերորդ զրույցում, ուր մենք խոսում եյինք յերկրի ինդուստրիալիզացիայի մասին, մենք հենց այդ թեքման մասին եյինք խոսում: Նա պաշտպանում է արդյունաբերության ուժեղացումը, պա-

հանջելով բարձրացնել արդյունաբերական իրերի մեծածախսի գները և բարձր գներով վաճառել այդ իրերը գյուղացիությանը: Մենք արդեն մատնանշել ենք այդ նույն զրույցում, թե այդ քաղաքականությունը խիստ վտանգավոր է պրոլետարիատի դիկտատուրայի համար, վորովհետև դա գյուղը քայքայելու քաղաքականություն է, մի քաղաքականություն, վոր պիտի քանդի բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքը, մի քաղաքականություն, վոր ընդհանուր վոչինչ չունի լենինիզմի հետ: Այս պատճառով իրավացի յե ընկ. Ստալինը, վորն այդ թեքման կողմնակիցներին «վտանգավոր մարդիկ» է անվանում:

Պետական, կոոպերատիվ և մասնավոր առևտրի տեսակարար կշիռը գյուղում:

Այժմ բերենք միքանի տվյալներ, վորոնք ցույց են տալիս պետական, կոոպերատիվ և մասնավոր առևտրի դերն ու ընթացքը գյուղում: Այդ տվյալները մենք վերցնում ենք գյուղական առևտրի այն ընդարձակ հետազոտությունից, վոր կատարել է Խ. Ս. Հ. Մ. Առևտրի Ժողովրդ. Կոմիսարիատը:

Գյուղի առևտրի շրջանառությունից ինչ տոկոս է ընկնում պետական, կոոպերատիվ ու մասնավոր կապիտալին

	1923/24 թ.	1924/25 թ.
Պետական առևտրին	12%	21%
Կոոպերատիվ առևտրին	35%	46%
Մասնավոր առևտրին	53%	33%

Աղյուսակը ցույց է տալիս, թե պետական ու կոոպերատիվ առևտրի ուժեղ աճման հետևանքով մասնավոր կապիտալը վտարվում է գյուղական շուկայից: Ապա կարևոր է վոչ միայն այն փաստը, վոր կոոպերատիվ առևտուրն ավելացնում է իր շրջանառությունը, այլ և այն, վոր կոոպերացիան ավելացնում է իր անդամների քանակը: Դա յերևում է հետևյալ աղյուսակից.

Խ. Ս. Հ. Մ. վողջ բնակչության ինչ տոկոսն է կոոպերացման յենթարկվել սպառողական կոոպերացիայի կողմից

1923/24 թ. — 2.6%
1924/25 թ. — 4,2%

Այս վերջին թվանշանների նշանակությունն ուղիղ գնահատելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ, վոր գյուղում, իբրև ընդհանուր կանոն, յուրաքանչյուր գյուղական ծխից կոոպերատիվին անդամ է գրվում մեկ մարդ:

Առևտրի Ժող. Կոմիսարիատի հետազոտությունը նաև պարզեց, վոր գյուղում ամենից եժան վաճառում է պետական առևտուրը: Նրանից հետո կոոպերացիան է գալիս: Մասնավոր առևտրի մեջ բոլոր

ապրանքների գները բարձր են, քան կոոպերացիայում և մանավանդ պետական առևտրի մեջ։ Բայց դրա հետ միասին հետազոտությունը նշեց, թե մասնավոր ձեռնարկությունների կողմից ծախվող ապրանքների ընտրությունը (ասսորտիմենտ) զգալիորեն ընդարձակ ու ճոխ ե, քան կոոպերացիայի մոտ, և ավելի յե գոհացնում տեղական բնակչության պահանջները։

Ներքին ու արտաքին առևտրի հարաբերությունը: Արտաքին առևտրի նշանակությունը գյուղատնտեսության համար:

Ներքին առևտրի ուղիղ կազմակերպման շարքում գյուղատնտեսության վերելքի և նրա զարգացումը սոցիալիստական ուղիի վրա դնելու խնդիրը պահանջում ե, վոր կուսակցության կողմից ամենալուրջ ուշադրությունը նվիրվի արտաքին առևտրի հարցերին։ Վորքան հեռու գնանք մեր ժողովրդական տնտեսության մեջ, այնքան ավելի մեծ դեր պիտի խաղա արտաքին առևտուրը։ Նախորդ գլուխներում մենք թվանշաններ բերինք, վորոնք ցույց են տալիս, թե մեր գյուղատնտեսությունն ընդհուպ մոտեցել ե նախապատերազմյան մակարդակին։ Գյուղատնտեսության հետագա զարգացումը գալիս բղխվում ե վոչ միայն ներքին շուկայի զարգացման, այլ և արտասահմանի շուկաների հետ ունեցած մեր կապերի զարգացման։ Դա նշանակում ե, թե կուսակցության ու Խորհրդային իշխանության առաջ խնդիր ե ծառացած վոչ միայն կազմակերպել գյուղատնտեսական արդյունքների վաճառքը յերկրի ներսում, այլ և կազմակերպել նրանց արտածումն արտասահման և ձեռնտու վաճառել այնտեղ։ Պատերազմից առաջ վերջին տարիներին Ռուսաստանն արտածում եր արտասահման մեկ և կես միլիարդ վոսկու ռուբլու ապրանք։ Արտածումի այդ գումարի համարյա 9/10 ընկնում եր գյուղատնտեսական արդյունքների արտածման վրա։ Այլ խոսքերով՝ գյուղատնտեսությունն արտասահմանի արտածումից ստանում եր մեկ միլիարդ վոսկու ռուբլուց ավելի։ Պրոլետարական պետության առաջ խնդիր ե ծառացած կազմակերպել գյուղատնտեսական արդյունքների արտածումն արտասահմանի շուկաները, վորպեսզի գյուղացիությունը վոչ միայն չստանա այդ գումարից պակաս, այլ վոր նա ավելին ստանա։ Գյուղատնտեսության զարգացումը, նրա վերելքն ավելի բարձր աստիճանի լիովին հնարավորություն ե ընձեռում արտասահման արտածում կատարել առավել խոշոր չափերով, քան այդ նախահեղափոխական ժամանակ եր։ Իսկ նման արտածումն իր հերթին գյուղացիությանը հնարավորություն կտա լրացուցիչ միջոցներ մուծելու իր տնտեսության նոր վերելքի ու նոր զարգացման մեջ։

Արտաքին առևտրի կազմակերպման մեջ մենք դեռ քիչ ենք հաջողել, քան ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերում։ Մենք դեռ

արտասահման արտածում ենք 1/4-ից* պակաս այն քանակի, ինչ արտածում եյինք նախապատերազմյան ժամանակ, այնինչ ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերում մենք մոտենում ենք նախապատերազմյան չափին։ Մեր արտաքին առևտրի նման հետամնացությունը մի կողմից բացատրվում ե գյուղացիության սպառումի աճումով։ Ցարական կառավարությունն արտածում եր գյուղացիական հացը (մեր արտածումի գլխավոր արդյունքը) ի հաշիվ նրան, վոր գյուղացիությունը պակաս եր ուտում, մի բան, վոր, հարկավ, պրոլետարական պետությունը չի կարող և յերբեք ել չի անի։ Բայց մյուս կողմից ել մեր արտաքին առևտրի հետամնացությունը բացատրվում ե նրանով, վոր մենք բավականաչափ հմուտ չենք այն ուղիղ կազմակերպելու համար, և այն արգելքներով, վոր արտաքին շուկաներում մեզ նյութում են կապիտալիստական պետությունները։

Արտաքին առևտրի պետական մոնոպոլիայի նշանակությունն ու անհրաժեշտությունը։

Արտաքին առևտրի կազմակերպման ամբողջ խնդիրն ընկնում ե պրոլետարական պետության վրա, վորովհետև ԽՍՀՄ գոյություն ունի արտաքին առևտրի մոնոպոլիա։ Այդ նշանակում ե, թե արտաքին շուկայում կարող ե առևտուր անել միայն ինքը պետությունը և կոոպերացիան, վորը պետությունից հատուկ թույլտվություններ ե ստանում նրա հսկողության տակ ապրանքներ ներմուծելու և արտածելու։ Արտաքին առևտրի այդ մոնոպոլիան մեր կուսակցությունը պաշտպանում ե և պիտի պաշտպանե, վորովհետև առանց նրան կապիտալիստական շրջապատի պայմաններում սպառնալիք կստեղծվեր մեր տնտեսական ինքնուրույնության համար։ Միջազգային կապիտալը, կորցնելով մեզ զենքի ուժով հպատակեցնելու հույսը, ձգտում ե հայտնապես արտաքին առևտրի միջոցով մեր շլնքին փաթաթել իր պայմանները, փորձում ե ներկայիս և պիտի ապագայում ել փորձի ստրկացնելու մեր յերկիրը և այն իր գաղութը դարձնելու։ Ոտարերկրյա կապիտալն ամբողջ յեռանդով մեզնից պահանջում ե վերացնելու արտաքին առևտրի մոնոպոլիան, վորպեսզի դրանից հետո տնտեսորեն հպատակեցնի իրան ԽՍՀՄ-ը և այդ ուղիով ընթանա դեպի նրա համար այնքան ատելի Խորհրդային իշխանության վոչնչացումը։ Այս պատճառով ել առաջվա պես ավելի մեծ յեռանդով պիտի մենք պաշտպանենք արտաքին առևտրի մոնոպոլիան։ Յեթե մենք հրաժարվելու լինենք արտաքին առևտրի մոնոպոլիայից, ապա 1) մեր յերկրի անհագին հարստությունները կգիշատվեն ոտարերկրյա ու հայրենական կապիտալի կողմից, 2) մենք կզրկ-

* 1926 թ. գարնանը Մոսկվայի կոմիտեյի պլենումում ընկ. Ռիկովը 1924/25 թ. մեր արտածումն ու ներմուծումը համեմատած 1913 թ. հետ վորոշեց, որինակի համար, հետևյալ թվանշաններով—արտածումը 22,5%, ներմուծումը 31%։

վենք սոցիալիստական կուտակման անչափ կարևոր գործիքից և 3) մենք սպառնալիքի տակ կդնենք մեր տնտեսության սոցիալիստական տարրերը: Օտարերկրյա կապիտալիստները կողողեին մեր յերկիրն իրանց ապրանքներով, վորոնց հետ չեր կարող մրցակցել մեր դեռ թույլ պետական սոցիալիստական արդյունաբերությունը: Հետևաբար վոչնչացնելով մեր արտաքին առևտրի մոնոպոլիան՝ մենք մահացու հարված կհասցնեյինք սոցիալիստական պետական արդյունաբերությանը: Յերբ արտաքին առևտուրը պրոլետարական պետության ձեռքերում է գտնվում, նա պլանով մուծում է միայն այն ապրանքները, վորոնք կամ հարկավոր են արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման համար կամ գոհացնում են բանվորների ու գյուղացիների անհետաձգելի կարիքները: Այս կերպ պրոլետարական պետության ձեռքերում արտաքին առևտուրը գործիք է ծառայում պլանավոր ներգործում կատարելու մեր ամբողջ ժողովրդական տնտեսության վրա: Իսկ վոչնչացնելով այդ մոնոպոլիան՝ նշանակում է մեր շուկան լցնել ապրանքներով, վորոնք առաջին հերթին կերթային գոհացնելու նոր բուրժուազիայի պահանջները: Մեր բոլոր տնտեսական պլաններն այդպիսով կտապալվեյին: Վաճառելով իրանց ապրանքները, օտարերկրյա կապիտալիստները պլանաչափորեն և սիստեմատիկորեն արտասահման կհանեյին մեր հում նյութերը և կդատապարտեյին մեր գյուղատնտեսությունը նրան, վոր նա՝ իբրև հում նյութերի մատակարար՝ կդառնար կապիտալիստական յերկրների զարգացած արդյունաբերության կցանը: Հասկանալի յե, վոր նման առևտրից բոլոր յեկամուտներն ամբողջությամբ կընկնեյին օտարերկրյա կապիտալի ձեռքերը: Վոր այդ վախերն իսկի յել չեն չափազանցված՝ ցույց է տալիս Գերմանիայի ու Լեհաստանի օրինակը: 1922 և 1923 թ. թ. ընթացքում օտարերկրյա կապիտալիստներն արտաքին առևտրի միջոցով հանել են և այժմ էլ շարունակում են հանել Գերմանիայից նրա հարստությունների զգալի քանակը: Այդպիսի արտահանություն էլ մինչև օրս կատարվում է և Լեհաստանում, վորը քանի առաջ ենք գնում՝ այնքան ավելի ու ավելի յե դառնում և պիտի դառնա օտարերկրյա կապիտալի գաղութը:

Վլադիմիր Իլյիչը ԿԿ 1922 թ. դեկտեմբերի պլենումի իր դիմումի մեջ վճռաբար ընդգծում էր, թե վորևէ այլ միջոց, բացի արտաքին առևտրի մոնոպոլիան, չի կարող մեզ պաշտպանել օտարերկրյա կապիտալի գաղութը դառնալու վտանգից:

Այդ առևտրի խնդիրներն ու նշանակությունը մեր պետական զարգացման գլխավոր գծի տեսակետից:

Այն բոլորը, ինչ մենք այժմ իսկ ասացինք արտաքին առևտրի մասին, ցույց է տալիս, թե այդ առևտրի մոնոպոլիան ինչքան է անպայման անհրաժեշտ իրագործելու մեր տնտեսական զարգացման գլխավոր գիծը—մեր յերկրի ինդուստրիալիզացիան: Յերկրի ինդուստրիալիզացիայի խնդիրը պահանջում է, վորպեսզի արտասահմանից մենք ներմուծենք պլանով և այն, ինչ պահանջվում է այդ ինդուստրիալիզացիան կիրառելու համար: Մյուս կողմից ինդուստրիալիզացիայի խնդիրը պահանջում է, ինչպես մենք արդեն ասել ենք, վորպեսզի արտաքին առևտուրը լինի մեր սոցիալիստական կուտակման աղբյուրներից մեկը, վորի հաշվին մենք պիտի ինդուստրիալիզացիայի յենթարկենք մեր յերկիրը:

XIV համագումարը կենտրոնական կոմիտեյին տված դիրեկտիվների շարքում նրա առաջ խնդիր է դրել ամրացնելու արտաքին առևտրի մոնոպոլիան: Այդ անհրաժեշտ է ընդգծել, մանավանդ վոր նոր օպպոզիցիայի մեջ խոսք կար վերացնելու և արտաքին առևտրի մոնոպոլիան (ընկ. Սոկոլնիկովը): 1926 թ. ապրիլին տեղի ունեցած Կենտրոնական Կոմիտեյի պլենումը կուսակցության և պետության առաջ խնդիր դրեց ուժեղացնելու գյուղատնտեսական արդյունքների և անտառանյութերի արտածումը և զարգացնելու և բարելավելու արդյունաբերական արտածումը (նավթ, հանքային հարստություններ և այլն): Դրա հետ միասին պլենումը մատնանշեց, վոր պետք է սիստեմատիկ միջոցներ ձեռք առնվեն «ազատագրելու մեր եկոնոմիկան կապիտալիստական յերկրներից ունեցած նրա կախումից, վոր առանձնապես ցայտուն արտահայտվեց ներկա տարում, յերբ ժողովրդական տնտեսությունը մոտեցավ վերականգնման ժամանակաշրջանի վախճանին, օգտագործելով նախահեղափոխական ժամանակից մնացած ամբողջ տեխնիկան»: «Պետք է,—մատնանշեց պլենումը,—առանձնապես յեռանդագին միջոցներ ձեռք առնվեն զարգացնելու տնտեսության այն ճյուղերը, վորոնց մեջ առավել սաստիկ է զգացվում մեր կախումն արտասահմանից»:

Վորպեսզի լավ յուրացնեք «Սոցիալիստական պետական արդյունաբերության կապի ձևերը գյուղացիական տնտեսության հետ սոցիալիզմին տանող ճանապարհի վրա» բաժինը, պատասխաններ տվեք հետևյալ հարցերին.

1. Ինչումն է մասնավոր կապիտալի զոդման վտանգը գյուղի հետ:

2. Ի՞նչ խնդիրներ և ինչու պիտի իրագործեն պետական առևտուրը և կոոպերացիան:

3. Ինչումն է արտաքին առևտրի մոնոպոլիայի եյությունը և ինչու չենք կարող մենք հրաժարվել նրանից:

ՆՅՈՒԹԵՐ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ՀԱՂԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ Ի՞ՆՉՊԻՍԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՊԻՏԻ ՎԱՐԵ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Մի կողմից մենք արդեն կուլակ ունենք, ինչպես և ունենք չքավորության լայն շերտեր, իսկ մյուս կողմից՝ ինքը միջակն էլ պիտի ընթանա յերկու ուղիով. մի կողմից կապիտալիստական ուղիով,

այսինքն իր շրջառավորման, յերկու սոցիալական բնեոներ դրսևորելու ուղիով, իսկ մյուս կողմից մեր ուղիով, այսինքն իր սոցիալիստական կոոպերացման ուղիով. վոր զարգանում ե մեր հաջորդաբար-սոցիալիստական արդյունաբերության ներգործության տակ։ Այս ուղիի այդ յերկճյուղավորումը մենք պիտի տեսնենք ամենատարբեր ձևերում, մեր տնտեսության և գյուղում վարելիք քաղաքական պայքարի գունագունակերպ ճակատներում։ Դա իր արտացոլումը կգտնի նրանում, վոր բարձրացող միջակների տնտեսության մի մասը, որավուր աճող թափով կդիմի վարձու աշխատանքի, այսինքն մանր կապիտալիստներ ու կուլակներ կդառնա. դա իր արտահայտությունը կգտնի և նրանում, վոր պիտի աճեն միջակների մի մասի, ունեոր ասենք այն տեսակի թաքուն ձևեր, վոր ավելի ուժեղ միջակները, նրանք, վոր մի բան են կուտակել, վորևե մեքենա գնել, պիտի այն կապալով տան սակավազոր միջակներին և չքավորներին և այլն, ու այս կերպ թաքուն ձևով պիտի շահագործեն գյուղացիության մյուս շերտերը։ Դա պիտի իր արտահայտությունը գտնի և նրանում, վոր այդպիսի կուլակ դարձող տարրերը մասամբ բացահայտորեն, մասամբ թաքուն ձևով պիտի ներս սողոսն կոոպերացիան և հավանորեն այստեղ-այնտեղ գրավեն ղեկավար տեղերը, չնայած վոր կուլակներին արգելված ե կոոպերացիայի վարչությունների մեջ լինել և այլն։

Այսպես տնտեսական ձևերի պայքարում, բացահայտ ձևերով և թաքուն ձևերով, մասնավոր տնտեսության և կոոպերացիայի պայքարում և անգամ վորոշ իմաստով բուն կոոպերացիայի մեջ պիտի արտահայտություն գտնի կապիտալիստական սկզբունքի և մեր սկզբունքի պայքարը, պիտի խաչաձևվեն յերկու ուղի, վորոնք այժմ անխուսափելի յեն, և պայքարը վորոնց մեջ անխուսափելի յե։ Այն պիտի արտահայտվի ամենատարբեր, յերբեմն անճոռնի ձևերով։ Մենք այդ պիտի իսպառ հստակորեն տեսնենք, մենք այդ պիտի իսպառ հստակորեն ըմբռնենք։ Բայց, ընկերներ, հարաբերությունների այդ խայտաբղետությունից ու բարդությունից ամենևին չի բխում, թե մենք պիտի կրավորական դառնանք և ծալենք ձեռքերս։ Վո՛չ, մենք կրկնապատկած, յեռապատկած յեռանդով պիտի նետենք մեր ամբողջ կազմակերպչական զորությունը սոցիալիստական կոոպերատիվ զարգացման կշեռքի նժարի վրա հակառակ մասնավոր-կապիտալիստական զարգացման։ Ուժեղացնելով պետական արդյունաբերությունը, ուժեղացնելով մեր հրամայող բարձունքները, ուժեղացնելով պրոլետարական պետության տնտեսական ռեսուրսները, մենք դրանով իսկ ի վիճակի կլինենք որավուր աճող թափով ճնշելու կշեռքի այդ նժարներից մեկը, այդ նժարի վրա ավելի ու ավելի մեծ ծանրություն նետելու և այս կերպ հեռանկարում՝ ուղիղ քաղաքականության հետևելով, մեր կուսակցության միասնականությունը պահպանելով, գյուղացիական հարցում ուղիղ քաղաքականություն վարելով՝ մենք աստիճանաբար պիտի նվազեցնենք կապիտալիզմի շանսերը և որավուր աճող թափով ավելացնենք սոցիալիստական ուղիի հաղթանակի շանսերը։

(Ն. Ի. ԲՈՒԽԱՐԻՆ. Զեկուցում Լենինգրադի նահանգական XXIII արտակարգ կուսկոնֆերենցիայում)

2. ՎՈ՞ՐՆ Ե ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԻՐԵԿՏԻՎԸ ԿՈՒԼԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ ՄՂԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ

Յեթե մենք, այսինքն պրոլետարական պետությունը, և մեզնից կախում ունեցող օրգանները,—յեթե մենք վատ ենք առևտուր անում միջակի հետ, ապա մենք նրան հրում ենք դեպի կուլակը. յեթե մենք տնտեսորեն վատ ենք պայքարում միջակին գրավելու համար, ապա մենք նրան հրում ենք դեպի կուլակը. յեթե մենք վատ ենք կառուցում կոոպերացիան, ապա մենք նրան հրում ենք դեպի կուլակը. յեթե մեզ մոտ բազմանում են վատնումները կոոպերացիայի մեջ, ապա մենք միջակին հրում ենք դեպի կուլակը, յեթե մեզ մոտ վերջ չի գտնում վարչական քաշքշուկը միջակի նկատմամբ, ապա մենք նրան հրում ենք դեպի կուլակը. յեթե մենք ժամանակին չշտկենք տնտեսական ու քաղաքական զոդումը միջակի հետ, ապա մենք նրան կհրենք դեպի կուլակը։ Յես պնդում եմ—և վոչվոք չի կարող հերքել այդ,—թե կուլակի գլխավոր ուժը և նրա գլխավոր վտանգը կայանում ե միջակի հետ հնարավոր բլոկ կնքելու և նրա հեգեմոնիայի մեջ, այսինքն այդ բլոկում ղեկավար դեր ստանձնելու մեջ։ Յեվ այստեղից բացարձակ պարզությամբ բխում ե հիմնական դիրեկտիվը մեր կուսակցության համար. կուլակության դեմ պայքարելու գլխավոր միջոցը բռնում ե այն գիծը, վոր գյուղացիության միջին շերտերը խլում ե կուլակի ձեռքից,—հայտնապես նման ձևով պետ վորոշվի կուլակի դեմ մղած մեր պայքարի ռազմագիտական գիծը։ Յեվ այն ընկերները, վորոնք միջակի համար պայքար մղելու այս խնդրին պարզամտորեն հակադրում են այլ խնդիր—պայքարը կուլակի դեմ, իսպառ չեն հասկանում, թե չկա ավելի լավ յեղանակ ոգնելու կուլակային տնտեսությանը, ավելի լավ յեղանակ ոգնելու գյուղի կապիտալիստական տարրերին, քան միջակին բաց թողնել իր ազդեցությունից, բավարար ուշադրություն չնվիրել միջակին նվաճելու այդ առեղծվածին և յետին պլանը մղել այդ տնտեսական խնդիրը։

Ինքնին հասկանալի յե, թե յերբ մեր առաջ կանգնած ե դասակարգային հակառակորդը,—իսկ կուլակը մեր դասակարգային հակառա-

կուրդն է և վտանգավոր դասակարգային հակառակորդը,—ինքնին հասկանալի յէ, վոր մենք պետք է կրակենք նրա վրա, ոգտագործելով մեր ձեռքում գտնված բոլոր միջոցները։ Այդ միջոցների մեջ գլխավորը հանդիսանում է մեր պայքարը միջակի համար—դա վոչվոք չի կարող հերքել, վոչվոք, ով գեթ վորևէ չափով հաշվի յէ նստում գյուղի դասակարգային ուժերի փաստական հարաբերանքի հետ և ով գեթ վորևէ չափով նեղություն է կրում ըմբռնելու կյանքը, տնտեսական կյանքը, և այն էլ նրա վոչ այնքան պարզ, այլ անչափ բարդության մեջ։

(Ն. Ի. ԲՈՒԽԱՐԻՆ. Զեկուցում Լենինգրադի նահանգական XXIII արտակարգ կուսկոնֆերենցիայում)

3. XIV ԿՈՒՍԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՅԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԻՄԱՍՏԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

XIV կուսկոնֆերենցիայում մենք վորոշում ընդունեցինք ապրանքաշրջանառության հետագա ազատ ծավալման մասին։ Այդ վորոշումը մենք ընդունեցինք նրա համար, վորպեսզի ապահովենք կուտակման ուժեղ թափը մեր սոցիալիստական արդյունաբերության մեջ։ Մենք ապրանքաշրջանառությունն ազատ ենք արձակում նրա համար, վորպեսզի դրա հիման վրա դրամի լրացուցիչ քանակ ստանանք մեր պետական գանձարանում։ Մենք ապրանքաշրջանառությունը ծավալում ենք նրա համար, վորպեսզի հարկային քաղաքականության միջոցով կապիտալիստորեն գլուխ բարձրացնող տարրերից դրամի լրացուցիչ գումար ստանանք. մենք նրա համար ենք այդ բոլորն անում, վորպեսզի, ուժեղացնելով մեր դրամական հիմնական ռեսուրսները, ի վիճակի լինենք առաջ մղելու կուտակումը մեր սոցիալիստական արդյունաբերության մեջ մի կողմից, և նրա համար, վորպեսզի չէ թե խոսքով, այլ իրականի մեջ նյութական ռեսուրսներով ոգնենք չքավորների տնտեսություններին և այն էլ որավուր աճող թափով, այնպիսի ձևերով, վորոնք կառաջնորդեն անցնելու տնտեսավարության կոլլեկտիվ սկզբունքներին՝ հնի, մանավորի, անհատականի փոխարեն։ Ահա հարցի մեր կարգումը։ Ահա յեթե նոր ոպպոզիցիայի նորելուկ մարգարեներն այն հարցին, թե վորտեղից գտնել լրացուցիչ ռեսուրսներ, տային մեզ վորևէ նոր դեղատոմս, ցույց տային այդ լրացուցիչ ռեսուրսները գտնելու առանձին աղբյուրներ, հրապարակ հանեյին չէ թե ընդդիմադրական իմաստության աղբյուրը, այլ լրացուցիչ նյութական միջոցների աղբյուրը, ապա մենք վոչ միայն չէինք քվեարկի մեր տեսակետի համար, այլ ձեռքերի վրա ամբողջ ոպպոզիցիան մինչ յերկինք կհանեյինք։ Բայց գործն էլ հենց նրանումն է, վոր նրանք

վորևէ աղբյուր չունեն, բացի մշտական ու անպետք «խոսքի արտադրության» մի անհագին աղբյուրից։ Հարց դնելով կուլակի դեմ պայքար մղելու մասին՝ մենք պնդում ենք. պայքարի գլխավոր միջոցը, վորի ուղիղ կիրառումը գործը մեր ոգտին կլուծի,—դա միջակի նվաճումն է պրոլետարիատի կողմը։ Յեթե խոսքը վերաբերում է չքավորությանը ոգնելու մասին, ապա մեր գլխավոր միջոցն է—շրջանառության արագացում և լրացուցիչ դրամական ռեսուրսների քանակում ընդհանուր տնտեսական վերելքի հիման վրա, վորին խթան են դառնում XIV կուսկոնֆերենցիայի վորոշումները։ Յեթե խոսքը պայքարի ձևերին է վերաբերում, ապա մենք հայտարարում ենք, թե մեր տեսակետից ծանրության կենտրոնն այժմ տնտեսական պայքարի մեջ է, լավ շտկված կոոպերացիան մանավորին հակադրելու մեջ, մեր պետության նյութական ոգնության և վորոշ վարկային քաղաքականության մեջ, մեր բատրակներին կուլակից արհմիութենական պաշտպանություն ցույց տալու մեջ. բայց այդ պայքարը տարվում է աշխատանքի պաշտպանության որենսդրությամբ, հարկային որենսդրությամբ, վորով մենք խլում ենք կապիտալիստական խմբակների յեկամուտների մի մասը, մեր կուսակցության աշխատանքով, վոր գյուղական չքավորությանը քաղաքական պայքարի յե կազմակերպում խորհուրդների վերընտրությունների պահուն, յերբ մեր կոոպերացիայի բնագավառում գրավում ենք հրամայող բարձունքները և այլն։

(Ն. Ի. ԲՈՒԽԱՐԻՆ. Զեկուցում Լենինգրադի նահանգական XXIII արտակարգ կուսկոնֆերենցիայում)

ԹԵՄԱՆԵՐ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Փաստերով ու թվանշաններով, ինչ դուք իմացել եք այս ու նախորդ զրույցներից, հաստատեցեք Վլադիմիր Իլյիչի հետևյալ խոսքերը.

«Հետևանքը (ռազմական կոմմունիզմի տարիների—Գ. Մ.) յեղավ այն, վոր գյուղում գերակշռող տարր հանդիսացան միջակները.. Պակասեց կուլակության կողմը ներկայացնող ծայրը, պակասեց չքավորության ծայրը, և բնակչության մեծամասնությունն սկսեց մոտենալ միջակին։ Յեթե մեզ հարկավոր է բարձրացնել մեր գյուղացիական տնտեսության արտադրականությունը, ապա մենք առաջին հերթին պետք հաշվի նստենք միջակի հետ։ Կոմմունիստական կուսակցությունն էլ համապատասխան դրան ստիպվեց կառուցել իր քաղաքականությունը։

Մեզ հարկավոր է մեր պետական էկոնոմիկան կառուցել համապատասխան միջակի էկոնոմիկային, վորին մենք յերեք տարվա ընթացքում չկարողացանք վերափոխել և դեռ տասը տարվա մեջ էլ չենք վերափոխի»։

Դրանից հետո բացատրեցեք, թե հետևելով Վլադիմիր Իլյիչի պատգամներին, պրոլետարական պետությունը ինչպիսի քաղաքականություն է վարում գյուղում և ինչպիսին պիտի վարի։

2. Համառոտակի նկարագրեցեք ձեզ լավ ծանոթ գյուղի միջակների ու չքավոր-

ների տնտեսությունները և փաստերով ցույց տվեք, թե ինչպես է ծավալվում դասակարգային պայքարը գյուղում։ Ի՞նչ է արված այդ գյուղում իրագործելու համար այն խնդիրները, որ մեր կուսակցությունն է առաջադրում իր գյուղատնտեսական քաղաքականության մեջ։

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչ միջոցներ է անհրաժեշտ անցկացնել գյուղում, որպեսզի նրան հանենք չքավորության այն կացությունից, որի մեջ էր նա ցարիզմի օրով։

2. Ինչո՞ւմն է մեր քաղաքականության հիմնական խնդիրը գյուղում։

3. Ի՞նչպիսին է մեր քաղաքականությունը չքավորի, միջակի ու կուլակի նկատմամբ։

4. Այդ քաղաքականությունից ի՞նչպիսի թեքումներ գոյություն ունեն կուսակցության առանձին անդամների մեջ և ինչո՞ւմն է այդ թեքումների վնասն ու վտանգը։

5. Ի՞նչպես ենք մենք կիրառում և պիտի կիրառենք սոցիալիստական պետարդյունաբերության զոդումը գյուղատնտեսության հետ։

ԶՐՈՒՅՑ ՏԱՍԵՎՅՈԹԵՐՈՐԴ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՈՒ ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ինչի՞ մասին է զրույցը։

Նախորդ զրույցներից մենք գիտենք արդեն, թե պրոլետարիատի ձեռքում պետությունը հանդիսանում է ահագին մի ուժ, որ ուղղություն է տալիս սոցիալիզմի շինարարության և ըստ ամենայնի նպաստում այդ շինարարության։

Ներկա զրույցում մենք ցույց կտանք, թե մեր պրոլետարական պետությունը հավաքելով յեկամուտները և ծախսելով հավաքածը՝ ղեկավարվում է մեր գլխավոր նպատակով—սոցիալիզմի շինարարությամբ, և որ այս կերպ մեր ֆինանսական քաղաքականությունը ծառայում է նույն նպատակներին, ինչ և մեր ընդհանուր տնտեսական քաղաքականությունը, հանդիսանալով նրա անբաժան մասը։

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱԽՈՒՄԸ

Մեր հարկային ու ֆինանսական քաղաքականության կապը տնտեսության վիճակի յեվ տնտեսական քաղաքականության հետ։

Պետական ֆինանսները—դա այն դրամական միջոցներն են, որ յուրաքանչյուր պետություն քաշում է ժողովրդական տնտեսությունից՝ այն ծախսելու համար պետության տարբեր կարիքների վրա։ Այդ պատճառով կարելի յե նաև ասել, թե ֆինանսները—դա պետության յեկամուտներն ու ծախսերն են՝ անհրաժեշտ նրա կարիքները հոգալու համար։

Ֆինանսական քաղաքականություն—դա պետության գործունեությունն է, որ նպատակ ունի յեկամուտներ քաշել և այն ծախսել՝ իրագործելու այն խնդիրներն ու նպատակները, ինչ պետությունն է առաջադրել իրան։

Խորհրդային իշխանության (ինչպես և առհասարակ ամեն մի պետության) ֆինանսական քաղաքականությունը կախում ունի նրա

ընդհանուր տնտեսական քաղաքականությունից և ժողովրդական տնտեսության վիճակից։ Այդ նախ և առաջ արտահայտվում է յեկամուտների ու ծախսերի չափի վրա։ Որքան շատ է զարգացած արդյունաբերությունն ու առևտուրը որևէ պետության մեջ,—այնչափ այդ պետությունը (իր ամբողջությամբ) հարուստ է և այնչափ ավելի շատ յեկամուտներ է հավաքում պետական իշխանությունը, հետևաբար, և այնչափ ավելի շատ ծախսեր է կատարում։

1924—25 թվականին ԽՍՀՄ յեկամուտներն ու ծախսերը կազմում էին 3 միլիարդ ռուբլուց պակաս մի գումար։ Այդ նույն ժամանակ Անգլիայի յեկամուտներն ու ծախսերը կազմում էին $7^1/_2$ միլիարդ ռուբլի։ Դա, հարկավ, բացատրվում է նրանով, վոր Անգլիան լայն զարգացած արդյունաբերության յերկիր է, իսկ ԽՍՀՄ դեռ հետամնաց ժողովրդական տնտեսություն ունեցող յերկիր։

Յեթե մենք սակավ ինչ մոտ դիտենք Խորհրդային իշխանության կողմից հին տնտեսական քաղաքականության տարիներին վարած ֆինանսական քաղաքականությունը, ապա մենք կտեսնենք, թե ֆինանսական քաղաքականությունն ինչ լիակատար կախում ունի տնտեսության վիճակից ու տնտեսական քաղաքականությունից։

Էմիսսիան յեվ պարենմասնատրումը — հարկային ու ֆինանսական քաղաքականության հիմքն է ռազմական կոմմունիզմի շրջանում։

«Ռազմական կոմմունիզմ»ի շրջանում, յերբ Խորհրդային պետությունն ստիպված էր պատերազմ մղել և ահագին ծախսեր անել,—նա չէր կարող գլուխ հանել այն համեստ յեկամուտով, ինչ ստացվում էր ազգայնացրած արդյունաբերությունից։ Նա հարկադրված էր ուրիշ միջոցներ վորոնել և այն ստացավ՝ 1) էքսպրոպրիացիայի յենթարկելով բուրժուազիայի արժեքները, 2) պարենմասնատրումից և 3) թղթե դրամ տպելով։ Վարի աղյուսակը ցույց է տալիս, թե ռազմական կոմմունիզմի տարիներին պետությունը ինչ յեկամուտներ ուներ պարենմասնատրումից ու էմիսսիայից (էմիսսիա—թղթե դրամների բացթողում).

Յեկամուտների աղբյուրները (միլիոն ռուբլիներով)	1918/19 թ.	1919/20 թ.	1920/21 թ.	Պարենտուրքից՝ 1921/22 թ.
Պարենմասնատրումը	127	253	480	244
Էմիսսիա	523	390	186	—
Ընդամենը	650	643	666	244

Այս աղյուսակից տեսնվում է, վոր թղթե դրամի բացթողումից յեկամուտը միշտ պակասում է. թղթե դրամները, շնորհիվ իրանց արժեքի անկման, դադարում են պետությանը ծառայություն մատուցելուց։

Նոր տնտեսական քաղաքականությունը յեվ ֆինանսական ու հարկային քաղաքականության նոր կուրսը

Անցումը նոր տնտեսական քաղաքականության պիտի առաջնորդեր և դեպի անցում նոր ֆինանսական քաղաքականության։ Ահա թե Խորհուրդների IX Համագումարին ինչպես էր ապացուցում այդ անցման անհրաժեշտությունը այն՞ժամանակվա ֆինանսների ժողովրդական կոմիսսար ընկ. Կրեստինսկին. «Նախկին տնտեսական քաղաքականության հիմքերը,—զեկուցում էր նա համագումարին,—կազմում էին արդյունաբերության ազգայնացումը, պարենմասնատրումը, աշխատապահակությունը, պետության կողմից կոոպերացիայի կարգավորումը, պետական մատակարարման լայն զարգացումը, վոր կատարվում էր ձրիաբար ու բնական բերքերով։

Այդ քաղաքականությունը ֆինանսների բնագավառում առաջ բերավ հարկերի վերացում այն պատճառով, վոր գյուղացիությունը պետության պահպանության համար վճարելիք իր բաժինը մուծում էր բնական ձևով—պարենմասնատրման և աշխատապահակության ձևով, իսկ մյուս, ունևոր դասակարգերը, վորոնք մինչև հեղափոխությունը հարկերի էին յենթարկվում, այժմ անհետացել են, և այս կերպ չքացան պետական հարկատվության օբյեկտները։ Ապա վերացան տեղական ֆինանսները, քանի վոր մուծելով իրար սպասավորելու ձրի սկզբունքները՝ չքացան տեղական յեկամուտները։ Յեվ ապա, քանի գոյություն չուներ շուկան, պետք էր վերջ տալ բանկային վարկի ապարատին, և սկսեց աստիճանաբար վերանալ դրամական սիստեմը։ Այժմ մենք ունենք մեր էկոնոմիկայի խպառ այլ պատկերը. վերացված է պարենմասնատրումը, մուծված է պարենտուրքը, շուկան ազատ է, փոփոխված է պետական մատակարարման սիստեմը (հացակերների թվի կրճատում), կրճատված է պետության կողմից շահագործվող տնտեսական ձեռնարկությունների քանակը, ընդարձակված է մասնավոր նախաձեռնության շրջանը, և առաջին հերթին մուծված է վարձատրության սկզբունքը և այլն։

Բնական է, վոր մենք այժմ նշանառենք խպառ այլ ֆինանսական քաղաքականություն»...

2. ԴՐԱՄԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1924 թվականի դրամական ռեֆորմը։

Նոր տնտեսական քաղաքականությունը վերականգնում էր շուկայի շրջանառությունը, վերականգնում և օրինականացնում էր առուծախը և ինքնին պիտի նախ և առաջ դրամի հարցը դներ։ Ընկնող դրամը խոշոր արգելք է հանդիսանում առողջ ապրանքաշրջա-

նառության համար, վորովհետև այն կազմալուծում է առևտուրը, նպաստում սպեկուլյացիայի զարգացման։ Այս պատճառով հասկանալի յե, վոր տնտեսական քաղաքականության անցման պահուն պետության կարևորագույն խնդիրներից մեկն եր հանդիսանում կայուն դրամի վերականգնումը։ Դրա համար ել 1922 թվականին կուսակցության XI համագումարը, հաստատելով նոր տնտեսական քաղաքականությունը, հերթական դարձրեց դրամի ռեֆորմի հարցը։ Համագումարը ֆինանսական քաղաքականության առանձնապես կարևոր խնդիրը ճանաչեց դրամական ռեֆորմը, այսինքն կրճատումը, իսկ հետո նաև թըղթե դրամների տպագրության կատարյալ վերացումը և անցումը կայուն դրամի։ Այդ խնդիրն ամբողջությամբ ու լրությամբ ներկայիս արդեն իրագործված է Խորհրդային իշխանության կողմից։ Դրամական ռեֆորմի աշխատանքներն սկսվեցին 1922 թվականին։ Այդ թվականի աշնան վերջին շրջանառության մեջ դրվեցին չերվոնեցները։ Այդ դրամը բաց թողեց Պետական բանկը և այն ամբողջությամբ ապահոված եր վոսկով, ոտարերկրյա փողով (կամ, ինչպես ասում են, ոտարյերկրյա վալյուտայով) և թանգարժեք իրերով, ուստի և նրա արժեքը չեր ընկնում։ Պետական բանկին թույլատրված եր միայն այն չափով չերվոնեց բաց թողնել, վոր չափով նրանք կարող եյին ապահոված լինել։ Մյուս կողմից պետությունը ձեռք առավ բոլոր միջոցները, վորպեսզի չերվոնեցները կայուն դրամ դառնան։ Վորպեսզի դա իրագործել կարելի լինի, պետք եր գլխավորապես այնպիսի վիճակ նվաճել, վորպեսզի պետության ծախսերի մի մասը հարկադրանք չլիներ թղթե փողի բացթողումով ծածկել։ Այդ վիճակը պետությունը լրությամբ նվաճեց։ Պետությունն աստիճանաբար նվաճեց և այն, վոր նա կայուն դրամով (չերվոնեցներով) ապահովեց շրջանառությունը, կայուն դրամով, վորը վանում եր նախկին ընկնող խորհրդային դրամանիշները մինչ այն ժամանակ, յերբ պետությունն ինքը հնարավորություն գտավ նրանց դուրս հանելու շրջանառությունից։ Շրջանառության մեջ պետությունը թողեց չերվոնեցները և 1, 3 և 5 ռուբլիանոց գանձարանի նշանները, այլ և մանրադրամ արծաթ ու պղինձ։ Ընդսմին պետությունն անկումից ապահովեց և գանձարանի նշանները։

Դրա հետ միասին, վորպեսզի իր ծախսերը ծածկելու համար հարկադրված չլինի չափազանց մեծ քանակի նոր դրամանիշներ բաց թողնելու՝ պետությունը պիտի դրամական հարկեր մուծեր։ Այսպես մուծվեց արհեստագործական հարկը (առևտրի, արհեստի, ձեռնարկության և այլն), յեկամտային հարկը, վոր գանձվում է հարկատուի յեկամուտների համապատասխան, և մի շարք այլ հարկեր ու տուրքեր (դրոշմային տուրք, դիվանական տուրք, դատական տուրք և այլն)։ Հետագայում փողի վերածվեց գյուղացիներից գանձվող պարենհարկը։

Միաժամանակ պետությունն անցկացրեց բոլոր ծախսերի խիստ կըրճատում և մի ամբողջ շարք ֆինանսական միջոցներով հաջողեց հաղթահարել դրամական ռեֆորմի առաջ ծառացած բոլոր դժվարությունները։

Անհրաժեշտ է նշել և այն անհագին զոհաբերությունը, վոր բանվոր դասակարգը հանձն առավ դրամական ռեֆորմի հաջողության համար։ Պետության ծախսերը կրճատելու համար հարկ յեղավ ժամանակավորապես պակասեցնելու բանվորների աշխատավարձը. և բանվոր դասակարգն ընդունեց այդ, չնայելով վոր այդ ժամանակ ցածր եր աշխատավարձի մակարդակը։ Բանվոր դասակարգն այդ զոհաբերությունը գիտակցաբար եր, վոր հանձն առավ հոգուտ իր պետության, հոգուտ իր դասակարգի նրա ամբողջությամբ, հոգուտ ժողովրդական տնտեսության բարձրացման և հոգուտ գյուղացիության հետ կնքած դաշինքն ամրացնելու գործի։ Յեվ բանվոր դասակարգը վարձատրվեց իր զոհաբերության համար. յեթե մենք կայուն դրամ չունենայինք, ապա չեր լինի այն աշխատավարձը, վորի մասին մենք խոսել ենք տասնեհինգերորդ գլուխում, և վորը մոտենում է նախապատերազմական չափին, իսկ միքանի ճյուղերում ել ավելի բարձր է, քան պատերազմից առաջ եր։

Խորհրդային իշխանության նվաճած հաջողությունը դրամական տնտեսության բնագավառում արտահայտվում է վոչ միայն կայուն դրամների սահմանման մեջ, այլ և շրջանառության մեջ գտնվող այդ դրամների վոսկով արժեքը ավելացնելում։ 1922 թվականի մարտին շրջանառության մեջ գտնվող դրամների վոսկով արժեքը կազմում եր մոտ 75 միլիոն ռուբլի։ 1922 թ. նոյեմբերին, դրամական ռեֆորմի նախորեյին շրջանառության մեջ գտնվող թղթե փողերը վոսկու վերածելով արժենում եյին 300 միլիոն ռուբլի։ 1925 թվականի գարնանը շրջանառության մեջ գտնվող դրամական մասսան վոսկու վերածելով արժենում եր 750 միլիոն ռուբլի, իսկ առ 1-ն նոյեմբերի 1925 թվականի մենք շրջանառության մեջ ունեյինք արդեն 1200 միլիոն ռուբլի*։

Այլ խոսքերով՝ մենք բազմապատկել ենք մեր դրամաշրջանառությունը։ Շրջանառության մեջ գտնվող դրամների վոսկով արժեքի ավելացումը նշանակում է, թե աճել է և՛ դրամական տնտեսությունը, և՛ ապրանքային տնտեսությունը, այսինքն այն ցույց է տալիս մեր ժողովրդական տնտեսության ընդհանուր աճումը։

---

* Ներկա գլուխի այս և հետագա թվանշանները վերցված են հետևյալ գրքերից. Н. П. Брюханов—«Новый бюджет Советского Союза», յերկրորդ հրատարակություն, 1925 թ. և «Государственный бюджет СССР 1925/26, и хозяйственное строительство», հրատ. Ֆինժողկոմի, 1926 թ.։

Վորպեսզի լավ յուրացվի «Տնտեսական և ֆինանսական հարկային քաղաքականության փոխադարձ կախումը» և «Դրամի վերականգնումը Խորհրդային պետության մեջ» բաժինները, պատասխաններ տվեք հետևյալ հարցերին.

1. Ինչումն է ռազմական կոմմունիզմի շրջանի ֆինանսական ու հարկային քաղաքականության էությունը:
2. Ինչու ՆԵՊ-ի անցումով պետք էր անցնել նոր ֆինանսական-հարկային քաղաքականության:
3. Ինչու պիտի մենք ձգտեյինք կայուն վալյուտա նվաճելու:
4. Ի՞նչպես մեզ հաջողվեց անցկացնել 1922 թվականի դրամական բարենորոգումը:

3. ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՊ-Ի ԺԱՄԱՆԱԿ

Բոլոր պետություններում հարկերը հանդիսանում են պետության յեկամուտների գլխավոր աղբյուրը: Նրանք կարող են լինել ուղղակի, յերբ ուղղակի հարկատվության է յենթարկվում սեփականությունը կամ յուրաքանչյուր անձի յեկամուտ, և անուղղակի, յերբ հարկը վերցվում է ապրանքների գներից, վորոնց գներին պետությունը հավելում է անում իր ոգտին: Այդ հավելումը կոչվում է բաժ (ակցիզ) և սահմանվում է սովորաբար մասսայական գործածության առավել վարուն ապրանքների վրա (ծխախոտ, լուցկի, նավթ, շաքար, թեյ և այլն): Ուղղակի հարկերն ավելի յեն ճիշտ աշխատավորների շահերի տեսակետից, քան անուղղակի հարկերը, վորովհետև վերջինները չեն հաշվառում գնորդի յեկամուտներն ու կարողությունը և բաժ վերցնում են միատեսակ և՛ շահագործողից և՛ աշխատողից: Կապիտալիստական պետությունները, վոր ձգտում են հարկը բարդել և չունեորների վրա, միշտ դիմում են անուղղակի հարկերի, և այդ յերկրների բուրժուազիան բացառիկ ուժով է դիմադրում նրանց վրա ընկնող ուղղակի հարկերի ամեն մի ծանրացման: Խորհրդային պետությունը, ընդհակառակը, ըստ ամենայնի ձգտում է ուղղակի հարկերի, և ներկայիս մենք արդեն ունենք արհեստագործական հարկ—ուղղակի հարկ առևտրով և արդյունաբերական գործունեությամբ զբաղվող անձանց վրա, գյուղատնտեսական հարկ և յեկամտային հարկ—ուղղակի հարկ այն անձանց վրա, վորոնք այս կամ այն միջոցով իրանց յեկամուտներն են ստանում: Մեն. միայն ուղղակի հարկերն անցկացնելու համար անհրաժեշտ է ունենալ շատ լավ հարկային ապարատ, վորից չկարողանան խուսափել յեկամուտներ ստացող անձինք: Խորհրդային պետությունը նման ապարատ կառուցում է, բայց մինչ նրա կառուցումը նա հնարավորություն չունի հրաժարվելու անուղղակի հարկերից: Հարկավոր է և ժողովրդական տնտեսության շատ բարձր վերելք, վորպեսզի յեկամուտների ուղղակի հարկատվությունը խոշոր միջոցներ տա պետությանը: Մենք նման շատ բարձր վերելքի դեռ չենք հասել, և դա ես խանգարում է հրաժարվելու անուղղակի հարկերից: Սակայն Խորհրդային պետությունն այստեղ ես

կարևոր ուղղումն է մուծում. նա առանձնապես բարձր բաժ է սահմանում պերճանքի առարկաների վրա:

Հարկային քաղաքականությունը մասնավոր կապիտալի նկատմամբ:

Պետության հարկային քաղաքականությունը վորոշելու պահուն կարևոր հարց է հանդիսանում քաղաքականության վորոշումը մասնավոր կապիտալի նկատմամբ: Պետությունը կարող էր մասնավոր կապիտալիստների նկատմամբ այնպիսի քաղաքականություն վարել, վորը կխեղդեր նրանց, վորը կտիպեր նրանց հեռանալ և՛ արտադրությունից և՛ առևտրից, իսկ նրանց կապիտալները պետության յեկամուտ կդարձներ: Ճիշտ կլիներ այդ քաղաքականությունը: Յերբեք: Մենք արդեն ասել ենք նախորդ զրույցներում, թե վոչ արդյունաբերության, վոչ առևտրի մեջ մենք դեռ չենք կարող դուրս հանել առանց մասնավոր կապիտալի: Նման կացությունը թելադրում է վորոշ հարկային քաղաքականություն. մենք պետք է մասնավոր կապիտալիստներից հարկեր վերցնենք այն չափով, վորպեսզի մասնավոր կապիտալը չվռնդենք արդյունաբերությունից և առևտրից: Թե ինչպես ենք հարկ դնում մասնավոր կապիտալիստների վրա, տեսնվում է նրանից, վոր նախահեղափոխական ժամանակ պետությունը միլլիոներներից հարկ էր պահանջում նրանց յեկամուտի 6%, իսկ մենք հարկ վճարողների բարձր խմբակից գանձում ենք նրանց յեկամուտի 32%:

Հարկային քաղաքականությունը գյուղում:

Մեր հարկային քաղաքականությունը գյուղում պիտի յելակետ ունենա մեր ընդհանուր քաղաքականությունը գյուղացիության և գյուղատնտեսության նկատմամբ: Այդ քաղաքականությունը վորոշելու պահուն մենք պիտի յելակետ ունենանք այն, վոր մեր պետությունն ուժեղ է նախ և առաջ բանվորների ու գյուղացիների դաշինքով, և վոր այդ դաշինքը չի կարող ամուր ու կայուն լինել, յեթե գյուղատնտեսությունը չբարձրանա և չաճի: Այս պատճառով Խորհըրդային պետությունը չի կարող և չպետք է գյուղացիության վրա հարկերի խիստ ծանր բեռ բարդել: Հարկերը չպիտի այնքան ծանր լինեն, վորպեսզի կասեցնեն գյուղատնտեսության զարգացումը: Այդպիսի հարկային քաղաքականություն էլ վարում է Խորհրդային իշխանությունը: Այսպես, 1924/25 թվականի բյուջեյով գյուղի վրա ուղղակի հարկեր ընկնում են 340 միլիոն ռուբլի, իսկ քաղաքի վրա 450 միլիոն, այսինքն քաղաքն ուղղակի հարկեր վճարում է 110 միլլիոն ավելի, քան գյուղը: Իսկ յեթե վերցնենք քաղաքի և գյուղի վրա ընկնող բոլոր հարկերը (և ուղղակի և անուղղակի), ապա, այնուամենայնիվ, դուրս կգա, վոր քաղաքը վճարում է, ասենք, 855 միլլիոն ռուբլի, գյուղը—520 միլիոն ռուբլի: Այսպիսով մեր հարկաբաշխումն առավելապես քաղաքային

է և պակաս չափով գյուղական։ Դա հաստատվում է Ցինժողկոմի 1924/25 թ. խնամքոտ հաշվով։ Հարկերն այդ թվականին ստորաբաժանվել են այսպես. գյուղական բնակչության մի շնչի վրա ընդհանրապես ընկնում էր 4 ռ. 77 կոպ., քաղաքում էլ բանվորի վրա ամեն տեսակի հարկ էր ընկնում 14 ռ. 16 կոպ., իսկ ավելի ունևոր խմբակների վրա — 42 ռ. 21 կոպ.։

Միասնական գյուղատնտեսական հարկ: Նրա իջեցումը 1925 թվականին:

Գյուղացիության վրա ընկնող ուղղակի հարկը — դա միասնական գյուղատնտեսական հարկն է։ Այդ հարկը դրվում է Խորհրդային Միության գյուղատնտեսությամբ զբաղվող վողջ բնակչության վրա։ Վոչ մի ուրիշ ուղղակի հարկ գյուղացիությունը չի վճարում, ինչու և այդ հարկը միասնական է կոչվում։ Այդ հարկի ծանրությունը վորոշվում է տնտեսության հասութաբերությամբ. վորքան շատ են յեկամուտները, այնքան էլ շատ է հարկը։ Դրա մեջ է արտահայտվում պետության դասակարգային քաղաքականությունը։ Միասնական գյուղատնտեսական հարկը նախատեսում է մի շարք արտոնություններ — չքավորությանը, կարմիր բանակայիններին և մյուսներին, այլ և այն գյուղացիական տնտեսություններին, վորոնք բռնում են իրանց տնտեսությունները զարգացնելու ուղին, այն լավագույն ձևերով վարելու ուղին։

Ձգտելով ըստ հնարավորության թեթևացնելու հարկային բեռը, վոր ընկնում է գյուղացիության վրա, և տալ նրան հնարավորություն բարձրացնելու գյուղատնտեսությունը՝ Խորհրդային իշխանությունը 1925/26 թվականին իջեցրել է գյուղատնտեսական հարկը 100 միլիոն ռուբլով — 340 միլիոնը 240 միլ. դարձնելով։

Համամիութենական կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի (1926 թ.) պլենումի վորոշումներին միասնական գյուղատնտեսական հարկի սիստեմի մեջ 1926 թվականին եյական փոփոխություններ են մուծվում։ Հարկի հաշվառումն այլևս չպիտի կատարվի այն ձևով, վոր տնտեսության հարկի յենթարկվող բոլոր մասերը վերածվեն ցանքսի, այլ հաշվառելով տնտեսության ամբողջ դրամական յեկամուտը։ Նպատակ ունենալով հարկն ավելի արդարացի դարձնելու՝ այսուհետև հարկի պիտի յենթարկվեն գյուղացիական բնակչության յեկամուտների այն աղբյուրները, վորոնք առաջ հարկի չեյին յենթարկվում կամ յենթարկվում եյին անբավարար չափով (այգեգործություն, մեղվաբուծություն, բանջարանոցային տնտեսություն և այլն)։ Նախկին սիստեմով այդ աղբյուրներից յեկամուտներ ունեցող գյուղացիներն անհիմն ձևով արտոնություններ ունեյին հանդեպ նրանց, վորոնք իրանց աշխատանքը բացառապես հողագործության մեջ եյին սպառում։

Իսկ կարևորագույն փոփոխությունը, վոր մուծվում է 1926 թվականի գյուղատնտեսական հարկի մեջ, — դա նրա ավելի շատ համապատասխանությունն է գյուղացիական տնտեսությունների յեկամուտներին (հարկի ավելի շատ պրոգրեսիվ լինելը)։ Դա կարտահայտվի հետևյալում. 24 միլիոն գյուղացիական տնտեսություններից 5 միլիոն չքավոր ծուխ իսպառ ազատվում է հարկից, իսկ մնացած 19 միլիոնը պիտի վճարի իրանց յեկամուտի 2-ից մինչև 20 տոկոսը, 11 միլիոն սակավազոր միջակ տնտեսությունների համար (մի հացակերի յեկամուտը մինչև 50 ռուբլի) նոր հարկն ավելի թեթև կլինի համեմատած ներկայի հետ, 5 միլիոն միջակ տնտեսությունների համար (մի հացակերի յեկամուտը 50—70 ռուբլի) հարկի ծանրությունը կմնա նախկինը և, վերջապես, 3 միլիոն ունևոր ու հարուստ տնտեսությունների համար (մի հացակերի յեկամուտը 70 ռուբլուց բարձր) հարկի ծանրությունը կաճի, և քանի հարուստ է տնտեսությունը, այնքան նա ավելի ծանր կլինի։

Գյուղատնտեսական հարկի ընդհանուր գումարի $^{2}/_{3}$ կթողնվի իշխանության տեղական օրգանների տնօրինության տակ՝ բավարարելու տեղական կարիքները, մանավանդ գյուղում։

Գյուղատնտեսական հարկի ընդհանուր գումարը 1926 թվականին սակավ ինչ բարձրանում է (մինչև 300 միլիոն ռուբլի), բայց այդ բարձրացումը նախ բացատրվում է նրանով, վոր բարձրացել է նաև գյուղատնտեսության հասութաբերությունը, և յերկրորդ՝ բարձրանում է ի հաշիվ ունևոր ու կուլակ տնտեսությունների։ Բոլոր գյուղացիական տնտեսությունների զուտ յեկամուտի ընդհանուր գումարի հետ համեմատած վողջ գյուղատնտեսական հարկը 1926/27 թվականին, ինչպես և 1925/26 թվականին, կկազմի մոտ 4%։

Բոլոր այս տվյալները գյուղատնտեսական հարկի մասին բավականաչափ հաստատում են, թե նա լիովին համապատասխանում է պրոլետարական պետության այն դասակարգային քաղաքականությանը գյուղի տարբեր շերտերի նկատմամբ, վորի մասին մենք խոսել ենք նախորդ զրույցներում։

Գյուղատնտեսական հարկի նշանակալից կողը ԽՍՀՄ բյուջեյում։

Խորհրդային իշխանությունը սահմանել է համեմատաբար ցածր գյուղատնտեսական հարկ, չնայած նրան, վոր պետության ծախսերն աճում են տարեցտարի։ Դա նշանակում է, թե պետությունը վորոնում է յեկամուտի այլ աղբյուրներ, միայն թե ծանր հարկով չծանրաբեռնե գյուղատնտեսությունը և տա նրան հնարավորություն բարձրանալու և զարգանալու։ Հարակից տեսության նման քաղաքականության գյուղատնտեսական հարկի բաժինն ընկնում է պետության բյուջեյում։ Դա տեսնվում է հետևյալ աղյուսակից.

Ինչ տոկոս է կազմում գյուղատնտեսական հարկը բյուջեյում

Տարի	Ամբողջ բյուջեն (միլիոն ռուբլիներով)	Գյուղատնտեսական հարկը	Գյուղատնտեսական հարկի տոկոսը հանդեպ ամբողջ բյուջեյի
1924/25 թ.	2905	343	11,8
1925/26 թ.	4001	235	5,6

4. ԲՅՈՒՋԵ

Պետական ու տեղական բյուջե։

Բյուջեն՝ դա պետության յեկամուտների ու ծախսերի հաշվեկշիռն է։ Ամբողջ պետության վերաբերող յեկամուտներն ու ծախսերը կազմում են պետական բյուջեն։ Մեր պետական բյուջեն՝ դա համամիութենական, ամբողջ ԽՍՀՄ բյուջեն է։ Այն կազմվում է ԽՍՀՄ մեջ մտնող առանձին հանրապետությունների հանրապետական բյուջեներից։ Համամիութենական և համամիութենականի մեջ մտնող հանրապետական բյուջեների շարքում կան նաև այսպես կոչված տեղական բյուջեներ։ Տեղական բյուջեները նրանք են, ուր նախատեսված են հասույթներ յեկամուտի տեղական աղբյուրներից և ծախսեր տեղական կարիքների վրա։ Տեղական բյուջեների յեկամուտներն են հանդիսանում հասույթներ կոմմունալ (քաղաքային, հասարակական և պետական) ձեռնարկություններից, վորոնք տեղական օրգանների տնօրինության տակ են գտնըվում, տեղական ձեռնարկությունների շահագործումից կամ կապիտալից և այլն։ Բացի այդ տեղական բյուջեների յեկամուտի մեջ է մտնում համապետական կարգով հավաքած յեկամուտների մի մասը, օրինակ՝ գյուղատնտեսական հարկից, արհեստագործական հարկից, անտառի յեկամուտներից և այլն։ Տեղական բյուջեներ են շրջանայինը, գավառականը և նահանգականը։ Տեղական բյուջեների մուծումը բարենպաստ ազդեցություն է անում ժողովրդական տնտեսության զարգացման վրա, վորովհետև հնարավորություն է տալիս տեղերին վարելու այն տնտեսությունը, վորը նրանց շատ է մոտ, վորի բախտով նրանք շահագրգռված են, և վորի վարումը կենտրոնի համար դժվար կլիներ։ ԽՍՀՄ պետական ու տեղական բյուջեների աճումը ՆԵՊ-ի տարիներին կարելի յե տեսնել հետևյալ տվյալներից * (միլիոն ռուբլիներով).

Տարի	Պետական բյուջե	Տեղական բյուջեներ
1922/23 թ.	1300	295
1923/24 թ.	2298	671
1924/25 թ.	2905	898
1925/26 թ.	4001	1209

Այս տվյալներից տեսնվում է, թե չորս տարվա ընթացքում պետական բյուջեն աճել է համարյա յերեք անգամ, իսկ տեղական բյուջեն՝ չորս անգամից ավելի։ 1925/26 թվականին մեր պետական բյուջեն կազմում եր Ռուսաստանի նախապատերազմյան բյուջեյի 80%։

Մեր պետական բյուջեյի մասին ավելի մանրամասն հասկացողություն կարելի յե կազմել նույն գրքից վերը բերվող տեղեկություններից (միլիոն ռուբլիներով), վորոնք ցույց են տալիս, թե ինչ աղբյուրներից է պետությունն ստանում իր յեկամուտները և ինչի վրա ծախսում։ Անհրաժեշտ է խնամքով խելամուտ լինել այդ տեղեկություններին։

* Н. П. БРЮХАНОВ—«Государственный бюджет СССР на 1925/26 г. и хозяйств. строительство».

ՄԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ

ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐ	1923/24թ.	1924/25թ.	1925/26թ.
Ուղղակի հարկեր —	410,1 (վորից գյուղ.հարկ 231,0),	612,2 (վորից գ.հ. 343,6),	583,9 (վորից գ.հ. 235,1)
Անուղղակի »	308,1 (» բաժ 240,6),	604,2 (» բաժ 502,5),	1150,5 (» բաժ 1000,0)
Տուրքեր	70,3 (» դրոշմաթղթի 57,1),	117,9 (» դրոշմ. 98,3),	150,3 (» դրոշմ. 130,2)
Տրանսպորտ և կապի միջոց.	727,1 (» տրանսպ. 678,3),	987,0 (» տրանսպ. 892,1),	1498,7 (» տրանսպ. 1345,0)
Պետարդյունաբերություն, առևտուր և բանկեր	47,9 (» արդյունաբ. 26,0),	120,7 (» արդյուն. 70,8),	212,4 (» արդյուն. 117,3)
Այլ վոչ-հարկային յեկամուտներ	190,9 (» անտառ. յեկ. 53,5),	218,8 (» անտ. յեկ. 100,7),	275,7 (» անտ. յեկ. 140,5)
Վարկային գործառնություններ	183,6	129,3	100,1
Էմիսսիա	126,3	—	—
Արծաթե և պղն. դրամահատութ.	74,4	80,0	30,0
Այլ արտակարգ յեկամուտներ	159,5	35,0	—
ԾԱԽՍԵՐ			
Պաշտպանություն	427,5	458,9	635,5
Տրանսպորտ և կապի միջոցներ	813,0 (վորից տրանսպորտ 760,3),	986,8 (վորից տրանսպ. 891,7),	1469,7 (վորից տրան. 1329,0)
Արդյունաբերական շինարարություն և ելեկտրիֆիկացիա	161,1 (» ելեկտրիֆիկացիա 50,8),	166,6 (» ելեկտրիֆ. 50,7),	231,6 (» ելեկտրիֆ. 69,1)
Գյուղատնտեսություն	92,8	199,4	259,3
Կուլտուր սոցիալական կարիքն.	118,6	176,3	237,3
Ներքին կառավարչություն	303,8	313,4	436,8
Պետական գանձարանի գործառնություններ	110,4 (» պետվարկի սխտ. 71,8),	165,2 (» պետվ. սխտ. 67,4),	187,8 (» պետվ. սխտ. 127,8)
Օգնություն տեղ. բյուջեյին	132,2 (» սուբվենցիոն ֆոնդ 8,5),	273,2 (» սուբվ. ֆոնդ 44,9),	338,4 (» սուբվ. ֆոնդ 82,9)
Այլ ծախսեր	138,7 (» կոմմունալ վարկեր 2,2),	99,3 (» կոմմ. վարկ. 36,0),	105,0 (» կոմմ. վարկ. 80,0)
ԽՍՀՄ հատուկ պահուստ ֆոնդ՝			100,0

Այս թվանշանների առիթով տանք մի քանի բացատրություններ: 1925/26 թվականին ուղղակի հարկերի պակասումը պիտի բացատրել նրանով, որ 100 միլիոնով պակասել ե գյուղատնտեսական հարկը: Անուղղակի հարկերի աճումը բացատրվում ե բաժի գումարի աճումով, քանի որ բազմացել ե շուկայում շրջանառություն անող ապրանքների քանակը, և մաքսային տուրքերի աճումով արտաքին առևտրի զարգացման շնորհիվ: Յեվ, այնուամենայնիվ, այն ժամանակ, յերբ 1913 թվականին ցարական կառավարության բյուջեյում անուղղակի հարկերը կազմում եյին ամբողջ բյուջեյի 47%, մեզ մոտ բոլոր բաժերից յեկամուտները կազմում են ամբողջ բյուջեյի 29%:

Յերկաթուղին, փոստն ու հեռագիրը, որ առաջ վնաս եյին բերում պետությանը, ներկայիս վնաս չեն բերում: Ընդհակառակը, նրանք նույնիսկ պետությանը փոքրիկ արհեստագործական հարկ են վճարում: Անչափ կարևոր և բարենպաստ հանգամանք ե հանդիսանում այն, որ պետությունը շահ ե ստանում պետական արդյունաբերությունից: Դիտելով պետական յեկամուտների այդ և մյուս թվանշանները, անհրաժեշտ ե հիշել այն, ինչ տասնեհինգերորդ զրույցում մենք ասել ենք սոցիալիստական կուտակման մասին: Թվանշանները հաստատում են, թե այդ կուտակումը մենք արդեն կատարում ենք:

Պետության բյուջեյի ծախսերն ստորաբաշխվում են այնպես, որ տնտեսական կարիքների վրա ընկնում ե $51\frac{1}{2}$%, այսինքն բոլոր ծախսերի կեսից ավելին, պաշտպանության վրա—16%, վարչական կուլտուրական կարիքների վրա—30%, և ազատ յեկամուտների $2\frac{1}{2}$% ել գտնվում ու հատկացվում ե 100 միլիոնանոց պահուստին (թե ինչու յե հարկավոր այդ պահուստը, մենք բացատրել ենք տասնեհինգերորդ զրույցում):

Պաշտպանության վրա մենք ծախսում ենք ընդամենը 16% ($4\frac{1}{2}$ անգամ պակաս, քան 1913 թ. ծախսվում եր ցարական բանակի վրա): Այդ գումարը, համեմատած բուրժուական պետությունների ծախսածի հետ, շատ ե քիչ: Բուրժուական յերկրներում պաշտպանության ծախսերը կազմվում են այն ծախսերից, որ ուղղակի գործադրվում ե պաշտպանության վրա և պարտքերի դիմաց կատարվող վճարումներից, պարտքերի, որ արված են ռազմական նպատակներով (զինվելու համար, պատերազմ մղելու համար և այլն): Յեվ ահա դուրս ե գալիս, որ Ամերիկայի Միացյալ Նահանգները միմիայն պարտքերի դիմաց վճարում ե բյուջեյի բոլոր ծախսերի 32%, Անգլիան—45%, Ֆրանսիան—58,5%: Վերջին յերկրում բանակին հատկացրած ուղղակի ծախսերը կազմում են 17,2%: Հետևաբար պարտքերի վճարումների հետ միասին Ֆրանսիան իր բյուջեյի յերեք քառորդից ավելին (75,7%) ծախսում ե ռազմական կարիքների վրա: Լեհական բյուջեյում բանակի ծախսերը կազմում են 33%: Յեվ այս բոլորից հետո ամբողջ աշխարհի բուրժուազիան—արտասահման վռնդված մենշևիկների ու դաշնակցականների հետ միասին—ճչում ե «կարմիր իմպերիալիզմի» մասին:

Պայքար բյուջեյի անդեֆիցիտության համար յեվ նրա նվաճումները, բյուջեն յեվ խնայողության ռեժիմը:

Մեր ֆինանսական քաղաքականության գլխավոր հաջողություններից մեկը անդեֆիցիտ (այսինքն առանց վնասի) բյուջեյի նվաճումն ե հանդիսանում: Այդ նվաճումն ահագին ե այն պատճառով, որ առանց դրան ստիպված պիտի լինեյինք դեֆիցիտը ծածկել թղթե փող տպագրելով, հետևաբար պիտի ջլատեյինք մեր դրամական բարենորոգումը և քայքայեյինք մեր ամբողջ ժողովրդական տնտեսությունը, քանի որ ընկնող թղթե փողը թույն ե, որ թունավորում ե ամբողջ ժողովրդատնտեսական օրգանիզմը: Առանց դժվարության չեր, որ մեզ հաջողվեց մեր ծախսերը լրիվին համապատասխանեցնել յեկամուտների հետ, որպեսզի առաջինների գերակշռում չլինի յերկրորդների հանդեպ: Դրա համար հարկ յեղավ դաժանորեն կրճատել բոլոր ծախսերը, բայց դա անել անհրաժեշտ եր դրամական ռեֆորմի և ամբողջ ժողովրդական տնտեսության վերելքի համար:

Յերկրի ինդուստրիալիզացիայի խնդիրը և մեր կողմից կիրառվող խնայողության ռեժիմը պահանջում են հետագայում ել բյուջեյի մեջ մեծագույն խնայողությունը գործադրել: Պետական ծախսերից պիտի վտարել այն բոլորը, ինչ ավելորդ ե, ինչ անհարկավոր ե, այն բոլոր ծախսերը, որոնք չեն բղխում անհետաձգելի անհրաժեշտություններից: Առանց դրան մեր յերկրի ինդուստրիալիզացիան իսկապես իրագործելու համար մենք անհրաժեշտ միջոցներ չենք ունենա և չենք կարող դրամական պահուստներ կազմել, որոնք անհրաժեշտ են մեզ նրա համար, որպեսզի հաղթահարել կարողանանք այն դժվարությունները, որ ծագում են մեր սոցիալիստական շինարարությունը ծավալելու պահուն:

Որպեսզի լավ յուրացվեն «Հարկային քաղաքականությունը ՆԵՊ-ի ժամանակ» և «Բյուջե» բաժինները, պատասխաններ տվեք հետևյալ հարցերին.

1. Ի՞նչ հարկային քաղաքականություն ե վարում Խորհրդային պետությունը մասնավոր կապիտալի նկատմամբ և ինչու յե վարում:

2. Ի՞նչ հարկային քաղաքականություն ե վարում Խորհրդային պետությունը գյուղում և ինչու յե վարում:

3. Ի՞նչ փոփոխություններ են մուծված 1926 թվականին գյուղատնտեսական հարկի սիստեմի մեջ:

4. Ի՞նչ թվական տվյալներ են բնորոշում մեր բյուջեյի եյությունը:

5. ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ՅԵՎ ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄԸ

Պետական ֆինանսավորում:

Պետական ֆինանսավորում—դա պետության կողմից դրամական միջոցների ծախսումն է՝ պաշտպանություն ցույց տալու ժողովրդական անտեսության այս կամ այն ճյուղին: Վերը, յերբ մենք խոսում եյինք բյուջեյի մասին, մենք մատնանշեցինք, թե տոկոսներով ինչպես են ստորաբաշխվում ԽՍՀՄ բյուջեյի ծախսերը: Անհրաժեշտ է ուշադրությամբ դիտել այդ թվանշանները: Մենք կտեսնենք այն ժամանակ, թե պետությունը ֆինանսավորում է արդյունաբերական շինարարությունն ու ելեկտրիֆիկացիան, գյուղատնտեսությունը, բնակարանային շինարարությունը, քաղաքների բարեշինությունը (կոմմունալ վարկերի միջոցով) և տեղական բյուջեն: Այլ խոսքերով՝ պետությունը ֆինանսավորում է սոցիալիզմի այն շինարարությունը, վոր ԽՍՀՄ բանվոր դասակարգն է կատարում դաշնակցած գյուղացիական մասսայի հետ:

Պետական արդյունաբերության, տրանսպորտի, կոոպերացիայի յեվ գյուղատնտեսության վարկավորումը:

Մենք վերը բերինք մի թվանշան, վոր ցույց է տալիս, թե ոսկու արժեքով այժմ մեզ մոտ շրջանառության մեջ է 1200 միլիոն ռուբլի:

Սակայն մեր դրամական-ապրանքային շրջանառությունն ավելի մեծ է, քան կարելի յե նրա մասին դատել 1200 միլիոն ոսկով ռուբլիներից, մի գումար, վոր ներկայացնում է շրջանառության մեջ գտնվող դրամների արժեքը: Մեր շրջանառությունն օգտագործում է վոչ միայն այդ դրամները, այլև վարկը:

Վարկային հիմնարկներին են պատկանում բանկերը և զանազան տեսակի վարկային ընկերությունները:

ՆԵՊ-ի որով առաջինը, վոր բացվեց մեզ մոտ (1921 թ. վերջին), Պետական բանկն եր, վորի հիմնարկելու նպատակն օրենքն այսպես է լուսաբանում.

«ՌԽՖՍՀ պետական բանկը հիմնարկվում է այն նպատակով, վոր վարկով և այլ բանկային օպերացիաներով նպաստե արդյունաբերության, գյուղատնտեսության և ապրանքաշրջանառության զարգացման, այլև այն նպատակով, վոր կենտրոնացնե դրամական շրջանառությունները և կիրառե այլ միջոցներ, վորոնք ուղղված են սահմանելու ճիշտ դրամական շրջանառություն»:

Պետբանկի կողքին մեզ մոտ այժմ գոյություն ունեն մի ամբողջ շարք այլ բանկեր, վորոնց կոչումն է սպասավորել ժողովրդական տնտեսության առանձին ճյուղերը: Այդ բանկերն են—Համամիութենական Կոոպերատիվ բանկ, Առևտրա-Արդյունաբերական բանկ, Ռուսաստանի Առևտրական բանկ, Արտաքին առևտրի բանկ, Գյուղատնտեսա-

կան բանկ: Բանկերից բացի գոյություն ունեն մի ամբողջ շարք վարկային ընկերություններ, վորոնցից շատերի մեջ մուծված է մասնավոր կապիտալ: Այդ վարկային ընկերությունների գործունեյությունը նույնպես նպաստում է ժողովրդական տնտեսության զարգացման: Այդ ընկերություններից, ինչպես մենք արդեն ասել ենք, առավել կարևոր են գյուղական վայրերի վարկային կոոպերատիվ ընկերությունները, վորոնք վարկով սպասավորում են գյուղացիությանը և ձգտում նրան ազատելու վաշխառու-կուլակի մագիլներից: Գյուղատնտեսության վարկավորմանը պետությունը տալիս է ահագին նշանակություն: Դա տեսնվում է նրանից, վոր Խորհրդային իշխանությունը 40 միլիոն ռուբլի յե բաց թողել Կենտրոնական Գյուղատնտեսական բանկի հիմնական կապիտալի համար:

ԽՍՀՄ Խորհուրդների III Համագումարը վորոշեց ավելացնել կենտրոնական և հանրապետությունների գյուղատնտեսական բանկերի միջոցները 100 միլիոն ռուբլով:

Այդ վորոշումը կատարելու համար 1925/26 թ. բյուջեյով գյուղատնտեսությանը բաց թողնվելիք գումարներից 77 միլիոն ռուբլի կերթա լրացնելու գյուղատնտեսական վարկի սիստեմի զանազան օղակների կապիտալները: Այդ 77 միլիոններից 10 միլիոն զատված է իբրև հատուկ ֆոնդ առանձնապես արտոնյալ պայմաններով վարկավորելու չքավորությանը:

Մեր վարկային սիստեմի զարգացումն ու աճումը տեսնվում են նրանից, վոր առ 1-ն հոկտեմբերի 1925 թ. ԽՍՀՄ վարկային գործառնությունների մեջ տեղավորած միջոցների ընդհանուր գումարը կազմում է 2 միլիարդ 800 միլիոն ռուբլի, այսինքն գերակշռում է շրջանառության մեջ գտնվող դրամների ամբողջ գումարը $2^{1}/_{2}$ անգամ:

Այդ աճման և վարկավորման ահագին դերի մասին են խոսում և այն գումարները, վոր վարկի ձևով ԽՍՀՄ խոշոր բանկերն (Արտաքին առևտրի բանկ, Առևտրա-արդյունաբերական բանկ, Պետական բանկ, Համամիութենական Կոոպերատիվ բանկ, Մոսկվայի քաղաքային) են տվել մեր ժողովրդական տնտեսության (միլիոն ռուբլիներով).

Առ 1-ն հոկտեմբերի 1924 թ.—859
» » » 1925 թ.—2065
» » ապրիլի 1926 թ.—2374

Թե ինչ օգնություն կարող է ցույց տալ վարկը, դա տեսնվում է գեթ նրանից, վոր առ 1-ն հունվարի 1926 թ. պետարդյունաբերությունն ընդամենն օժանդակություն ստացել է 1335 միլ. ռուբլի:

Արդյունաբերության վարկավորումից պակաս դեր չպիտի խաղա և գյուղատնտեսության վարկավորումը: Առ 1-ն հունվարի 1926 թ. գյուղատնտեսական վարկային սիստեմի միջոցով գյուղատնտեսությանն

ոժանդակություն է տրված 182 միլիոն ռուբլի: Այդ նշանակում է, թե գյուղի չքավորներն ու միջակները հնարավորություն են ստացել լրացուցիչ մի խոշոր գումար գործադրել իրանց տնտեսության վերականգնման վրա:

Կոոպերացիայի դերի ու նշանակության մասին մեր պայմաններում մենք արդեն առիթներ ենք ունեցել խոսելու: Հասկանալի յե, վոր կոոպերացիայի վարկավորումը նրան հնարավորություն է տալիս ավելացնելու իր ոպերացիաները, իր շրջանառությունները: Զորացնելով կոոպերացիան՝ մենք զորացնում ենք մեր տնտեսության սոցիալիստական սկզբունքները, և այս պատճառով այնքան կարևոր է կոոպերացիայի վարկավորման զորացումով ոգնել նրան ծավալվելու և աճելու: Կոոպերացիայի շրջանառությունների այն աճումը, ինչ մենք թվանշաններով հաստատեցինք նախորդ գրույցներում, խիստ նշանակալից չափով բացատրվում է վարկավորման զորացումով: Առ 1-ն հունվարի 1926 թվականի կոոպերացիայի ու առևտրի մեջ է մուծված 293 միլիոն ռուբլի:

Սոցիալիստական շինարարության նպատակների համար բնակչության ազատ միջոցների գրավման խնդիրը դեպի մեր վարկային հիմնարկները:

Վարկային գործի զարգացման բնագավառում ներկայիս մեր առաջ ծառացած է կարևորագույն խնդիր, վորի վրա մատնանշեց ԿԿ ապրիլյան (1926թ.) պլենումը, այն է՝ «գյուղացիական լայն մասսաների կողմից ապահովել ավանդների ու խնայողությունների ներհոսումը դեպի վարկային ու կոոպերատիվ սիստեմը»: Տվյալները ցույց են տալիս, վոր լայն աշխատավոր մասսաները փոքրիկ կուտակումներ ունեն: Ժողոված ու միատեղ հավաքած՝ նրանք կարող են պատկառելի գումար կազմել՝ ոգտագործվելու արտադրական ուժերի զարգացման գծով և յերկրի ինդուստրիալիզացիայի համար: Միևնույն ժամանակ դա ձեռնտու յե և կուտակման տիրոջ համար, վորը նրա միջոցներն ոգտագործող պետությունից տոկոսներ է ստանում: Թե ինչ մեծության կարող է հասնել կուտակումների ընդհանուր գումարը, դա տեսնվում է նրանից, վոր 1915 թվականին ցարական կառավարությունը խնայողական դրամարկղների միջոցով ժողովել է 2225 միլիոն ռուբլի:

Մանր գումարների ժողովման գործը մեզ մոտ դեռ վատթար վիճակ ունի: Առ 1-ն մայիսի 1926 թվականի Միության բոլոր դրամարկղների ավանդների մնացորդը կազմում էր ընդամենը 62 միլ. ռուբլի: Այն ժամանակ, յերբ խնայողական դրամարկղների քանակը համարյա կրկնապատկվել է հանդեպ նախապատերազմականի՝ ավանդները չեն հասել նախապատերազմյան գումարի և $3^0/_0$-ին: Ընդամին գյուղացիական ավանդները կազմում են նախապատերազմական ժամանակի

ավանդների մեկ տոկոսի $^1/_3$ մասից պակաս: Այնինչ հոկտեմբերյան հեղափոխությունն ազատագրել է գյուղացիներին ահագին վճարումներ անելու պետությանն ու կալվածատերերին: Ահա ինչու մանր կուտակումներ անպայման գոյություն ունեն, և մենք պետք է կարողանանք գրավել այդ կուտակումները դեպի մեր վարկային սիստեմը, վորպեսզի այն ոգտագործենք սոցիալիստական շինարարության գծով:

Վորպեսզի լավ յուրացվի «Պետական ֆինանսավորումը և վարկավորումը» բաժինը, պատասխաններ տվեք հետևյալ հարցերին.

1. Ինչումն է վարկի դերը ժողովրդական տնտեսության մեջ:
2. Ի՞նչ թվանշաններ են հաստատում Խորհրդային պետության կողմից սոցիալիզմի շինարարության ֆինանսավորումը և նույն այդ նպատակով ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի վարկավորումը:

6. ՖԻՆԱՆՍԱ-ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԸ ԽՍՀՄ-ՈՒՄ

Ֆինանսական քաղաքականությունն իբրև պրոլետարիատի գործիք տնտեսորեն հետամնաց յերկիրը դեպի կոմունիզմը առաջ շարժելու մեջ:

Խորհրդային պետության ֆինանսական քաղաքականության նույնիսկ համառոտ քննությունը ցույց է տալիս մեզ, թե այդ քաղաքականությունը պրոլետարիատի ձեռքին մի գործիք է հանդիսանում տնտեսորեն հետամնաց յերկիրը դեպի սոցիալիզմը առաջ շարժելու մեջ: Ինչպես վոր՝ և՛ դրամական ռեֆորմը, և՛ անդեֆիցիտ բյուջեն, և՛ գյուղացիական հարկի իջեցումը, և՛ հարկային քաղաքականությունը գյուղում ու մասնավոր կապիտալիստի նկատմամբ, և՛ ժողովրդական տնտեսության առանձին ճյուղերի վարկավորումը—այդ բոլորը պետությունը կիրառում է լիակատար համապատասխանություն պահպանելով իր քաղաքականության հիմնական նպատակի հետ—այն է՝ պահել ու ամրացնել բանվորների ու գյուղացիների դաշինքը և բարձրացնել ԽՍՀՄ վողջ ժողովրդական տնտեսությունը, հանելով նրան չքավորությունից ու քայքայումից և ուղղելով նրա զարգացումը չէ թե կապիտալիստական, այլ սոցիալիստական ուղիով: Տարբեր աղբյուրներից յեկամուտներ ստանալով, կենտրոնացնելով այն իր ձեռքերում՝ պետությունը հնարավորություն ունի ստացած միջոցներն ուղղելու այն կարիքների վրա, վորոնց բավարարումն ավելի շատ է ապահովում սոցիալիստական շինարարությունը: Պետությունը, որինակ, սահմանելով հարկերի այս կամ այն սիստեմը, հնարավորություն ունի ժողովրդական տնտեսության մի ճյուղից միջոցներ քաղելու և մյուսի վրա գործադրելու: Ամեն մի պետության ձեռքերում ֆինանսական հարկային քաղաքականու-

թյունը հանդիսանում է մի տնտեսական լծակ, վորը կարելի յե շրջել այս կամ այն կողմը։ Բուրժուական պետության մեջ այդ լծակը շրջված է ունևոր դասակարգերի կողմը, վոր դրամական միջոցներով աջակցություն է նրանց համար, աշխատավորների ճնշումն և իմպերիալիստական պատերազմների նախապատրաստումն։ Պրոլետարական պետության ձեռքում այդ լծակը շրջված է ծառայելու բանվորների ու գյուղացիների շահերին, շրջված է սոցիալիզմի շինարարության կողմը։

ՆՅՈՒԹԵՐ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. ՌՈՒԲԼՈՒ ԿԱՅՈՒՆԱՑՈՒՄԸ (ՍՏԱԲԻԼԻԶԱՑԻԱՆ)

... Նախ և առաջ կանգ կառնեմ մեր ֆինանսական սիստեմի և հռչակավոր ռուսական ռուբլու վրա։ Յես կարծում եմ, թե կարելի յե ռուսական ռուբլին հռչակավոր համարել հենց նրա համար, վոր այդ ռուբլիների քանակն այժմ կվադրիլիոնից գերազանցում է։ Դա յել մի բան է։ Դա աստղաբաշխական թվանշան է, և յես վստահ եմ, վոր այստեղ բոլորը չե, վոր գիտեն, թե ինչ է նշանակում այդ թվանշանը։ Բայց մենք այդ թվանշանները, այն ել տնտեսական գիտության տեսակետից, արդեն անչափ կարևոր չենք համարում. Զրոները կարելի յե ջնջել, և մենք արդեն այդ արվեստին, վորը տնտեսական տեսակետից նույնպես խիստ կարևոր չե, սակավ ինչ տիրացել ենք։ Յեվ յես վստահ եմ, վոր իրերի հետագա ընթացքում մենք այդ արվեստին ել ավելի կտիրենք։ Ինչ վոր իսկապես կարևոր է, դա ռուբլու կայունացման հարցն է։ Այդ հարցի վրա աշխատում են մեր լավագույն ուժերը, և այդ խնդրին մենք վերագրում ենք վճռական տնտեսական նշանակություն։ Կհաջողվի մեզ տևական ժամանակով, իսկ հետագայում ընդմիշտ, կայունացնել այդ ռուբլին,—նշանակում է մենք շահել ենք։

Այն ժամանակ բոլոր այդ աստղաբաշխական թվանշանները, այդ բոլոր տրիլիոններն ու կվադրիլիոնները—վոչինչ բան է։ Այն ժամանակ մենք կարող ենք մեր տնտեսությունն ամուր հիմքերի վրա դնել և հաստատ ղեկավարել։ Այդ հարցի առիթով յես կարող եմ ձեզ բերել բավականաչափ կարևոր ու վճռական փաստեր։ 1921 թվականին թղթի ռուբլու կայունության կուրսը շարունակվեց 3 ամսից պակաս։ Ընթացիկ 1922 թվականին այն դեռ չի ավարտվել, այդ ժամանակաշրջանը շարունակվել է 5 ամսից ավելի։ Յես յենթադրում եմ, թե դա արդեն բավ է։ Իհարկե, դա բավ չե, յեթե դուք մեզնից գիտական ապացույցներ եք ուզում, թե մենք ապագայում լրությամբ կլուծենք այդ հարցը։ Բայց դա ամբողջությամբ ու լրությամբ ապացուցել, իմ կարծիքով, առհասարակ անհնարին է։ Այն թվանշանները, վոր հաղորդեցի յես ձեզ, ցույց են տալիս, թե անցյալ տարվանից, յերբ մենք սկսել ենք նոր տնտեսական քաղաքականությունը, անցյալ տարվանից մինչև այսոր մենք արդեն սովորել ենք առաջ ընթանալ։ Յեթե մենք այդ սովորել ենք, ապա յես վստահ եմ, թե մենք կսովորենք այդ ուղիի վրա նվաճել այլ հաջողություններ, յեթե միայն մենք մի վորևե առանձին հիմարություն չանենք...

Չէ՞ վոր մենք մենակ ենք, մենք չե թե շատ անգամ, այլ մի անգամ ել չենք վորևե փոխառություն ստացել այն հզոր կապիտալիստական պետություններից մեկից, վորոնք այնքան «փայլունորեն» վարում են իրանց կապիտալիստական տնտեսությունը. վոչ մեկը նրանցից չի ոգնել մեզ. Վերսալի հաշտությամբ նրանք այնպիսի ֆինանսական սիստեմ են ստեղծել, վորից իրանք գլուխ չեն հանում։

Յեթե այդ մեծ կապիտալիստական պետություններն այդպես են տնտեսություն անում, ապա յես յենթադրում եմ, թե մենք, վոր հետամնաց ենք ու անուսում, կարող ենք, այնուամենայնիվ, գոհ լինել նրանով, վոր մենք նվաճել ենք կարևորագույնը—բարձրացրել ենք ռուբլու կայունացման հիմքը։ Դա ապացուցվում է չե թե վորևե թեորիական վերլուծությամբ, այլ գործնականով, իսկ այն յես համարում եմ ավելի կարևոր, քան բոլոր թեորիական դիսկուսիաները։ Գործնականն ել ցույց է տալիս, թե այստեղ մենք նվաճել ենք վճռական արդյունքներ, այն է՝ սկսում ենք տնտեսությունը համակերպել ռուբլու կայունացման ուղղությամբ, վոր վճռական նշանակություն ունի առևտրի համար, ազատ ապրանքաշրջանառության համար, գյուղացիների և մանր արտադրողների ահագին մասսայի համար...

(Վ. Ի. ԼԵՆԻՆ. Ճառ Կոմինտերնի IV կոնգրեսում)

2. ՄԵՐ ԲՅՈՒՋԵՆ—ԱՃՈՂ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵ ՅԵ

Մեր խորհրդային տնտեսությունը վերջին տարիներս մի շարք խոշոր հաջողություններ է արել։ Յեվ 1925/26 թ. պետական բյուջեն արտացոլում է այդ հաջողությունները։ Նա հանդիսանում է աճող տնտեսության բյուջե և այն ել խորհրդային տնտեսության։ Բայց նա արտացոլում է և այն բոլոր դժվարությունները, վորոնք այդ տնտեսությունն ունի։ Ֆինանսների բնագավառում այդ տնտեսական դժվարություններն առավել հիվանդագին են զգացնել տալիս իրանց։

Խորհրդային պետական տնտեսության բյուջեն հանդիսանում է մի պլան, վորով ղեկավարվում է խորհրդային բանվորա-գյուղացիական կառավարությունը, իրագործելով մեր յերկրում բանվորների ու գյուղացիների քաղաքականությունը։ Այս պատճառով բյուջեն մեզ ցույց

է տալիս—լավ է արդյոք տնտեսություն վարում Խորհրդային պետությունը, ուղի՞ղ, արդարացի՞ չե նա հավաքում պետական յեկամուտները և նրանցի՞ց արդյոք, վորոնցից վոր հարկավոր է, ուղի՞ղ, արդարացի՞ և տնտեսորե՞ն է նա արդյոք մասնատրում այդ յեկամուտները պետական զանազան կարիքների միջև:

Մենք գիտենք, վոր ներկա տարում համարյա մեր բոլոր տնտեսական պլանները մի անգամ չե, վոր յենթարկվեցին վերաքննության ու կրճատման:

Խորհրդային պետության բյուջեյի հետ, վորը, ինչպես հենց նոր միայն ասվեց, նույնպես տնտեսական պլաններից մեկն է հանդիսանում,—դա տեղի չունեցավ: Դա միակ տնտեսական պլանն է, վորը մշակման պրոցեսսում չե թե միայն կրճատման չենթարկվեց, այլ ընդհակառակը, նույնիսկ ընդարձակվեց:

Իր ամբողջի, իր թվի մեջ, ինչպես 1925/26 թ. բյուջեն գումար է տված ԽՍՀՄիության ԺԿԽ կողմից, նրա մեծությունը վորոշվում է չորս միլիարդ ռուբլի թվանշանով: Այնինչ դեռ վոչ այնքան վաղ, միայն յերկու տարի առաջ, 1923/24 թ., մեր բյուջեն գումար երտրվում 2 միլիարդ 300 միլիոն ռուբլի թվանշանով:

Այս կերպ յերկու անցած տարիների ընթացքում մեր բյուջեյի մեծությունն աճել է համարյա 75%-ով:

(Ն. Պ. ԲՐՅՈՒԽԱՆՈՎ. Պետական բյուջեն, եջ 3—4, ռուսերեն)

3. ՄԵՆՔ ՊԻՏԻ ԺՈՂՈՎԵՆՔ ԲՈԼՈՐ ԱԶԱՏ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՅԵՐԿՐԻ ԻՆԴՈՒՍՏՐԻԱԼԻԶԱՑԻԱՅԻ ՀԱՄԱՐ

Խորհրդային դրամարկղների աշխատանքի ուժեղացումը, խնայողական գործի պրոպագանդը, մանր ավանդների գրավումը դեպի խնայողական դրամարկղներ, վարկային ընկերություններ, կոոպերացիա,—դա մեր տնտեսության հետագա ամրացման ամենազորավոր լծակներից մեկն է: Այդ զորավոր լծակը կոգնե մեզ վերջիվերջո ավարտել մեր կայուն վալյուտայի և կայուն բյուջեյի ամրացումը:

Կայուն բյուջե չի կարող լինել առանց կայուն վալյուտայի, չի կարող լինել կայուն վալյուտա, յեթե գյուղացիների ու բանվորների լայն մասսաները վստահություն չեն տածում դեպի այդ վալյուտան: Յեթե մենք գյուղացիների ու բանվորների լայն մասսաների վստահությունը գրավենք, մեզ մոտ կհոսեն նրանց ավանդները, և մենք կարող կլինենք այն վերամասնատրել մեր պլանային առաջադրությունների համար:

Ներկայիս մենք սկսում ենք դրամի ավելցուկի գոյություն զգալ յերկրում: Մեր առաջ միաժամանակ ծառացած է մի անհրաժեշտություն—ուժեղացնել մեր արդյունաբերության, առևտրի և առհասարակ տնտեսության վարկավորումը: Մենք կարող ենք այդ կատարել միայն բնակչության իսկ մանր կուտակումների հաշվին, և վոչ մի դեպքում բյուջեյական ռեսուրսների, նոր չերվոնեցների թեթևամիտ եմիսսիայի հաշվին:

Վորպեսզի մեր արդյունաբերությունը հաղթահարե իր առաջ ծառացած աճման բոլոր դժվարությունները, վորպեսզի նրա մեջ նոր ֆինանսական ռեսուրսներ ներարկենք, մենք պիտի անցկացնենք գրոշների, մանր դրամի, ռուբլիների ժողովման մի ընդարձակագույն պլան, նպատակ ունենալով ոգտագործելու այդ դրամները մեր պլանավոր տնտեսության մեջ, ամրացնելու մեր կայուն վալյուտան այն մակարդակի վրա, ուր նա կանգնած եր դրամական ռեֆորմը կիրառելու մոմենտին և ուր նա համարյա չտատանվելով կանգնած է և ներկայիս:

Այդ տեսակետից բյուջեյի բնագավառում մեր առաջ առաջին հերթին ծառացած է պետական պահեստի ֆոնդեր կուտակելու խնդիրը և մեծագույն խնայողության, բյուջեյի ծախսական մասից ամեն մի անարտադրական և անհրաժեշտ պահանջների կողմից անարդարանալի ծախսերի վտարման խնդիրը: Իսկ այդպիսի ծախսեր բոլոր բնագավառներում մենք դեռ շատ ու շատ ունենք:

(Ն. Պ. ԲՐՅՈՒԽԱՆՈՎ. Պետական բյուջեն, եջ 52—53, ռուսերեն)

ԹԵՄԱՆԵՐ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Խմբակի մեջ համառոտ զեկուցում արեք այս թեմայով—«Խորհրդային պետության ֆինանսա-հարկային քաղաքականությունը—սոցիալիզմի շինարարության գործիք»: Զեկուցման մեջ ոգտագործեցեք ներկա գրույքի նյութերն ու թվանշանները:
2. Ձեր ձեռնարկության կողմից ընտրած խորհրդի անդամի աջակցությամբ ձեռք բերեք ձեր գավառի (քաղաքի) բյուջեն և մանրամասն քննեցեք, թե վորտեղից են ստացվում բյուջեյի յեկամուտները և ինչի վրա ծախսվում ժողոված դրամները: Ի՞նչ չափով է այդ բյուջեն ծառայում ամբողջ ԽՍՀՄ ընդհանուր նպատակին—սոցիալիզմի շինարարությանը:

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Ինչո՞ւմն է ռազմական կոմմունիզմի և ՆԵՊ-ի ժամանակաշրջանի ֆինանսա-հարկային քաղաքականության տարբերությունը:
2. Ինչո՞ւմն է արտահայտվում Խորհրդային պետության ֆինանսա-հարկային քաղաքականության դասակարգային բնույթը:
3. Ի՞նչ ձևով է, վոր մեր պրոլետարական պետության ձեռքին ֆինանսա-հարկային քաղաքականությունը գործիք է ծառայում տնտեսապես հետամնաց յերկիրը դեպի կոմմունիզմն առաջ շարժելու:

ԶՐՈՒՅՑ ՏԱՍՆԵՎՈՒԹԵՐՈՐԴ

ՆԵՊԸ ՅԵՎ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Եթե մենք չլուծենք այդ խնդիրը, յեթե մենք արհեստակցական միությունները չդարձնենք տասնապատիկ ավելի լայն մասսաների դաստիարակության օրգան, քան այժմ, մի օրգան, վոր առաջնորդում է դեպի անմիջական մասնակցությունը պետության կառավարչության մեջ,— այն ժամանակ մենք կոմմունիստական շինարարության գործը իր վախճանին չենք հասցնի։

ԼԵՆԻՆ

Ինչի՞ մասին է զրույցը։

Նախորդ զրույցներում մենք խոսել ենք սոցիալիզմի շինարարության մասին, վոր ԽՍՀՄ է վարում։ Վլադիմիր Իլյիչը մի անգամ չէ, վոր ընդգծել է, թե սոցիալիզմը կառուցել կարող են միայն միլիոնավորները։ Նման մի կազմակերպություն, վորի միջոցով սոցիալիզմի շինարարությանը լծակցվում են բանվորների միլիոնավոր մասսաները,— արհեստակցական միություններն են հանդիսանում։ Ահա ինչու ներկա զրույցի մեջ մեզ անհրաժեշտ է մանրամասն քննել արհմիությունների հարցը, նրանց խնդիրները Խորհրդային պետության մեջ նոր տնտեսական քաղաքականության պայմաններում, արհմիությունների ու կուսակցության փոխհարաբերությունը, կուսակցության կողմից արհմիությունները ղեկավարելու հարցերը։

1. ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՊ-Ի ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Պրոլետարիատի դասակարգային պայքարը և արհմիությունները մինչև իշխանության նվաճումը պրոլետարիատի կողմից։ Հիմնական տարբերությունը արհմիությունների դերի ու խնդիրների միջև կապիտալիզմի օրով և պրոլետարիատի դիկտատուրայի օրով։

Արհմիությունների դերը տարբեր է տարբեր շրջաններում. այլ է արհմիությունների դերը կապիտալիզմի օրով, այլ՝ պրոլետարիատի դիկտատուրայի օրով, յերբ դեռ քաղաքացիական պատերազմ է մղվում այդ դիկտատուրայի գոյության համար, և դարձյալ այլ, յերբ պրոլետարիատը պահպանել է իր իշխանությունը և զբաղված է սոցիալիզմի շինարարությամբ։

Մինչև իշխանության նվաճումը պրոլետարիատի կողմից, մինչև կապիտալիստական սեփականության վոչնչացումը վարձու բանվորների դասակարգը պայքար է մղում սեփականատեր-կապիտալիստ դասակարգի հետ։ Բանվոր դասակարգը հարկադրված է պայքար մղելու այն շահագործության պատճառով, վորին նա յե յենթարկվում կապիտալիստական հասարակության մեջ (դրա մասին մենք խոսել ենք հինգերորդ զրույցում)։

Իր պայքարի փորձից բանվոր դասակարգը համոզվել է, թե այդ պայ-
քարը նա կարող է մղել միայն կազմակերպված, կոլլեկտիվ ձևով։ Նման
պայքարի անհրաժեշտության գիտակցությունն էլ առաջնորդում է դեպի
արհմիությունների ստեղծումը։

Սկզբում բանվոր դասակարգի պայքարը տնտեսական բնույթ էր
կրում։ Բանվոր դասակարգը միանգամից չէ, վոր ըմբռնեց, թե նա
պետք է քաղաքական պայքար մղի, իշխանությունը գրավելու պայ-
քար, վորպեսզի վերջնականապես վոչնչացնի կապիտալիզմը և նրա
հետ կապված շահագործումը։ Իրանց ծագման իսկ օրից արհմիություն-
ներն էլ պրոլետարիատի դասակարգային կազմակերպություններ էին,
նպատակ ունենալով միասին տնտեսական պայքար մղել, պայքար
բանվորական ուժը ձեռնտու պայմաններով վաճառելու համար, բան-
վորների աշխատանքի ու կյանքի պայմանները բարելավելու համար։
«Այդ պայքարն ըստ անհրաժեշտության արհեստակցական պայքար է
հանդիսանում, վորովհետև աշխատանքի պայմանները ծայրահեղորեն
զանազանակերպ ու տարբեր են այլ և այլ արհեստներում և, հետևա-
բար, այդ պայմանների բարելավման համար մղված պայքարը չի կա-
րող ըստ արհեստների չտարվել» (Լենին)։

Արհմիությունների նշանակությունն իրանց ծագման պահուն իսկ
ահագին էր։

«Արհմիությունները,— գրում էր Վլադիմիր Իլյիչը,— կապիտալիզ-
մի զարգացման սկզբում բանվոր դասակարգի հսկայական առաջադի-
մությունն էին, իբրև բանվորների փոշիացումից ու անօգ վիճակից
անցումն դեպի դասակարգային միավորման սաղմերը»։

Միավորելով բանվորներին կազմակերպված պաշտպանություն
ցույց տալու նրանց տնտեսական շահերին՝ արհմիությունները կապի-
տալիզմի օրով հանդիսանում են դասակարգային պայքարի դպրոց։
Բայց դասակարգային պայքարը, ինչպես մենք արդեն գիտենք մեր
բանվորական շարժման պատմությունից, անխուսափելիորեն վերա-
փոխվում է քաղաքական պայքարի։ Բանվոր դասակարգն այդ չի կա-
րող անգիտանալ։

Յեվ արհմիությունները կապիտալիզմի օրով չեն կարող և վոչ մի
կերպ չպիտի սահմանափակվեն միայն տնտեսական պայքարով։ Նրանք
պարտադրաբար պիտի մասնակցեն քաղաքական պայքարի մեջ, պետք
է ձեռք ձեռքի տված կոմմունիստական կուսակցության հետ, նրա
ղեկավարությամբ պայքարեն կապիտալիզմի դեմ, պայքարեն նրա
վախճանական տապալման ու իշխանությունը բանվոր դասակարգի
ձեռքն անցկացնելու համար։ Կապիտալիզմի օրով արհմիությունների
դերի ու նշանակության վորևէ այլ մեկնություն, վորևէ մեկնություն,
վորը ձգտում է նրանց դերը վերածել միայն տնտեսական պայքարի,

վնասակար է բանվոր դասակարգի համար և նրա դասակարգային թշնամիների ոգտին է գնում։ Դա հայտնի յե այնպիսի յերկրների որինակից, ինչպիսին Անգլիան է։ Այնտեղ արհմիությունների գլխին, հազվադեպ բացառություններով, դեռ մինչև օրս էլ կանգնած են օպպորտյունիստները, համաձայնողականները։ Նրանք ներշնչում են բանվորներին, թե արհմիությունների գործը չէ պայքարել իշխանության համար, և յերբ տնտեսական պայքարը հանգում է նրան, որպեսզի քաղաքական հեղափոխական պայքարի վերափոխվի, նրանք ջլատում են այն և մատնում բանվորներին։ Այդպես յեղավ Անգլիայի ընդհանուր գործադուլի հետ 1926 թվականի մայիսին, և մենք բոլորս գիտենք, թե այն ժամանակ ինչով փակվեց այդ։

Բանվորների կողմից իշխանությունը գրավելուց և պրոլետարիատի դիկտատուրայի սկիզբը դնելուց հետո արհմիությունների դերն արմատականորեն փոխվում է։

Ահա, որինակ, 1919 թ. ինչ է ասել այդ մասին Լենինը արհմիությունների յերկրորդ համագումարում.

«Իսկ քաղաքական իշխանությունը պրոլետարիատի ձեռքն անցնելուց հետո **արհեստակցական միությունները ավելի ու ավելի պիտի հանդես գան նոր հասարակության շինարարների դերում**, հասարակության, որի կազմակերպությունը պիտի փոխարինի առաջվա շահագործող դասակարգին, բոլոր հին ավանդություններին և հին գիտության նախապաշարմունքներին։

Արհեստակցական միությունները մեծագույն հեղաշրջման հետ միասին, որ տեղի ունեցավ պատմության մեջ, յերբ պրոլետարիատն իր ձեռքն առավ պետական իշխանությունը, կրում են մեծագույն բեկումն իրենց ամբողջ գործունեության մեջ։ **Նրանք դառնում են նոր հասարակության գլխավոր ստեղծագործողները, վորովհետև այդ հասարակության ստեղծագործողները կարող են լինել միայն բազմամիլիոն մասսաները**, ինչպես հարյուրավորներն էին ստեղծագործողները ճորտատիրական իրավունքի ժամանակաշրջանում, ինչպես հազարավորներն ու տասնյակ հազարավորներն էին կառուցում պետությունը կապիտալիզմի ժամանակաշրջանում։ Այժմ այդպես միայն կարելի յե անել սոցիալիստական հեղաշրջումը, յերբ պետության կառավարչության մեջ ակտիվորեն, անմիջական գործնականությամբ տասնյակ միլիոնավորներն են մասնակցում»։

Հետևաբար, **արհմիությունները, վորոնք կապիտալիզմի օրով պիտի պայքարեն կործանելու հին հասարակությունը, պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակաշրջանում պիտի ավելի ու ավելի հանդես գան նոր հասարակության շինարարների դերում**։ Նոր հասարակության կառուցումն այնքան բարդ է, պահանջում է այնպիսի կազմակերպություն,

որ միայն բազմամիլիոն մասսաները և ամենից առաջ արհմիությունների մեջ միավորված մասսաները կարող են անմիջական գործոն մասնակցություն բերելով այդ շինարարությանը, կոմմունիստական կուսակցության ղեկավարության ներքո, իրագործել այդ խնդիրը։

Նոր հասարակության կառուցման համար բազմամիլիոն մասսաներն իրենք էլ պիտի շատ բան սովորեն, պիտի վերադաստիարակվեն։ Ցեվ մասսաների այդ վերադաստիարակման խնդիրը և նրանց նախապատրաստումը կառավարչության համար պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակաշրջանում պիտի արհմիությունները կատարեն։ Նրանք պիտի կոմմունիզմի դպրոց լինեն։

Արհմիությունները ռազմական կոմմունիզմի ժամանակաշրջանում յեվ նրանց դերի փոփոխումը ՆԷՊ-ին անցման ժամանակ։

Քաղաքացիական պատերազմի ծանր պայմանները նշանակալից չափով խանգարում էին, որ արհմիություններն իրագործեն արհմիությունների մեջ միլիոնավոր մասսաներ գրավելու տնտեսական շինարարությունը։ Արհմիությունները պիտի իրենց անդամներին ռազմաճակատները և պարենմասնատրման խմբերն ուղարկեին։ Այսպես, օրինակ, 1919 թվականին զորակոչերն արհմիություններից խլեցին 80,000 մարդ։ Արհմիությունները ռազմաճակատին էին տալիս իրենց լավագույն ուժերին, և գործը նրան էր հասնում, որ արհմիությունների շատ վարչություններ մի շարք ամիսների ընթացքում մնում էին առանց նախագահների ու քարտուղարների։

ՆԷՊ-ին անցնելու հետ միասին այդ դրությունը պիտի փոխվեր։

Իսպառ պատահական չէր, որ այդ ժամանակ կուսակցության առաջ ծառացավ արհմիությունների դերի ու խնդիրների հարցը։ Նախորդ գլուխներից մենք արդեն գիտենք, թե ինչ ծանր ժամանակ էր դա։ Գոյություն ունեցող տնտեսական կրիզիսը մի ամբողջ շարք ահագին դժվարություններ էր ստեղծել։ Կազմավորվել էր և մի տեսակ անջատում բանվոր դասակարգի ավանգարդի, նրա կուսակցության և նրա հետամնաց շերտերի միջև։ Այդպիսի անջատում էլ կազմավորվել էր բանվոր դասակարգի և գյուղացիական մասսաների միջև։ Այդ անջատումն արագորեն մաշելու համար, ինչպես Վլադիմիր Իլյիչն էր ընդգծում, հարկավոր էին «մասսային մտնելու, մասսային տիրելու, մասսայի հետ կապվելու» նոր մեթոդներ։ Որպեսզի հնարավոր լինի ուղիղ մտնել մասսային, տիրել մասսային, կապվել մասսայի հետ, հարկավոր էր և ուղիղ լուծել բանվորական մասսայական կազմակերպությունների—արհմիությունների—դերի ու խնդիրների հարցը նոր պայմաններում։

Դիսկուսիա արհմիությունների մասին և թեքումներ վերաբերմունքի ու գիզ գծից ՆԷՊ ին անցնելու ժամանակաշրջանում։ Լենինի և կուսակցության պայքարը նրանց հետ, պայքար արհմիությունները կոմմունիզմի դպրոց ճանաչելու համար։

Այդ ել հենց չեյին կարող անել կուսակցության մեջ ստեղծված այն ոպպոզիցիոն խմբավորումները, վորոնք հանդես եյին գալիս Վլադիմիր Իլյիչի և նրա ուսմունքի դեմ արհմիությունների մասին։ Վլադիմիր Իլյիչն ուսուցում եր, թե կուսակցությունն իր ազդեցությունն իրագործում է խորհուրդների միջոցով, արհմիությունների և այլ մասսայական կազմակերպությունների միջոցով։ Դրանք կուսակցությունից դեպի մասսաները տանող շարժաբեր փոկերն են։

«Քաղաքական իշխանության նվաճումը պրոլետարիատի կողմից,— ուսուցում եր Լենինը,— դա պրոլետարիատի՝ իբրև դասակարգի՝ հսկայական մի քայլն է ընդառաջ, և կուսակցությունը հարկադրված է ել ավելի և ըստ նորի, այլ վոչ միայն ըստ հնի, դաստիարակել արհմիությունները, ղեկավարել նրանց, դրա հետ միասին, սակայն, չմոռանալով, թե նրանք մնում են և յերկար կմնան անհրաժեշտ «դպրոցը կոմմունիզմի» և նախապատրաստական դպրոց պրոլետարների կողմից իրանց դիկտատուրան իրագործելու համար, բանվորների անհրաժեշտ մի միավորում, վորպեսզի մշտապես բանվոր դասակարգի (այլ վոչ թե նրա առանձին պրոֆեսիաների) և ապա բոլոր աշխատավորների ձեռքն անցնի յերկրի ամբողջ տնտեսության կառավարությունը»։

Այսպիսով ընկ. Լենինը նախ և առաջ հանձին արհմիությունների տեսնում եր բանվորական մասսաների միավորում, վորոնց վրա յե կռթնում պրոլետարիատի դիկտատուրան։ Այս պատճառով ել 1921 թվականին, յերբ X համագումարի նախորեյին կուսակցության մեջ վեճ եր գնում արհմիությունների դերի ու խնդիրների մասին, նա ասում եր.

«Արհմիությունները պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմում իրանց բռնած տեղով կանգնած են, յեթե կարելի յե այսպես արտահայտվել, կուսակցության և պետական իշխանության միջև։ Սոցիալիզմին անցնելիս անխուսափելի յե պրոլետարիատի դիկտատուրան, բայց այդ դիկտատուրան չի իրագործվում արդյունաբերական բանվորների գլխովին կազմակերպությամբ։ Ստացվում է այսպիսի մի բան, վոր կուսակցությունը, այսպես ասած, իր մեջ է ամփոփում պրոլետարիատի ավանգարդը, և այդ ավանգարդն իրագործում է պրոլետարիատի դիկտատուրան։ Չունենալով այնպիսի պատվանդան, ինչպես արհմիությունները, չի կարելի դիկտատուրա իրագործել, չի կարելի պետական գործառնություններ կատարել։ Իսկ իրագործել դրանք

ստիպված ենք դարձյալ ինչ-վոր նոր տիպի մի շարք առանձին հիմնարկների միջոցով, հայտնապես խորհրդային ապպարատի միջոցով»։ Գործնական յեզրակացությունների տեսակետից ինչո՞ւմն է այդ դրության ինքնորինակությունը։ Նրանում, վոր արհմիություններն ստեղծում են ավանգարդի կապը մասսաների հետ, արհմիություններն առորյա աշխատանքով համոզում են այն դասակարգի մասսաներին, վորը միայն ի վիճակի յե մեզ կապիտալիզմից կոմմունիզմին անցկացնել։ Դա մի կողմից։ Մյուս կողմից՝ արհմիությունները պետական իշխանության «ռեզերվուարն» են։ Ահա ինչ են արհմիությունները մի ժամանակաշրջանում, վոր անցումն է կապիտալիզմից դեպի կոմմունիզմը»։

Այլ կերպ եյին նայում այս բանին մյուս ընկերները՝ գլուխ ունենալով ընկ. Տրոցկուն։ Թերագնահատելով արհմիությունների դերն ու խնդիրներն իբրև պրոլետարիատի դիկտատուրայի հիմք և իբրև կոմմունիզմի դպրոց՝ նրանք առաջադրում եյին արհմիությունների «պետականացումը», արհմիությունների միաձուլումը պետական (տնտեսական) ապպարատի հետ, այսինքն տնտեսական որգանների հասարակ կցան դարձնելը նրանց։ Յեվ փոխարեն նրան, վոր արհմիությունները, իբրև մասսայական կազմակերպություններ, ղեկավարություն ըստանան կուսակցության կողմից, ղեկավարություն՝ բանվորական մասսաները դաստիարակելու, նրանց գործունեյությունը զարգացնելու նպատակով, ընկ. Տրոցկին հանձնարարում եր արհմիություններին հրամայելու, հուպ տալու, թափահարելու քաղաքականություն։ Այլ կերպ ասած՝ ընկ. Տրոցկին առաջարկում եր արհմիությունների նկատմամբ կիրառել ռազմական հրամանավորման մեթոդները։

Պարզ է, վոր ընկ. Տրոցկին և նրանք, վորոնք այն ժամանակ համամիտ եյին նրա հայացքներին, տարակարծության մեջ եյին կուսակցության և ընկ. Լենինի հետ և ընկ. Լենինի ուսմունքի հետ դիկտատուրայի մասին։ Չե թե պետք է արհմիությունները «միաձեցնել» պետական ապպարատի հետ և հրամայել նրանց, այլ նրանց պահել պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմում, ինչպես ընկ. Լենինն եր ասում, «կուսակցության և պետական իշխանության միջև», և ձեռնհասորեն ղեկավարել նրանց բանվորական մասսաների կարիքներն սպասավորելու աշխատանքում, այդ մասսաներին սոցիալիստական շինարարության մեջ գրավելու գործում, նրանց կոմմունիստական դաստիարակության խնդրում։

Պրոլետարիատի դիկտատուրայի համար ել ավելի վտանգավոր եյին հանդիսանում մյուս ոպպոզիցիոն խմբակի, այսպես կոչված «բանվորական ոպպոզիցիայի» հայացքներն արհմիությունների հարցի առթիվ։ Այդ խմբակը կուսակցության X համագումարի առաջ պաշտպա-

նում էր ժողովրդական տնտեսության կազմակերպության ու կառավարչության ամբողջ գործի անցումը արհմիությունների ձեռքը։ Խմբակի ղեկավարներն առաջադրում էին տնտեսության կառավարչության «միութենացնելու» լոզունգը։ Նրանք առաջարկում էին, որպեսզի արհեստակցական արտադրական միությունների մեջ միավորված արտադրողների համագումարում ընտրվի կենտրոնական օրգան, որը երկրի ողջ ժողովրդական տնտեսության կառավարչությունն ստանձնի։ Եթե ընդունվեր այդպիսի մի առաջարկ, ապա դա կնշանակեր 1) Խորհրդային իշխանության հրաժարեցումը տնտեսական կառավարչությունից և 2) կուսակցության ղեկավարության վերացումը տնտեսական շինարարությունից։ Եվ բացի դրանից որովհետև «արտադրողների» կազմի մեջ մտնում են ոչ միայն բանվորները, այլ և մանր ինքնուրույն տնտեսատերերը, մանր բուրժուազիան, որն իր թվական մեծությամբ գերակշռում է մեր երկրում, ապա բանվորական օպպոզիցիայի առաջարկի ընդունումը մեր ժողովրդական տնտեսությունը, մեր պետական արդյունաբերությունը կհանձներ մանր բուրժուազիայի ձեռքը։ Պարզ է, որ «բանվորական օպպոզիցիայի» առաջարկն սպառնում էր ոչնչի վերածել պրոլետարիատի դիկտատուրան։

Կուսակցության X համագումարը դատապարտեց երկու հոսանքը և մատնանշեց, թե կյանքում կիրառել ընկ. Տրոցկու և մյուսների առաջարկած միջոցներն արհմիությունների նկատմամբ՝ ասել է «քաղաքական սխալ» կատարել, իսկ կյանքի մեջ կիրառել «բանվորական օպպոզիցիայի» առաջարկած միջոցները՝ կնշանակե «քաղաքական վտանգ նյութել պրոլետարիատի իշխանությունը պաշտպանելու գործում»։

Համագումարը բանաձև հանեց «Արհմիությունների դերի ու խնդիրների մասին» հարցերի առթիվ, որն ամբողջությամբ հիմնված էր լենինիզմի պրոլետարիատի դիկտատուրայի նկատմամբ և կուսակցության, պետության ու աշխատավորների լայն մասսայի փոխհարաբերությունների մասին ունեցած ուսմունքի վրա։

Կուսակցության X յեվ XI համագումարները արհմիությունների դերի մասին ՆԷՊ-ի առաջին շրջանում։

Իր բանաձևի մեջ X համագումարն արհմիությունների կարևորագույն դերը ճանաչեց նրանց իբրև կոմմունիզմի դպրոցի դերը։ Ահա X համագումարի բանաձևի այդ մասը (այն պիտի հայտնի լինի յուրաքանչյուր կուսակցականի և արհմիության յուրաքանչյուր անդամի)․ «Խորհրդային Ռուսաստանում արհեստակցական միությունների կարևորագույն դերն է մնում նրանց իբրև կոմմունիզմի դպրոցի դերը։

Միայն այն արհեստակցական միությունը, վորը թե ֆաբրիկում յեվ թե նրանից դուրս սիստեմատիկորեն հոգում է բանվորի կյանքի ու կենցաղի բոլոր կողմերի մասին, միայն նա կարող է հանդիսանալ կազմակերպչական հմտությունների յեվ քաղաքական դաստիարակության սկզբնական դպրոցը աշխատավորների ամենալայն յեվ անգամ հետամնաց մասսաների համար։

Արհեստակցական միությունների անդամների (6.970.000 անդամ, որոնցից կուսակցության անդամները միայն մոտ կես միլիոն)* գլխավոր մասսան անկուսակցականներն են հանդիսանում։ Կոմմունիզմը կառուցվում է մարդկային այն նյութերից, որ կապիտալիզմն է ժառանգություն թողել մեզ։ Խորհրդային Ռուսաստանում արհեստակցական միություններն աստիճանաբար դառնում են մի կազմակերպություն, որ գլխովին ընդգրկում է բոլոր բանվորներին։ Արհեստակցական միությունները կազմակերպում են աշխատավորների այն տարրերին, որոնք կապիտալիզմի որով հաճախ մասսայորեն խորթ են մնացել պրոլետարական ընտանիքին (նախկին առևտրական ծառայողներ, հիվանդանոցների աշխատավորներ, արվեստի մշակներ և այլն)։ Այդ բոլոր տարրերի վերամշակումը, նրանց մերձեցումը պրոլետարիատի առաջավոր շերտերի հետ, նրանց հարմարեցնելը կոմմունիստական հասարակության կառուցման գործին հանդիսանում է արհեստակցական միությունների՝ իբրև կոմմունիզմի դպրոցի՝ կարևորագույն խնդիրներից մեկը։

Իր այդ խնդիրները հաջողությամբ իրագործելու համար արհմիությունները նախ և առաջ պիտի դառնան կազմակերպություններ, որոնց մեջ առանձին անդամը հանդիսանում է իր միության ընդհանուր կյանքի գիտակից ու ակտիվ մասնակիցը։ Արհեստակցական միությունները, իբրև կոմմունիզմի դպրոց, պիտի սպասավորեն աշխատող մասսաների առօրյա կյանքի բոլոր կողմերը, աստիճանաբար լծակցելով աշխատավորների ամենալայն շերտերը պետական շինարարության գործին, միշտ լուսավորելով նրանց ուղին մեր ծրագրի գաղափարներով, ղեկավարելով նրանց մասնավորից դեպի ընդհանուրը, աստիճանաբար անկուսակցականությունից դեպի կոմմունիզմը բարձրացնելով նրանց»։

X համագումարի այս ցուցմունքներից մենք արդեն տեսնում ենք, թե արհմիությունները պիտի սպասավորեն բանվորների առօրյա կյանքի բոլոր կողմերը, բանվորական մասսայի բոլոր նյութական ու կուլտուրական շահերը։ Միայն այդ պայմանով արհմիությունները կարող են իրանց ներսում համախմբել բանվորների ամենալայն շերտերը և նրանց կոմմունիստորեն դաստիարակել։ ՆԷՊ-ի զարգացումով արհմիությունների աշխատանքի այդ կողմը (բանվորների առօրյա շահերի սպասավորումը) պիտի ստանա առավել մեծ նշանակություն։ Դա ընդգծվեց կուսակցության XI համագումարում, արհեստակցական միությունների մասին նրա Լենինի գրած բանաձևում։ Նրա մեջ մաս-

* Այս թվանշանները վերաբերում են 1921 թվականի սկզբին, երբ X համագումարն էր հանում այդ բանաձևը։

նանշվում էր արհմիությունների պարտականությունը ՆԷՊ-ի որով պաշտպանելու բանվորների շահերը։

ՆԷՊ-ին անցնելու հետ միասին պետական ձեռնարկությունները տնտեսավարական հաշվի փոխանցվեցին։

«Այդ հանգամանքը,—ասում է կուսակցության XI համագումարի բանաձևը,—հարակից այն հրամայական անհրաժեշտության, որ պետք է բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, առանց վնասի ու շահավետ դարձնել յուրաքանչյուր ձեռնարկություն, հարակից անխուսափելի վարչական շահի և վարչական ջանասիրության չափազանցման հետ անխուսափելիորեն ծնունդ է տալիս ձեռնարկության մեջ՝ աշխատանքի պայմանների հարցերի առթիվ շահերի հակադրության բանվորական մասսայի և պետական ձեռնարկությունները կառավարող դիրեկտորների կամ այն վարչությունների միջև, որոնց նրանք պատկանում են։ Այս պատճառով սոցիալիզացիայի յենթարկված ձեռնարկությունների նկատմամբ արհմիությունների վրա անպայման պարտականություն է ընկնում պաշտպանելու աշխատողների շահերը, ըստ հնարավորության նպաստելու նրանց նյութական կենցաղի բարձրացման, միշտ ուղղելով տնտեսական օրգանների սխալներն ու չափազանցումները, որ չափով նրանք բխում են պետապարատի բյուրոկրատական խեղաթյուրումից»։

Սա պետական ձեռնարկությունների նկատմամբ։ Ինչ վերաբերում է մասնավոր ձեռնարկություններին, ապա նրանց մասին XI համագումարի բանաձևն ասում է, թե այստեղ արհմիության գլխավոր խնդիրներից մեկն է հանդիսանում պրոլետարիատի դասակարգային շահերի բազմակողմանի և բոլոր միջոցներով պաշտպանությունը և պայքարը կապիտալիզմի դեմ։

Պաշտպանելով բանվորների շահերը՝ արհմիությունները XI համագումարի ցուցմունքներով պետք է այդ նույն ժամանակ առաջվա պես մնան «սոցիալիստական արդյունաբերության (իսկ ապա աստիճանաբար հողագործության) կառավարչության դպրոց բանվորների ամբողջ մասսայի, իսկ ապա և բոլոր աշխատավորների համար»։ Համագումարը մատնանշեց և հիմնական ձևերը, որով արհմիությունները մասնակցություն պիտի բերեն պրոլետարական պետության տնտեսական ու պետական օրգաններին։ Դա հետևյալն է. 1) արհմիությունների մասնակցությունը էկոնոմիկայի հետ կապված բոլոր տնտեսական ու պետական օրգանների կազմավորման մեջ, ինչի համար արհմիություններն իրանց թեկնածուներին են առաջ քաշում, 2) վարչական անձանց առաջքաշումը և նախապատրաստումը բանվորներից և աշխատավոր մասսաներից առհասարակ, 3) մասնակցություն պետության բոլոր պլանավոր օրգանների մեջ և 4) մասնակցություն պետական օրգաններում, որոնք կարգավորում են մասնավոր կապիտալիստական արտադրությունը։

Արհմիությունների դերի ու խնդիրների փոփոխումը հարակից ՆԷՊ-ին անցնելու հետ պիտի փոփոխեր և նրանց աշխատանքների ձևերը։ Ռազմական կոմունիզմի ժամանակաշրջանում արհմիության անդամագրվելը կատարվում էր մեխանիկորեն, ձեռնարկությունը կամ հիմնարկն աշխատանքի մտնելու հետ միաժամանակ։ Այն պարտադրական էր։ Անդամավճարն ինքնուրույնաբար չէր վճարվում արհմիությունների անդամների կողմից, այլ բոլոր աշխատավորների դիմաց ձեռնարկության կամ հիմնարկի կողմից էր մուծվում միանգամից։ Հասկանալի յե, որ այդ բոլորն ամենևին չէր նպաստում, որպեսզի ամրանա կապն արհմիությունների ու նրանց անդամների միջև։ Ընդհակառակը, դա կապը զուտ մեխանիկական էր դարձնում։ Այս պատճառով կուսակցության XI համագումարն էլ հրահանգ տվեց արհմիություններում կամավոր անդամակցության անցնելու։ Ընդսմին համագումարն ընդգծեց, թե արհմիությունները մտնողներից չի կարելի պահանջել որևէ որոշ քաղաքական համոզմունք, այլ միայն «ընկերական կարգապահության և բանվորական ուժերի միավորման անհրաժեշտության ըմբռնումը, որով պաշտպանել պետք է աշխատավորների շահերը և օգնություն հասցնել աշխատավորների իշխանության»։

Արհմիությունների մասին ընդունած XI համագումարի բանաձևում գերազանցորեն կարևոր են հանդիսանում այն ցուցմունքները, որ վերաբերում են մասսաներին մոտենալու մեթոդներին։ Համագումարը մատնանշեց, թե արհմիությունների հաջող աշխատանքի համար բավ չէ նրանց խնդիրների ուղիղ ըմբռնումը և արհմիությունների ուղիղ կառուցումը. «անհրաժեշտ է նաև առանձին տակտ, յուրաքանչյուր առանձին դեպքում մասսաներին առանձին ձևով մոտենալու հմտություն, նվազագույն բախումներով առաջնորդելու այդ մասսաների վերելքը մի աստիճան բարձր կուլտուրական, տնտեսական, քաղաքական տեսակետից»։

Այս կերպ արդեն XI համագումարի բանաձևն է հիմք դրել այն արհմիութենական դեմոկրատիայի, որի նշանակությունը, ինչպես մենք կտեսնենք, առանձին ուժով ընդգծված է XIV համագումարի կողմից։

X յեվ XI կուսհամագումարների կողմից արհմիությունների խնդիրների ու աշխատանքի մասին յեղած ցուցմունքների իրագործումը ՆԷՊ-ի առաջին շրջանում։

Արհմիությունների դերի ու խնդրի փոփոխության հետ հարակից XI համագումարն անհրաժեշտ գտավ կոմունիստական ուժերով ամրացնել արհմիությունները, «որպեսզի այդ կերպ իրագործվի առավելագույն կապն անկուսակցական պրոլետարական մասսաների հետ և ստեղծվի արհմիությունների աշխատանքի կոմունիստական գծի կուռ և անհողդողդ ունակություն»։ Արդեն 1922 թվականի կուսակցական կոնֆերենցիան էր, որ մատնանշեց, թե գործնականն ամբողջությամբ հաստատեց XI կուսհամագումարի գծի ճշտությունը արհմիությունների

հարցի նկատմամբ: Կամավոր անդամակցության անցումը և շտատների հետ կապված պետական ապարատի վերակազմությունն զգալիորեն նվազեցրին արհմիությունների անդամների թիվը: Սակայն ժողովրդական տնտեսության վերելքի հետ արհմիությունները նորից սկսեցին իրանց շարքերը գրավել անդամների նոր մասսաներ: Արհմիությունները միանգամայն վերկառուցեցին իրանց տարիֆ տնտեսական աշխատանքը (կոլլեկտիվ պայմանագրերով ընդգրկեցին իրանց անդամների վողջ մասսան, մշակեցին տարիֆային ցանցեր և այլն): Նրանք աշխատանք ծավալեցին սպասավորելու իրանց անդամների կուլտուր-լուսավորական կարիքները, պաշտպանելու նրանց առողջությունը և բարելավելու նրանց կենցաղը (սանատորիաներ, հանգստի տներ, բնակարանային շինարարություն և այլն):

Մեծ աշխատանք կատարեցին արհմիությունները տնտեսական օրգանների հետ միասին աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու համար: Արհմիությունների անտարակուսելի խոշոր հաջողությունները նրանց աշխատանքի բոլոր բնագավառներում ճանաչվեցին կուսակցության ԿԿ աշնան (1925 թ.) պլենումի կողմից:

Սակայն նույն այդ պլենումն ընդունեց, թե ծանրաբեռնված գանազան աշխատանքով՝ պատահել է, վոր արհմիությունները միակողմանիություն են արտահայտել և յերկրորդ պլանին մղել իրանց «կարեվորագույն ու գլխավորագույն խնդիրները—պաշտպանել իրանց կողմից միավորած մասսաների տնտեսական շահերը և բոլորանվեր աշխատանք տանել՝ բարձրացնելու նրանց նյութական ու հոգևոր մակարդակը»:

Պլենումն ընդունեց, վոր արհմիությունների աշխատանքի մեջ դըրսևորված թերությունների հետ հարակից կուսակցության առաջ խնդիր է ծառացած «կազդուրելու, զորացնելու և ամրացնելու արհմիությունները, ուժեղացնելու և խորացնելու արհմիութենական դեմոկրատիան, ամեն կերպ բարձրացնելու միությունների հեղինակությունը»: XIV համագումարը հաստատեց պլենումի այդ ցուցմունքը և մանրամասն դիրեկտիվներ տվավ արհմիությունների աշխատանքի և նրանց կուսակցական ղեկավարության մասին ներկա ժամանակի պայմաններում: Նրա վորոշումների վրա, նրանց ահագին կարևորության պատճառով, անհրաժեշտ է մանրամասն կանգ առնել:

Վորպեսզի լավ յուրացվի «Արհմիությունները ՆԵՊ-ի առաջին շրջանում» բաժինը, պատասխաններ տվեք հետևյալ հարցերին.

1. Ի՞նչ տարբերություն կա արհմիությունների դերի մեջ կապիտալիզմի օրով և պրոլետարիատի դիկտատուրայի օրով:

2. Ինչումն է տրոցկիստների և «բանվորական օպպոզիցիայի» սխալների էությունը արհմիությունների հարցի առիթով:

3. ՆԵՊ-ին անցնելու հետ հարակից ինչ խնդիրներ են դրել արհմիությունների առաջ X և XI կուսհամագումարները:

2. ՆԵՊ-Ի ԱՐԴԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ ՅԵՎ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՆԵՊ-ի արդի ժամանակաշրջանի առանձնահատկությունների արտացոլումը արհմիությունների աշխատանքի մեջ:

ՆԵՊ-ի օրով արդյունաբերության աճման հետ միասին քանակորեն ու վորակորեն աճեց պրոլետարիատը: Ռազմական կոմմունիզմի ծանր օրերը, յերբ սովի հետևանքով արդյունաբերական բանվորները փախչում էյին ֆաբրիկներից ու գործարաններից, մնացին յետ: Բանվոր դասակարգը նորից սկսեց հավաքվել արդյունաբերական կենտրոններում, ամրացավ, իսկ դրա հետ աճեց և նրա ակտիվությունը: Աճում է բանվոր դասակարգի զորությունը,—ասում է XIV համագումարի բանաձևը,—աճում է նրա ակտիվությունը: Մեր արդյունաբերության հետագա աճման հետ միասին էլ ավելի մեծ չափով պիտի աճեն բանվոր դասակարգի ակտիվությունը և սեփական ուժի գիտակցությունը»: Պրոլետարիատի թվական աճումը տեսնվում է այն աղյուսակից, վոր բերված է 124-րդ էջի վրա: Պրոլետարիատի աճման հետ միասին աճում է և արհմիությունների անդամների թիվը, ինչպես այդ տեսնվում է հետևյալ տվյալներից (ՀԱՄԿԽ աշխատանքի վիճակագրության բաժնի նյութերի համեմատ).

Բոլոր միություններում կար՝

Առ 1-ն ապրիլի 1924 թ.—5823000 (այս թվում արդյունաբերական միութ.*—2224000,
Հողանտառի և Կառուցողների—510000)
» » հոկտեմբ. 1925 թ.—7847000 (այս թվում արդյունաբերական միութ.—2788000,
Հողանտառի և Կառուցողների—1356000)

Սակայն բանվորների թվի աճումը տեղի յէ ունենում վոչ միայն այն հաշվով, վոր արդյունաբերության մեջ են վերադառնում հին բանվորները: Բանվոր դասակարգի կազմի մեջ թափվում են նոր շերտեր, «վորոնք դեռ չեն անցել արտադրական և կազմակերպչական դպրոցը»: Այդ շերտերի մեծագույն մասը յերիտասարդ գյուղացիներ են:

«Նման բանվորը,—ասում էր համագումարում ընկ. Տոմսկին,—իրան առանձնացած է պահում բանվորների հասարակական կյանքից: Այդ բանվորն իր հետ բերել է շատ գյուղական տրամադրություններ և նոր, խպառ ինքնորինակ մտնեցում դեպի ֆաբրիկը, վորին նա չի նայում, դեռ սովոր չէ իրանը համարել այնպես, ինչպես այդպիսին է համարում տոհմիկ, հեղափոխությունը ապրած բանվորը, վորը կրել է և փլուզումի վշտերը և վերականգնման ուրախությունը: Նրա մոտեցումն ամբողջապես այլ է, պոկելու մտեցում է, նա քիչ է շահագըրգըռված և բանվոր դասակարգի բախտով»:

* 11 միություն—մետալիստների, թղթագործների, լեռնագործների, փայտագործների, կաշեգործների, տպագրիչների, սննդագործների, շաքարագործների, տեքստիլագործների, քիմիական արդյունաբերության և կար ու ձևի:

Միաժամանակ գյուղից յեկող բանվորների նշանակալից քանակը տեղ է բռնում վոչ-ինդուստրիալ միություններում (Հողանտառի, Կառուցողների և այլն), վորոնք գլխավորապես ընդգրկում են սովորաբար կուլտուրապես հետամնաց սեզոնային բանվորներին։

Արհմիությունների դերի՝ իբրև կոմմունիզմի դպրոցի՝ առանձին կարևորությունը։

Բանվորների այդ նոր շերտերը ծանոթ չեն արհմիությունների խնդիրներին, չեն հասկանում նրանց դերը և հաճախ արհմիություն են մտնում, նկատի ունենալով այն արտոնությունները, ինչ կարող են ստանալ նրանից։ Արհմիություններն այդ նոր բանվորական մասսան պիտի դարձնեն պրոլետարական դասակարգային շարժման գիտակից մասնակցողներ, կոմմունիզմի ակտիվ շինարարներ։ Դա նրանց իբրև կոմմունիզմի դպրոցի խնդիրն է։ Իսկ դա նշանակում է, թե արհմիությունները պիտի լինեն ուժեղ, ճկուն, մասսաներին մոտենալ կարող կազմակերպություններ, վորոնք կարողանային յուրաքանչյուր տարի մարսել նրանց մեջ մտնող կես միլիոն նոր անդամներից վոչ պակաս։

Այդ հերթական խնդիրն էլ արհմիությունների առաջ դրավ XIV համագումարը։

«Այստեղից անխուսափելիորեն բխում է արհմիությունների՝ իբրև կոմմունիզմի դպրոցի՝ կարևորագույն հերթական խնդիրը — իր վողջ ապարատը էլ ավելի մոտեցնել մասսային, համարեցնել իր աշխատանքի բոլոր ձևերն ու մեթոդները՝ զարգացնելու պրոլետարական ակտիվությունն ու ինքնագործունեությունը, գրավելու և բազմակողմանի դասակարգային դաստիարակություն տալու բանվորների նոր շերտերին, դրանով իսկ նախապատրաստելով և առաջ քաշելով նոր հազարավոր բանվորներ պետության կառավարչության գործի համար։ Այդ կարելի յե նվաճել հարմարեցնելով միութենական աշխատանքի բոլոր ճյուղերն այն բանին, վոր այդ աշխատանքը բազմակողմանիորեն սպասավորե իր անդամներին, յեռանդագին պաշտպանե նրանց տնտեսական շահերը յեվ բոլոր միջոցներով բարձրացնե նրանց կուլտուրական մակարդակը, առանձին ուշադրություն նվիրելով նոր բանվորների դաստիարակությանը»։

Արհմիությունների վիճակը յեվ նրանց աշխատանքի թերությունները XIV համագումարի նախօրեյին։

Ի՞նչպես եյին արհմիություններն իրագործում այս խնդիրը XIV համագումարից առաջ։ Այդ հարցին ստիպված ենք պատասխանել, թե արհմիությունները XIV համագումարի նախօրեյին չկարողացան ուղիղ լուծել այն խնդիրները, ինչ առաջադրել էր նրանց տնտեսական վերելքի պարագան։

Հիմնական անճշտությունն այստեղ կայանում էր նրանում, վոր արհմիությունները տնտեսական շինարարությանը մասնակցություն բերելու գործի հետ համեմատած՝

յետին պլանն եյին մղել բանվորական մասսայի շահերի պաշտպանության, նրա կուլտուրական մակարդակի բարձրացման և այդ մասսայի հետ արհեստակցական կազմակերպությունների կապի ամրացման աշխատանքը բանվորական դեմոկրատիայի առողջ հողի վրա։ Արհմիությունների կապը տնտեսական օրգանների հետ հաճախ ընդունում էր այլանդակ ձև, հանգելով նրան, վոր առանց մասսայի վորևե մասնակցության, բանվորական մասսայի կարիքներին ու շահերին վերաբերող հարցերը համաձայնությամբ եյին փակվում նրանց մեջ։

Այդպես դնելով աշխատանքը՝ հազվադեպ չէր լինում, վոր արհմիություններն ի վիճակի չեյին լինում կանխելու կոնֆլիկտներն ու գործադուլները պետարդյունաբերությունների մեջ։ Հանդես գալով XIV համագումարում՝ ընկ. Տոմսկին այսպես էր խոսում 1925 թվականի գարնանը տեղի ունեցած նման կոնֆլիկտների մասին. «Այդ կոնֆլիկտների հիմքը կազմում էր արհմիութենական կազմակերպությունների կողմից անուշադիր վերաբերմունքը դեպի բանվորական մասսաների կարծիքները, տրամադրությունները, արդարացի ու օրինական պահանջները։

«Այդ կոնֆլիկտների հիմքն ըստ մեծի մասին կազմում էր այն այլանդակ բլոկը, վոր կնքվում էր տնտեսավարների, արհմիությունների ու կուսակցականների միջև. բլոկ, վորը կայանում էր նրանում, վոր կուսակցության ներկայացուցիչները — կուսակցական բջիջի կամ կուսակցական կոլլեկտիվի ներկայացուցիչները, արհմիության կազմակերպությունների — ֆաբգործկոմի, իսկ պատահում էր և բարձր կանգնած արհմիութենական կազմակերպությունների ներկայացուցիչներն ու ղեկավարները, ապա տնտեսական օրգանների ներկայացուցիչներն իրանցից ներկայացնում եյին սերտ համախմբված միաբան խմբակ, վորը իրար մեջ համաձայնության եյին գալիս բոլոր հարցերի նկատմամբ, բայց մոռանում եյին այդ հարցերի առիթով բանվորական մասսաների համաձայնությունը հարցնել։ Ահա կոնֆլիկտի հիմքը։ Այս պատճառով միքանի կարևորագույն գործնական ձեռնարկություններ վերից կիրառվեցին, առանց օգտագործելու բանվորների կարծիքը, առանց շոշափելու այն, առանց նրան, վորպեսզի հաշվի առնվի այդ կարծիքը»։

Այդպիսի այլանդակ բլոկի հետևանքով արհմիություններն «աննորմալ ձևով, հախուռն, առանց քննադատության եյին պաշտպանում տնտեսավարների բոլոր ձեռնարկումները, իրանց դրոշմով սրբագործում այն, թուլացնում կապը մասսայի հետ, կիրառում կարևորագույն տնտեսական ձեռնարկումներն, առանց բացատրելու նրանց նպատակահարմարությունն ու անհրաժեշտությունը, առանց հաշվառնելու այդ ձեռնարկումների կիրառման տնտեսական անհրաժեշտությունը»։ Նման թեքումը, յեթե ժամանակին չմաշվեր այն, սպառնում էր ծանր հար-

վածներ հասցնել արհմիությանը և միանգամայն խեղաթյուրում եր այն խնդիրը, ինչ կանգնած ե արհմիությունների առաջ—լինել կոմմունիզմի դպրոց։

Ուստի հասկանալի յե, վոր XIV համագումարը պիտի մերկացներ արհմիութենական շարժման այդ ժամանակավոր հիվանդությունները և ցուցմունքներ տար այդ հիվանդությունները վերացնելու համար։

Իսկ ի՞նչ ցուցմունքներ ե տվել արհմիություններին XIV համագումարը նրանց հետագա աշխատանքի ուղղության մասին։

«Առողջ դեմոկրատիայի միջոցով ավելի մոտ մասսաներին» լոզունգը։ Արհմիությունները յեվ բանվորական մասսայի նյութական ու կուլտուրական շահերի պաշտպանությունը ՆԷՊ-ի արդի պայմաններում։

Համագումարը մատնանշեց, թե արհմիությունների խնդիրը պիտի ուղղված լինի գործնականորեն իրագործելու այս լոզունգը. «Առողջ դեմոկրատիայի միջոցով ավելի մոտ մասսաներին»։ Այդ նշանակում ե, թե արհմիությունների աշխատանքը պիտի աշխուժացվի ու կառուցվի այս հիմունքներով. «ա) բոլոր արհմիութենական որգանների լայն ընտրականություն, բ) ընտրովի պաշտոնատար անձանց հրապարակային, պարզ, յուրաքանչյուր բանվորի համար մատչելի հաշվետվություն իր ընտրողների առաջ, գ) շարքային անդամների ակտիվություն և ինքնագործության զարգացում, դ) նրբամիտ, ուշադիր վերաբերմունք մասսաներից բղխող առողջ, գործարար քննադատությանը, ե) միութենական ապարատի ծայրաստիճան եժանացումն և նրա մոտեցումը մասսաներին, զ) իր անդամների միութենական ոգնության գործի զարգացումն ու ընդարձակումը։

Արհմիությունները պիտի ձգտեն նրան, վորպեսզի յուրաքանչյուր անկուսակցական բանվոր ու ծառայող իր արհմիության մեջ տեսնի իրան մոտ ու հարազատ մի կազմակերպություն, իր՛ կողմից ընտրված, վերհսկողության յենթակա յեվ իրան հաշվետու։ Միայն այս պայմանները պահպանելով արհմիությունները կարող են կատարել իրանց դերը իբրև կոմմունիզմի դպրոց։ Միությունների աշխատանքի մեջ դեռ նկատվող ռազմական կոմմունիզմի ժամանակաշրջանի մեթոդների մնացորդներին յեվ նրանց վերադառնալու փորձերին պիտի հայտարարվի վճռական պայքար»։

Միայն այս նոր հիմքերի վրա աշխատելով՝ արհմիությունները կարող կլինեն բավարարել աճող կուլտուրական պահանջները, ուղիղ ոգտագործել և ել ավելի ընդարձակել առաջավոր շերտերի քաղաքական ակտիվությունը, հուպ տալ և դաստիարակել բանվորների նոր ու հետամնաց շերտերը և համախմբել նրանց գլխովին մասնակցություն բերելու սոցիալիզմի շինարարության մեջ։ Միայն աշխատելով այս նոր

հիմքերի վրա՝ արհմիությունները կարող կլինեն ուղղել իրանց աշխատանքի թերությունները։

Իրանց աշխատանքի թերությունների ուղղումը արհմիություններից պահանջում ե, վորպեսզի նրանք ստույգապես կատարեն XI համագումարի բանաձևը (վորի մասին մենք խոսեցինք վերը), վորը նրանց պարտադրում ե «պաշտպանել աշխատավորների շահերը, ըստ հնարավորության նպաստել նրանց նյութական կենցաղի բարձրացման, միշտ ուղղելով տնտեսական որգանների սխալներն ու չափազանցումները, վոր չափով նրանք բղխում են պետապարատի բյուրոկրատական խեղաթյուրումից»։

Այդ խնդիրը մի անգամ ել ընդգծեց կուսակցության XIV համագումարը, նկատի ունենալով մասնավորապես այն ահագին նշանակությունը, վոր նրա իրագործումն ունի նոր, գյուղից յեկող բանվորների շերտերն արհմիությունների մեջ գրավելու և նրանց միջոցով դաստիարակելու համար։

Պայքար անհրաժեշտություն տնտեսավարների ու միութենական այլանդակ բլոկների դեմ։

Այս խնդրի հետ հարակից համագումարը մատնանշեց, թե անհրաժեշտ ե մաշել այն «այլանդակ բլոկները», վորոնց մասին ընկ. Տոմսկին հիշատակեց իր ճառի մեջ։

«Պետք ե,—ասաց համագումարը,—անպայման պայքարել այն թեքման դեմ, վոր արտահայտվում ե առանձին որգանների և արհմիությունների աշխատավորների ու տնտեսական որգանների այլանդակ բլոկի ձևով՝ խարխլված արհեստակցական որգանների ու նրանց ներկայացուցիչների այն առանց քննադատության, հախուռն քաջալերանքի և հախուռն պաշտպանության վրա, վորին արժանանում են տնտեսական որգանների ձեռնարկումներն ու առաջարկները բանվորների առաջ, վորը դարձնում ե արհմիությունը տնտեսական որգանի մի կցանը, մի քաղբաժինը և առաջնորդում ե դեպի նրա կարևորագույն գործառնության մոռացումը—թե ինքը բանվորների ներկայացուցիչն ու տնտեսական շահերի պաշտպանն ե»։

Ապա մատնանշելով, թե արհմիությունները և տնտեսական որգաններն իրանց աշխատանքի մեջ պիտի իրանց ու տնտեսական որգանների իրավունքների ու պարտականությունների տարբերության մի պարզ գիծ քաշեն, դրա հետ միասին համագումարը մատնանշեց, թե «արհմիությունները և նրանց ներկայացուցիչները պիտի միևնույն ժամանակ յեռանդագին պաշտպանեն տնտեսավարների այն ձեռնարկումները, վորոնք հետամուտ են լինում աշխատանքի արտադրականությունը բարձրացնելու, համաձայնեցնելով այն իրանց ներկայացրած բանվորների շահերի և այդ ձեռնարկումները կյանքի մեջ կիրառելու առավել հաջող հնարավորության հետ»։

Արհմիությունների վերաբերմունքը դեպի կոնֆլիկտներն ու գործադուլները:

Ինչպես մենք արդեն ասել ենք, արհմիութենական աշխատանքների թերությունները XIV համագումարի առաջ իրանց արտահայտությունը գտան այն կոնֆլիկտների մեջ, որոնք 1925 թվականի գարնանը ծագեցին մի շարք պետձեռնարկություններում: Այս պատճառով XIV համագումարն իր բանաձևի մեջ նորից պիտի հարց բարձրացներ գործադուլների ու նրանց դերի մասին: Համապատասխան XIV համագումարի բանաձևին՝ համագումարը մատնանշեց, թե «գործադուլը պրոլետարական պետության պայմաններում մի վկայություն է հանդիսանում, որ պակասավոր է պետական ապպարատը, թույլ են իրանք արհմիություննական օրգանները, և կուլտուրապես հետամնաց են նրանց միավորած մասսաները»: Ցեվ խկապես, կարելի՞ յե բնականոն յերևույթ համարել գործադուլները պետձեռնարկություններում: Պետական սոցիալիստական արդյունաբերության ձեռնարկությունները պատկանում են ամբողջ բանվոր դասակարգին: Իսկ ամբողջ բանվոր դասակարգը չունի և չի կարող շահերի անհաշտելի հակասություն ունենալ բանվորների առանձին խմբերի հետ, վորոնք աշխատում են այս կամ այն ֆաբրիկում ու գործարանում: Այս պատճառով պետձեռնարկներում գործադուլները կարող են ծագել միայն տնտեսական օրգանների ու արհմիությունների անճիշտ աշխատանքի հետևանքով, հաճախ այն պատճառով, որ ընդունակություն չկա մոտենալու մասսային, բացատրելու նրան այս կամ այն ձեռնարկումի եյությունը, ընդունակություն չկա կոնֆլիկտը լիկվիդացիայի յենթարկելու հաշտարար կամ միջնորդ քննության նորմալ ուղիով: Այդ վերջին ուղին էլ XIV համագումարը մատնանշեց արհմիություններին: Դրա հետ միասին նա մատնանշեց, թե «միությունից անկախ և առանց միության գիտության գործադուլը միշտ մի ցուցանիշ է հանդիսանում, թե նրա քաղաքականությունը նախատեսող չի, թե անջատում կա միության ու մասսաների միջև, թե տվյալ ձեռնարկության մեջ առհասարակ թույլ է միութենական աշխատանքը»:

XIV համագումարը, զարգացնելով XI համագումարի դիրեկտիվը մասնավոր ձեռնարկությունների նկատմամբ, մատնանշեց, թե արհմիությունները պիտի բազմակողմանիորեն և բոլոր միջոցներով պաշտպանեն այդ ձեռնարկությունների բանվորների դասակարգային շահերը և այդ նույն ժամանակ դասակարգային պայքար մղեն այնպիսի ձևով, վորպեսզի նրա պրոցեսում մասնատիրական ձեռնարկությունների բանվորները դաստիարակվեն, զարգացնեն իրանց համախմբվածությունը, կազմակերպվածությունը և համերաշխությունը: Այդ վերջինը հնարավոր է այն դեպքում, յեթե արհմիությունները չձգտեն միայն

նրան, որ մասնավոր ձեռնարկությունների տերերի վրա պետական օրգանների միջոցով գործադրված վարչական ճնշումով փոխարինեն դասակարգային պայքարը:

Արհմիությունների մասնակցությունը սոցիալիստական շինարարության մեջ ՆԷՊ-ի արդի պայմաններում:

Արդեն XI համագումարի բանաձևից մենք գիտենք, որ արհմիությունների կարևորագույն խնդիրներից մեկն է հանդիսանում նրանց մասնակցությունը ԽՍՀՄ տնտեսական շինարարության մեջ: Իսկ այդ բնագավառում ինչպիսի խնդիրներ դրավ արհմիությունների առաջ XIV համագումարը: Համագումարը նախ և առաջ մատնանշեց, թե արհմիությունները մեծ ծառայություններ ունեն ամբողջ տնտեսության վերականգնման գործում և առանձնապես արդյունաբերության մեջ այն դեպքերում, յերբ նրանք՝ համապատասխան XI համագումարի բանաձևին՝ մասնակցություն են բերել ժողովրդական տընտեսությունը պլանավորող ու կարգավորող օրգաններում, վարչական անձինք են առաջ քաշել ու նախապատրաստել բանվորներից և այլն: Այս պատճառով համագումարն անհրաժեշտ գտավ ընդարձակել ու խորացնել այդ աշխատանքը, տալով նրան պլանաչափ, սիստեմատիկ բնույթ: Բայց դրա հետ միասին համագումարը մատնանշեց, թե արհմիությունները չպետք է կատարեն նույն այն աշխատանքը, ինչ և տնտեսավարները, կամ, այլկերպ ասած, չպիտի կրկնեն տնտեսավարների աշխատանքը, և որ արհմիությունները չպիտի խառնվեն ձեռնարկությունների ու նրանց միավորումների անմիջական ղեկավարության ու կառավարչության մեջ, վորովհետև դա վնասում է գործի տնտեսական կողմին: Դա տնտեսական օրգանների գործն է, վորոնց վրա նրանք կարող են և պետք է ազդեն, բայց վորոնց փոխարինել չեն կարող:

Արհմիությունների կողմից ձեռնարկությունների աշխատանքի ու կյանքի վրա ազդելու և միևնույն ժամանակ բանվորական մասսայի կոմմունիստական տնտեսական դաստիարակության լավագույն յեղանակներից մեկն են հանդիսանում **արտադրական խորհրդակցությունները** ձեռնարկություններին կից: Արհմիությունների մասին ընդունված իր բանաձևի մեջ համագումարը մանրամասն կանգ առավ արտադրական խորհրդակցությունների հարցի վրա — մի լավագույն ձևի, վորով կարելի յե «լայն բանվորական մասսաները գրավել խորհրդային տընտեսության գործնական շինարարության մեջ, դաստիարակել նրանց մեջ աշխատավորների շահերի սերտ կախման հասկացողությունը սոցիալիստական պետության տնտեսական հաջողությունների աստիճանից, առաջ քաշել ու դաստիարակել բանվորների միջից տնտեսավարների ու վարչականների նոր կադրեր»:

Համագումարի բանաձևն ընդգծում է, որ և՛ տնտեսավարները

և արհմիութենական աշխատավորները պիտի ուշադիր դիտեն և ուսումնասիրեն արտադրական ու տնտեսական խորհրդակցությունների և հանձնաժողովների աշխատանքն ու նրանցից բխող առաջարկները, բնվեռեն այդ խորհրդակցությունների աշխատանքը գործնական հարցերի քննության վրա, որոնք վերաբերում են տվյալ ձեռնարկության արտադրության ու աշխատանքի պայմանների բարելավմանը։ Արտադրական խորհրդակցությունների աշխատանքի նման բնույթը միայն հնարավորություն կտա հետագայում ընդարձակել նրանց կողմից քննվող հարցերի շրջանակը։ Միայն այդ խորհրդակցությունների գործունեության վրա ունեցած ուշադիր դիտումը, նրանց փորձի ուսումնասիրումը և միավորումը և սխալների համբերատար ուղղումը հնարավորություն կտան արհմիություններին հայտնապես այդ արտադրական խորհրդակցությունների միջոցով «գիտակցորեն ու վճռականորեն անցնել համառ, գործարար, մի շարք յերկար տարիներ նկատի ունեցող աշխատանքի, որ է բանվորների և բոլոր աշխատողների գործնական ուսուցումը կառավարելու ամբողջ յերկրի ժողովրդական տնտեսությունը, անշեղորեն բարձրացնելով աշխատանքի կարգապահությունը և նրա համար ու արտադրականության բարձրացման համար մղված պայքարի կուլտուրական ձևերը»։ (Կուսակցության XI համագումարի բանաձևը արհմիությունների մասին)։

Արհմիությունների աշխատանքը գյուղում։

Իր բանաձևի մեջ XIV համագումարն առանձին կանգ առավ արհմիությունների գյուղում կատարելիք աշխատանքի հարցի վրա։ Այդ հարցը համագումարը պիտի դներ իր առաջ, նկատի ունենալով գյուղից յեկող բանվորների նոր հոսանքը և այն, որ արհմիությունների անդամների մի մասը կամ մշտապես աշխատում է գյուղում (Հողանտառի անդամները) կամ գյուղից դուրս աշխատում և տարվա միայն մի մասը (կառուցողները, մասամբ հանքագործները, տորֆագործները և այլք)։ Իրանց այդ բոլոր անդամների միջոցով, որոնք այսպես թե այնպես ամուր կապված են գյուղի հետ, արհմիություններն այնտեղ պիտի անցկացնեն պրոլետարական ազդեցությունը, նպաստեն նրա կուլտուրական վերելքին և ապահովեն քաղաքի դաշինքը գյուղի հետ։ Այդ աշխատանքները արհմիություններն անում եյին և մինչև XIV համագումարը, բայց այն անում եյին անհաջող։ Դրա մասին XIV համագումարին ընկ. Տոմսկին զեկուցում եր հետևյալ խոսքերով․

«Բոլոր արհմիությունները գյուղն անցան։ Բայց նրանք անցան այնպես, որ մի ձեռքում տարան Աշխատանքի Օրենքների Կոդեքսը, իսկ մյուսում—կոլլեկտիվ պայմանագրերը, իրանց բոլոր կանոնադրությունները, հրահանգները և այլն։ Յեվ գյուղական եկոնոմիկայի պայմաններում, գյուղական միջավայրի պայմաններում նրանք սկսեցին կիրառել քաղաքային արհմիութենական մեթոդները, սովորությունները, աշխատանքի կազմակերպման ձևերը։ Յեռանդի հսկայական քանակ է վատնված, իսկ հետևանքն ստացվել է աննշան, տեղ-տեղ նույնիսկ բացասական։ Հարկավոր է, որ մենք նոր ձևով դնենք արհմիությունների գյուղում կատարելիք աշխատանքի հարցը»։

Համագումարը նշեց արհմիությունների աշխատանքի համար գյուղում չորս հիմնական գիծ. ա) գյուղական հիմնական միության—Հողանտառի—աշխատանքը, բ) սեզոնային բանվորներ ընդգրկող միությունների (գլխավորապես կառուցողների, հանքագործների և այլն) աշխատանքի ուժեղացումը, գ) աշխատանքի զարգացումը և ուժեղացումը այն ձեռնարկություններում, որ գտնվում են գյուղական վայրերում, դ) աշխատանքի ուժեղացումը նոր բանվորների վրա։

Համագումարն ընդունեց, որ «Հողանտառի միությունը արհմիութենական ազդեցության կարևորագույն հաղորդիչներից մեկն է գյուղում, ուստի նրա հաջողություններն ու թերությունները վճռական են հանդիսանում գյուղի մեր ամբողջ աշխատանքում»։

Համագումարը Հողանտառին դիրեկտիվներ տվավ—միավորել միայն գյուղի այն պրոլետարներին, որոնց համար իրանց բանվորական ուժի վաճառումը հանդիսանում է գոյության հիմնական, գլխավոր միջոցը, որովհետև այդ պայմանի անգիտացումը կառաջնորդի դեպի միության ուռչումը ի հաշիվ մանր-բուրժուական տարրերի։

Հողանտառի ուշադրությունը մերձավոր ժամանակի մեջ պիտի ուղղված լինի չի թե նրան, որ միության համար նոր անդամներ վորսա, այլ դեպի այն, որ խորացնե իր աշխատանքը և կազմակերպչորեն տիրե այն անդամներին, որոնք արդեն միության մեջ են։ Մյուս արհմիությունների առաջ XIV համագումարը խորացրած աշխատանքի խնդիր դրեց գյուղում գտնվող ձեռնարկությունների մեջ, նպատակ համարելով «նրանց դարձնել խորհրդային կուլտուրայի օջախներ, պրոլետարական ազդեցության հենարանները գյուղում», դաստիարակչական աշխատանք տանելու արդյունաբերական բանվորների նոր շերտերի մեջ և յեռանդագին աշխատանք թափելու խորհրդային ծառայողների հետագա քաղաքական դաստիարակչության վրա, «որոնք ավելի ու ավելի յեն գիտակցում իրանց շահերի համանմանությունը սոցիալիզմի համար պայքարող բանվոր դասակարգի շահերի հետ»։ Արհմիությունների գյուղում կատարելիք աշխատանքների մասին ընդունած իր բանաձևի վերջում համագումարը նաև մատնանշեց, թե լուսավորության աշխատավորների արհմիությունը (Լուսաշխ) պիտի աշխատանք թափի բարձրացնելու իր անդամների քաղաքական ինքնագիտակցությունը, ոգնե ու նախապատրաստե նրանց տոգորվելու

իրանց պատշաճ խնդիրներով, «վորը պիտի լինի վոչ միայն այն, վոր նրանք կուլտուրայի հաղորդիչներն են գյուղում, այլ վոր նրանք պիտի դառնան նաև ընդհանուր արհմիութենական կուլտուր-լուսավորական աշխատանքի ակտիվ ոգնականները ֆաբրիկներում, գործարաններում և ակումբներում»։

Կուլտուր լուսավորական աշխատանքի նշանակությունը արհմիությունների առաջ ծառացած խնդիրներն իրագործելու համար:

Հարակից այն բանին, վոր բարելավվում է բանվոր դասակարգի նյութական կացությունը և աճում նրա ակտիվությունը,—աճում են և բանվոր դասակարգի առաջավոր շերտերի կուլտուրական պահանջները։ Արհմիությունները պիտի բավարարեն այդ կուլտուրական պահանջները։ Միաժամանակ նրանք պիտի բարձրացնեն յեկվոր ու հետամնաց բանվորների կուլտուրական մակարդակը։ Այդ նկատի ունենալով է, վոր համագումարը մատնանշեց, թե արհմիություններն առանձին ուշադրություն պիտի կենտրոնացնեն իրանց կուլտուր-լուսավորական աշխատանքի վրա, վորպեսզի մասսաներին բարձրացնեն մի ավելի բարձր աստիճան, վորպեսզի նրանց հաղորդակից անեն գիտակցական մասնակցություն բերելու սոցիալիզմի շինարարության մեջ։ Զարգացնելով իրանց կուլտաշխատանքի բոլոր կողմերը՝ արհմիությունները նրա գլխավոր լծակները պիտի դարձնեն բանվորական ակումբները և կարմիր անկյունները։ Արհմիություններն ակմբային աշխատանքի մեջ պիտի գրավեն իրանց անդամների վողջ մասսան, անկախ նրանց հասակից ու սեռից, և ակմբային աշխատանքը պիտի այնպես կարգավորեն, վոր հանգստի և առողջ զվարճության պահանջների գոհացումը զուգակցեն քաղաքական-լուսավորական ու դաստիարակչական խնդիրների հետ։ Այս խնդիրների իրագործումը հնարավոր է միայն այն դեպքում, յեթե ամբողջ ակմբային աշխատանքը կառուցվի ակումբի անդամների իսկ ինքնագործունեության, կամավորության, նախաձեռնության հիմունքների վրա, առանց վորևէ չափով շենքին փաթաթելու, հրամայելու և հարկադրելու միջոցների։

Կուսակցական ղեկավարությունը արհմիությունների նկատմամբ ՆԵՊ-ի արդի պայմաններում:

Այդպիսին են այն խնդիրները, վոր հարակից տնտեսական աճման նոր պայմաններին XIV համագումարն արհմիությունների առաջ դրավ։

Ի՞նչ պայմանում արհմիությունները կարող կլինեն իրագործելու այդ ահագին խնդիրները։ Միայն այն դեպքում, յեթե առաջվա պես նրանք շարունակեն աշխատել ՀամԿԿ-ի ղեկավարության ներքո, միայն այն դեպքում, յեթե կուսակցությունը արհմիությունների համապատասխան կոմմունիստական ֆրակցիաների միջոցով ուղիղ, սիստեմատիկ ղեկավարություն կարգե արհմիությունների նկատմամբ։

Իր բանաձևի մեջ XIV համագումարը մատնանշում է այն թերությունները, վոր կուսակցական որգանների ղեկավարության մեջ են դրսևորվել արհմիությունների ֆրակցիաների նկատմամբ։ Այդ թերություններն արտահայտվում են իբրև մանր միջամտություններ առօրյա աշխատանքին, իբրև ղեկավարող աշխատողների անլուրջ ընտրություն, նրանց հաճախակի փոփոխումը, խախտելով ընտրականությունն անգամ, կուսակցական որգանների լուծմանը փոխադրելու սովորություն այն հարցերի մեծամասնությունը, վոր վերաբերում են աշխատանքի պայմաններին, աշխատավարձին, կոլեկտիվ պայմանագրերին և այլն։ Համագումարը մատնանշեց, թե դրանով խախտվում են արհմիութենական աշխատանքի նորմալ մեթոդները և նսեմացվում է արհմիությունների հեղինակությունը բանվորական լայն մասսաների աչքում։ Այդ թեքումներն ու սխալները, վոր կուսակցության ղեկավարության մեջ են արտահայտվում արհմիությունների նկատմամբ, առանձնապես անթույլատրելի յեն այժմ, ժողովրդական տնտեսության որավուր աճող պայմաններում։ Հարակից դրան համագումարն էլ հիշեցրեց կուսկազմակերպություններին, թե արհմիություններում առավել լրիվ պիտի իրագործվի առողջ բանվորական դեմոկրատիան, թե արհմիությունների նկատմամբ առավել սակավ են թույլատրելի հրամաններ արձակելու և մանր խնամատարության մեթոդները։ Համագումարը կուսակցության առաջ դրեց արհմիությունների առողջացման, ուժեղացման և ամրացման, արհմիութենական դեմոկրատիայի ուժեղացման ու խորացման և միությունների հեղինակության ըստ ամենայնի բարձրացման խնդիրները։ Նա մատնանշեց բոլոր կուսկազմակերպություններին, թե անհրաժեշտ է «ավելի ուշադիր, նրբանկատ և խնամքոտ վերաբերմունք ունենալ դեպի արհմիությունները և այդ ուղղությամբ փոփոխել կուսակցական ղեկավարության իրագործման մեթոդները»։ Արհմիությունների կուսակցական ղեկավարությունը պիտի իրագործվի արհմիության կոմմունիստների ֆրակցիաների ու խմբակների միջոցով։

XIV համագումարի արհմիությունների մասին հանած վորոշումների անվերապահ ու ճիշտ կատարումը բացառիկ նշանակություն ունի մեր բոլոր հաջողությունների համար սոցիալիստական շինարարության ֆրոնտում։

«Արհմիությունները,—ասում է XIV համագումարի բանաձևը,— ստեղծվել ու կառուցվել են մեր կուսակցության ձեռքով։ Կուսակցության ղեկավարության ներքո նրանք աճել են և լուրջ հաջողությունների հասել։ Նրանց նվաճումները և թերությունները մեր կուսակցության ու Խորհրդային իշխանության նվաճումներն ու թերություններն են, Խորհրդային իշխանության, վորի նեցուկն են հանդի-

սանում արհմիությունները։ Հանձին արհմիությունների կուսակցությունն ունի մի հզոր ապարատ, որով կոմմունիստական ազդեցությունը և իր քաղաքականությունն է անցկացնում անկուսակցական բանվորների ողջ մասսայի մեջ, իսկ վերջիններիս միջոցով շատ միլիոնավոր գյուղացիների նկատմամբ»։

Կուսակցության յուրաքանչյուր անդամ պարտավոր է աշխատել նրա վրա, որպեսզի կուսակցությունը տիրե այդ հզոր ապարատին, որպեսզի արհմիությունների միջոցով ուժեղացվի կուսակցության ղեկավարությունը բանվորական ու գյուղացիական մասսաների նկատմամբ սոցիալիզմի շինարարության գործում։

Որպեսզի լավ յուրացվի «ՆԷՊ-ի արդի ժամանակաշրջանը և արհմիությունների խնդիրները» բաժինը, պատասխաններ տվեք հետևյալ հարցերին.

1. Ինչպիսի՞ն էր արհմիությունների վիճակը XIV համագումարի նախօրեյին, և ինչո՞ւմն էր արտահայտվում նրանց աշխատանքի թերությունը։
2. ՆԷՊ-ի նոր ժամանակաշրջանի ինչ առանձնահատկություններն են պահանջում արհմիություններից վերակառուցելու նրանց աշխատանքը։
3. Ինչո՞ւմն է XIV կուսհամագումարի կողմից արհմիություններին տված՝ «Առողջ բանվորական դեմոկրատիայի միջոցով մոտ մասսաներին» լոզունգի էությունը։
4. Ի՞նչպես պիտի նոր պայմաններում կուսակցությունն իրագործե արհմիությունների ղեկավարելու գործը։

ՆՅՈՒԹԵՐ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ԱՌԻԹՈՎ 1920/21 ԹՎԱԿԱՆԻՆ ԾԱԳԱԾ ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՅՈՒԹՅՈՒՆԸ

Ընկ. Տրոցկին, իմ համոզմունքով, ընկել է մի շարք սխալների մեջ, որոնք կապված են պրոլետարիատի դիկտատուրայի հարցերի բուն էության հետ։ Բայց յեթե դա մի կողմը թողնենք, ապա հարց է. իսկապես ինչի՞ց է, որ մեզ մոտ համերաշխ աշխատանք չի գլուխ գալիս, որը մեզ այնքան հարկավոր է։ Դա բղխում է նրանից, որ տարակարծություն կա մասսաներին մոտենալու, մասսաներին տիրելու, մասսաների հետ կապ պահպանելու հարցի մեթոդներում։ Դրա մեջ է էությունը։ Յեվ դրա մեջ է հենց արհմիությունների էությունը, որպես հիմնարկության, որ ստեղծվել է կապիտալիզմի օրով, որ անխուսափելի յե կապիտալիզմից դեպի կոմմունիզմն անցնելու շրջանում, ապագայում էլ կանգնած է հարցական նշանի տակ։ Դա հեռավոր ապագան է, յերբ արհմիությունները հարցական նշանի տակ կկանգնեն. մեր թոռները կխոսեն այդ մասին։ Իսկ այժմ խնդիրը նրանումն է, թե ինչպես մոտենալ մասսային, տիրել նրան, կապվել նրա հետ,

շտկել աշխատանքի բարդ շարժատարները, պրոլետարիատի դիկտատուրայի իրագործման աշխատանքի շարժատարները։ Նկատի ունեցեք, յերբ յես խոսում եմ աշխատանքի բարդ շարժատարների մասին, յես չեմ հիշում խորհրդային ապարատի մասին։ Թե այնտեղ էլ ինչ պիտի լինի շարժատարների բարդության իմաստով—դա այլ խնդիր է։ Կապիտալիստական հասարակության դասակարգերի հարաբերությունների մասին յես խոսում եմ դեռ միայն վերացականորեն ու սկզբունքորեն. այնտեղ կա պրոլետարիատ, կան ոչ-պրոլետարական աշխատող մասսաներ, կա մանր բուրժուազիա և կա բուրժուազիա։

Այդ տեսակետից, յեթե անգամ բյուրոկրատիզմ չլինի Խորհրդային իշխանության ապարատում, արդեն ստացվում է շարժատարների գերազանց բարդություն շնորհիվ նրա, ինչ կապիտալիզմն է ստեղծել։ Յեվ այդ մասին է պետք նախ և առաջ մտածել, յեթե հարց դնենք այն մասին, թե ինչումն են արհմիությունների «խնդրի» դժվարությունները։ Իսկական տարակարծությունը, կրկնում եմ, բնավ նրա մեջ չէ, ինչի մեջ այն ընկ. Տրոցկին է տեսնում, այլ այն հարցում, թե ինչպես տիրել մասսային, նրան մոտենալու, նրա հետ կապվելու հարցում... Նրա մոտ այնպես է դուրս գալիս, թե բանվոր դասակարգի նյութական ու հոգևոր շահերի պաշտպանությունն արհմիությունների պաշտոնը չէ բանվորական պետության մեջ։ Դա սխալ է։ Ընկ. Տրոցկին խոսում է «բանվորական պետության» մասին։ Խնդրեմ, դա վերացականություն է։ Յերբ 1917 թվականին մենք գրում էյինք բանվորական պետության մասին, ապա հասկանալի յեր. բայց այժմ, յերբ մեզ ասում են—«ինչու պաշտպանել, ումից պաշտպանել բանվոր դասակարգին, քանի բուրժուազիա չկա, քանի պետությունը բանվորական է», ապա այստեղ պարզապես սխալ են անում։ Ամբողջապես բանվորական չէ, դրա մեջ է հենց խնդիրը։ Այստեղ էլ կայանում է ընկ. Տրոցկու հիմնական սխալներից մեկը։ Այժմ մենք ընդհանուր սկզբունքներից անցանք գործնական քննության ու դեկրետների, իսկ մեզ գործնականին, գործարարին անցնելուց յետ են քաշ տալիս։ Այդպես չի կարելի... Մեր կուսակցական ծրագրից տեսնվում է..., թե մեր պետությունը բանվորական է, բյուրոկրատական խեղաթյուրումներով։ Յեվ մենք այդ տխուր—ինչպես այդ ասել—պիտակը (յարլիկը), ինչ է, պիտի որ նրանից կախենք։ Ահա ձեզ անցման իրականությունը։ Յեվ ի՞նչ, այդ տեսակ գործնականորեն կազմավորված պետության օրով արհմիությունները ոչինչ չունի՞ն պաշտպանելու, կարելի՞ յե առանց նրանց գլուխ հանել մի խնդրում, որ գլխովին կազմակերպված պրոլետարիատի նյութական ու հոգևոր շահերի պաշտպանությունն է։ Դա իսպառ անճիշտ թեորիական դատողություն է։ Դա մեզ փոխադրում է վերացականության կամ իդեալի բնագավառը, որին մենք կհասնենք

15—20 տարուց հետո, բայց յես դրա մեջ էլ չեմ վստահ, թե կհասնենք հայտնապես այդ ժամանակամիջոցին։ Իսկ մեր առաջ ծառացած է իրականությունը, վորը մենք լավ ենք ճանաչում, յեթե մենք չենք արբեցնում մեզ, չենք հափշտակվում ինտելլիգենտական պրույցներով կամ վերացական դատողություններով կամ նրանով, վորը յերբեմն «թեորիա» յե թվում, իսկ իրականում սխալանք հանդիսանում, անցման առանձնահատկությունների անճիշտ հաշվառում։ Մեր արդի պետությունն այնպիսին է, վոր գլխովին կազմակերպված պրոլետարիատը պիտի պաշտպանե իրան, իսկ մենք պիտի այդ բանվորական կազմակերպություններն ոգտագործենք պաշտպանելու բանվորներին իրանց պետությունից և պաշտպանելու մեր պետությունը բանվորների ձեռքով։ Յեվ այս և այն պաշտպանությունը իրագործվում է մեր պետական ձեռնարկումների ինքնորինակ հյուսվածքի միջոցով և մեր համաձայնությամբ, «միաձուլմով» արհմիությունների հետ... «Միաձուլմի» հասկացողությունը նշանակում է, թե հրապարակի վրա կան զանազան իրեր, վորոնց պետք է դեռ միաձեցնել. «միաձուլմի» հասկացողության մեջ մտնում է այն, թե պետք է ոգտագործել կարողանալ պետական իշխանության ձեռնարկումները պաշտպանելու գլխովին միավորված պրոլետարիատի նյութական ու հոգևոր շահերն այդ պետական իշխանությունից։

(Վ. Ի. ԼԵՆԻՆ. Յերկերի Ժողովածու, հ. XVIII, մ. 1, եջ 10—12. ռուսերեն)

2. ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ—ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑ

Պրոլետարիատը կապիտալիզմից դեպի սոցիալիզմի անցումի կատարող պետության դասակարգային հիմքն է հանդիսանում։ Մեր յերկրում, ուր մանր գյուղացիությունն ահագին գերակշռություն ունի, պրոլետարիատը կարող է հաջողությամբ կատարել այդ խնդիրը միայն այն պայմանով, յեթե գերազանցապես հմտորեն, զգուշորեն և աստիճանաբար իրագործե դաշինքը գյուղացիության ճնշող մեծամասնության հետ։ Արհմիությունները պիտի լինեն պետական իշխանության մերձավոր ու անմիջական աշխատակիցները, պետական իշխանության, վորին նրա ամբողջ քաղաքական ու տնտեսական աշխատանքի մեջ ղեկավարում է բանվոր դասակարգի գիտակից ավանգարդը—կոմկուսակցությունը։ Լինելով կոմմունիզմի դպրոց առհասարակ՝ արհմիությունները մասնավորապես պիտի լինեն սոցիալիստական արդյունաբերության (իսկ հետո աստիճանաբար հողագործության) կառավարչության դպրոց բանվորների ամբողջ մասսայի, իսկ հետո և բոլոր աշխատավորների համար...

Արհմիությունները՝ անմիջականորեն իրանց վրա չառնելով վեր-
հսկողության վորևե գործառնություն մասնավոր և կապալով տրված
ձեռնարկությունների արտադրության վրա՝ մասնավոր-կապիտալիս-
տական արդյունաբերության կարգավորման մեջ իրանց մասնակցու-
թյունն իրագործում են բացառապես մասնակցություն բերելով համա-
պատասխան պետական որգաններում։ Ամբողջ կուլտուր-լուսավորական
աշխատանքի և արտադրական պրոպագանդի մեջ մասնակցություն
բերելու հետ միասին արհմիությունների նման աշխատանքը պիտի
բանվոր դասակարգին ու աշխատող մասսային ավելի ընդարձակորեն
ու ավելի խոր գրավե պետական տնտեսության վողջ շինարարության
մեջ, ծանոթացնելով նրանց տնտեսական կյանքի բոլոր անցուդարձե-
րի, արդյունաբերական աշխատանքի բոլոր մանրամասների հետ, սկը-
սելով հում նյութերի մթերումից և վերջացնելով արդյունքի ռեալի-
զացիայով և տալով էլ ավելի կոնկրետ պատկերացում թե սոցիալիստա-
կան տնտեսության միասնական պետպլանի, նույնպես և բանվորի ու
գյուղացու գործնական շահագրգռության մասին այդ պլանի իրագործ-
ման համար։

(ՌԿԿ XI համագումարի բանաձևից)

3. ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՆԵՊ-Ի ԱՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ինչքան էլ մեծ չլիներ մեր արհմիությունների դերը պրոլետա-
րիատի իշխանության համար մղված պայքարի և քաղաքացիական պա-
տերազմի ժամանակաշրջաններում, էլ ավելի ընդարձակ է նրանց գոր-
ծունեության ասպարեզը ներկա մոմենտին, էլ ավելի կարևոր են
նրանց առաջ ծառացած խնդիրները։
Մեր արդյունաբերության աճման հետ ԽՍՀՄիության պրոլե-
տարիատն աճում և հզորանում է վոչ միայն քանակորեն, այլ և վո-
րակի տեսակետից։ Պրոլետարիատի ապադասակարգայնացման ծանր
պրոցեսը յետ է մնացել։ Աճում է բանվոր դասակարգի զորությունը,
աճում է նրա ակտիվությունը։ Մեր արդյունաբերության հետագա ա-
ճման հետ միասին ավելի մեծ չափով պիտի աճի ԽՍՀՄ բանվոր դա-
սակարգի ակտիվությունը և սեփական ուժի գիտակցությունը։
Արհմիությունները մեզ մոտ հանդիսանում են կարևորագույն մաս-
սայական կազմակերպություն, վորը համարյա գլխովին է ընդգրկում
մեր Միության բանվորներին։ Այժմ, յերբ ԽՍՀՄիության պրոլետա-
րիատն արդեն իրագործում է սոցիալիզմի գործնական շինարարու-
թյան խնդիրը, պրոլետարական հեղափոխության արդի ստադիան այդ
կազմակերպությանն առաջադրում է առանձնապես կարևոր պահանջ-

ներ։ Աշխատելով յերկրի տնտեսական վերելքի գործի վրա՝ պրոլետարիատն այդ նույն ժամանակ իր վրա յե առնում ղեկավարող դերը մասսայի կուլտուրական բարձրացման գործում, վորը զուգահեռ կընթանա ԽՍՀՄիության տնտեսական զորության աճման հետ և աստիճանաբար կհասնի «կուլտուրական հեղափոխության» (Լենին)։ Սոցիալիզմի սկզբունքների իսկապես մասսաների առօրյա կյանքն անցկացնելու այս ամբողջ մեծ աշխատանքի մեջ արհմիություններին բաժին են ընկնում անտարակուսելիորեն ահագին խնդիրներ։

Կուսակցության XI համագումարի բանաձևն արհմիությունների դերի ու խնդիրների մասին, վոր գրված է ՆԵՊ-ի իսկ սկզբից, կյանքի կողմից հաստատություն գտավ յուրաքանչյուր քայլափոխում։ Համկկ XIV համագումարը, նշանառելով արհմիությունների խնդիրները ՆԵՊ-ի առաջին հնգամյակի պահուն, ամբողջովին յելնում է այն ընդհանուր գնահատականներից ու սկզբունքներից, վորոնք XI համագումարի բանաձևի հիմքումն են դրված։ ԽՍՀՄ արհմիություններն իրանց պարզ հաշիվ են տալիս այն բանում, թե ՆԵՊ-ը դեպի սոցիալիզմն անցնելու մի այնպիսի ձև է, վորը «տնտեսական մրցակցություն է թույլատրում կառուցվող սոցիալիզմի և վերածնունդի ձգտող կապիտալիզմի միջև՝ խարխլված բազմամիլիոն գյուղացիության շուկայի միջոցով տնտեսական շահերի գոհացման հողի վրա» (XI համագումարի բանաձևը արհմիությունների մասին)։ Այս անցվորիկ ժամանակաշրջանում ԽՍՀՄ արհմիությունների կարևորագույն խնդիրներից մեկն է հանդիսանում սիստեմատիկ բազմակողմանի յեռանդագին աջակցություն ու օգնություն ցույց տալը կոմկուսակցությանը և Խորհրդային իշխանությանը նրանց այն պայքարում, վոր ուղղված է բանվորական պետության ապպարատի բյուրոկրատական խեղաթյուրումների դեմ, այլ և հավասարապես նրանց այն աշխատանքի մեջ, վոր ձգտում է բարելավել և հարմարեցնել այդ ապպարատը բանվորական ու գյուղացիական մասսաներին իսկապես սպասավորելու համար։

Պրոլետարական դիկտատուրայի իններորդ տարեմուտին ել ավելի զորավորապես գծագրվող տնտեսական վերելքի ֆոնի վրա ել ավելի յե աճում թե քաղաքի և թե գյուղի բնակչության բոլոր շերտերի քաղաքական, տնտեսական, կուլտուրական ակտիվությունը։ Նույնպես աճում է բնակչության այն տարրերի—նեպման, կուլակություն, քաղքենիություն, բուրժուական ինտելլիգենցիայի մի մասը և այլն—ակտիվությունը, վորոնք թշնամի և կիսաթշնամի յեն պրոլետարական դիկտատուրային։ Նման պայմանում կոմկուսակցության առաջնագույն և կարևորագույն խնդիրն է հանդիսանում ի մի ժողովել արհմիությունների մեջ կազմակերպված բանվորական մասսաների վողջ յեռանդը և ակտիվությունը, վորպեսզի դրանով ուժեղացվի ու ավե-

լացվի պրոլետարիատի տեսակարար կշիռը և ղեկավար դերը սոցիալիստական հեղափոխության հետագա ընթացքի մեջ։

Ավելի, քան յերբևիցե յեղել է մինչև օրս, մեր արհմիությունները պիտի դառնան շինարարության, նախաձեռնության, ակտիվության, բանվորական ուժերի խմբավորման, նրանց գլխովին կազմակերպման դպրոց, դպրոց, վոր աշխատողների ել ավելի լայն մասսաներ է գրավում սոցիալիզմի շինարարության, կուլտուրայի բարձրացման գործի մեջ, բյուրոկրատական խեղաթյուրումների դեմ մղվող պայքարի մեջ,—մի խոսքով՝ կոմմունիզմի իսկական դպրոց։

(XIV կուսհամագումարի արհմիությունների մասին հանած բանաձևից)

ԹԵՄԱՆԵՐ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Վերցրեք ձեր արհմիութենական տոմսը և կարդացեք նրա մեջ տպագրված կանոնադրությունում, թե ինչ խնդիրներ է առաջադրում ձեր արհմիությունը։ Ի՞նչ չափով են այդ խնդիրները զուգադիպում արհմիությունների այն խնդիրների հետ, վորոնց մասին մենք խոսել ենք ներկա զրույցում։

2. Համառոտ զեկուցում արեք, համեմատելով նրա մեջ ձեր արհմիության ռազմական կոմմունիզմի տարիների աշխատանքը ՆԵՊ-ի տարիների աշխատանքի հետ (տարիֆ-տնտեսական աշխատանքի գծով, պետական տնտեսական աշխատանքի մեջ մասնակցություն բերելու գծով, կուլտուր-լուսավորական աշխատանքի գծով և այլն)։

3. Մանրամասն պատմեցեք ձեր ձեռնարկության ֆաբկոմի (գործարկոմի) աշխատանքի մասին։ Մանրամասն պատմեցեք նրա գործունեության մասին աշխատանքի պահպանության, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու, կուլտուրական աշխատանքի և այլն բնագավառներում։ Մատնանշեցեք, թե ինչ չափով է նա պաշտպանում ձեռնարկության մեջ աշխատողների շահերը, և ինչ չափով է նրա աշխատանքին լծակցված աշխատողների մասսան։

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Ինչո՞ւմն է լենինիզմի ուսմունքի եյությունը արհմիությունների մասին։

2. Ի՞նչ խնդիրներ և ինչպես են կատարել մեր արհմիությունները Խորհրդային իշխանության գոյության տարբեր ժամանակաշրջաններում։

3. Ինչո՞ւմն է XIV կուսհամագումարի կողմից արհմիությունների մասին հանած վորոշումների եյությունն ու իմաստը։

ԶՐՈՒՅՑ ՏԱՍՆԵՎԻՆՆԵՐՈՐԴ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՊԱՅՔԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՊ-Ի ԺԱՄԱՆԱԿ

Ընդդեմ Փրակցիաների յեվ Փրակցիոն պայքարի, մորոնք խանգարում են կուսակցությանը սոցիալիզմի մեծ շինարարությունը ղ՝ կավարել:

Լենինյան կուսակցության միասնականության ու կուռ միության համար:

(ԿԿ յեվ ԿՎՀ հուլիսյան (1926) միացյալ պլենումի բանաձեվից)

Ինչի՞ մասին է զրույցը:

Նախորդ զրույցներում մենք քննում եյինք մեր կուսակցության քաղաքականությունը և տեսանք, թե ինչպես լենինյան պատգամներին հավատարիմ այդ քաղաքականության ոգնությամբ՝ կուսակցությունը դեպի սոցիալիզմ է տանում մեր յերկիրը, վորի մեջ բնակչության գերակշռող մասսան մանր գյուղացիությունն է: Քաղաքացիական պատերազմի ավարտումի և ՆԵՊ-ին անցնելու մոմենտից սկսած ամբողջ ժամանակաընթացքում կուսակցությունն իր քաղաքականության համար ստիպված եր պայքար մղել իր սեփական շարքերում նկատվող լենինիզմից կատարվող թեքումների դեմ:

Ներկա զրույցում մենք կքննենք այդ թեքումների ծագումը և եյությունը, ցույց կտանք, թե ինչումն է նրանց անճշտությունը և վտանգը կուսակցության համար: Դրա հետ միասին մենք կքննենք, թե ինչպես է կուսակցությունը պայքարել այդ թեքումների դեմ և ինչպես է նա կառուցվել ՆԵՊ-ի տարիներին, վորպեսզի ամրացնե իր շարքերի միասնականությունը և կուռ միությունը:

1. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՈՊՊՈԶԻՑԻՈՆ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՆԵՊ-ԻՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՊԱՀՈՒՆ

Ռազմական կոմմունիզմի ժամանակաշրջանի արտացոլումը կուսակցության վիճակի վրա քաղաքացիական պատերազմի վերջում: 1920/21 թվականի ներկուսակցական կրիզիսը որպես արտացոլում յերկրի մեջ գոյություն ունեցող կրիզիսի:

Հոկտեմբերյան հեղափոխության և հակահեղափոխության դեմ մղած պայքարին նվիրած զրույցում մենք խոսեցինք այն մասին, թե ռազմական կոմմունիզմի ժամանակաշրջանում յերկրի մեջ ամեն բան յենթարկված եր մի խնդրի—ինչ էլ վոր լինի, հաղթել թշնամուն և պաշտպանել պրոլետարիատի դիկտատուրան: Այդ խնդրի իրագործումը խիստ անհնարին կլիներ, յեթե ինքը մեր կուսակցությունը ռազմական կարգով չվերակառուցվեր:

«Ռազմական կոմմունիզմի» ժամանակաշրջանը կուսակցության համար խստագույն կենտրոնացման ժամանակաշրջան եր: Ահա ինչ է ասում կուսակցության VIII համագումարի (1919 թ.) ռազմական կոմմունիզմի տարիներին վերաբերող բանաձևը կենտրոնացման ու կարգապահության մասին.

«... Կուսակցությունը գտնվում է այնպիսի վիճակում, յերբ խստագույն կենտրոնացումը և ամենադաժան կարգապահությունը հանդիսանում են բացարձակ անհրաժեշտություն: Բարձր ինստանցիաների բոլոր վորոշումները բացարձակապես պարտադիր են վարի ինստանցիաների համար: Յուրաքանչյուր վորոշում նախ և առաջ պիտի կատարվի, և միայն դրանից հետո յե թույլատրելի բողոքարկում անել համապատասխան կուսակցական որգանին: Այս իմաստով կուսակցության մեջ տվյալ ժամանակաշրջանում ուղղակի ռազմական կարգապահություն է անհրաժեշտ: Կուսակցության բոլոր կենտրոնացման յենթարկվող ձեռնարկությունները (հրատարակչություն, պրոպագանդա և այլն) պիտի կենտրոնացվեն գործի շահի համար»:

Կուսակցության X համագումարը, ուր վճռվեց ՆԵՊ-ին անցնելու հարցը, իր բանաձևի մեջ ամփոփեց այն կազմակերպչական սկզբունքները, վորոնցով ՀամԿԿ (բ) ղեկավարվում եր ռազմական կոմմունիզմի դաժան տարիներին:

«Կուսակցության կազմակերպչական ձևը,—ասում է համագումարի բանաձևը,—անխուսափելիորեն պիտի լինի կուսակցական կազմակերպության միլիտարիզացիա *: Նման նրան, ինչպես պրոլետարական դիկտատուրայի ձևն ստացել է ռազմական պրոլետարական դիկտատուրայի բնույթ, նույնպես և կուսակցական կազմակերպության ձևն ընդունել է—և հեղափոխական նպատակահարմարության տեսա-

* Միլիտարիզացիա—կառուցում ռազմական ձևով:

կետից պիտի ընդունել — նման պայմաններում համապատասխան բնույթ: Դա ընդհանուր առմամբ և ամբողջապես արտահայտվել է ծայրաստիճան կազմակերպչական կենտրոնացման և կուսակցական կազմակերպության կոլլեկտիվ օրգանների կծկման մեջ:

Կուսակցական աշխատանքի մեթոդները ճիշտ նույնպես բղխում եյին ռազմական գործողությունների անհրաժեշտությունից և համապատասխանում կազմակերպչական ձևերին: Նրանք ընդհանուր առմամբ և ամբողջապես ձգտում եյին նմանել ռազմական հրամանների սիստեմին, վորոնք տրվում եյին ղեկավարող կուսակցական հիմնարկների կողմից և վորոնք անառարկելիորեն կատարվում եյին առանց քննության առնելու կուսակցության շարքային անդամների կողմից: Տիպիկ աշխատանքն եր անընդհատ մոբիլիզացիաները, նախ և առաջ ռազմաճակատի համար, և կուսակցական ուժերի վերաբաշխումը այդ հիմնական հայեցակետից:

Միայն նման կառուցվածքի շնորհիվ է, վոր կուսակցությանը հաջողվեց հաղթահարել հակառակորդի դիմադրությունը, հաղթական դուրս գալ պայքարից: Այդ կառուցվածքը ռազմական ժամանակաշրջանի համար առավել նպատակահարմարն եր»:

Բայց այն, ինչ նպատակահարմար ու անհրաժեշտ եր քաղաքացիական պատերազմի ժամանակ, արդեն պիտանի չեր նոր ժամանակաշրջանի համար, յերբ հարկավոր եր ռազմական կոմմունիզմից ու նրա աշխատանքի յեղանակներից անցնել նոր տնտեսական քաղաքականության:

Ռազմական կոմմունիզմի ժամանակաշրջանում ստեղծվել է կուսակցական ապպարատի սակավ ինչ բյուրոկրատացում, այսինքն նրա անջատումը մասսաներից: Դա անխուսափելիորեն բղխում եր տիրապետող կուսակցության ռազմական հրամանների սիստեմից, վոր հնարավորություն չեր տալիս կուսակցական մասսային ակտիվ մասնակցություն հրավիրելու համակուսակցական և հանուրքաղաքական հարցերի լուծման մեջ: Այնինչ կուսակցության մեջ կուտակվել եյին մեծ ակտիվության տարրեր, վորոնք դրա համար յելք չեյին գտնում, կապված լինելով կուսակցության միլիտարիզացիայով:

Հենց միայն այդ հանգամանքը պահանջում եր կուսակցության աշխատանքի նոր յեղանակներ: Հարկավոր եյին կուսակցական մասսային մոտենալու, նրան տիրելու նոր յեղանակներ, կապի նոր յեղանակներ նրա ու կուսակցական ապպարատի միջև, ճիշտ այնպես, ինչպես ՆԵՊ-ին անցնելու հետ հարկավորվեցին մոտեցումի նոր յեղանակներ դեպի արհմիությունների մեջ կազմակերպված բանվորական մասսան և սոցիալիզմի շինարարության մեջ մոտեցումի նոր յեղանակներ դեպի գյուղացիական մասսան: Հարկավոր եր անցում կատարել դեպի ներկուսակցական դեմոկրատիան: Այն էլ սկսվեց կուսակցության X համագումարի կողմից:

Բայց ՆԵՊ-ին անցնելու պահուն, ինչպես մենք արդեն գիտենք, յերկիրն ապրում եր խոր տնտեսական ու քաղաքական կրիզիս: Այն արտացոլվեց և կուսակցության վրա: Կուսակցությունն էլ կրեց մեծ կրիզիս: Կուսակցության մեջ կազմավորվեցին միքանի խմբավորումներ, վորոնք արտացոլում եյին մանր-բուրժուական տարրերի սաստիկ աճումը յերկրում և խեղաթյուրում եյին կուսակցության խնդիրների հարցը ՆԵՊ-ին անցնելու հետ հարակից: Խնդիրն սկսվեց, ինչպես մատնանշում եր Վլադիմիր Իլյիչը, մանր տարաձայնություններից, վորոնցից «կուսակցությունը հասավ» մինչև պառակտման սպառնալիքը շնորհիվ օպպոզիցիոներների մեջ տիրող գաղափարական վայրիվերումների և խիստ վնասակար թեքումների:

ՆԵՊ-ին անցնելու ժամանակաշրջանի ֆրակցիոն խմբավորումները:

Մանր տարաձայնություններն աճեցին ու մեծացան և արտահայտվեցին ֆրակցիոն խմբավորումների մեջ արդեն արհմիությունների հարցի առիթով: Մենք արդեն խոսել ենք այդ խմբավորումների մասին արհմիությունների խնդիրներին նվիրված զրույցում և տեսել, թե քաղաքական ու տնտեսական կրիզիսի այդ դժվարին ժամանակաշրջանում ինչպիսի անճիշտ, վնասակար և պրոլետարական պետության համար վտանգավոր տեսակետներ եյին առաջադրում տրոցկիստների խմբավորումը և բանվորական օպպոզիցիայի խմբավորումը, վորը գլխավորում եյին ընկերներ Շլյապնիկովը և Ս. Մեդվեդևը:

Պակաս վնասակար չեյին օպպոզիցիոն խմբավորումների հայացքները ՆԵՊ-ին անցնելու պահուն կուսակցության կազմակերպչական շինարարության հարցերի առիթով:

«Բանվորական օպպոզիցիայի» կողմնակիցները յերկրի գլխին թափված բոլոր աղետների ու կրիզիսների մեջ մեղադրում եյին Կենտրոնական Կոմիտեյին: Նրանք պնդում եյին, թե ԿԿ հանցանքով կուսակցությունը կտրվել է բանվորական մասսաներից, թե ԿԿ վոչ-պրոլետարական քաղաքականություն է վարել, թե նա չի վստահացել վարչերերի [?] գիտակցության աճմանը, այսինքն չի վստահացել բանվորներին. ասում եյին, թե ԿԿ նման քաղաքականությունը հանգել է նրան, վոր բանվորները մասսայորեն հեռանում են կուսակցությունից և այլն: «Բանվորական օպպոզիցիան» բնավ չեր ըմբռնում այն կապը, վոր կա կուսակցության կազմակերպչական ձևի և այս կամ այն ժամանակաշրջանի միջև, ինչ յերկիրն է ապրում: Ուստի և նա չեր կարողանում ըմբռնել, թե կուսակցության մեջ տիրող վիճակը, վորի մասին մենք խոսեցինք վերը, ծագել է ռազմական կոմմունիզմի ժամանակաշրջանի առանձնահատկությունների հողի վրա, և չեր կարողանում ուղիղ կարգել [?] հարցը այն կազմակերպչական ձևի մասին, վորին

պիտի անցներ կուսակցությունը: Բոլոր մեղքերի մեջ մեղադրելով կուսակցության «վերնաշերտերը», այսինքն նրա ղեկավար օրգանները, «բանվորական օպպոզիցիան» նրանց հակադրում էր «վարի շերտերը»— բանվորական բջիջները ֆաբրիկներում և գործարաններում և ըստ էության խոսելով՝ բացասում էր կուսակցության ամեն մի ղեկավարություն ԿԿ կողմից կենտրոնում և կուսակցական կոմիտեների կողմից տեղերում: «Բանվորական օպպոզիցիայի» կողմնակիցները, ինչպես իրանք էին ասում, պահանջում էին խոսքի ազատություն և քննադատության* ազատություն, պահանջում էին կուսակցական բջիջների համար վորոշ իրավունքներ, վորոնք օրենսդրական կարգով պիտի դրոշմված լինեին Խորհրդային Սահմանադրության** մեջ, պահանջում էին, վոր կուսակցությունը վորևե պաշտոնի համար չընտրի այնպիսի անձանց, վորոնք ֆիզիկական աշխատանքով չեն զբաղվում և այլն:

«Բանվորական օպպոզիցիայի» կողմից կուսակցության վրա յեղած հարձակումները շատ դեպքերում բառացիորեն կրկնում էին այն հարձակումները, վորոնք հնչվում էին մենշևիկների ու սոց.-հեղափոխականների կողմից:

«Բանվորական օպպոզիցիայի» բոլոր հայացքները, առաջինից մինչև վերջինը, բղխում էին նրանից, վոր նա խոնարհվում էր բանվոր դասակարգի հետամնաց շերտերի առաջ, վորոնք այն ժամանակ գյուղացիության հետ միասին՝ շնորհիվ մեր յերկրում տիրող տնտեսական կրիզիսի՝ անբավականություն էին արտահայտում և ամեն բանի մեջ կուսակցությունը մեղադրում: Այդ պատճառով «բանվորական օպպոզիցիան» չէ թե միայն բացասում էր կուսակցության «վերնաշերտերի» ղեկավարությունը նրա «վարի շերտերի» նկատմամբ, այլ և կուսակցության ղեկավարությունը բանվոր դասակարգի նկատմամբ: Կուսակցությունը չէ, վոր պիտի ղեկավարե բանվոր դասակարգին: Արհմիությունները—ահա պրոլետարիատի ամենախիկական, ամենից անշեղ դասակարգային կազմակերպությունը,—ասում էր ընկ. Կոլլոնտայը:

* «Բոլոր այդ դատողությունները խոսքի ազատության ու քննադատության ազատության մասին, վորոնք այդ ամբողջ բրոշյուրի (ընկ. Կոլլոնտայ.—Մ. Գ.) մեջ փայլում են և արտացոլում «բանվորական օպպոզիցիայի» բոլոր ճառերում, կազմում են առանձին իմաստ չունեցող ճառերի իմաստի ինը տասներորդականը, բոլոր այդ խոսքերը նույն կարգի յեն»: (Վ. Ի. Լենին, Յերկերի ժող., հ. XVIII, մ. 1, եջ 128, ռուսերեն):

** «Յես համարում եմ, թե բանվորական օպպոզիցիան սխալվում է, յերբ բջիջների համար իրավունքների վորոշումն է պահանջում, վորոնք օրենսդրական կարգով դրոշմված են Խորհրդային Սահմանադրության կողմից»: (Ն. Ի. Բուխարին. Յեզրափակիչ խոսք կուսակցական շինարարության մասին յեղած զեկուցման առիթով X կուսհամագումարում: ՌԿԿ (բ) X համագումարի բյուլլետեն, № 6, եջ 9, ռուսերեն):

զարգացնելով և պաշտպանելով «բանվորական օպպոզիցիայի» հայացք-
ներն իր՝ համագումարի անդամներին բաժանվող բրոշյուրում: Արհ-
միություններն էլ պիտի ղեկավարեն բանվոր դասակարգին և նրա
կուսակցությանը, այլ վոչ թե կուսակցությունը արհմիություններին
և նրանց մեջ միավորված բանվոր դասակարգին: Այդ ասվում էր «բան-
վորական օպպոզիցիայի» «արհմիութենական խմբակների» մասին
առաջադրած թեզիսներում*:

«Ռազմական կոմմունիզմի» կրիզիսի և ՆԵՊ-ին անցնելու հետ
կապված մանր-բուրժուական թեքումի մյուս արտահայտությունն էր
«դեմոկրատիկ կենտրոնացման խմբակի» յերևան գալը կուսակցության
մեջ: Այդ հոսանքը պահանջում էր միքանի բարենորոգումներ անց-
կացնել ներկուսակցական կյանքում, պահանջում էր առավել մեծ
ինքնուրույնություն տալ տեղական կուսակցական կազմակերպու-
թյուններին, անկախություն նահանգական գործկոմներին, բողոքում էր
«նշանակովիության» դեմ (այսինքն ԿԿ և առհասարակ բարձր կան-
գնած կազմակերպությունների իրավունքի դեմ այս կամ այն աշխա-
տակցին պաշտոնի նշանակելու կուսակցական, խորհրդային կամ արհ-
միութենական կազմակերպության մեջ) և այլն: «Դեմոկրատիկ կեն-
տրոնացման խմբակը» գոյություն պահպանեց 1920/21 թվականին և իր
թեզիսներով հանդես յեկավ IX և X կուսհամագումարներում: Այդ
խմբակի հայացքները մի ձգտում ունեին—թուլացնել կուսակցական ազ-
դեցությունը խորհրդային ապպարատի վրա յեվ թուլացնել այն դաժան
կարգապահությունը կուսակցության մեջ, վորն անհրաժեշտ էր քաղաքա-
ցիական պատերազմի յեվ ՆԵՊ-ին անցնելու տարիներին: Ձգտումը
առավել մեծ «ազատություն» (կուսակցությունից) ստեղծել խորհր-
դային ապպարատի համար՝ անպայման արտացոլումն էր այն մանր-
բուրժուական տրամադրությունների, վորոնք աճել էին յերկրում և
վորոնք իրանց արտահայտությունը գտան Կրոնշտադտի ապստամբու-
թյան լոզունգներում և առանձնապես «Խորհուրդները առանց կոմմու-
նիստների» լոզունգում: Վլադիմիր Իլյիչն էլ այս պատճառով ՌԿԿ X
համագումարի առաջ «դեմոկրատիկ կենտրոնացման խմբակը» բնո-
րոշեց հետևյալ կերպով. «Ո՞վ է տալիս շատ: Ով շատ է «իրավունք-
ներ» խոստանում անկուսակցականներին՝ միացեք ՌԿԿ կուսհամագու-
մարի առիթով»:

*) «Գոյություն ունեն բանվորական օպպոզիցիայի թեզիսները արհմիութենա-
կան խմբակների մասին, ուր ուղղակի ասված է. արհմիություններին է պատկանում
ղեկավարող դերը կուսակցության նկատմամբ: Յեվ մեզ դեռ ասում են, թե դա մանր-
բուրժուական խեղաթյուրում չէ» (Ն. Ի. Բուխարին. Յեզրափակիչ խոսք կուսակցա-
կան շինարարության մասին յեղած զեկուցման առիթով X կուսհամագումարում: X
համագումարի բյուլլետեն, № 6, եջ 10, ռուսերեն):

Պայքար ֆրակցիոնական խմբավորումների դեմ հանուն կուսակցության միասնականության։ Ներկուսակցական դեմոկրատիայի հարցի ուղիղ կարգման ՆԵՊ-ին անցնելու հետ հարակից։

Սակայն կուսակցության օպպոզիցիոն խմբավորումների գլխավորագույն վտանգը ՆԵՊ-ին անցնելու ժամանակաշրջանում կայանում եր վոչ այնքան նրանց անճիշտ հայացքների մեջ, վորքան նրանում, վոր ՆԵՊ-ին անցնելու հետ հարակից նրանք չեյին ըմբռնում կուսակցության իսկ առաջ կանգնած հիմնական խնդիրը — կուսակցական շարքերի ըստ ամենայնի կուռ միացման ու բացարձակ միասնականության խնդիրը։

Նոր տնտեսական քաղաքականության անցումը կապված եր ահագին դժվարությունների հետ։ Կուսակցության իսկ շարքերում դիտվում եյին տատանումներ, վոր յերբեմն հասնում եյին խուճապի, հասնում եյին նրան, վոր ՆԵՊ-ը մեկնաբանվում եր իբրև Խորհրդային իշխանության ու պրոլետարիատի դիկտատուրայի կորուստ։ Պահանջվում եր ՆԵՊ-ին անցնելը կատարել այնպես, վորպեսզի բանվոր դասակարգը սերտորեն կապվի գյուղացիության հետ, և վորպեսզի այդ նույն ժամանակ չթուլանա գյուղացիության ղեկավարությունը պրոլետարիատի կողմից, չթուլանա բանվոր դասակարգի, պետական ապպարատի և Խորհրդային իշխանության ղեկավարությունը կուսակցության կողմից։

Այդ բոլորը կարելի յեր իրագործել միայն մի պայմանով, վոր բացարձակ գաղափարական միասնականություն լինի կուսակցության մեջ և կուսակցության այնպիսի կազմակերպչական կառուցում, վորը պրոլետարիատի դիկտատուրայի որով նրա համար լիովին պահպանեն ղեկավարող ուժի դերը։

Այդ պայքարը կուսակցության միասնականության համար և ընդդեմ վերջինիս դերի ու խնդիրների խեղաթյուրման անցկացրին կուսակցության X և XI համագումարները, վորոնք միևնույն ժամանակ մատնանշեցին այն նոր կազմակերպչական ձևերը, վորոնց կուսակցությունը պիտի անցներ ՆԵՊ-ի ժամանակ։ X համագումարը բանաձև ընդունեց սինդիկալիստական * և անարխիստական ** թեքումների մասին մեր կուսակցության մեջ։ Նրա մեջ համագումարը մատնանշեց, թե այդ թեքումները ծնունդ են առել նրանից, վոր պրոլետարիատի ու կուսակցության վրա ներգործություն ունի մանր-բուրժուական տարերքը և մասամբ բղխում է նրանից, վոր մանր-բուրժուական տարրեր են մտել կուսակցության շարքերը։ Այդ թեքումի առավել ավարտված և առավել ձևակերպված արտահայտությունն են հանդիսանում «բանվորական օպպոզիցիայի» հայացքները, վորը նահանջում է դասակարգային պայքարի հիմնական հասկացողությունից և դասակարգերը տարբերելու հիմնական պահանջից (ժողովրդական տնտեսության «արտադրողների համագումարի» կառավարչությանը հանձնելու պահանջի մեջ, ինչի մասին մենք խոսել ենք նախորդ զրույցում) և սխալ դնում հարցը կուսակցության և լայն անկուսակցական մասսաների հարաբերանքի մասին, հանգելով կուսակցության յենթարկմանը անկուսակցական տարրերին։ Համագումարն ընդունեց, թե «բանվորական օպպոզիցիայի» և նման խմբակների ու անձանց հայացքները ներկայացնում են «ահագին քաղաքական անճշտություն և անմիջական քաղաքական վտանգ իշխանությունը պրոլետարիատի ձեռքում պահելու համար», թե անհրաժեշտ է անշեղ ու սիստեմատիկ պայքար այդ հայացքների դեմ։

Համագումարի կողմից «կուսակցության միասնականության մասին» ընդունված առանձին բանաձևը (գրել է Վլադիմիր Իլյիչը) կտրականապես դատապարտեց կուսակցության մեջ ստեղծված օպպոզիցիոն խմբավորումները, ամբողջ կուսակցության ուշադրությունը դարձրեց խիստ միասնականության, կուռ միության և կարգապահության անհրաժեշտության վրա կուսակցության մեջ, մանավանդ նկատի ունենալով մանր-բուրժուական տատանումների ուժեղացումը յերկրում։ Բանաձևն ընդգծեց այն վտանգը, վոր պրոլետարիատի դիկտատուրայի համար ներկայացնում են ֆրակցիոնական խմբավորումները, ինչ տեսակի յել լինեն նրանք, պահանջեց անմիջապես լուծել գոյություն ունեցող խմբավորումները և կուսակցությունից անպայման ու անհապաղ վտարելու սպառնալիքի տակ կտրականապես արգելեց նրանց կազմավորումը։

Նոր կազմակերպչական ձևերի հարցը X համագումարի կողմից մանրամասն լուսաբանվեց կուսակցական շինարարության մասին ընդունված բանաձևի մեջ։

«...Մոմենտի հերթական կարիքները, — ասում է այդ բանաձևը, — պահանջում են նոր կազմակերպչական կեղև։ Նման ձև է հանդիսանում բանվորական դեմոկրատիայի ձևը։ Բանվորական դեմոկրատիայի վարքագծի կուրսը պիտի տարվի նույն վճռականությամբ և նույն յեռանդով ել կիրառվի կյանքում, ինչպես անցյալ ժամանակաշրջանում անց եր կացվում կուսակցության միլիտարիզացիայի կուրսը, վոր չափով դա արգելքներ չի հանդիպում հակահեղափոխության ուժերի դեմ անմիջական պայքար մղելու կարիքներից։

* Սինդիկալիստներ — բանվորական շարժման մեջ մի հոսանքի կողմնակիցներ, վորը բացասում է բանվոր դասակարգի քաղաքական պայքարի անհրաժեշտությունը և քաղաքական կուսակցության ստեղծումը բանվոր դասակարգի կողմից։

** Անարխիստներ (անիշխանականներ) — այն ուսմունքի կողմնակիցները, վոր բացասում է ամեն մի պետություն և, հետևաբար, նաև քաղաքական պայքարը։

Բանվորական ներկուսակցական դեմոկրատիայի տակ հասկացվում ե այնպիսի կազմակերպչական ձեվ կուսակցական կոմունիստական քաղաքականությունը անցկացնելու պահին, վորն ապահովում ե կուսակցության բոլոր անդամների՝ ընդհուպ մինչեվ առավել հետամնացների՝ ակտիվ մասնակցությունը կուսակցության կյանքի մեջ, բոլոր հարցերի քննության մեջ, վոր հրապարակ են հանվում նրա առաջ, այդ հարցերի լուծման մեջ, այլ յեվ հավասարապես ակտիվ մասնակցություն կուսակցական շինարարության մեջ։ Բանվորական դեմոկրատիայի ձեվը բացասում ե ամեն մի նշանակովիություն իբրեվ սիստեմ, այլ իր արտահայտությունն ե գտնում վարից վեր բոլոր հիմնարկների լայն ընտրականության մեջ, նրանց հաշվետու լինելու, վերհսկողության յենթարկվելու մեջ յեվ այլն։

Աշխատանքի մեթոդներ են հանդիսանում նախ և առաջ բոլոր կարևորագույն հարցերի՝ լայն քննության մեթոդները, դիսկուսիան նրանց առիթով՝ պահպանելով ներկուսակցական քննադատության լրիվ ազատությունը, համակուսակցական վորոշումների մշակման կոլեկտիվ մեթոդները, քանի այդ հարցերի նկատմամբ հանրապարտադիր կուսակցական վորոշումներ չեն ընդունված։ Այդ մեթոդները ներկայիս ստանում են նույնպիսի անհրաժեշտ բնույթ և նույնպիսի կարևորություն, ինչպես և ռազմական հրամանների և նրանց անառարկելի իրագործման մեթոդները քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանում։ Ինքնին հասկանալի յե, թե վորոշումների ընդունելուց հետո այդ վորոշումները պարտադիր են և պետք կատարվեն ծայրահեղորեն արագ ու ճիշտ։ Ինքնին հասկանալի յե, թե կուսակցությունը պետք ունենա բավականաչափ ճկունություն, վորպեսզի անհրաժեշտության դեպքում արագորեն անցնի ռազմական հրամանների սիստեմին»։

X համագումարի ժամանակից ել կուսակցության կողմից սկըսվում է ներկուսակցական դեմոկրատիայի իրագործումը, վորը և մինչև որս մեր կուսակցության կազմակերպչական ձևն է հանդիսանում։

XI կուսհամագումարը նորից վողջ կուսակցության ուշադրությունը դարձրեց այն կտրական անհրաժեշտության վրա, թե պետք կիրառել մի ամբողջ շարք միջոցներ, վորոնք ապահովել կարողանային ներկուսակցական դեմոկրատիան (ընտրականությունը կուսակցության մեջ, ընթացիկ հարցերի լայն քննությունը, կուսակցության շարքային անդամների մարքսիստական կրթության և կուլտուրական մակարդակի բարձրացումը և այլն)։ Բայց դրա հետ միասին XI համագումարն ընդգծեց կենտրոնացում պահպանելու պարտադրականությունը կուսակցության համար։ «Յեթե խստորեն չկիրառվեն դեմոկրատական կենտրոնացման սկզբունքները,—ասում է XI համագումարի բանաձևը,— կուսակցությունը չի կարող կառավարել մի յերկիր, վորն ընդգրկում է յերկրագնդի մակերևույթի համարյա 1/6 մասը»։ Միաժամանակ համագումարն ընդգծեց, թե անհրաժեշտ է կարողանալ պայքար մղել կուսակցության մեջ կիրառվող դեմոկրատիայի հնարավոր ի չարը գործադրությունների ու խեղաթյուրումների հետ և միևնույն ժամանակ զուգակցել այդ պայքարը իսկական կուսակցական դեմոկրատիայի կիրառման հետ իրականի մեջ, բուն կուսակցական աշխատանքի մեջ, դարձնել նրան մի գործիք, վորը նպաստում է բազմակողմանիորեն պարզել կուսակցական մասսաների կարծիքը, նրանց գիտակցության զարգացման ու բարձրացման մի գործիք, իսկական, ներկուսակցական միաձուլության, համերաշխության և միասնականության հասնելու միջոցով։ Այստեղ գերազանցորեն կարևոր է հանդիսանում համագումարի այն բանի մատնանշումը, թե ներկուսակցական դեմոկրատիան պարտավոր է ծառայել կուսակցության միաձուլման, համերաշխության ու միասնականության։

Կուսակցական համագումարի միասնականության այդ նոր կոչը մասամբ առիթ ուներ կուսակցության մեջ միասնականության և կարգապահության նոր խախտումը նախկին «բանվորական ոպպոզիցիայի» մի խումբ անդամների կողմից, վորոնք շարունակում եյին իրանց ոպպոզիցիոն խմբավորումը։ XI համագումարը դատապարտեց այդ խմբակը, վտարելով նրանցից միքանիսին (նախկին մենշևիկների) կուսակցությունից, մյուսներին հանդիմանություն և նախազգուշացում հայտարարելով խիստ պատժի մասին, յեթե նրանք մի անգամ ել սկսեն խախտել X համագումարի վորոշումը կուսակցության միասնականության մասին։

Ավելի ուշ նախկին «բանվորական ոպպոզիցիայի» մի մասը կազմակերպում է անլեգալ խմբակներ «Ռաբոչայա Պրավդա» և «բանվորական խմբակ» անունների տակ, վորոնք արդեն ուղղակի անց եյին կացնում մենշևիկյան հայացքներ և գովաբանվում եյին մենշևիկների կողմից նրանց արտասահմանի լրագրի մեջ։

Վերջապես 1924 թվականին «բանվորական ոպպոզիցիայի» առաջվա ղեկավարներից մեկը՝ ընկ. Սերգեյ Մեդվեդևը, վկայելով, թե նրա հետ լիակատար համաձայն է այդ նույն ոպպոզիցիայի մյուս նախկին ղեկավարը—ընկ. Շլյապնիկովը, մշակեց նրա կողմից Կովկասում (Բագվում) ստեղծած նոր, անլեգալ խմբակի համար առանձին, միանգամայն մենշևիկյան պլատֆորմ։ Այդ պլատֆորմի մեջ, ինչպես ԿԿ և ԿՎՀ 1926 թվականի հուլիսյան պլենումն է մատնանշում, նա իր խոսքը հասցրեց մինչև «մեր սոցիալիստական պետարդյունաբերության հանձնելը օտարերկրյա կապիտալին, մինչև կոմինտերնը և Պրոֆինտերնը լիկվիդացիայի յենթարկելու առաջարկը, այսինքն մինչև

մեր կուսակցության հեղափոխական նպատակների լիկվիդացիան»։

Մի անգամ 1920—1921 թվականին սայթաքելով բայլշևիզմից՝ «բանվորական օպպոզիցիան» այսպես աստիճանից աստիճան ընթացավ դեպի մենշևիկյան հայացքները։

Վորպեսզի լավ յուրացվի «Կուսակցությունը և օպպոզիցիոն խմբավորումները ՆԷՊ-ին անցնելու պահուն» բաժինը, պատասխաններ տվեք հետևյալ հարցերին.

1. Ինչի՞ց բղխեց և ինչի՞ մեջ արտահայտվեց 1920/21 թ. ներկուսակցական կրիզիսը։

2. Ինչի՞ համար եր պայքարում կուսակցությունը օպպոզիցիոն խմբավորումների հետ ՆԷՊ-ին անցնելու պահուն։

3. Ի՞նչպես եյին դնում հարցը ներկուսակցական դեմոկրատիայի մասին կուսակցության X և XI համագումարները։

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆԷՊ-Ի ԱՌԱՋԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՕՊՊՈԶԻՑԻԱՆ

ՆԷՊ-ի առաջին ժամանակաշրջանի դժվարությունները յեվ ներկուսակցական դեմոկրատիայի ծավալումը այդ ժամանակաշրջանի պայմաններում։

ՆԷՊ-ի առաջին ժամանակաշրջանը կուսակցության համար կապված եր մի ամբողջ շարք առանձին դժվարությունների հետ։ Կուսակցությունը առաջին անգամն եր, վոր ստիպված եր ղեկավարել մեր տնտեսության դեռ թույլ սոցիալիստական տարրերի պայքարը ռազմական կոմմունիզմի ժամանակաշրջանից հետո նորից վերածնվող կապիտալիստական տարրերի դեմ։ Ինչպես XI համագումարի բանաձևն եր մատնանշում, կուսակցության անդամից միաժամանակ պահանջվում եր «սովորել շահավետ առևտուր անել պետության օգտին և չկտրվել մասսաներից»։ ՆԷՊ-ի այդ սկզբնաշրջանում կուսակցությունից հեռանում եր գյուղացի-«կոմմունիստների» մի մասը, վորովհետև կուսակցությունը նրանց՝ իբրև մանր տնտեսատերերի՝ սեղմում եր։ Մյուս կողմից մանր-բուրժուական ալիքն իր յետևից քաշ եր տալիս և միքանի այլ անկայուն տարրեր և առաջնորդում եր դեպի այն, վոր միքանի առավելապես վոչ-պրոլետարական տարրերի մեջ նկատվում եր անկման տրամադրություն, դասալքումն կուսակցությունից և այլն։ Այս բոլոր յերևույթների ու տրամադրությունների հետ կուսակցությունը հարկադրված եր պայքարել։

Այսպիսի պայմաններում եր, վոր ՆԷՊ-ի առաջին ժամանակաշրջանում կուսակցությունը ձեռնարկեց ծավալելու ներկուսակցական դեմոկրատիան։ Այս պատճառով ներկուսակցական դեմոկրատիայի ծավալման հետ միաժամանակ կուսակցությունը ձեռք եր առնում մի ամբողջ շարք միջոցներ պայքարելու «բուրժուական բարքերը

բուն կուսակցության մեջ պատվաստելու» փորձերի դեմ, պայքարելու բանսարկության և «խմբավորումների» դեմ, կուսակցական կարգապահությունը խախտելու դեմ և այլն։ XI համագումարն ընդգծեց, թե վորպես կուսակցության առաջ ծառացած են հետևյալ յերեք առաջնահերթ ու կարևորագույն խնդիրները. «1) ներկուսակցական համեբաշխության, միաձուլության և միասնականության ըստ ամենայնի ուժեղացումը, 2) գաղափարական-կոմմունիստական դաստիարակության ուժեղացումը, այսինքն ներկուսակցական աշխատանքի, վորը նպատակ ունի բարձրացնելու փետրվարյան ու Հոկտեմբերյան հեղափոխություններից հետո կուսակցության շարքերը մտած մանավանդ նորա յերիտասարդ անդամների կոմմունիստական զարգացումն ու գիտակցությունը և 3) կուսակցական կարգապահության ամրացումը»։

1923/24 թվականի տնտեսական կրիզիսը յեվ նրա արտացոլումը կուսակցության շարքերում. 1923/24 թ. օպպոզիցիաները։

Կուսակցության համար ՆԷՊ-ի առաջին դժվարությունները, ինչպես և 1920/21 թվականին, արտացոլումն եյին այն դժվարությունների, ինչ ամբողջ յերկիրն եր ապրում։ Դա առանձին ուժով արտահայտվեց 1923/24 թվականին, յերբ յերկրի տնտեսական կրիզիսի հետ կուսակցության մեջ նոր օպպոզիցիա ծագեց։

1923/24 թվականի տնտեսական կրիզիսը ծագեց այն անհամապատասխանության հիման վրա, վոր կար մի կողմից գյուղացիական տնտեսության վերականգնման արագության և մյուս կողմից պետարդյունաբերության միջև։ Աշխատանքաշրջանառության պայմաններում այդ անհամապատասխանությունը հանգեց նրան, վոր տարբերություն առաջացեց արդյունաբերության իրերի անչափ բարձր գների և գյուղատնտեսության արդյունքների ցածր գների միջև («մկրատ»)։ Գյուղացիական տնտեսությունն ի վիճակի չեր թանկ գներով առնելու քաղաքային արդյունաբերության իրերը։ Այդ միևնույն ժամանակ գյուղացիությունը բավականաչափ ընդարձակ ներքին ու արտաքին շուկա չեր գտնում շահավետորեն իր տնտեսության արդյունքները վաճառելու, վորի հետևանքով նրանց գինը խիստ ընկել եր։ Տնտեսական կրիզիսնել ավելի սրվեց շնորհիվ պետական ու կոոպերատիվ առևտրական ապպարատի թերությունների, վորը բարձր վերադիր ծախսեր ուներ, շնորհիվ դրամական տնտեսության թույլ զարգացման և յերկու վալյուտաների գոյության (կայուն—վոսկու և ընկնող—խորհրդային), ինչի հետևանքով գյուղացիական տնտեսությունը սաստիկ վնասվում եր խորհրդային դրամների գնողական ունակության անկումից։

Տնտեսական կրիզիսը, յեթե այն շարունակեր ավելի զարգանալ, սպառնում եր քաղաքական կրիզիսով։ Յեվ իսկապես, հակընթացու-

թյունն արդյունաբերության և գյուղատնտեսության միջև նշանակում էր հակընթացություն պրոլետարիատի ու գյուղացիության միջև, նշանակում էր նոր սպառնալիք բանվոր դասակարգի, գյուղական չքավորության և միջին գյուղացիության դաշինքին, որը մեն-միայն կարող է ապահովել պրոլետարիատի դիկտատուրայի գոյությունը։

Անհրաժեշտ էր անցկացնել մի շարք միջոցներ, որոնք կարող լինեյին մեղմացնել ու մաշել կրիզիսը և նորից ամրացնել բանվոր դասակարգի դաշինքը գյուղացիական մասսայի հետ։

Այդ միջոցների ու կուսակցության խնդիրների հարցում հարակից կրիզիսին ամբողջ կուսակցությունն արմատականորեն տարակարծիք չեղավ այն նոր օպպոզիցիայից, որը կազմվեց 1923/24 թվականին։

Հին օպպոզիցիոն խմբերն ու խմբակները, որոնք գոյություն ունեյին կուսակցության մեջ դեռ մինչև X և X համագումարի ժամանակ, տնտեսական կրիզիսի այդ մոմենտը հարմար գտեցին նրա համար, որպեսզի հարձակման անցնեն ԿԿ դեմ։ 1923/24 թվականի օպպոզիցիան, որ միավորել էր հին խմբավորումների բեկորները և գլխավորվում էր ընկ. Տրոցկու կողմից, իր յելույթներում խիստ անճիշտ գնահատանք էր տալիս յերկրի տնտեսական վիճակին, գուշակում էր խոր տնտեսական կրիզիս և հետագայում ու ԿԿ մեղադրում յերկրի ու կուսակցության սխալ ղեկավարության մեջ։

Սակայն այն միջոցները, որ ինքն օպպոզիցիան էր առաջարկում կրիզիսը հաղթահարելու համար, և որոնց մասին մենք արդեն հիշատակել ենք, յերբ խոսում եյինք կուսակցության և Խորհրդային իշխանության տնտեսական քաղաքականության մասին, առաջնորդում եյին դեպի կրիզիսի էլ առավել ընդարձակում և խորացում, դեպի նրա ահագին վտանգ դառնալը պրոլետարիատի դիկտատուրայի համար։ Ամբողջ կուսակցությունն անհրաժեշտ էր համարում արդյունաբերական իրերի նկատմամբ անցկացնել գների իջեցման քաղաքականություն և բարձրացնել գյուղատնտեսական արդյունքների գները, շուտ իրագործել դրամական բարենորոգումը, կարգավորել ապրանքաշրջանառությունը յերկրում և այլն, նպատակ ունենալով հաղթահարել գների հակընթացությունը արդյունաբերության իրերի և գյուղատնտեսական արդյունքների միջև, այսինքն վերջին հաշվով հակընթացությունը պրոլետարիատի և գյուղացիության միջև, նպատակ ունենալով ամրացնել բանվորների ու գյուղացիների դաշինքը։ Միանգամայն այլ կերպ էր դնում այս բոլոր հարցերը նոր օպպոզիցիան։ Նա չէր հավատում, թե հնարավոր է անցկացնել դրամական բարենորոգումը, հակառակ էր արտահայտվում արդյունաբերական իրերի գներն իջեցնելու խնդրում, պաշտպանում էր բարձր գների և ի հաշիվ գյուղացիու-

թյան արդյունաբերության շահի բարձրացման քաղաքականությունը, կրիզիսի ամբողջ աղբյուրը տեսնում էր ոչ թե արդյունաբերության ու գյուղատնտեսության զատվածության մեջ, այլ միայն արդյունաբերության անբավարար պլանավորման և նրա կազմակերպության թերությունների մեջ։ Օպպոզիցիայի հայացքների անճշտությունը հիմնավորվում էր հիմնական հայացքի աղաղակող անճշտության վրա, հայացքի, որից յելնում էր օպպոզիցիան։ Այդ հայացքը կարելի յե այսպես արտահայտել. հանձին պետական սոցիալիստական արդյունաբերության մենք ունենք պրոլետարական «մետրոպոլիա» (այսինքն տեր-յերկիր), իսկ հանձին գյուղացիական տնտեսության—մանր-բուրժուական գաղութներ։ Արդյունաբերությունը պիտի զարգանա ի հաշիվ գյուղատնտեսության. օրինակ՝ Անգլիան ապրում է ի հաշիվ Հնդկաստանի։

Արդեն այս բավ է, որպեսզի հասկանան, թե ինչ չափով օպպոզիցիան հեռանում էր Լենինի ուսմունքից բանվոր-գյուղացիական դաշինքի մասին։ Լենինյան կոոպերատիվ պլանի եյությամբ, որի մասին մենք արդեն խոսք ունեցել ենք, պետական արդյունաբերությունը պիտի իր յետևից քաշի գյուղատնտեսությունը և կոոպերացիայի օգնությամբ վերափոխի նրան, առաջնորդելով նրան դեպի սոցիալիզմը։ Իսկ օպպոզիցիոներների առաջարկները ոչ թե պիտի վերափոխեին, այլ քայքայեին գյուղացիական տնտեսությունը։ Բայց ինքնին հասկանալի յե, որ դա միաժամանակ կնշանակեր և բանվորա-գյուղացիական դաշինքի ու պրոլետարական դիկտատուրայի քայքայում։ Ահա ինչու կուսակցությունը պիտի մերժեր ու մերժեց 1923/24 թվականի օպպոզիցիայի բոլոր տնտեսական առաջարկները, հաստատորեն անցկացրեց դրամական բարենորոգումը, շարունակեց արդյունաբերական արդյունքների գների իջեցման քաղաքականությունը և այլն և, ինչպես այժմ գիտե ամեն ոք, բանվոր դասակարգի ու գյուղացիության թե տնտեսական և թե քաղաքական դաշինքի ամրացման գործում նշանակալից հաջողություններ նվաճեց։

1923/24 թվականի օպպոզիցիայի կազմակերպչական պլատֆորմը։

Նույնչափ կորստաբեր էր կուսակցության համար 1923/24 թվականի օպպոզիցիայի առաջադրած կազմակերպչական պլատֆորմը։

Չնայելով 1923/24 թվականի տնտեսական կրիզիսին՝ նոր տնտեսական քաղաքականությունն արդեն այդ ժամանակ արդարացրել էր իրան։ Նա իր հետ բերավ արդյունաբերության վերելք, որ վերջ տվավ պրոլետարիատի ապադասակարգայնացման, բերավ բանվոր դասակարգի կուլտուրական աճում, ակտիվության աճումը նրա միջավայրում և կուսակցության ակտիվության աճումը։ Այս բոլորը հող պատրաստեց էլ ավելի վճռականու-

թյունն արդյունաբերության և գյուղատնտեսության միջև նշանակում էր հակընթացություն պրոլետարիատի ու գյուղացիության միջև, նշանակում էր նոր սպառնալիք բանվոր դասակարգի, գյուղական չքավորության և միջին գյուղացիության դաշինքին, որը մեն-միայն կարող է ապահովել պրոլետարիատի դիկտատուրայի գոյությունը։

Անհրաժեշտ էր անցկացնել մի շարք միջոցներ, որոնք կարող լինեյին մեղմացնել ու ճաշել կրիզիսը և նորից ամրացնել բանվոր դասակարգի դաշինքը գյուղացիական մասսայի հետ։

Այդ միջոցների ու կուսակցության խնդիրների հարցում հարակից կրիզիսին ամբողջ կուսակցությունն արմատականորեն տարակարծիք չեղավ այն նոր օպոզիցիայից, որը կազմվեց 1923/24 թվականին։

Հին օպոզիցիոն խմբերն ու խմբակները, որոնք գոյություն ունեյին կուսակցության մեջ դեռ մինչև X և X համագումարի ժամանակ, տնտեսական կրիզիսի այդ մոմենտը հարմար գտեցին նրա համար, որպեսզի հարձակման անցնեն կկ դեմ։ 1923/24 թվականի օպոզիցիան, որ միավորել էր հին խմբավորումների բեկորները և գլխավորվում էր ընկ. Տրոցկու կողմից, իր չելույթներում խպառ անճիշտ գնահատանք էր տալիս յերկրի տնտեսական վիճակին, գուշակում էր խոր տնտեսական կրիզիս և հետագայում ու կկ մեղադրում յերկրի ու կուսակցության սխալ ղեկավարության մեջ։

Սակայն այն միջոցները, որ ինքն օպոզիցիան էր առաջարկում կրիզիսը հաղթահարելու համար, և որոնց մասին մենք արդեն հիշատակել ենք, յերբ խոսում էինք կուսակցության և Խորհրդային իշխանության տնտեսական քաղաքականության մասին, առաջնորդում էին դեպի կրիզիսի էլ առավել ընդարձակում և խորացում, դեպի նրա առհագին վտանգ դառնալը պրոլետարիատի դիկտատուրայի համար։ Ամբողջ կուսակցությունն անհրաժեշտ էր համարում արդյունաբերական իրերի նկատմամբ անցկացնել գների իջեցման քաղաքականություն և բարձրացնել գյուղատնտեսական արդյունքների գները, շուտ իրագործել դրամական բարենորոգումը, կարգավորել ապրանքաշրջանառությունը յերկրում և այլն, նպատակ ունենալով հաղթահարել գների հակընթացությունը արդյունաբերության իրերի և գյուղատնտեսական արդյունքների միջև, այսինքն վերջին հաշվով հակընթացությունը պրոլետարիատի և գյուղացիության միջև, նպատակ ունենալով ամրացնել բանվորների ու գյուղացիների դաշինքը։ Միանգամայն այլ կերպ էր դնում այս բոլոր հարցերը նոր օպոզիցիան։ Նա չէր հավատում, թե հնարավոր է անցկացնել դրամական բարենորոգումը, հակառակ էր արտահայտվում արդյունաբերական իրերի գներն իջեցնելու խնդրում, պաշտպանում էր բարձր գների և ինաշիվ գյուղացիության արդյունաբերության շահի բարձրացման քաղաքականությունը, կրիզիսի ամբողջ աղբյուրը տեսնում էր չե թե արդյունաբերության ու գյուղատնտեսության զարգացման մեջ, այլ միայն արդյունաբերության անբավարար պլանավորման և նրա կազմակերպության թերությունների մեջ։ Օպոզիցիայի հայացքների անճշտությունը հիմնավորվում էր հիմնական հայացքի աղաղակող անճշտության վրա, հայացքի, որից յելնում էր օպոզիցիան։ Այդ հայացքը կարելի յե այսպես արտահայտել. հանձին պետական սոցիալիստական արդյունաբերության մենք ունենք պրոլետարական «մետրոպոլիա» (այսինքն տեր-յերկիր), իսկ հանձին գյուղացիական տնտեսության—մանր-բուրժուական գաղութներ։ Արդյունաբերությունը պիտի զարգանա ինաշիվ գյուղատնտեսության. օրինակ՝ Անգլիան ապրում է ինաշիվ Հնդկաստանի։

Արդեն այս բավ է, որպեսզի հասկանան, թե ինչ չափով օպոզիցիան հեռանում էր Լենինի ուսմունքից բանվոր-գյուղացիական դաշինքի մասին։ Լենինյան կոոպերատիվ պլանի էյությամբ, որի մասին մենք արդեն խոսք ունեցել ենք, պետական արդյունաբերությունը պիտի իր յետևից քաշի գյուղատնտեսությունը և կոոպերացիայի օգնությամբ վերափոխե նրան, առաջնորդելով նրան դեպի սոցիալիզմը։ Իսկ օպոզիցիոներների առաջարկները չե թե պիտի վերափոխեն, այլ քայքայեն գյուղացիական տնտեսությունը։ Բայց ինքնին հասկանալի յե, որ դա միաժամանակ կնշանակեր և բանվորա-գյուղացիական դաշինքի ու պրոլետարական դիկտատուրայի քայքայում։ Ահա ինչու կուսակցությունը պիտի մերժեր ու մերժեց 1923/24 թվականի օպոզիցիայի բոլոր տնտեսական առաջարկները, հաստատորեն անցկացրեց դրամական բարենորոգումը, շարունակեց արդյունաբերական արդյունքների գների իջեցման քաղաքականությունը և այլն և, ինչպես այժմ գիտե ամեն վոք, բանվոր դասակարգի ու գյուղացիության թե տնտեսական և թե քաղաքական դաշինքի ամրացման գործում նշանակալից հաջողություններ նվաճեց։

1923/24 թվականի օպոզիցիայի կազմակերպչական պլատֆորմը:

Նույնչափ կորստաբեր էր կուսակցության համար 1923/24 թվականի օպոզիցիայի առաջադրած կազմակերպչական պլատֆորմը։

Զնայելով 1923/24 թվականի տնտեսական կրիզիսին՝ նոր տնտեսական քաղաքականությունն արդեն այդ ժամանակ արդարացրել էր իրան։ Նա իր հետ բերավ արդյունաբերության վերելք, որ վերջ տվավ պրոլետարիատի ապադասակարգայնացման, բերավ բանվոր դասակարգի կուլտուրական աճում, սակարգայնացման... ակտիվության աճումը նրա միջավայրում և կուսակցության ակտիվության աճումը։ Այս բոլորը հող պատրաստեց էլ ավելի վճռականության

րեն և ավելի լրիվ իրագործելու ներկուսակցական դեմոկրատիան, քան այդ թույլատրում եյին անել ՆԷՊ-ի առաջին յերկու տարիների պայմանները։ Այդ լավ եր տեսնում Կենտրոնական Կոմիտեն, վորը 1923 թվականի աշնանն իր առաջ հարց դրավ այն մասին, վոր կուսակցությունն ավելի հետևողականորեն ու վճռականորեն պետք ե անցնի ներկուսակցական դեմոկրատիայի ռելսերի վրա։ Նոր ոպպոզիցիան սկսեց մեղադրել ԿԿ նրա մեջ, թե նա իբր տնտեսական կրիզիսի հետ միաժամանակ ստեղծել ե և ներքին կրիզիս կուսակցության մեջ։

Ընկ. Տրոցկու կողմից գլխավորած ոպպոզիցիան հանդես յեկավ կուսակցական ապպարատը կոտրելու և թափահարելու լոզունգով, այդ ապպարատի վորպես թե բյուրոկրատական մեքենայի քննադատությամբ, բացասելով կուսակցության համար ուժեղ, հզոր կազմակերպչական ապպարատ ունենալու անհրաժեշտությունը։ Կուսակցական ապպարատի նման գլխովին քննադատությունը և այն կոտրելու կոչը ներկայացնում եյին մեծ վտանգ, վորովհետև խախտում եյին կուսակցական վողնաշարի ուժն ու նշանակությունը, առանց վորի կուսակցությունը չի կարող աշխատել, չի կարող իր ազդեցությամբ և ղեկավարությամբ ընդգրկել բանվորական ու գյուղացիական մասսաները, չի կարող անցկացնել պետական ապպարատի ղեկավարությունը։

Հարձակվելով կուսակցական ապպարատի վրա՝ ոպպոզիցիան ապափորձեց կուսակցության հիմնական կադրերին ու նրա Կենտրոնական Կոմիտեյին հակադրել կուսակցական յերիտասարդությունը։ Փոխարեն նրան, վորպեսզի հրավիրեր կուսակցական յերիտասարդությանը սովորելու հին մարզված կուսակցականներից և նրանց հավասարվել ձգտելու, ոպպոզիցիան սկսեց շողոքորթել յերիտասարդությանը, նրա աջակցությունն ստանալ ցանկանալով և ներշնչելով այդ յերիտասարդությանը, թե հայտնապես նա, յերիտասարդությունն ե, վոր պիտի բարոմետր հանդիսանա կուսակցության համար։

Այն բոլոր ժողովներում, վոր ոպպոզիցիան եր կազմակերպում, և ամենից առաջ ուսանող յերիտասարդության ժողովներում ոպպոզիցիան՝ գլուխ ունենալով ընկ. Տրոցկուն, կազմակերպված ձևով եր հրապարակ գալիս, հարձակումներ կատարելով Կենտրոնական Կոմիտեյի վրա, իսկ ընկ. Տրոցկին բացի այդ մի հատուկ նամակում հրապարակ իջավ այնպիսի ակնարկներով, թե վերասերվում ե կուսակցության հին գվարդիան, ակնարկներով այն մասին, թե նա կարող ե դավաճանել բանվոր դասակարգին, ինչպես վոր նրան դավաճանեցին սոցիալ-դեմոկրատիայի առաջնորդները։

Ոպպոզիցիայի բոլոր յելույթները ներկայացնում եյին կուսակցական կարգապահության աղաղակող խախտում և ակնհայտնի խախտում X համագումարի վորոշումների, վորն արգելում ե ֆրակցիաների

կազմավորումը կուսակցության մեջ։ Իր յելույթներում ոպպոզիցիան պաշտպանում եր ներկուսակցական խմբավորումների ազատությունը, արտահայտում եր կուսակցության նկատմամբ այնպիսի հայացք, թե նա կարող ե լինել զանազան հոսանքների ու խմբավորումների միավորություն, լիովին հակառակ բոլշևիզմի ուսմունքին կուսակցության մասին իբրև մի միասնական ամբողջի։ Ոպպոզիցիայի կարծիքով Կենտրոնական Կոմիտեն պիտի հանդես գար վոչ այնքան իբր կուսակցության ղեկավար, վորքան կարծիքների պարզ արձանագրող և միջնորդ կուսակցության ներսում գոյություն ունեցող հոսանքների ու խմբավորումների։

Ոպպոզիցիայի ֆրակցիոնական աշխատանքն ակնհայտնի սպառնալիք եր ներկայացնում միասնականությանը թե Խորհրդային իշխանության ներսում, թե նրա պետական ապպարատի ներսում։ Ինչպես և X համագումարի ժամանակ կուսակցության միջի տարաձայնությունները 1923/24 թվականին կենդանություն տվին պրոլետարիատի դիկտատուրայի թշնամիների հույսերին, թե պառակտում կծագի կոմմունիստների շարքերում և դրանից հետո անխուսափելիորեն կընկնի Խորհրդային իշխանությունը։

Կուսակցությունն իր ամբողջ ճակատի վրա յեռանդագին պայքարեց ոպպոզիցիայի քայքայիչ աշխատանքի դեմ։ Այդ պայքարն ամփոփեց XIII կոնֆերենցիան մի բանաձևում, վորը հաստատություն գտավ կուսակցության XIII համագումարի կողմից։ Կոնֆերենցիան յեկավ այն յեզրակացության, թե հանձին 1923/24 թվականի ոպպոզիցիայի կուսակցությունը գործ ուներ չե թե միայն բոլշևիզմը վերանայելու փորձի հետ, չե թե միայն լենինիզմից ուղղակի նահանջ կատարելու հետ, այլև ակնհայտնի արտահայտված մանր-բուրժուական թեքման հետ։ Կուսակցական կոնֆերենցիան և կուսակցական համագումարն ընդունեցին, թե ոպպոզիցիան արտահայտում եր մանր բուրժուազիայի գրոհը պրոլետարական կուսակցության դիրքի և նրա քաղաքականության վրա։ Իմիջի այլոց դրան հաստատումն եր ծառայում այն փաստը, թե ոպպոզիցիայի կողմից առաջադրված անսահմանափակ կուսակցական դեմոկրատիայի պահանջը կուսակցության շրջանակից դուրս սկսվեց մեկնաբանվել իբրև մի աստիճան, վոր տանում ե դեպի պրոլետարիատի դիկտատուրայի թուլացումը և դեպի նոր բուրժուազիայի քաղաքական իրավունքների ընդարձակումը։ Կոնֆերենցիան և համագումարը հրավիրեցին կուսակցությանը աչքաթող չանել վոչ-պրոլետարական ազդեցությունների վտանգը, ուշիուշով պահպանել կուսակցության գիծը և սիստեմատիկորեն, յեռանդագին պայքարել մանր-բուրժուական թեքման դեմ, վորպիսին ներկայացնում եր 1923/24 թվականի ոպպոզիցիան։

Կուսակցության պայքարը 1923/24 թվականի օպպոզիցիայի հակալենինյան գծի դեմ:

Այն պայքարը, վոր մղվեց օպպոզիցիայի դեմ XIII կոնֆերենցիայից մինչև XIII համագումարը տևող ժամանակամիջոցի ընթացքում, թափահարեց ամբողջ կուսակցությունը: ԿԿ և նրա գծի պաշտպանության համար և ընդդեմ օպպոզիցիայի մանր-բուրժուական յերերումների մեկը մյուսի յետևից հանդես յեկան կուսակցության խոշորագույն պրոլետարական կազմակերպությունները: Արդեն XIII կոնֆերենցիայի մոմենտին ամբողջ կուսակցությունն իր ճնշող մեծամասնությամբ դատապարտեց օպպոզիցիային իր մանր-բուրժուական թեքման համար:

Դիսկուսիան հնարավորություն տվեց ամբողջ կուսակցության առաջ դնել բոլշևիկների կազմակերպչական սկզբունքների հարցերը և մանավանդ կուսակցության դերի ու նշանակության հարցը. պայքարն օպպոզիցիայի դեմ ԿԿ կողմը գրավեց ամբողջ կուսակցությանը: Դրա հետևանքով բարձրացավ կուսակցության բոլոր անդամների ակտիվությունն ու գիտակցությունը և ամբողջ կուսակցությունը չտեսնըված գործարարությամբ և լրջությամբ սկսեց մոտենալ տնտեսական ու քաղաքական կյանքի ամենաբարդ հարցերի քննությանը: Բայց մանավանդ կարեվոր է հանդիսանում կուսակցության միասնականությունը պահպանելու անհրաժեշտության այն դասը, վորը ամբողջ կուսակցությունը քաղեց *1923/24* թ. դիսկուսիայից: Կոնֆերենցիան ու համագումարն ընդունեցին, թե «նվազագույն իսկ ակնարկը պառակտման սպառնալիքի հնարավորության մասին բորբոքել ու բորբոքում է ամենասուր յեվ բուռն բողոք կուսակցության անդամների վողջ մասսայի կողմից»:

Պայքարը տրոցկիզմի դեմ XIII համագումարից հետո:

Սակայն XIII համագումարի կողմից դատապարտված օպպոզիցիան համագումարից հետո յել մի փորձ արավ հանդես գալու կուսակցության կենտրոնական կոմիտեի դեմ: Նման փորձ եր ներկայացնում ընկ. Տրոցկու յելույթը «Հոկտեմբերի դասերը» հոդվածով, վորի բովանդակության մասին մենք խոսել ենք 1917 թ. հեղափոխությանը նվիրված տասնյերկուերորդ զրույցում: Այդ հոդվածում ընկ. Տրոցկին անճիշտ պատմելով Հոկտեմբերին նախորդող դեպքերը և Հոկտեմբերյան հեղափոխության ընթացքը՝ փորձում եր ապացուցել, թե վաղուց է, վոր կուսակցության մեջ աջ թև գկազմավորվել, վորն իբր թե ղեկավարում է կուսակցությունը և միաժամանակ աշխատանքը կոմինտերնում և վարում է անճիշտ քաղաքականություն և՛ կուսակցության և՛ կոմինտերնի մեջ: Այդ թևին ընկ. Տրոցկին մեղադրում եր թաքուն մենշևիզմի մեջ:

Միաժամանակ ընկ. Տրոցկին խեղաթյուրում եր Հոկտեմբերյան

հեղափոխության ընթացքը, Վլադիմիր Իլյիչի դերն այդ հեղափոխության մեջ և կուսակցության դերը, պատկերացնելով գործն այնպես, վոր ըստ յեության դուրս եր գալիս, իբր թե 1917 թվականին կուսակցությունն ընթանում եր տրոցկիստական, այլ վոչ լենինյան ուղիով: Իսկ իր ամբողջության մեջ հոդվածը ներկայացնում եր շարունակությունը բոլշևիզմը—լենինիզմը ռևիզիայի յենթարկելու այն փորձի, վորն ընկ. Տրոցկին եր գլխավորում 1923/24 թվականին, և շարունակությունը վաղեմի փորձերի՝ լենինիզմը տրոցկիզմով փոխարինելու: Միևնույն ժամանակ «Հոկտեմբերի դասերը» ներկայացնում եյին կուսակցական կարգապահության նոր խախտում ընկ. Տրոցկու կողմից:

Ընկ. Տրոցկու յելույթը դիմադրություն գտավ կուսակցության ղեկավարող անդամների, վորոնց թվում և ընկերներ Կամենևի ու Զինովյևի մի շարք հոդվածներում ու ճառերում, սակայն մի տարի հետո— XIV համագումարի պահուն—հիշյալ յերկու ընկերներն իրանք եյին գլխավորում նոր օպպոզիցիան կուսակցության մեջ, նշանակալից չափով յուրացրել եյին տրոցկիստների հայացքները, իսկ XIV համագումարից հետո ուղղակի անցան 1923/24 թվականի ժամանակաշրջանի տրոցկիզմի պլատֆորմին: Այն (ընկ. Տրոցկու յելույթը) դատապարտվեց ապա Կենտրոնական Կոմիտեի և Կենտրոնական Վերհսկիչ Հանձնաժողովի պլենումի կողմից, և ընկ. Տրոցկուն արվեց կտրական նախազգուշացում այն իմաստով, թե բոլշևիկյան կուսակցության պատկանելիությունը նրան պարտավորեցնում է հանդես չգալ բոլշևիզմի վոչ գաղափարական, վոչ կազմակերպչական հիմքերի դեմ և դադարեցնել կուսակցական կարգապահության խախտումը:

XIII կուսկոնֆերենցիայի յեվ XIII կուսհամագումարի ընդունած կուրսը հետեվողաբար զարգացնելու ներկուսակցական դեմոկրատիան յեվ ուժեղացնելու բանվորական կորիզը կուսակցության մեջ:

Մենք արդեն ասել ենք վերը, թե դեռևս մինչև 1923/24 թ. օպպոզիցիայի ծագումը Կենտրոնական Կոմիտեն հարց եր դրել ավելի հետևողաբար ու վճռականորեն ծավալելու ներկուսակցական բանվորական դեմոկրատիան: Դրա անհրաժեշտությունը հաստատեցին և XIII կուսկոնֆերենցիան և XIII կուսհամագումարը, վորոնք ընդունեցին, թե վորպեսզի կուսակցությունն ավելի հաջող պայքարի ՆԵՊ-ի ազդեցության դեմ, և վորպեսզի նրա ռազմունակությունը բարձրանա աշխատանքի բոլոր բնագավառներում, կուսակցությունն իրականում իր ներքին կյանքի մեջ պիտի սիստեմատիկորեն անցկացնի բանվորական դեմոկրատիայի սկզբունքները: Կոնֆերենցիան և համագումարը հրավիրեցին կուսակցական կյանքի կարևորագույն հարցերի բաց քննությունը կուսակցության բոլոր

անդամների կողմից մինչև նրանց լուծում ստանալն ամբողջ կուսակցության կազմով, վարից վեր հետևողաբար անցկացնել կուսակցության ղեկավարող պաշտոնաբար անձանց և օրգանների ընտրականությունը և ուժեղացնել կուսակցական դաստիարակչական աշխատանքը։ Կոնֆերենցիան ու համագումարը պահանջեցին, վորպեսզի ղեկավարող կուսակցական օրգաններն ունկնդրեն լայն կուսակցական մասսաների ձայնին, յուրաքանչյուր քննադատություն ֆրակցիոնական արտահայտություն չհամարեն և դրանով բարեխիղճ ու կարգապահ կուսակցականներին չմղեն փակվածության ու ֆրակցիոնականության ուղին։ Դրա հետ միասին կոնֆերենցիան ու համագումարը հաստատեցին, թե ներկուսակցական բանվորական դեմոկրատիան «ամենևին ֆրակցիոնական խմբավորումների ազատություն չի յենթադրում, վորոնք խիստ վտանգավոր են կառավարող կուսակցության համար, վորովհետև միշտ սպառնում են կիսել կամ ճեղքել կառավարությունն ու պետական ապպարատի ամբողջությունը»։

Գործնական յեզրակացություններից մեկը, վոր 1923/24 թվականի ոպպոզիցիայի դեմ մղած պայքարից կուսակցությունն արավ XIII կոնֆերենցիայում, դա յեզրակացություն եր այն մասին, վոր հարկավոր ե ինչ ել վոր լինի քանակորեն ավելացնել կուսակցության պրոլետարական կորիզը և նրա տեսակարար կշիռը կուսակցության վողջ քաղաքականության մեջ։

Կոնֆերենցիան առաջարկեց Կենտրոնական Կոմիտեյին այնպես տանել աշխատանքը, վորպեսզի բնիկ պրոլետարներից կուսակցության շարքերը գրավե 100,000 նոր անդամներից վոչ պակաս։

Կուսակցության պատմությանը նվիրած զրույցներից մենք գիտենք, թե Վլադիմիր Իլյիչն ինչ ահագին նշանակություն եր տալիս այն բանին, վոր ըստ հնարավորության մեծ քանակի բնիկ պրոլետարներ գրավվեն կուսակցության կազմի մեջ։ Մեր կուսակցությունը միշտ ձգտել ե ավելացնել իր պրոլետարական կորիզը, հիշելով, վոր կուսակցության պրոլետարական կազմն ավելի անխախտ ե ապահովում կուսակցության իսկական-պրոլետարական քաղաքականությունը։ XIII կոնֆերենցիայից և XIII կուսհամագումարից սկսած կուսակցությունը նոր յեռանդով ե պայքարում իրագործելու լենինյան պատգամն իր անդամների սոցիալական կազմի մասին։

Լենինյան կոչը։ Հարակից Վլադիմիր Իլյիչի մահվան այդ հարցն ստացավ այնպիսի ուղղություն, վորը պարզ ցույց տվավ, թե կուսակցությունը վորքան ե մոտ ու թանկ աշխատավորների լայն մասսաների համար։ Իլյիչի մահն ալեկոծեց բանվորական մասսային։ Զգալով, թե ինչ կորուստ կրեց կուսակցությունը, ԽՍՀՄ և վողջ համաշխարհային պրոլետարիատը, աշխատավորների մասսաները

ցանկացան իրանց կուսակցության մեջ մտնելովը պաշտպանել կուսակցությունը, ոգնել նրան իրագործելու լենինյան պատգամները։ Հաշվի նստելով դրա հետ՝ Կենտրոնական Կոմիտեն վորոշեց «լենինյան կոչով» (այդպես կոչվեց այն բանվորական ալիքը, վոր կուսակցության մեջ թափվեց ընկ. Լենինի մահից հետո անմիջապես) կուսակցության մեջ ընդունել 100,000 դազգյահի բանվորներ, բայց փաստորեն ընդունելությունը գերազանցեց այդ թվանշանը, և կուսակցության XIII համագումարի պահուն «լենինյան կոչով» կուսակցության մեջ հոսեց 185,000 բանվոր, վորոնցից $^{9}/_{10}$-ից ավելին—դազգյահի բանվորներ։

«Լենինյան կոչի» նշանակությունը XIII համագումարն այսպես բնորոշեց.

«Այն, վոր բանվորների փաստական հոսանքը կուսակցության մեջ նշանակալից չափով գերազանցեց սկզբնական նշանակված 100 հազար թվանշանը, և այն, վոր կուսակցության մեջ ընդունելու ներկա կամպանիայի ամբողջ ընթացքն անցնում ե ահագին քաղաքական վերելքի մթնոլորտում բանվորական մասսաների մեջ և նրանց իսկ ակտիվ մասնակցությամբ՝ իրանց միջից բանվորների լավագույն մասը բաժին հանելու մեր կուսակցության,—այս ապացույց ե հանդիսանում, վոր կուսակցությունը ժամանակին ե ձեռնարկել կամպանիան և հաստատում ե կուսակցության իսկապես խոր ազդեցությունը բանվորական մասսաներում։

Վլադիմիր Իլյիչի մահը, վոր ալեկոծեց լայն բանվորական մասսաներին, ել ավելի բարձրացրեց բանվորների հոսանքը կուսակցության մեջ, ուր բանվորներն այժմ գնում են իբրև լենինյան կուսակցության մեջ շարունակելու մեծ ուսուցչի և առաջնորդի գործը»։

XIII համագումարը հանձնարարեց Կենտրոնական Կոմիտեյին շարունակել կուսակցության բանվորական կազմի ուժեղացման աշխատանքը, «վորպեսզի կուսակցության անդամների ահագին մեծամասնությունը մերձավոր ժամանակում կազմված լինի անմիջապես արտադրության մեջ զբաղված բանվորներից»։

Վորպեսզի լավ յուրացվի «կուսակցությունը և ՆԵՊ-ի առաջին ժամանակաշրջանի ոպպոզիցիան» բաժինը, պատասխաններ տվեք հետևյալ հարցերին.

1. Ի՞նչ եր 1923/24 թ. ոպպոզիցիայի կուսակցության մեջ յերևալու պատճառը։
2. Ինչումն ե 1923/24 թվականի ոպպոզիցիայի տնտեսական ու կազմակերպչական պլատֆորմի եյությունը։
3. Ինչու XIII կուսկոնֆերենցիան և XIII կուսհամագումարը 1923/24 թ. ոպպոզիցիային մանր-բուրժուական թեքում ճանաչեցին։
4. Ինչում արտահայտվեց ներկուսակցական դեմոկրատիայի հետևողական ծավալման կուրսը XIII կոնֆերենցիայից և XIII կուսհամագումարից հետո։

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՊ-Ի ԱՐԴԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ ՅԵՎ ՆՈՐ ՈՊՊՈԶԻՑԻԱՆ

Սոցիալիստական շինարարության առաջին հաջողությունների նշանակությունը ներկուսակցական դեմոկրատիայի հետեվողական ծավալման համար:

Նախորդ գլուխներում մենք բերինք թվանշաններ ու փաստեր, վորոնք վկայում են սոցիալիստական շինարարության առաջին լուրջ հաջողությունների մասին, վորոնք մեր կուսակցության ղեկավարության տակ ԽՍՀՄ արել ե XIV համագումարին մոտալուտ: Մենք նույնպես մատնանշեցինք, թե այդ հաջողությունների հիման վրա սաստիկ աճեց մասսաների ակտիվությունը և մեր յերկրում յեղած բոլոր դասակարգային խմբերի ու շերտերի ակտիվությունը: XIV համագումարը ճանաչեց այս աճած ակտիվությունն առաջնակարգ կարևորության յերեվույթ և հրավիրեց պրոլետարիատին ու նրա կուսակցությանն ոգտագործել ակտիվության աճումն այն նպատակով, վորպեսզի ել ավելի գրավի մասսաները սոցիալիստական շինարարության պրոցեսի մեջ (խորհուրդների, արհմիությունների, կոոպերացիայի աշխուժացումով և այլն):

Յելնելով մեր սոցիալիստական շինարարության ծավալման փաստից և մասսաների աճած ակտիվության փաստից՝ XIV կուսհամագումարն ընդունեց, թե անհրաժեշտ ե շարունակել ներկուսակցական դեմոկրատիայի զարգացման ու ամրացման քաղաքականությունը: Կենտրոնական Կոմիտեյի հաշվետվության առթիվ ընդունած իր բանաձևի մեջ համագումարը ցուցմունքներ տվավ կուսակցության, թե ինչ ուղղությամբ վարել այդ աշխատանքը:

«Նրա համար, վորպեսզի պահանջված ձևով տարվի պրոլետարիատի ու գյուղացիության մասսայական կազմակերպությունների աշխուժացման այս բոլոր աշխատանքը,—ասում ե համագումարի բանաձևը,—անհրաժեշտ ե, վորպեսզի այդ կազմակերպությունների ղեկավարող ուժը, այսինքն ՌԿԿ, իր բոլոր բաղկացուցիչ մասերով կանգնի հետևողական ներկուսակցական դեմոկրատիայի ուղիի վրա: Համագումարը հավանություն ե տալիս ներկուսակցական դեմոկրատիայի մասին ԿԿ նոյեմբերի դիմումին և առաջարկում ե կուսակցական կազմակերպություններին հետևյալ խնդիրները նկատի ունենալ այդ բնագավառում. ա) լայն կուսակցական մասսաների ակտիվության բարձրացումը կուսակցական քաղաքականության կարևորագույն հարցերի քննության ու լուծման գործում, բ) ղեկավարող կուսակցական որգանների ընտրականության հետևողական կիրառումը, նոր ուժեր առաջացնելով ղեկավարող աշխատանքի համար, կուսակտիվի ընդարձակումը և նոր կուսակցական կադրերի կազմավորումը հնին ոգնության գալու համար, գ) կուսակցական ակտիվի վորակավորման բարձրացումը, մասնավորապես նրա թեորիական մակարդակի բարձրացումը, դ) լենինյան ուսմունքի հիմքերի տարածումը կուսակցության ամենալայն շրջաններում»:

XIV համագումարի նոր ոպպոզիցիան, նրա կապը ՆԵՊ-ի արդի ժամանակաշրջանի դժվարությունների հետ յեվ նրա սոցիալական արմատները:

ՆԵՊ-ի արդի ժամանակաշրջանի առանձնահատկությունները հանդիսանում են վոչ միայն վերը մատնանշած մեր աշխատանքի ծավալումը սոցիալիստական շինարարության մեջ և մասսաների աճած ակտիվությունը: Նրա առանձնահատկությունն են հանդիսանում և այն հակասությունները, վորոնք կապված են ժողովրդական տնտեսության հետ, և վտանգներն ու դժվարությունները, վոր բղխում են այդ աճումից: XIV համագումարն իր բանաձևի մեջ ընդգծեց այդ հակասությունները, վտանգներն ու դժվարությունները, և յուրաքանչյուր կուսակցական պարտավոր ե հիշել նրանց մասին և ամբողջ կուսակցության հետ միասին աշխատել նրանց հաղթահարելու:

«Միաժամանակ (ժողովրդական տնտեսության աճման հետ.—Մ. Գ.),—ասում ե համագումարի բանաձևը,—զարգանում են, սակայն, և այդ աճումի առանձին հակասություններն ու ինքնահատուկ վտանգներն յեվ դժվարությունները, վորոնք այդ աճումով են բնորոշվում: Այս բանին են վերաբերում. մասնավոր կապիտալի բացարձակ աճումը նրա դերի հարաբերական անկումով հանդերձ, մանավանդ մասնավոր առևտրական կապիտալի, վորն իր գործառնությունները գյուղի սպասավորման ասպարեզն ե գցում. կուլակային տնտեսությունների աճումը գյուղում այս վերջինի շերտավորման աճումով հանդերձ. նոր բուրժուազիայի աճումը քաղաքներում, վոր ձգտում ե տնտեսորեն շաղկապվել առևտրա-կապիտալիստական և կուլակային տնտեսությունների հետ նրանց այն պայքարում, վոր նպատակ ունի իրան յենթարկելու միջակների տնտեսությունների հիմնական մասսան»:

Այս պայմաններում —բուրժուական շերտերի ուռճացումը գյուղում և քաղաքում, բնակչության բոլոր շերտերի ակտիվության բարձրացումը քաղաքում և գյուղում և պրոլետարիատի նոր շերտերի յերևումը (վորի մասին մենք մանրամասն խոսել ենք նախորդ գլուխում)—կուսակցության մեջ XIV համագումարից առաջ և բուն համագումարում յերևան բերավ իբրև մի նոր ոպպոզիցիա:

«Ինքնին հասկանալի յե,—ասում եր XIV համագումարում ընկ. Բուխարինը,—վոր մեր պրոլետարիատի մեջ հոսող նոր շերտերը մեր առաջ արմատական հարց են դնում. գալով առաջին անգամ մեր ֆաբրիկը՝ նրանք հարցնում են—ինչ ե նա: Կես գյուղացի-կես բանվոր

գալիս է մեր ֆաբրիկը և նույն վայրկյանին կամենում վորոշել իր սոցիալական տեղը նրանում — շահագործվում է նա, թե վոչ։ Դեպի ու՞ր է տանում արդյունաբերության մեր կազմակերպությունը։ Ինչո՞վ է տարբերվում մեր ֆաբրիկը հնից։ Նա տալիս է այդ հարցերը, նա հիվանդագին է դնում այդ հարցերը։

Մյուս կողմից մեր քաղաքականությունը դեռ չի հաջողել ապահովել գյուղացիական չքավորության հասցնելիք ամբողջ ոգնությունը, և հասկանալի յե ինքնին, վոր դա առաջ է բերում մի շարք տարակուսական հարցեր այդ գյուղական չքավորության կողմից։ Այսպիսով այդ տարրերը բուրժուական շերտերի բացարձակ աճման ֆոնի վրա իրանց հարցերի բռունցքներով բաղխում են մեր կուսակցության դռները։ Մեր կուսակցությունը հանդիսանում է միակ քաղաքական կազմակերպությունը յերկրում, վորն արտացոլում է այդ հարցերը, կարգում նրանց, պիտի նրանց լուծե և կլուծե նրանց։

Ինձ թվում է, թե նոր բանվորների հոսանքն առաջին հերթին նպաստեց նրան, վոր այդ բոլոր հարցերն այժմ գրավել են սկզբունքային մի բարձունք»։

Օպպոզիցիայի թերահավատությունը դեպի սոցիալիզմի շինարարությունը ԽՍՀՄ։ Նոր օպպոզիցիայի պլատֆորմի ցեղակցությունը տրոցկիզմի պլատֆորմի հետ։

Իսկ ինչպես է պատասխանում այդ հարցերին նոր ոպպոզիցիան։ Ինչպես մենք արդեն ասել ենք նախորդ գլուխում, նա մեր սոցիալիստական շինարարության ուղիի վրա կանգնած հակասությունների ու դժվարությունների առաջ խուճապ դրսևորեց։ Սոցիալիզմի կառուցման հնարավորությանը ԽՍՀՄ, քանի հապաղում է համաշխարհային պրոլետարական հեղափոխությունը, ոպպոզիցիան չի հավատում։

Նա կասկածի տակ է առնում պետական արդյունաբերության մեր ձեռնարկությունների հաջորդաբար-սոցիալիստական բնույթը։ Նրա համար ՆԷՊ-ը համատարած նահանջ է։ Նա մեր տնտեսակարգին նայում է իբրև պետական կապիտալիզմի կարգի վրա։ Նա գերագնահատում է մեր ժողովրդական տնտեսության կապիտալիստական տարրերի դերը (մասնավորապես կուլակային տնտեսությունների դերը գյուղում) և խուճապի մատնվում նրանց առաջ։ Խուճապի մատնվելով կուլակության առաջ՝ նա նույն ժամանակ կամ իսպառ բացասում է կամ ինչ-վոր մի յետին պլան մղում գյուղացիության հիմնական մասսայի՝ միջակ գյուղացու հետ կնքած դաշինքը, հատկացնում է նրան (դաշինքին) յերրորդակարգ տեղ, ստվերավորում է նրա կարևորությունը սոցիալիզմի շինարարության և կուլակության հետ մղվելիք բուռն պայքարի համար։

Նույն յերրորդակարգ տեղն է բազմեցնում ոպպոզիցիան և կո-

ոպերացիային, գյուղի դեպի սոցիալիզմը շարժվելու այդ կարևորագույն կազմակերպչական ձևին։

Թերահավատությունը մի յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորության նկատմամբ և վերաբերմունքը դեպի միջին գյուղացիությունը, վորոնք նոր ոպպոզիցիան դրսևորեց կուսակցության մեջ, նրան հարազատացնում են տրոցկիզմի հետ։ Յերբ մենք նախորդ գլուխներում խոսում եյինք պերմանենտ հեղափոխության թեորիայի մասին, վորից ընկ. Տրոցկին չի հրաժարվել մինչև օրս, մենք մատնանշում եյինք, թե այդ թեորիայի համար բնորոշ է հանդիսանում թերահավատությունը դեպի մի յերկրում սոցիալիզմ կառուցելու և ավարտելու հնարավորությունը, յեթե նրան ոգնության չգա հեղափոխությունը, իշխանության գրավումը պրոլետարիատի կողմից առավել զարգացած կապիտալիստական յերկրներում։ Նույնպես բնորոշ է հանդիսանում այդ թեորիայի և տրոցկիստների բոլոր հայացքների համար գյուղացիության նշանակության թերագնահատությունը։ Տրոցկիզմը միշտ անգիտացել է գյուղացիական մասսայի դերը հեղափոխության մեջ և միշտ տարակարծիք է յեղել լենինյան վերաբերմունքի գծի հետ դեպի միջին գյուղացիությունը, նշանակություն չի տվել նրա հետ դաշինք ունենալու հանգամանքին։ Տրոցկիստական այդ հայացքների հետ էլ հարազատացավ նոր ոպպոզիցիան XIV համագումարում, ոպպոզիցիան, վորին գլխավորում եյին ընկերներ Զինովյևն ու Կամենևը, վորոնք մի այն մի տարի առաջ, արդեն XIII համագումարից հետո, վճռականորեն հանդես եյին գալիս տրոցկիզմի դեմ։ Հարազատանալով տրոցկիզմի թեորիայի հետ՝ դրանով իսկ նոր ոպպոզիցիան վճռականորեն անջատվեց լենինիզմից։

Օպպոզիցիայի կազմակերպչական գիծը XIV համագումարում յեվ նրա ցեղակցությունը 1923/24 թվականի օպպոզիցիայի կազմակերպչական գծի հետ:

Ոպպոզիցիայի ցեղակցությունը տրոցկիզմի հետ, վորը գլխավորում եր 1923/24 թվականի դիսկուսիան, չեր սահմանափակվում ցեղակցությամբ այն հարցերում, վորոնք վերաբերում են մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու և միջին գյուղացիության խնդիրներին։ Յերկու ոպպոզիցիաները ցեղակցություն դրսևորեցին նաև կազմակերպչական հարցերում։ Ինչպես յեվ 1923/24 թ. ոպպոզիցիան, նոր ոպպոզիցիան խախտեց կուսակցական կարգապահությունը յեվ խիստ լուրջ սպառնալիքներ ստեղծեց կուսակցության միասնականության համար։

Դեռ մինչև համագումար ոպպոզիցիայի ղեկավարները, ոգտագործելով կուսակցական «Լենինգրադսկայա Պրավդա» թերթը, նրա մեջ մի ամբողջ շարք իսպառ անթույլատրելի հարձակումներ ու մեղադրանքներ թափեցին կուսակցության կենտրոնական կոմիտեյի գլխին։ Նրանք

րիշտ Լենինգրադի կազմակերպությունը հակադրում էին ողջ կուսակցությանը։ Բուն համագումարում նրանք ակնհայտորեն իր դիսցիպլինն ունեցող ֆրակցիա ստեղծեցին և չենթարկվելով այդ կարգապահության՝ օպպոզիցիան միաբան քվեարկում էր, միաբան հանդես գալիս, կրկնելով միևնույն մեղադրանքները, միևնույն հարձակումները Կենտրոնական Կոմիտեի դեմ։

Օպպոզիցիան՝ ֆրակցիա ստեղծելով՝ հասավ նրան, վոր ընթերզեկուցող հրապարակ հանեց Կենտրոնական Կոմիտեի հաշվետվության առիթով (բոլշևիկյան կուսակցության պատմության մեջ չեղած մի դեպք)։ Դրանով նա ընդգծեց, թե իր քաղաքականությունն ու գործելակերպն և հակադրում ողջ կուսակցության քաղաքականությանն ու գործելակերպին, կուսակցության, վորին գլխավորում է լենինյան ԿԿ։ Եվ անգամ XIV համագումարի կողմից քաղաքական ու կազմակերպչական հաշվետվությունների առիթով ընդունված բանաձևից հետո նա շարունակում էր կուսակցության վորոշմանը հակադրել իր սեփական տեսակետը։ Փոխարեն նրան, վորպեսզի համաձայն կուսակցության կանոնադրության անհապաղ սկսեն ճշտորեն կատարել և կյանքի մեջ անցկացնել համագումարի վորոշումները, օպպոզիցիոներները Լենինգրադում շարունակում էին քննադատել այդ վորոշումները։ Դրանով նրանք չլսված ձևով խախտեցին բոլշևիկյան կուսակցության կարգապահությունը։ Խոսքով նրանք հայտարարում էին, թե հպատակվում են XIV համագումարի վորոշումներին, իսկ իրականի մեջ շարունակում ֆրակցիոնական աշխատանքը և Լենինգրադի կազմակերպությունը հակադրում կուսակցության Կենտրոնական Կոմիտեին և ամբողջ կուսակցությանը։

Խախտելով ներկուսակցական դեմոկրատիայի պահանջները՝ նոր օպպոզիցիայի ղեկավարները, վոր այդ ժամանակ կանգնած էին Լենինգրադի կազմակերպության գլխին, բոլոր կազմակերպության և նրա առանձին բջիջների շնքին էին փաթաթում իրանց հաճելի, հարկավոր վորոշումը, արգելում էին առանձին բջիջների ժողովները, վորոնք կարող էին իրանց անհաճելի բանաձևեր ընդունել, հրաժարվում էին տպագրել այն բանաձևերը, վորոնք լիակատար վստահություն էին հայտնում Կենտրոնական Կոմիտեին և XIV համագումարին։ Իր պահանջների մեջ օպպոզիցիան ձգտում էր պատասխանատու աշխատանքի վերադարձնել բոլոր նախկին խմբավորումների ներկայացուցիչներին և փաստորեն հռչակում էր ֆրակցիաների և խմբավորումների ազատություն կուսակցության մեջ։

Բուն համագումարում օպպոզիցիան պահանջներ առաջադրեց կուսակցությանը—նրան հնարավորություն տալ և համագումարից հետո պաշտպանել իր հայացքները, չնայած նրան, վոր ինքը փոքրամասնության մեջ կմնա։

Հասկանալի յե, վոր այդ պահանջների իրագործումը պիտի նշանակեր վախճան կուսակցության միասնականության։

ԿԿ իր քննադատության մեջ նոր օպպոզիցիան նույնպես նմանեց 1923/24 թվականի օպպոզիցիային։

Ընկ. Լաշևիչն ամբողջ օպպոզիցիայի ծափահարությունների տակ ռմբակոծում էր կուսակցության ԿԿ, մեղադրելով նրան, թե նա արհեստականորեն ընտրում է ԿԿ մեծամասնությանը հաճելի մարդկանց և կուսակցության ղեկավարող որգանների գլխին կանգնեցնում տեղերում, ծուռ կարգավորում է տալիս այդ որգաններին, մշտապես խախտում է ներկուսակցական դեմոկրատիան։ Օպպոզիցիան պահանջում էր ԿԿ վերակառուցումը, կամենում էր ԿԿ քարտուղարության դերը վերածել տեխնիկական գործադիր որգանի դերին։ Նա պահանջում էր փոխել կուսակցության գլխավոր քարտուղար ընկ. Ստալինին և դրանով դրսևորեց, թե իրականի մեջ ձգտում էր ձեռքը գցել կուսակցության ղեկավարությունը փոխարեն այն կոլլեկտիվ ղեկավարության, վոր ԿԿ է իրագործում։

Օպպոզիցիայի ներկայացուցիչներն իրանց հարյուր տոկոսանոց լենինիզմի հավակնությունների մասին է, վոր հայտարարում էին, այսինքն այն մասին, թե հայտնապես իրանք, այլ վոչ թե կուսակցությունն իր ամբողջությամբ, նրա մեծամասնությունը և նրա կամքը արտահայտող ԿԿ մեծամասնությունն է ամենից ուղիղ արտացոլում Վլադիմիր Իլյիչի հայացքները։

XIV համագումարում օպպոզիցիայի շեղումը բոլշևիկյան գծից կուսակցության աճման հարցում։

Լենինիզմի կազմակերպչական սկզբունքներից խիստ լուրջ նահանջ արավ օպպոզիցիան և կուսակցության աճման հարցում։

Դեռ մինչև համագումար Լենինգրադի միքանի աշխատավորներ, վորոնք հետո XIV համագումարում օպպոզիցիայի շարքերը բռնեցին, սկզբում առաջադրեցին մի լոզունգ, թե XIV համագումարի պահուն կուսակցության մեջ պիտի գրավել բոլոր արդյունաբերական բանվորների 90%, իսկ ապա մի լոզունգ, թե XV համագումարի պահուն բանվորների քանակը կուսակցության մեջ պիտի հասցնել նրա կազմի 90%։ Եվ այդ և մյուս լոզունգն ակնհայտորեն սնանկ են և վտանգ են ներկայացնում կուսակցության համար, յեթե նա ձեռնարկեր իրագործելու նրանց։ Եվ առաջին և յերկրորդ լոզունգը պիտի հանգեն նրան, վոր մի տարվա ընթացքում կուսակցության մեջ ընդունվեն միքանի միլիոն նոր անդամներ։ Կարող է կուսակցությունն այդ անել։ Անպայման վոչ։ Մենք մատնանշում էինք վերը, թե բանվոր դասակարգի մեջ այժմ թափվում են գյուղից յեկած նոր մասսաներ, վորոնք չեն անցել արհմիությունների դպրոցը և լծակցված չեն

ցել վորևէ հասարակական աշխատանքի։ Բանվորների ուժեղացրած ընդունելությունը կուսակցության մեջ, ինչպես այդ առաջարկում են Լենինգրադի միքանի ընկերներ, կհանգեր նրան, վոր կուսակցության մեջ կուժեղանար կիսապրոլետար, կիսագյուղացի տարրերի դերը, վորոնք դեռ չեն անցել դասակարգային, պրոլետարական դաստիարակության վորևէ դպրոց։ Դա անհերքելի սպառնալիք կներկայացներ կուսակցության պրոլետարական քաղաքականության համար, և կուսակցությունը չեր կարող արագորեն, մի տարվա ընթացքում, միքանի միլիոն մարդ լուսավորել կուսակցականորեն և կուսակցականորեն դաստիարակել։ Կուսակցության մեջ նոր մտած անդամներն իրանց մասսայով կարող կլինեյին քանակորեն ճնշել կուսակցության հին անդամներին և, հետևաբար, կուսակցության քաղաքականությունը կսկսեր ղեկավարել և վորոշել կուսակցականորեն չմարզված և կուսակցականորեն չդաստիարակված մի մասսա։

Համագումարն իր բանաձևի մեջ մերժեց ոպպոզիցիայի վնասակար առաջարկը և հետևյալ կերպով արտահայտվեց կուսակցության շարքերն ընդունելու հարցի առիթով․

«Կուսակցության ամրացումը և նրա ղեկավարող դերի ուժեղացումը մեր շինարար աշխատանքի բոլոր բնագավառներում, վորն արդի բարդ պարագաներում ավելի յե անհրաժեշտ, քան յերբևիցե, յենթադրում է նույնպես և կուսակցության կազմի ուղիղ կարգավորումը։ Համագումարն անհրաժեշտ է գտնում տվյալ բնագավառում վարել մի քաղաքականություն, վորն ուղղված լինի բարձրացնելու կուսակցական կազմակերպությունների վորակական կազմը, ել ավելի գրավելու բանվորներին կուսակցության մեջ և մշտապես բարձրացնելու պրոլետարական կուսակցական կորիզի տեսակարար կշիռը։ Դրա հետ միասին հաստատելով վորոշված սահմանափակման միջոցների խիստ կիրառման անհրաժեշտությունը, վոր վերաբերում է վոչ պրոլետարական տարրերին կուսակցության մեջ ընդունելուն, համագումարը մերժում է այն քաղաքականությունը, վորն առաջնորդում է դեպի կուսակցական շարքերի անչափ ուռչումը և դեպի նրանց լցնումը կիսապրոլետարական տարրերով, վորոնք չեն անցել արհմիությունների և առհասարակ պրոլետարական կազմակերպությունների դպրոցը։ Համագումարը դատապարտում է նման փորձերը, իբրև փորձեր, վոր ընդհանուր վոչինչ չունեն լենինիզմի հետ, բացասում են ուղիղ հարաբերանքը կուսակցության (դասակարգի առաջապահի) և դասակարգի միջև և անհնարին են դարձնում կոմմունիստական ղեկավարությունը»։

XIV համագումարի կողմից ոպպոզիցիայի ճշված դիմադրությունը յեվ պայքարը նրա դեմ համագումարից հետո։

XIV համագումարը վճռական դիմադրություն տվավ նոր ոպպոզիցիային և մերժեց նրա բոլոր խեղաթյուրումները տնտեսական-քաղաքական հարցերում և կուսակցության կազմակերպչական շինարարության հարցերում։ Սոցիալիզմի շինարարության հարցերում իր հավատարմությունը լենինիզմին համագումարն ընդգծեց իր բանաձևի այն մասերում, վորոնք մեր կողմից բերված են նախորդ՝ մեր տնտեսական շինարարությանը նվիրված՝ գլուխներում։ Մենք այդ պատճառով յերկրորդ անգամ այստեղ կանգ չենք առնում այդ հարցերի վրա։ Լենինիզմի կազմակերպչական խեղաթյուրումներին համագումարը դիմադրություն ցույց տվավ բանաձևի այն մասում, վորը նվիրված է կուսակցության կազմակերպչական հարցերին։

«Կուսակցության ղեկավարող դերը,—ասում է համագումարի բանաձևը,—կարող է լրիվին ապահովվել, յեթե միայն կամքի բացարձակ միասնականություն, կուսակցական շարքերի կուռ միություն, բոլշևիկյան պրոլետարական կարգապահության պահպանումն և ամրացումն լինի կուսակցության մեջ։

Համագումարը հավանություն է տալիս ԿԿ քաղաքականությանը, վորն ուղղված է յեղել դեպի այն, վորպեսզի բացարձակ դիսկուսիա չթույլատրի Լենինգրադի կազմակերպության միքանի ղեկավարների և նրանց առանձին համախոհների հետ ԿԿ կողմից, վորպեսզի ջանանք տարաձայնությունները մաշել ներքին կարգով և ապահովենք կուսակցության կոլլեկտիվ ղեկավարությունը։

Համագումարը հանձնարարում է ԿԿ վճռական պայքար մղել կուսակցության միասնականությունը ջլատելու ամեն մի փորձի դեմ, վորտեղից ել վոր նա գալու լինի և ում կողմից ել գլխավորած լինի»։

Ոպպոզիցիան՝ դեմ յելնելով ԿԿ, փորձում եր Լենինգրադի կազմակերպությունը հակադրել ամբողջ կուսակցությանը։ Անճիշտ պատկերացնելով իրերի վիճակը կուսակցության ու յերկրի մեջ՝ նրան հաջողվեց իր կողմը թեքել Լենինգրադի կազմակերպության նշանավոր մասը։ Ահա ինչու XIV համագումարից հետո ԿԿ վորոշումով Լենինգրադում ԿԿ անդամների կողմից խոշոր աշխատանք թափվեց պարզաբանելու XIV համագումարի հարցերը և նոր ոպպոզիցիայի եյությունը։ Բացատրական կամպանիան ցույց տվավ, վոր Լենինգրադի կազմակերպությունն ընդդեմ ԿԿ իսկապես նոր ոպպոզիցիայի ֆրակցիոնական պայքարի մեջ է մղված այն անճիշտ պատկերացումով, վոր տրված է կուսակցության վիճակի ու ԿԿ քաղաքականության մասին։ Բանի պարզաբանվեց իրերի իսկական վիճակը կուսակցության ու յերկրի մեջ և XIV համագումարում և նոր ոպպոզիցիայի եյությունը, Լենին-

գրադի կազմակերպությունն ամբողջությամբ ու լրությամբ հրաժարվեց իր սխալ հայացքներից և վկայեց իր հավատարմությունը կուսակցության լենինյան գծին ու նրա ԿԿ: Նա արդարացրեց համագումարի կողմից արտահայտած «հաստատ համոզումը այն մասին, թե Լենինգրադի կազմակերպությունը կկա՛նգնի մեր լենինյան կուսակցության կուռ միության ու միասնականության համար պայքարողների առաջին շարքերում, միասնականության, վորը պիտի պահվի ու ամրացվի ինչ էլ վոր լինի»:

Պայքար նոր ոպպոզիցիայի դեմ ԿԿ հուլիսյան (1926 թ.) պլենումում:

XIV համագումարը՝ դատապարտելով նոր ոպպոզիցիան՝ դրա հետ միասին հույս ուներ, թե նրա հետ ունեցած տարաձայնությունները կմաշվեն գործնական աշխատանքի ընթացքում: Այդ նպատակով համագումարը Պոլիտբյուրոյի կազմի մեջ մտցրեց ընկ. Զինովյևին—ոպպոզիցիայի գլխավոր ղեկավարներից մեկին, իսկ նրա մյուս ղեկավարին՝ ընկ. Կամենևին—Պոլիտբյուրոյի անդամության թեկնածու կարգեց: ԿԿ և ԿՎՀ կազմի մեջ մտան նաև նոր ոպպոզիցիայի մյուս ղեկավարները (ը.ը. Սոկոլնիկով, Կրուպսկայա, Լաշևիչ և այլք): Պոլիտբյուրոյի կազմի մեջ մտցվեց և ընկ. Տրոցկին:

«Կուսակցությունը հույս ուներ,—ասում է ԿԿ և ԿՎՀ հուլիսյան (1926 թ.) միացյալ պլենումի բանաձևը,—թե ոպպոզիցիան գործնական աշխատանքի պրոցեսում կգիտակցե և կուղղե իր սխալները: Այս կերպ ոպպոզիցիային լիակատար հնարավորություն եր տրված նորմալ կուսակցական ճանապարհով պաշտպանել իր հայացքներն այն դեպքերում, յերբ այս կամ այն հարցի առիթով տարաձայնություններ եյին ծագում: Թեև ոպպոզիցիան շարունակում եր պնդել իր XIV համագումարի կողմից նշանավորված սխալների վրա և Պոլիտբյուրոյի ու ԿԿ աշխատանքի մեջ մտցնում եր ակնհայտնի ֆրակցիոնական անհաշտության տարրեր, բայց ԿԿ ներսում ոպպոզիցիայի կողմից իր հայացքների այդ պաշտպանությունը կուսակցական ճանապարհով վոչ ԿԿ կողմից, վոչ ԿՎՀ կողմից լուրջ յերկյուղի տեղիք չեր տալիս միասնականությունը պահպանելու նկատմամբ»:

Սակայն ԿԿ մեջ մտցված ընկերները չե թե վոչինչ չեյին անում, վորպեսզի դժվարագույն պայմաններում թեթևացնեն Կենտրոնական Կոմիտեյի աշխատանքը, այլ, ընդհակառակը, իրանց գործողություններով ամեն կերպ դժվարացնում եյին այդ աշխատանքը:

«Բայց դժբախտաբար,—ասում է նույն բանաձևը,—ոպպոզիցիան իր պայքարի մեջ չկանգնեց իր հայացքները պաշտպանելու օրինական հողի վրա կուսակցական կանոնադրության շրջանակներում և վերջին ժամանակ անցավ ՀամԿԿ (բ) շարքերում միասնականություն պահպանելու մասին X և XIV համագումարների ընդունած վորոշումների

ուղղակի խախտմանը, դիմելով կուսակցության դեմ մղած իր պայքարի մեջ անլեգալ՝ ֆրակցիոնական կազմակերպություն ստեղծելու փորձին, հակադրված կուսակցությանը և ուղղված նրա միասնականության դեմ»:

Ինչում են արտահայտվել նոր ոպպոզիցիայի այդ քայլերը՝ կազմալուծելու կուսակցությունը և անլեգալ ֆրակցիոնական կազմակերպություն ստեղծելու մեջ, և ում է կրում գլխավորագույն պատասխանատվությունը դրանց համար:

Դրան պարզ պատասխան է տալիս ԿԿ և ԿՎՀ միացյալ պլենումի բանաձևը.

«Վերջին ժամանակ կուսակցությունն ոպպոզիցիայի կողմից դրված է մի ամբողջ շարք այնպիսի ֆրակցիոնական քայլերի առաջ, վորոնք արտահայտվել են հետևյալ յերևույթներում—անլեգալ, գաղտնի ժողովների կազմակերպում, կուսակցական հատկապես ընտրած գաղտնի դոկումենտի արտատպություն և տարածում թե Մոսկվայում և թե այլ քաղաքներում, ուղղված այն բանին, վորպեսզի վարկաբեկել կարելի լինի կուսակցության գիծը (Պոլիտբյուրոյի միևնույն տեսակի գաղտնի դոկումենտները տարածվում եյին կուսակցության անդամների մեջ և ստացել են կազմակերպությունները Բրյանսկում, Սարատովում, Վլադիվոստոկում, Պյատիգորսկում, Ոմսկում, Գոմելում, Ոդեսսայում և այլն), իրանց ագենտներին ուղարկել են մյուս կուսակցական կազմակերպությունները՝ նպատակ դնելով գաղտնագործ խմբեր ստեղծելու այնտեղ (ընկ. Գր. Բելենկու Ոդեսսա գնալը անլեգալ ֆրակցիա կազմակերպելու համար, սահմանելով առանձին գաղտնագրություն (շիֆր), յերևատեղի (ЯВКА) և այլն):

Անհրաժեշտ է վկայել, վոր ոպպոզիցիայի այդ բոլոր ֆրակցիոնական քայլերի թելերը տանում են դեպի Կոմինտերնի Գործկոմի ապարատը, վորին գլուխ է կանգնած Պոլիտբյուրոյի անդամ ընկ. Զինովյևը:

Առանձնապես պիտի նշել անլեգալ ֆրակցիոնական ժողովը անտառում, Մոսկվայի մոտ, վորը կազմակերպել է ԿԻԳԿ աշխատակից ընկ. Գր. Բելենկին, և վորը մեր կուսակցության կյանքի մեջ չեղած պառակտողական քայլ է հանդիսանում: Կազմակերպված գաղտնապահության բոլոր կանոններով (պահակներ, հրավիրվածների խիստ ֆրակցիոնական ընտրություն և այլն), այդ ժողովը վոչ միայն ղեկավարվել է ԿԻԳԿ աշխատակցի կողմից, վորը նախագահել է նրանում, այլ, ինչ նույնպես լսված չէ մեր կուսակցության մեջ, կուսակցությունից գաղտնի այդ ժողովում զեկուցումով հանդես է գալիս ՀամԿԿ ԿԿ անդամության թեկնածու ընկ. Լաշևիչը, հրավիրելով հավաքվածներին կազմակերպվել՝ պայքարելու կուսակցության դեմ՝ նրա ընտրած ԿԿ դեմ:

Օպպոզիցիայի այդ բոլոր քայքայիչ քայլերը վկայում են արդեն այն մասին, թե օպպոզիցիան իր հայացքները լեգալ կերպով պաշտպանելու ձևից վորոշել է անցնել համամիութենական անլեգալ կազմակերպություն ստեղծելու գործին, վորն իրան հակադրում է կուսակցությանը և այդ ձևով նրա շարքերի պառակտումը նախապատրաստում:

Նոր օպպոզիցիայի նման տեսակի գործունեությունն աշխուժ առաջացրեց կուսակցության կողմից դատապարտված խմբավորումների մեջ և այդ հակակուսակցական ու ակնհայտնի պառակտողական խմբերի վողորմելի բեկորներին հրեց դեպի այն, վորպեսզի՝ հենվելով նոր օպպոզիցիայի աջակցության վրա՝ նորից աշխատանք սկսեն կուսակցության ու նրա միասնականության դեմ:

Ինչպես մենք արդեն գիտենք, նոր օպպոզիցիան XIV համագումարում դրսևորեց ակնհայտնի նահանջ լենինիզմից և Վլադիմիր Իլյիչի թողած պատգամներից: Օպպոզիցիայի աճող ձգտումը՝ առանձնացած ֆրակցիա ստեղծել կուսակցության ներսում՝ խորացրեց նրա նահանջը լենինիզմից այնպիսի հարցերում, վորոնք վճռական նշանակություն ունեն պրոլետարական դիկտատուրայի համար ԽՍՀՄ և համաշխարհային պրոլետարական հեղափոխության համար:

«Նոր օպպոզիցիայի աճող ֆրակցիոնականությունը,—ասում է ԿԿ և ԿՎՀ հուլիսյան պլենումը,—նրան առաջնորդեց դեպի մի խաղ յերկու կուսակցության գաղափարի հետ և ծայրահեղորեն սրեց օպպոզիցիայի հակալենինյան թեքումները. Թերահավատություն դեպի պրոլետարիատի ուժերը և հոռետեսություն սոցիալիստական շինարարության գործի նկատմամբ առհասարակ և սոցիալիստական ինդուստրիայի շինարարության գործի նկատմամբ մասնավորապես. տենդենց՝ խզելու պրոլետարիատի դաշինքը գյուղացիության (միջակի) հետ, այսինքն մերժելու մի սկզբունք, վորը մեզ մոտ, ըստ Լենինի, հանդիսանում է «պրոլետարական դիկտատուրայի գերագույն սկզբունքը». տենդենց՝ պաշտպանելու և ծածկելու ծայր-աջակողմյան, ակնհայտորեն դեպի մենշևիզմը գլորվող թեքումները մեր կուսակցության մեջ (որինակ, նախկին այսպես կոչված «բանվորական օպպոզիցիայի» ղեկավար ընկ. Սերգեյ Մեդվեդևի խմբակը, վորն իր խոսքը հասցրեց մինչև այն, թե մեր սոցիալիստական արդյունաբերությունը պետք է հանձնել օտարերկրյա կապիտալին, թե պետք է լիկվիդացիայի յենթարկել Կոմինտերնը և Պրոֆինտերնը և այլն, այսինքն իր խոսքը հասցրեց մինչև մեր կուսակցության հեղափոխական նպատակների լիկվիդացիան). տենդենց միջազգային մակարդակով բլոկ կազմելու թե Կորշի տիպի ծայր-ձախի հետ և թե Սուվարինի տիպի ծայր-աջի հետ, վորոնք՝ արտաքսված լինելով Կոմմունիստական Ինտերնացիոնալից, կատաղի գրոհ են կատարում ԽՍՀՄ գոյություն ունեցող պրոլետարիատի դիկտատուրայի դեմ՝ պատրվակ բռնելով մեր կուսակցության իբր թե գյուղացիական-կուլակային վերասերումը: Գործարար առաջարկներ չմտցնելով, արտաքուստ ձախ ֆրազ գործածելով, վորը աջ օպպորտյունիստական բովանդակություն է ծածկում, նոր օպպոզիցիան անցնում է պայքարի ավելի ու ավելի անթույլատրելի, դեպի պառակտում տանող մեթոդների»:

Այսպես նոր օպպոզիցիան XIV համագումարից հետո՝ փոխարեն հպատակվելու նրա վորոշումներին՝ զարգացնում էր իր ֆրակցիոնական աշխատանքը՝ ուղղված նրան, վոր քայքայի կուսակցության միասնականությունը, խախտող Վ. Ի. Լենինի բոլոր պատգամները, բոլշևիկական շարքերի խիստ միասնականության ու յերկաթե դիսցիպլինի մասին, բոլոր վորոշումները, բոլոր նախազգուշացումները բոլոր կուսակցական համագումարների, սկսած տասներորդից: Նոր օպպոզիցիայի խիստ վնասակար ֆրակցիոնական աշխատանքն արդեն ծնունդ է տվել (ճիշտ է, առանձին և շատ վատ կոմմունիստների մեջ) մի վտանգավոր մտքի, թե մեր պրոլետարական կոմմունիստական կուսակցությունը—ՀամԿԿ (բ) կարող է լինել վոչ միայն միասնական, այլ և վոչ միակ կուսակցությունը պրոլետարիատի դիկտատուրայի մեր յերկրում:

ԿԿ և ԿՎՀ հուլիսյան պլենումը խորհուրդների վերընտրությունների արդյունքների մասին ընդունած իր բանաձևում յերկու տեղ նախազգուշացնում է այն մտքից, վորը միայն կարող է ձեռնտու լինել Խորհրդային իշխանության թշնամիներին, պրոլետարիատի դիկտատուրայի թշնամիներին:

«ՆԵՊ-ի պայմաններում, յերբ հրապարակի վրա յե կապիտալիստական հարաբերությունների մասնակի վերականգնումը և մանր-բուրժուական հիմունքով դեռ շարունակում է զարգանալ տնայնագործական ու գյուղացիական տնտեսությունների մասսան՝ անխուսափելի յե, վոր մանր-բուրժուական կուսակցությունների (մենշևիկների, սոցիալիստ-հեղափոխականների) մնացորդները նորից փորձեն վերականգնելու իրանց կազմակերպությունները և ազդեցությունը: Այժմ գոյության իրավունք նվաճելու այդ փորձերը հավանական են խորհուրդների աշխուժացումը օգտագործելու (նույնպես կոոպերացիայի և այլն) այս կամ այն քողարկված ձևով: Այդպիսի փորձերի շարքում պետք դասել, որինակ, այն հակահեղափոխական ագիտացիան, վոր անհրաժեշտ է գտնում առանձին գյուղացիական, իսկ իրականում կուլակային կուսակցությունների ու միությունների գոյությունը, վորոնք անխուսափելիորեն հակադրվում են պրոլետարիատին ու կոմմունիստական կուսակցությանը: Մյուս կողմից հնարավոր են մանր-բուրժուական քաղաքականության (որինակ՝ նեոմենշևիզմի) ուռկանով վորսալու այլ փորձեր՝ քողարկելով իբր «զուտ պրոլետարական» ար-

տաքինով, իբր «բուն պրոլետարական» քաղաքականությամբ և կեղծ «ձախ» լոզունգներով, վորոնք հակադրվում են ՀամԿԿ գծին։ Նույնպես անխուսափելի յեն մանր-բուրժուական ազգայնական կուսակցությունների վերածնունդի փորձերը (պետլյուրականների, ջադիտների, ալաշորդների և այլն)»։

«Նկատի ունենալով մանր-բուրժուական քաղաքականության աշխուժացման նոր փորձերի վտանգը,—շարունակում է ապա ԿԿ և ԿՎՀ պլենումը,—յերկու կամ միքանի քաղաքական կուսակցությունների գոյության անթույլատրելիության հարցը պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում (մասնավորապես, քանի հրապարակում գոյություն ունի խորհրդային դեմոկրատիզմի զարգացման կուրսը) պիտի դրվի իր ամբողջ սկզբունքային պարզությամբ։ Միքանի քաղաքական կուսակցությունների գոյությունը—և դրանով իսկ իշխանության համար պայքարի գոյությունը նրանց միջև—չի կարող վոչ այլ ինչ լինել, քան ուղղակի խզումն այնքան թանգ գնով նվաճած և այժմ ամրացող այն զոդման, վոր պրոլետարիատն ունի գյուղացիության հետ։ Դա կնշանակեր կատարյալ կազմալուծումն և պրոլետարիատի դիկտատուրայի բուն հիմքերի ուղղակի ջլատումն։

Քաղաքական կուսակցությունների պայքարի գոյությունը (ինչպես յեվ ձեվավորված ֆրակցիաների գոյությունը միասնական կուսակցության մեջ) անպարփակելի յե պրոլետարիատի հաղթական դիկտատուրայի հետ յեվ ըստ եյության վոչ այլ ինչ կլիներ, քան բուրժուական դեմոկրատիայի վերածնունդը այս կամ այն ձեվով»...

«Այն փաստը, վոր պրոլետարական հեղափոխության ընթացքում ՀամԿԿ դարձել է պրոլետարական դիկտատուրայի անվիճելի ու միակ ղեկավարը, այդ փաստը հանդիսանում է պրոլետարիատի ահագին պատմական նվաճումը և դրա հետ միասին պրոլետարական հեղափոխության իսկապես հաղթական զարգացման ամենակարևոր ու հիմնական պայմաններից մեկը։ Այդ փաստը մատնանշում է նույնպես այն, թե (իր հիմնական գծերով) ինչպիսին պիտի լինի կոմմունիստական կուսակցությունը, սոցիալիզմի հաղթության կուսակցությունը ուղիղ հեղափոխական-պրոլետարական քաղաքականություն վարելու իր ունակության իմաստով, նախ և առաջ բանվորների և աշխատավորների լայն մասսաների մեջ իր համար հաստատուն արմատներ ունենալու անհրաժեշտության իմաստով և, վերջապես, յերկաթե կարգապահությունը իսկական ներկուսակցական դեմոկրատիայի հետ միացնելու հմտության իմաստով։ Խորհրդային դեմոկրատիզմի զարգացումը յենթադրում է, թե պրոլետարական դիկտատուրայի կազմակերպված ավանգարդը և ղեկավարը—պրոլետարիատի կուսակցությունը առաջին հերթին ինքը պիտի ընթանա իսկական ներկուսակցական

դեմոկրատիայի իսկական զարգացման ուղիով, շարունակելով պահպանել և ամրացնել իր յերկաթե կարգապահությունը, կուսակցական շարքերի անպայման միասնականությունը և իսկապես պրոլետարական միաձուլությունը։ Միայն իբրեվ միասնական կուսակցություն յեվ միայն իբրեվ պրոլետարական դիկտատուրայի միակ առաջնորդ ու ղեկավար լինելով է, վոր կոմմունիստական կուսակցությունը կարող է ապահովել պրոլետարական հեղափոխության հաղթությունը»։

Պաշտպանելով լենինիզմի այս հիմնական դրույթները՝ ԿԿ և ԿՎՀ պլենումը պիտի ամենավճռական կերպով հանդես գար նոր ոպոզիցիայի այն աշխատանքի դեմ, վոր դեպի պառակտում է առաջնորդում կուսակցության մեջ։

Նոր ոպոզիցիայի այդ աշխատանքը չսահմանափակվեց ՀամԿԿ (բ) շրջանակներով։ Նա փորձեր արավ պայքարի մեջ գրավել Կոմինտերնի Գործկոմի ապարատը և նրա միջոցով տարբերկրյա կոմկուսակցությունների մեջ տարածել ՀամԿԿ (բ) կողմից դատապարտված հայացքները, վորպեսզի այդ կոմկուսակցությունները պայքարի մեջ գրավե ընդդեմ ՀամԿԿ (բ)։ ԿԻԳԿ ապարատի այդ աշխատանքի պատասխանատվությունը չի կարելի չբարդել ընկ. Զինովյեվի վրա, վորին այդ ապարատն անմիջականորեն յենթարկված է։

Նոր ոպոզիցիայի բոլոր գործողությունները հարկադրեցին ԿԿ և ԿՎՀ միացյալ պլենումին անել այն յեզրակացությունները, ինչ նա պարտավոր եր անել X համագումարի կուսակցության միասնականության մասին ընդունած բանաձևի հիման վրա և XIV համագումարի այն բանաձևի իմաստով, վորը պահանջում է վճռական պայքար մղել կուսակցության միասնականությունը ջլատելու ամեն մի փորձի դեմ, վորտեղից ել նա բղխելու լինի և ում կողմից ել գլխավորված լինի»։

Պլենումն ել արավ այդ յեզրակացությունները.

«Բարդելով ֆրակցիոնական աշխատանքի պատասխանատվությունը կուսակցության բոլոր այն անդամների վրա, վորոնք մասնակցություն են բերել նրա մեջ,—ասում է պլենումի բանաձևը,—կուսակցությունը չի կարող այդ պառակտողական աշխատանքի համար քաղաքականորեն-պատասխանատու չհամարել XIV համագումարի ոպոզիցիայի ղեկավարին, ՀամԿԿ (բ) ԿԿ Պոլիտբյուրոյի անդամ ընկ. Զինովյեվին, վորի համախոհներն ակտիվ մասնակցություն են բերում ֆրակցիոնական աշխատանքում և ոգտագործում են ԿԻԳԿ ընկ. Զինովյեվին յենթարկված ապարատը, նամանավանդ վոր ընկ. Զինովյեվի կողմից աննշան իսկ փորձ չի յեղել դատապարտելու իր այդ համախոհներին և սահմանածրվելու նրանցից։

Նկատի առնելով վողջ վերհիշվածը՝ ԿԿ և ԿՎՀ պլենումը վորոշում է.

ա) անհանդուրժելի համարելով այնպիսի մի դրություն, յերբ օպպոզիցիայի ֆրակցիոնական պայքարի ղեկավարությունը փաստորեն իրագործվում է ԿԿ Պոլիտբյուրոյի մի անդամի կողմից, վտարել ընկ. Զինովևին ԿԿ Պոլիտբյուրոյի կազմից, միաժամանակ նախազգուշացնելով բոլոր օպպոզիցիոներներին՝ անկախ նրանց կուսակցության մեջ ունեցած դրությունից, թե նրանց կողմից կուսակցությանը հակադրված ֆրակցիա ստեղծելու աշխատանքի շարունակումը՝ կհարկադրի ԿԿ և ԿՎՀ կուսակցության միասնականությունը պաշտպանելու համար անել և նրանց նկատմամբ համապատասխան կազմակերպչական յեզրակացություններ.

բ) ընդունել, թե ԿԿ անդամության թեկնածու ընկ. Լաշևիչը ակտիվ մասնակցություն բերելով կուսակցության միասնականության դեմ ուղղված ֆրակցիոնական կազմակերպություն ստեղծելու մեջ, խախտել ու խաբել է կուսակցության վստահությունը, վորի համար արժանի յեր արտաքսվելու ՀամԿԿ (բ) շարքերից, սակայն նկատի ունենալով ընկ. Լաշևիչի առաջվա կուսակցական գործունեությունը՝ հայտարարել ընկ. Լաշևիչին խիստ հանդիմանություն նախազգուշացումով հանդերձ, թե ֆրակցիոնական աշխատանք շարունակելու ամեն մի փորձով նա իրան կդնե ՀամԿԿ (բ) շարքերից դուրս։ Վ. Ի. Լենինի կողմից մտցված և ՀամԿԿ (բ) X համագումարի կողմից ընդունված առանձին վորոշման հիման վրա՝ ընկ. Լաշևիչին վտարել ՀամԿԿ (բ) ԿԿ կազմից և հրաժարեցնել Հեղ. Ռազմ. Խորհրդի նախագահի տեղակալի պաշտոնից, արգելելով նրան յերկու տարվա ընթացքում պատասխանատու կուսակցական աշխատանք վարելու։

Ապա իր բանաձևի մեջ պլենումն ընդգծեց, թե «լենինյան կուսակցությունն այսուհետ ևս չի թույլատրի պառակտում առաջացնել իր շարքերում և ամենավճռական դիմադրությունը ցույց կտա ֆրակցիոնական աշխատանքի ամեն մի փորձին»։ Դրա հետ միասին պլենումը կրկին ընդգծեց, թե անհրաժեշտ է ներկուսակցական դեմոկրատիա անցկացնել անպայման, և նորից պարտադրեց կուսկազմակերպություններին խիստ ուշադրությամբ ունկնդրել կուսակցականների գործարար առաջարկներին, վոր կուսակցությունը հուզող հարցերին են վերաբերում (պայքար բյուրոկրատիզմի հետ, ներս խցկվածների մերկացում և արտաքսում և այլն)։

«Կուսակցությունը հանձին ԿԿ և ԿՎՀ կուսկազմակերպություններից պահանջում է վճռականորեն շտկել կազմակերպությունների աշխատանքի մեջ ունեցած թերությունները այն ձևով, վորպեսզի՝ կուսակցության աշխատանքի հիմնական հարցերը դնելով բոլոր կազմակերպությունների լայն քննության՝ բարձրացնի կուսակցության անդամների ակտիվությունը և դաստիարակի նրանց լենինյան սկզբունքների վոգով, պայքարելով մանր-բուրժուական տրամադրությունների դեմ, վորոնք յերբեմն ձախ ֆրազի դրոշակով են թափանցում»։

Պլենումը կոչեց կուսակցության բոլոր անդամներին դեպի միասնականություն, դեպի կուռ միություն և դեպի յերկաթե կարգապահություն, վորոնք հանդիսացել են և հանդիսանում են մեր կուսակցության բոլոր հաջողությունների հիմնական նախադրյալները։

ԿԿ և ԿՎՀ պլենումը կոչում է կուսակցության բոլոր անդամներին դեպի միասնականություն, դեպի կուսակցության և բոլշևիկյան կարգապահություն, վորովհետև «բոլշևիկյան կուսակցության բոլոր հաջողությունների հիմնական նախադրյալը միշտ յեղել է պողպատե միասնականությունը և յերկաթե կարգապահությունը լենինիզմի հողի վրա։

4. ՀԱՄ. ԼԿՅԵՄ—ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՀԵՍՏԻ ՈՒԺԸ

Նոր օպպոզիցիայի փորձը կռթնելու Համ. ԼԿՅԵՄ վրա։ Համ. ԼԿՅԵՄ պրոլետարական կորիզի ու կուսակցական ղեկավարության հարցը։

ԿԿ դեմ մղած պայքարում, իր հակակուսակցական յելույթների մեջ նոր օպպոզիցիան փորձեց օգտագործելու կոմյերիտմիությունը։ Օպպոզիցիան կամեցավ կռթնել կոմյերիտմիության վրա, հակադրելով վերջինս ԿԿ, և հաջողեց այդ անելու Համ. ԼԿՅԵՄ Լենինգրադի կազմակերպության նկատմամբ, վորի վերնաշերտը միացավ Լենինգրադի պատվիրակության յելույթներին XIV համագումարում։ Օպպոզիցիան ակնհայտորեն ձգտում եր ֆրակցիա ստեղծելու և կոմյերիտմիության մեջ, ինչպես այն ստեղծել եր կուսակցության մեջ։ Օպպոզիցիայի քայլերը կոմյերիտմիության նկատմամբ սխալ ու վնասակար են հանդիսանում, վորովհետև նրանք ներհակ են ընթանում կոմյերիտմիության մեջ գործադրվող կուսակցական ղեկավարության կազմակերպչական սկզբունքներին։ Կուսակցությունը քանիցս վկայել է կոմյերիտմիության մեջ հաստատուն կուսակցական ղեկավարության անհրաժեշտությունը։ Իսկ օպպոզիցիան կոմյերիտմիությունը պայքարի մեջ գրավելով և օգտագործելով նրան ճնշում գործադրելու կուսակցության վրա՝ դրանով իսկ կանգնում եր կուսակցության և կոմյերիտմիության «իրավահավասարության» տեսակետին։

XIV համագումարը դատապարտեց օպպոզիցիայի այդ տեսակետը և մատնանշեց ֆրակցիոնականության վնասը Համ. ԼԿՅԵՄ ներսում։

Կուսակցության և կոմյերիտմիության փոխհարաբերությունների հարցի խեղաթյուրումն ընթացավ և այլ գծով—պրոլետարական ղեկավարությունը կուսակցականին հակադրելու գծով։ XIV համագու-

մարը կոմյերիտմիության աշխատանքի հարցի առիթով ընդունած իր բանաձևի մեջ մատնանշեց, թե բոլոր, այս թվում և պրոլետարիատին թշնամի դասակարգերի աճած ակտիվությունը ԽՍՀՄ, պահանջում է պրոլետարական յերիտասարդության ուժեղ ընդունելություն կատարել կոմյերիտմիության դրոշակի տակ և ավելացնել Համ. ԼԿՅԵՄ պրոլետարական կորիզը։ XIV համագումարի այդ վորոշման ճշտությունը կարիք չկա ապացուցելու նրանից հետո, ինչ մենք վերն ասել ենք պրոլետարական կորիզի նշանակության մասին Համ. ԿԿ (բ) մեջ։ Բայց սխալ ու վնասակար է հանդիսանում այն հայացքը, վոր կոմյերիտմիության մեջ պրոլետարական ղեկավարությունը հակադրում է կուսակցականին։

XIV համագումարի ժամանակաշրջանում նոր ոպպոզիցիայի կողմնակիցները փորձեցին այդ հայացքն անցկացնել կոմյերիտմիության մեջ։ Այն կապված եր նույն կողմնակիցների կոմյերիտմիության իրավահավասարության մտքի հետ։ Ով կոմյերիտմիության մեջ պրոլետարական ղեկավարությունը հակադրում է կուսակցականին, նա բանվոր դասակարգի մի մասը՝ բանվորական յերիտասարդությունը հակադրում է նրա կուսակցությանը, նա դրա հետ միասին ասում է, թե կոմյերիտմիությունն իր բանվորական պրոլետարական կորիզի ղեկավարության տակ կարող է իր գործը տեսնել և առանց կուսակցության ղեկավարության։ Այնինչ պրոլետարական ղեկավարությունը միայն կուսակցական կարող է լինել, վորովհետև միայն կոմմունիստական կուսակցությունն է արտահայտում ամբողջ պրոլետարիատի իսկական շահերը և միայն նա յե իրագործում իսկական քաղաքականությունը, պրոլետարական քաղաքականությունը, հետևաբար և բոլոր աշխատավորների պրոլետարական ղեկավարությունը։

XIV համագումարն իր բանաձևի մեջ ընդունեց, թե պրոլետարական ղեկավարության հակադրումը կուսակցականին թեորիապես սխալ է և քաղաքականորեն վնասակար, ու մատնանշեց, թե միության մեջ չի կարելի պրոլետարական ղեկավարության հասնել, յեթե հաստատուն ղեկավարություն չլինի կուսակցության կողմից։

XIV համագումարի այդ վորոշումը լրությամբ համապատասխանում է այն դերին, վորը Համ. ԼԿՅԵՄ է կոչված խաղալու կոմմունիստական շինարարության մեջ, և վորի մասին շատ անգամ է խոսել Վլադիմիր Իլյիչը։

Համ. ԼԿՅԵՄ խնդիրները յեվ կուսակցության XIV համագումարը այդ խնդիրների մասին։

Համամիութենական Լենինյան Կոմմունիստական Յերիտասարդական Միությունը—դա կուսակցության պահեստի ուժն է, այն աղբյուրը, վորից կուսակցության մեջ պիտի թափվեն նոր ուժեր շարքից դուրս յեկող կոմմունիստներին փոխարինելու համար մի կողմից, և կոմմունիստական ուժերն ավելացնելու համար—մյուս կողմից։ Ընկեր Լենինն ահագին

նշանակություն եր տալիս կոմյերիտմիությանը իբրև կազմակերպության, վորը պիտի միավորե և նախապատրաստե կոմմունիզմի շինարարներ բանվորական ու գյուղական յերիտասարդությունից, իբրև կոմմունիզմի դպրոցի աճող յերիտասարդության համար։

Վորպեսզի կապիտալիստական շրջապատի պայմաններում գյուղական գերակշռող բնակչություն ունեցող մի հետամնաց յերկրում սոցիալիզմ կառուցվի—կուսակցությունը պիտի ապահովե իր ղեկավարությունն ու ազդեցությունը կյանքի տնտեսական, վարչական-քաղաքական և գաղափարական բոլոր բնագավառներում։ Բայց, ինչպես XIII կուսհամագումարը մատնանշեց, այդ ղեկավարության ու ազդեցության իրագործումը կուսակցության կողմից կախված կլինի նրանից, թե «կհաջողվի՞ արդյոք պրոլետարական պետությանը բավարար չափով ընդարձակել հիմնական կոմմունիստական կազմի շրջանակը և պրոգրեսիվորեն աճող չափով ապահովել հասունացող սերնդի կոմմունիստական վերափոխությունը»։ «Այս պատճառով,—ասում է XIV կուսհամագումարի բանաձևը,—յերիտասարդության հարցն իսկապես ահագին նշանակություն ունի»։

Իսկ ինչպիսին պիտի լինեն կուսակցության ու կոմյերիտմիության փոխհարաբերությունները։ Այդ փոխհարաբերություններն ամբողջապես բնորոշվում են Համ. ԼԿՅԵՄ վերը մատնանշած դերով ու նշանակությամբ, ինչպես նրանց կուսակցությունն է հասկանում։

«Համ. ԼԿՅԵՄ,—ասում է կուսակցությունը,—պիտի ինքնակառավարվող կազմակերպություն լինի, բայց նա վոչ մի կերպ չի կարող կատարել իր խնդիրները, յեթե նրա մեջ իսկ ամբողջապես չապահովվի կուսակցական ազդեցությունը և կուսակցական ղեկավարությունը»։

Ապա Համ. ԼԿՅԵՄ պիտի յուրացնե, փորձը, ավանդությունը յեվ պատգամները «հաղթական բանվորական շարժման հիմնական կապիտալի, վորը պարունակվում է նախ և ամենից առաջ մեր կուսակցության մեջ, իսկ վոր չափով խոսքն ընթանում է այդ վերջինի ներսի շերտերի մասին,—նրա առավել կոփված և փորձառու հին գվարդիայի մեջ» (XIII կուսհամագումարի բանաձևը)։ Ունակությունների այդ հանձնումն ապահովելու համար՝ ամբողջ կուսակցությունը պիտի հասկանա յերիտասարդության հարցի բացառիկ կարևորությունը։

Տանք թվական տեղեկություններ Համ. ԼԿՅԵՄ մասին։ Առ 1-ն հունվարի 1926 թ. Համ. ԼԿՅԵՄ անդամների ու թեկնածուների թիվն եր 1640000 հոգի, վորից գյուղացի 744400 (40%), բանվոր 726700 (43%), մնացածը 168900 (11%)։

Այն բոլորից, ինչ վերը ասված է Համ.ԼԿՅԵՄ և նրա նշանակության մասին կուսակցության համար, պիտի հասկանալի լինի, թե ինչ ահագին նշանակություն պիտի ունենա կոմյերիտմիության աշխատանքը գյուղում և քաղաքում։

«Համ.ԼԿՅԵՄ հիմնական խնդիրը,—ասում է XIII կուսհամագումարի բանաձևը,—հանդիսանում է ամբողջ միության և յուրաքանչյուր անդամի առանձին վերցրած հասարակական-քաղաքական ակտիվության բարձրացումը։ Կոմյերիտականները քաղաքական, վարչական-խորհրդային, տնտեսական և լուսավորական բնագավառներում թե քաղաքում և թե գյուղում պետք է լինեն կուսակցության առաջին օգնականները։ Միության աշխատանքը հեռու պետք է լինի թե քաղաքականության նկատմամբ չեզոք «զուտ կուլտուրարարությունից», և թե «զուտ քաղաքականությունից», վոր չի կապված կուլտուրական կամ վարչական-գործարար աշխատանքի հետ։ Կուլտուրական և քաղաքական աշխատանքի զուգակցումը պետք է Համ. ԼԿՅԵՄ վողջ գործունեության հիմքը լինի»։

Խորհուրդները, արհմիությունները, կոոպերացիան և այլն աշխուժացնելու խնդիրը, վոր կուսակցության կողմից դրվեց XIV կոնֆերենցիայում, Համ.ԼԿՅԵՄ վրա դնել է պարտավորություն բարդում հարմարեցնելու իր աշխատանքը այն նոր պայմաններին, ինչպիսիք ստեղծում է ԽՍՀՄ տնտեսական վերելքը, և առաջին հերթին հարմարեցնելու քաղաքի ու գյուղի մասսաների աճած ակտիվությանը։ Նոր պայմաններում կոմյերիտականից մանավանդ պահանջվում է, վորպեսզի նա լինի կազմակերպության կարգապահ անդամը, վորպեսզի նա կարգավորի իր կյանքն ու կենցաղը։ Առանց դրան նրանից չի մշակվի պետական ու կոոպերատիվ տնտեսության այն աշխատողը, վորպիսին հարկավոր է պրոլետարական պետության։

Քաղաքում և գյուղում հեղափոխության ժամանակ աճել ու արդյունաբերության և աշխատանքի մեջ են գրավվում յերիտասարդության նոր շերտեր, վորոնք չեն ճանաչում ցարիզմն ու բուրժուական հասարակակարգը և հաճախ չեն տեսել նույնիսկ քաղաքացիական պատերազմը։ Հարակից դրան Համ.ԼԿՅԵՄ առաջ ծառանում են նոր, առավել բարդ հարցեր այդ յերիտասարդության մեջ գործելու, նրան դաստիարակելու, նրան ղեկավարելու համար, վորպեսզի այդ յերիտասարդությունը բառիս կատարյալ իմաստով խորհրդային դարձնենք,—պրոլետարական պետության շինարարն ու պաշտպանը։ Այդ աշխատանքը Համ.ԼԿՅԵՄ կարող է կատարել միայն կուսակցության ղեկավարության ներքո, միայն որինակ վերցնելով լենինյանների ավագ սերնդից։

Կոմյերիտմիության հարցը XIV կուսհամագումարում առաջադրվեց սոցիալիզմի շինարարության նոր պայմանների շնորհիվ քաղաքում և գյուղում և այն դժվարությունների շնորհիվ, ինչ ներկայիս կապված է այդ շինարարության հետ։ Համագումարն ընդարձակ ցուցմունքներ տվավ Համ.ԼԿՅԵՄ, թե ինչ ուղղությամբ վարել աշխատան-

քը, և կուսակցությանը,—թե ինչպես ղեկավարել կոմյերիտմիությունը։ Ընդսմին համագումարը յելակետ ունեցավ, վոր պրոլետարիատի կուսակցությանը անհրաժեշտ է իր յետևից տանել յերիտասարդությունը—տալ նրան համապատասխան դաստիարակություն, պահպանել սոցիալիստական հեղափոխության փորձի հաջորդականությունը յերկու՝ հին ու նոր՝ սերունդների միջև, հարմարեցնել Համ.ԼԿՅԵՄ աշխատանքը որվա մեծ կազմակերպչական-շինարարական խնդիրներին և ամրացնել ճիշտ ղեկավարությունը կոմյերիտմիության նկատմամբ։

Կուսակցության աշխատանքի ուժեղացումը կոմյերիտմիության ղեկավարության գործում և կոմյերիտմիության աշխատանքինը թե բուն կոմյերիտականների միջև և թե ամբողջ բանվորական ու գյուղացիական (չքավոր ու միջակ) յերիտասարդության միջև համագումարը ճանաչեց կարևորագույն հերթական խնդիրներից մեկը։

«Ծավալվող դասակարգային հակասությունները,—ասում է XIV համագումարը,—և նոր բուրժուազիայի աճումը քաղաքում և գյուղում նշանակում են և ծավալվող պայքար յերիտասարդության շուրջը։ Յերիտասարդությունը փոխանորդ է (смена) գալիս սոցիալիզմի շինարարների արդի սերնդին, վորոնք Հոկտեմբերյան հեղափոխությունն են կատարել։ Խախտել այդ փոխարինող սերունդը, նրա մեջ կասկած, թերահավատություն սերմանել դեպի սոցիալիզմի գործը, համոզել նրան, թե, միևնույն է, յերկիրը պետք է դառնա յետ՝ դեպի կապիտալիզմը և արդեն դեպի այն է գնում, շեղել նրան կոմյերիտմիությունից և կուսակցության ղեկավարությունից—դրա մեջ շահագրգռված է կուլակը գյուղում, նեպմանը քաղաքում և այն բուրժուական ինտելիգենցիան, վորը դեռ հույսը չի կորցրել կապիտալիզմին վերադառնալու»։ Յեվ այդ գործում նրանց օգնում են նրանց հավատարիմ համհարզները—սոցիալիստ-հեղափոխականները և մենշևիկները։ «Միանգամայն պատահական չե ուստի,—շարունակում է XIV համագումարն իր կոմյերիտմիության մասին ընդունած բանաձևում,—վոր հեղափոխության կողմից ջարդված կուսակցությունների մնացորդները,—սոցիալիստ-հեղափոխականները և մանավանդ մենշևիկները,—նախ և առաջ շահագրգռություն են ցույց տալիս դեպի յերիտասարդությունը. քարոզելով բուրժուա-վերականգնողական հայացքներ բանվոր և ուսանող յերիտասարդության միջև՝ նրանք իր տիպով մեր սոցիալիստական ձեռնարկությունները նկարագրում են իբրև սոսկ կապիտալիզմ կամ պետական կապիտալիզմի այս կամ այն ձևը, նրանց սիստեմը—իբրև բանվոր դասակարգի շահագործման սիստեմ, պրոլետարիատի պետությունը—իբրև կապիտալիստական վարձող և այլն։ Նրանք բացասում են պրոլետարիատի դիկտատուրան, արտադրության հիմնական միջոցների պրոլետարական պետության պատկանելու փաստը,

օգտագործում են մեր պակասները, ջանում են ջլատել բանվոր դասակարգի և ուսանող յերիտասարդության հավատը դեպի պրոլետարիատի ուժերը և այդ կերպ պատրաստում են գաղափարական դաշտ բացահայտ-բուրժուական հակահեղափոխության համար։ Գյուղացիության մեջ նրանք միաժամանակ կամենում են օգտագործել և կուլակային վերնաշերտի դժգոհությունը և չքավորության մի մասի դժգոհությունը, վորը դեռ գտնվում է ծանր նյութական վիճակում»։

Այսպես են մեր թշնամիները կամենում տիրել մեր փոխանորդին, բանվորական ու գյուղացիական յերիտասարդությանը։ Դրան մեր կուսակցությունը պատասխանում է յերիտասարդության համար մղած իր պայքարով, վորը կատարվում է կոմյերիտմիության միջոցով, նրա լենինյան դաստիարակության միջոցով կուսակցության հաստատուն ղեկավարության ներքո։

Մեր թշնամիներին, ինքն այդ չցանկանալով, օգնում է նոր օպպոզիցիան, նույնպես թերահավատություն սերմանելով դեպի սոցիալիզմի շինարարությունը մեր յերկրում, իր ֆրակցիոնական աշխատանքով ջլատելով վստահությունը դեպի կուսակցությունը, նրա միասնականությունը, նրա ղեկավարությունը բանվոր դասակարգի և բոլոր աշխատավորների, հետևաբար և բանվորա-գյուղացիական յերիտասարդության նկատմամբ։

Դա յերիտասարդության համար մղված պայքարը դարձնում է ել ավելի կարևոր, ել ավելի անհրաժեշտ և կուսակցության առաջ խնդիր է դնում առաջվանից ավելի սերտ մոտեցնել կոմյերիտմիությունը կուսակցությանը զբաղեցնող պայքարի այն հարցերին, վորոնք վերաբերում են նրա միասնականությանն ու կարգապահությանն ընդդեմ ամեն կարգի թեքումների նրա լենինյան գծից, ընդդեմ ամեն կարգի ֆրակցիոնական խմբավորումների և մասնավորապես ընդդեմ օպպոզիցիայի ֆրակցիոնական աշխատանքի։ XIV համագումարի ժամանակաշրջանում միքանի կոմյերիտականների ու կուսակցականների մեջ, վորոնք չեյին ըմբռնում այդ խնդրի կարևորությունը, միտք ծագեց, թե, ընդհակառակը, կոմյերիտմիությունը պիտի «չեզոք» մնա կուսակցության, նրա լենինյան գծի համար մղված պայքարում, այսինքն անտարբեր նայե այն բանին, թե ինչ է կատարվում կուսակցության մեջ։ Համագումարը մերժեց այդ հայացքը նույնպես, ինչպես և կոմյերիտմիության «իրավահավասարության» միտքը։ «Կոմյերիտմիությունը,—ասաց համագումարը, հաստատելով կուսակցության նախկին վորոշումները,—ամենևին չի կարող «չեզոք» կազմակերպություն լինել այն հարցերի նկատմամբ, վորոնք զբաղեցնում են կուսակցությանը»։ Իհարկե, բոլոր հարցերը չե, վոր կոմյերիտմիության քննությանը պիտի յենթարկվեն։ Կան հարցեր, վոր պիտի մնան ներ-

կուսակցական գործ և չպիտի դուրս հանվեն կուսակցության սահմաններից։ Կուսակցությունն ինքն է ամեն անգամ վորոշել ու վորոշում է, թե նրա կյանքի ինչ հարցեր պիտի քննության դրվեն կոմյերիտմիության մեջ։ Բայց կուսակցության, լենինիզմի համար մղված պայքարի կարևորագույն հարցերով նա դաստիարակել է ու պիտի դաստիարակե կոմյերիտմիությունը։ Դա կոմյերիտմիությանը հարկավոր է նրա համար, վորպեսզի նա իսկական օգնական լինի բանվորական ու գյուղացիական յերիտասարդության մեջ կուսակցության քաղաքականությունն անցկացնելու գործում։ Դա հարկավոր է նրա համար, վորպեսզի նա կոմյերիտականներից լենինիզմի համար մղված պայքարում կոփված փոխանորդ պատրաստե, փոխանորդ կուսակցության արդի սերնդին։

Առանց դրան կոմյերիտմիությունը չի կարող վոչ կուսակցության օգնականը լինել, վոչ նրա թարմ, յերիտասարդ ուժերի պահեստը։

Վորպեսզի լավ յուրացվի «Կուսակցությունը ՆԵՊ-ի արդի ժամանակաշրջանում և նոր օպպոզիցիան» և «Համ ԼԿՅԵՄ—կուսակցության պահեստի ուժ» բաժինները, պատասխաններ տվեք հետևյալ հարցերին.

1. Ի՞նչն առիթ տվեց, վոր կուսակցության մեջ XIV համագումարից առաջ և բուն համագումարում նոր օպպոզիցիա յերևան յեկավ, և ինչպիսին են այդ օպպոզիցիայի սոցիալական արմատները։

2. Ի՞նչպիսին է նոր օպպոզիցիայի տնտեսական-քաղաքական և կազմակերպչական պլատֆորմը և ինչո՞ւմն է մեկի ու մյուսի շեղումը լենինիզմից։

3. Ինչո՞ւմ արտահայտվեց նոր օպպոզիցիայի ֆրակցիոնական աշխատանքը և կուսակցության XIV համագումարից հետո նրա հետագա նահանջը լենինիզմից։

4. Ի՞նչ պայքար և ինչու տարավ նոր օպպոզիցիայի հետ ԿԿ և ԿՎՀ հուլիսյան (1926 թ.) պլենումը։

5. Ի՞նչ կերպով եր նոր օպպոզիցիան փորձում կռթնելու կոմյերիտմիության վրա։

6. Ինչո՞ւմ արտահայտվեց օպպոզիցիայի կողմից կոմյերիտմիության իսկական խնդիրների խեղաթյուրումը և մասնավորապես նրա խնդիրը ՆԵՊ-ի արդի ժամանակաշրջանում։

ՆՅՈՒԹԵՐ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ

1. Վ. Ի. ԼԵՆԻՆԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ X ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

... Համենայն դեպս յես պիտի ասեմ մի բան, վոր մենք այս համագումարում պիտի այստեղ մեր լոզունգը դարձնենք, մեր գլխավոր նպատակն ու խնդիրը, վորը ինչ ել վոր լինի պիտի իրագործենք, դա այն է—վորպեսզի դիսկուսսիայից ու վեճերից դուրս գանք ավելի ուժեղ, քան այն ժամանակ, յերբ մենք սկսեցինք այն։ Դուք, ընկեր-

ներ, չենք կարող չիմանալ, վոր մեր բոլոր թշնամիները, իսկ նրանց անունը լեգիոն է, իրանց բազմաթիվ արտասահմանյան օրգաններում կրկնում և զարգացնում են նույն հարյուրաշուրթն ու հազարաշուրթն համբավը, վոր մեր բուրժուական և մանր-բուրժուական թշնամիները տարածում են այստեղ, Խորհրդային հանրապետության ներսում, այն է՝ վոր յեթե դիսկուսիա կա, ուրեմն վեճեր կան, յեթե վեճեր կան— ուրեմն յերկպառակտումն կա, յեթե յերկպառակտումն կա — ուրեմն կոմունիստները թուլացել են, հրիր, վորսա մոմենտը, ոգտվիր նրանց թուլությամբ։ Դա մեր թշնամի աշխարհի լոզունգն է դարձել։ Մի վայրկյան իսկ մենք այդ չպիտի մոռանանք։ Մեր խնդիրն է այժմ ցույց տալ, թե անցյալում, ուղիղ թե անուղիղ, վորքան էլ մենք այդ պերճանքը թույլ տված չլինենք մեզ, բայց նրանից դուրս գանք այնպիսի ձևով, վորպեսզի ձևակերպված, վճարանված պլատֆորմների, յերանգների, համարյա թե յերանգիկների անչափ առատությունից՝ մենք, մեր կուսակցական համագումարում, պատշաճ կերպով վերաքննելով նրանց, ասենք մեզ ու մեզ, թե, համենայն դեպս, ինչպես էլ տարակարծիք չլինենք, ինչպես էլ իրար հետ վիճելու չլինենք, իսկ մեր հանդեպ այնքան թշնամիներ կան, պրոլետարիատի դիկտատուրայի խնդիրը մի գյուղացիական յերկրում այնքան անընդգրկելի է, դժվարին, վոր մեզ համար քիչ է, վորպեսզի միայն ձևականորեն լինի—հենց ձեր ներկայությունը այստեղ, այս համագումարում, ապացուցում է, թե դա այդպես է—վորպեսզի վոչ միայն ձևականորեն լինի աշխատանքը միաձուլված, ավելի համերաշխ, քան առաջ եր։ Վորպեսզի աննշան հետք իսկ չլինի, ֆրակցիոնականություն չլինի, ուր և ինչպես էլ նա յերևան յեկած չլինի մինչև որս, վորպեսզի վոչ մի դեպքում նրանք չմնան։ Միայն այդ պայմանով մենք կիրագործենք այն ահագին խնդիրները, վորոնք բարդված են մեզ վրա, և յես վստահ եմ, թե յես կարտահայտեմ ձեր բոլորի մտադրությունը և հաստատ վճիռը, յեթե ասեմ, թե, համենայն դեպս, էլ ավելի հաստատ, էլ ավելի համերաշխ և անկեղծ կուսակցական միասնականությամբ է, վոր մենք պիտի դուրս գանք ներկա համագումարից։

(Վ. Ի. Լենին. Յերկերի ժող., հ. XVIII, եջ 104—105, ռուսերեն)

2. 1923/24 Թ. ՈՊՊՈԶԻՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Այժմ, յերբ ոպպոզիցիայի հարցը լուծված է համագումարի կողմից, և խնդիրը, հետևաբար, լիկվիդացիայի յենթարկված, կարելի յէ վոր հարց դնենք. ինչ է ներկայացնում իրանից ոպպոզիցիան և ինչի՞ մասին եր, իսկապես, պայքար ընթանում դիսկուսիայի ժամանակաշրջանում։ Յես կարծում եմ, ընկերներ, թե պայքարը կուսակցության

կյանքի ու մահու մասին եր ընթանում։ Ոպպոզիցիան գուցե և ինքը չեր գիտակցում այդ։ Բայց խնդիրը դրա մեջ չէ։ Խնդիրը նրա մեջ չէ, թե ինչ նպատակներ է դնում իրան այս կամ այն ընկերը, այս կամ այն ոպպոզիցիոն խմբակը։ Խնդիրը այն ոբյեկտիվ հետևանքների մեջ է, վորոնք անխուսափելիորեն բղխում են տվյալ խմբակի գործողություններից։ Ախր ինչ է նշանակում կռիվ հայտարարել կուսակցական ապարատին։ Այդ նշանակում է կործանել կուսակցությունը։ Այդ նշանակում է յերիտասարդությունը ըմբոստացնել կադրի դեմ։ Այդ նշանակում է քայքայել կուսակցությունը։ Ի՞նչ է նշանակում պայքարել խմբավորումների ազատության համար։ Այդ նշանակում է փորձել փշրելու կուսակցությունը, նրա միասնականությունը։ Ի՞նչ է նշանակում փառազրկել կուսակցության կադրերը վերասերման շաղակրատություն հյուսելով։ Այդ նշանակում է փորձել շրջելու կուսակցությունը, կոտրել նրա ողնաշարը։ Այո, ընկերներ, խնդիրը վերաբերում եր կուսակցության կյանքին ու մահուն։ Դրանով էլ իսկապես բացատրվում է այն կրքոտությունը, վորով մեզ մոտ տարվում եր դիսկուսիան։ Դրանով էլ պիտի բացատրել մեր կուսակցության պատմության մեջ չեղած այն փաստը, վոր համագումարը միաձայն դատապարտեց ոպպոզիցիայի պլատֆորմը։ Խիստ լուրջ վտանգը իբրև համատարած յերկաթե ողակ համախմբեց կուսակցությանը։

(Ի. ՍՏԱԼԻՆ. XIV համագումարի արդյունքների մասին)

3. ԻՆՉՈՒՄՆ Ե ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՅՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՈՊՊՈԶԻՑԻԱՅԻ ՄԻՋԵՎ XIV ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

Քանի նվազում եյին մեր սկզբունքային տարաձայնությունները, քանի ոպպոզիցիան հարկադրված եր մի կետը մյուսի յետևից զիջել իր սկզբունքային պլատֆորմները, այն չափով, ինչ սկզբունքային հարցերում նա անցնում եր մեծամասնության կողմը,—նույն չափով, յեթե վոչ ավելին, նա սկսեց կուսակցության հետ տարակարծիք լինել կազմակերպչական հարցերում... Համագումարի վորոշումների քննադատության ազատության պահանջը, պրոլետարական դիկտատուրայի և թշնամական շրջապատի պայմաններում բոլոր կուսակցական խմբավորումների ազատության պահանջը կամ կուսակցության ԿԿ մեր կուսակցության ներսում գոյություն ունեցող առանձին խմբավորումների միջև «համաձայնության» որգան դարձնելու պահանջը, այդ բոլորն ամբողջապես կազմակերպչական հարցում հակասում են լենինիզմին։ Համագումարի նախորյակին վոչվոք մեզնից չեր սպասում լենինիզմի այնպիսի խեղաթյուրում կազմակերպչական հարցի բնագավառում, մինչև վորը գլորվեց Լենինգրադի պատգամավորությունը և

«Լենինգրադսկայա Պրավդա»-յի խմբագրությունը... Այն, ինչ այժմ տեղի ունի Լենինգրադում, ինչ մենք կարողացանք վերջին ժամանակ գտնել «Լենինգրադսկայա Պրավդա»-յի էջերում, և այն, ինչ տեղի ուներ ներկա համագումարում, նորից հարց է հարուցում միասնականության յերաշխիքների մասին:

Ընկերներ, մենք մտնում ենք մեզ համար մի ուրախ ժամանակաշրջան, այն նպատակի իրագործման ժամանակաշրջանը, վորի համար Հոկտեմբերյան հեղափոխությունն է կատարվել: Սկսվում է սոցիալիզմի շինարարության որգանական դրական ժամանակաշրջանը, վորը պիտի ուղեկցվի անհագին դժվարություններով: Մեր առաջ ծառացած դժվարությունները մենք պիտի հաղթահարենք ինչ էլ վոր լինի: Մերձավոր տարիների ընթացքում կապիտալիստական շրջապատի պայմաններում, նոր տնտեսական քաղաքականության պայմաններում մեզ անհրաժեշտ է ինչ էլ վոր լինի պահպանել սոցիալիզմի շինարարության առաջխաղացման թափը: Մենք դրան պիտի պիտի հասնենք բնակչության բոլոր շերտերի աճած ակտիվության պայմաններում, այս թվում և մեզ թշնամի բուրժուական շերտերի—կուլակայինը գյուղում, նեպմանականը՝ քաղաքում: Այդ խնդիրները մեր կուսակցությունը կիրագործի միայն այն դեպքում, յեթե նա պահպանի իր շարքերի վողջ բոլշեվիկյան ամրությունը, կարգապահ մարզվածությունը մեր կուսակցության յուրաքանչյուր անդամի, յուրաքանչյուր կազմակերպության: Մեր համագումարին մեծագույն ուշադրությամբ հետևում են վոչ միայն մեր կուսակցության անդամները և մեր Միության բանվոր դասակարգը, մեր համագումարին մեծագույն ուշադրությամբ հետևում է ամբողջ յերկիրը: Ավելին. այն բոլորին, ինչ տեղի ունի կուսակցության XIV համագումարի[illegible]նխոսերին, այն բոլորին, ինչ հնչվում է այս ամբիոնից, հետևում է մեզ շրջապատող ամբողջ աշխարհը: Արտասահմանի մամուլի էջերն արդեն լի յեն մեր համագումարի մասին յեղած հաղորդագրություններով, նրանք լի յեն չարախնդությամբ, լի յեն հուսացումներով այն մասին, թե լենինյան կոմունիստական կուսակցության պողպատե շարքերում ճեղքվածք է յերևան յեկել, թե ԽՍՀՄ թշնամիները կարող են ոգտվել այդ ճեղքվածքով: Ներկա համագումարը պիտի ավարտի իր աշխատանքները այն վստահությամբ, թե վոչ մի դեպքում չպիտի տատանվի լենինյան շարքերի միասնականությունը, թե Կենտրոնական Կոմիտեն կիրագործի XIV համագումարի վորոշումները ոպպոզիցիայի հոժարակամ և անկեղծ մասնակցությամբ ու աջակցությամբ, յեթե այդ կամենա նա, և կստիպե նրան հպատակվելու համագումարի բոլոր վորոշումներին, յեթե այդ նա չանի:

(Ա. Ի. ՌԻԿՈՎ. Յեզրափակիչ խոսք XIV կուսհամագումարի փակման նիստում)

ԹԵՄԱՆԵՐ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Պատմեցեք ինքներդ կամ խնդրեցեք ավելի ավագ ընկերներից վորևէ մեկին պատմելու, թե ինչպես արտացոլվեց ձեր բջիջում 1920/21 թ. ներկուսակցական կռիվը, 1923/24 թ. ոպպոզիցիան և XIV համագումարի ոպպոզիցիան (կային արդյոք ոպպոզիցիայի խմբակների կողմնակիցներ, ինչպես եյին նրանք պաշտպանում իրանց հայացքները, ինչպես եյին ժողովներում նրանց հայացքները հերքվում և այլն):

2. Պատմեցեք մանրամասն, թե ինչպես եր տեղի ունենում XIV կուսհամագումարի և ԿԿ և ԿՎՀ հուլիսյան (1926 թ.) պլենումի հարցերի ուսումնասիրությունը և վորոշումների յուրացումը ձեր բջիջում: Ի՞նչպես եր վերաբերվում անկուսակցական բանվորական մասսան այն բոլորին, ինչ տեղի ուներ XIV համագումարում և հուլիսյան պլենումում, և ինչ է արված ձեր բջիջի կողմից, վորպեսզի ճիշտ բացատրվի նոր ոպպոզիցիայի եյությունը և նրա լենինյան գծից շեղումների ամբողջ վնասակարությունը յերկրի ու կուսակցության համար: Այդ ուղղությամբ էլ ինչ է անհրաժեշտ է անելու:

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. ՆԵՊ-ին անցնելու պահուն և ՆԵՊ-ի ժամանակաշրջանում ինչումն է արտահայտվել կուսակցության ոպպոզիցիոն հոսանքների շեղումը լենինյան ուղիղ գծից:

2. Ի՞նչ պետք է հասկանալ բանվորական ներկուսակցական դեմոկրատիայի տակ և ինչպես պիտի այն կիրառե կուսակցությունը:

3. Ի՞նչն է հարազատացնում նոր ոպպոզիցիային տրոցկիզմի հետ:

4. Ինչումն է այն գլխավորագույն վտանգը կուսակցության համար, վոր բղխում է նրա մեջ ծագող բոլոր ոպպոզիցիոն հոսանքներից:

№ 492 Գրառեպվար № 25 (բ) Տիրաժ 6000

ՀՀ Ազգային գրադարան
NL0187423